

ՏԵՐԵՎՈՐԻ
ԵՎ ԳԵՐԱՊԵՏՈՒԹՅ

Ա. Ակոբյան
Մ. Առաքել
Մ. Թադևոսյան
Գ. Յանձնական

ՊԵՐԵ
ԲԱՐԵՎԵՏՈ
ԱՐՏԵՐԱԿԵՆ
ԿԱՐԻՔՉԱՐԵՖ
ՄԱՐԻ

Մ. Բարսեղյան
Մ. Առաքելյան
Մ. Շահնշահյան
Հ. Արքայաց
Գ. Մարտիրոսյան



Խալաթյան, Լ. Ա.

Խ 171 Թատերական միստիչների մասին.—Եր.:
ՀԹԸ, 1983.—331 էջ, 64.

Գրքում ամփոփված են հեղինակի արվեստաբանական այն աշխատությունները, ակնարկներն ու նորվածները, որոնք լուսաբառում են նկարչի դերը բատրոնում, նարքը նաճախ կապակցելով ժամանակակից նայ բնմարվեստի զարգացման տարրեր փուլերի և ուժուառայի զադափարական նախասիրությունների ներւութեան հնարավորին շափ ամրութացնելու և կրկնություններից խուսափելու նկատառություններով, նրապարակված զուրեքի մեջ, լրացումներից բացի, կատարվել են նաև որոշ կրծառումներ:

Հացեագրված է ինչպէս մասնագետներին, այնպէս էլ այն ընթերցողներին, որոնք նետարրըլու են բատերական արվեստի բազմազան հարցերով:

Խ 4903000000—08
57—53(ա)
728(2)53

ԳՐԴ 85,4 + 05.144
792 + 75

Армянское театральное общество
ЛЕВОН АРТАВАЗДОВИЧ ХАЛАТЯН
О ТЕАТРАЛЬНЫХ ХУДОЖНИКАХ
Ереван — 1983

ԳԱՅՈՒՄ
ԹԱՏԵՐԱԿԱ
ԸՆԴԵՐԱԿԱՑՄԱՆ

Հ. ԱՊՐԻԼԻ ՀՅՈՒՅՆ

Խ. ԱՌԵՎԵՐ,

Ա. ԲԱԿԻՆ-ՀՅՈՒՅՆ

Օ. ՀՅՈՒՅՆԻ

ԼՅՈՒՅՆ
ԽՈՎՈՅՅՈՒՆ

ՔԱՏԵՐԱԿԱ
ՆԱՐԻՉԱԿԱՐԻ
ՄԱՍԻՆ


Մրգ. ԽՈՎՈՅՅՈՒՆ

Խ. ԱՌԵՎԵՐ

Խ. ԱՀԵՑ-ԽՈՅՅՈՒՆ

Հ. ԱՊՐԻԼԻ ՀՅՈՒՅՆ

Հ. ՄԻԿԱՅՈՒՆ



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԱՅՍ ԳՐԹԻ ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԻ
ՄԱՍԻՆ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 17

ԿԵՐՊԱՐՎԵՍԻ ՄԱՐԴԻԿ ԵՎ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԸ 24
ԲԵՄԱՆԿԱՐՀԻ ՌԵԺԻՍՈՒՐԱՆ 149


ԹԱՏՐՈՆ-ԴԵԿՈՐԱՑԻՈՆ ԱՐՎԵՍԻ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐՈՒՄ

- «ԿՏԱՎԵ ԹԱՏՐՈՆԻՑ ԴԵՊԻ ԳՐԱՆԻՏՅԱ.
ԹԱՏՐՈՆ» 177
- 2ԵԽՈՍԼՈՎԱԿՅԱՆ ՆԿԱՐԻ2ՆԵՐԻ ՇԵՔՍՊԻՐԸ 192
ՀԱՅ ՆԿԱՐԻ2ՆԵՐԸ ՇԵՔՍՊԻՐԻ ՄԵԿՆԱԲԱՆ 198
ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ
ԳՈՐԾԻ2 215


ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՀԵՏ

- ՄԵՐ ՆԱՀԱՊԵՏԸ 228
- ՎԱՐԱԳՈՒՅՐ— «ՀԱՅԱՍՏԱՆ» 233
- ԹԱՏՐՈՆԻ ՏԵՂԵ ՆՐԱ ԱՐՎԵՍՈՒՄ 239
- ՀԻԱՆԱԼԻ ԵՂԱՆԱԿ ԷՐ, ՕՐԸ ԿԻՐԱԿԻ 244
- ՆԱ ՍԵՐՈՒՄ ԷՐ ԱՆԻՒՑ 250
ՄԻՔԱՅԵԼ ԱՐՈՒՏՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ 252
ՍՏԵՓԱՆ ԹԱՐՅԱՆԸ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ 259
ՇՔԵՂ ՏԱՂԱՆԴԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ (ՄԵԼԻՔՍԵԹ
ՍՎԱԽ2ՑԱՆ—50) 281

- ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ
- ՄԱԿԵՑՆԵՐԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆ, ԷՍՀԻՉԶՆԵՐԸ
ՊԱՏՄՈՒՄ 285
 - ՆԿԱՐԻ2Ն ՈՒ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԸ 291
 - ՀՐԱԿԱՐՄԻՐ ԿՅԱՆՔ, ՀՐԿԵԶ ՀՈԳԻ 830
ԳՈՎՔ ՍԻՐՈ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ
(Ա. ԲԱԺԲԵՇՈՒԿ-ՄԵԼԻՔՅԱՆ) 806
 - ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՆԿԱՐԻ2Ը 812
ՆԱ ԻՆՔՆ ԷՐ, ՈՐ ԿԱՐ (Ա. Շ. ՍՏԵՓԱՆՅԱՆ) 818
«ԵՍ ԷԼ ՕՆՈՆ ԵՄ...» 824



Հեղինակը Մարտիրոս Սարյանի մոտ, 1955





Արքային Սուրենալյան



Ակերսանոր Թամամյան

Կարո Հալարյան և Միքայել Մազմանյան




ԱՎԱԾՏԱՌ



«Վիմանորի գլարմասեր կանայք», Ֆալլուտաֆ, զգնուհի Էսրիզ՝
Սերգեյ Մրուսովչան»

«Երկու վախենու», Թիբունե, զգնուհի Էսրիզ՝
Հովհաննիմ Միհնանաջլանի





Գևորգի
Ժակովով



Վասիլի Շերիշև

«Հատակում», III գործողություն, մակետ՝ Վ. Շերիշևի





«Մեծապատիվ մուրացկաններ», I գործողություն
Դնեսորի էսքիզներ»

Միքայել Արուտչյանի և Արա Սարգսյանի
«Մեծապատիվ մուրացկաններ», IV գործողություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖՈՏՈԳՐԱՖԻԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ




«Օամօնամե», միասնական դեկորմերի մակետ»

Զարար Սիմոնյանի

«Արյունոտ անապատ», միասնական դեկորմերի մակետ»

Ռոբերտ Նալբանդյանի





Մուշար

ՄԱԿԱՐ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՏՐԱՎԵՐՏԻՆ

Ալեքսանդր Խշնամութիւն, Դեկորատիվ էստելա ՅՈՒՆԱՆԱԿԱՐԻ ՀՐԱՄԱՆ

ԱԿԱՐ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ






Հակոբ Կողովամ, Էսթիզներ Հարո Ստեփանյանի
«Սասունցի Դավիթ» օպերայի բեմադրության նամակ





Պատվական
Անաթյան



Հ. Ա. Ա. Հ. Բ. Տ.



Ստեփան
Քարյան



« Առաջնահամար կ պարզաբանել այս գործը » Արքային Սարգսի

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԱՅՍ ԳՐՔԻ ԵՎ ՆՐԱ
ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Հ 69679

Այս գիրքը տարրեր առիթներով ուսումնասիրված,
հրապարակված և չհրապարակված Շյուբերի
ժողովածու է: Մեր թատրոնի պատմության համար
դրանք տարրեր բեմաներ ու դրվագներ են, որոնք
ամբողջամում են ներքին փախառնչություններով:
Այս համգամանքը թերևս իրավունք է տալիս
աշխատությունն անվանել Լևոն Խալաթյանի գործը,
որը մեզ լազմ պատկերացում է տալիս Ժամանակակից
հայ թատրոնի ինչպես առանձին բեմանկարիչների,
ազնակների մեր բեմանկարչության անցած ուղու,
առավել հշանակալից արժեքների և հիմնական
ուղղությունների ու միտումների մասին: Այս առումով
գրքի ճանաչողական, նաև գործնական արժեքը
ակնհայտ է ու անվիճելի:

Ժամանակակից հայ թատերագետների մեջ, կարևոր է
ասել, ոչ մեկը բեմանկարչությունը չի ուսումնասիրել
այն հափշտակությամբ ու նախանձախնդրությամբ,
ինչպես Լևոն Խալաթյանը: Բազմաթիվ ակնարկներից
ու հոդապետներից բացի, նա գրել է «Մելիքսեռ
Սվախչյան» մենագրական ուրվագիծը (1956 թ.),

«Սարյանը և թատրոնը» (1960 թ.) դիսերտացիոն աշխատաթիւղունը: Իր դիտումների մի նշանակալից մասը նեղինակն ամրողացրել է: «Հայ սովետական թատրոնի պատմություն» (1967 թ.) գրքի թեմանկարչությանը վերաբերող գլուխներում:

Այսպիսով, Լուս Խաղաքայանը դարձել է սովետահայ թեմանկարչության միանձնյա ուսումնասիրողը, այդ բնագավառի նվիրյալը: Բնմանկարչության գնահատությունն ու մեկնությունը նրա կյանքի նիմնական նպատակն է: Հայ թատերական արվեստի ներկայի և անցյալի ուսումնասիրության մեջ նա սկզբից ներ ընտրել է այդ նախասիրությունն ու նայեցակետը, այն է՝ թատրոնը դիտել առավելապես տեսողական-տեսլարանային արժեքի շափամիշներով, թեմադրական մանրամասները բնել նախ և առաջ որպես գեղանկարչական երևույթներ, ինչպես առանձին-առանձին, պահպես էլ ներքին փոխկապակցության մեջ: Այս գրքում նեղինակը համախմբել է իր տարիների դիտումների արդյունքները և ստեղծել է թատերագնուտների ու թատրոնի մարդկանց համար նետաքրքիր և գործնականորեն անթիւննեշտ ու օգտակար աշխատություն: Այստեղից ընթերցողն ստանում է փաստական կարևոր տեղեկություններ, հասու է դատանում այնպիսի տվյալների, կարծիքների ու մեկնությունների, որոնց այլ աշխատություններում չենք հանդիպում: Այս ամենը համախմբելու և ամրողացնելու համար պետք էր այն նվիրվածությունն ու սերը գեղանկարչության, որպես թեմանկարչության ամենից ավելի ուժի Լուս Խաղաքայանը:

Բնմադրության տեսողական արժեքի առանձին

զնահատումը, երբեմն նաև բացարձակացումը
Բնդինակի թատերագիտական հայացքի
առանձնահատկությունն է, նրա, որպես քննադատի,
«թուղթությունը»: Շարադրանքի ընթերցումը երբեմն այն
տպավորությունն է ստեղծում, որ թատրոնում ամեն
ինչ սկսվում է նկարչից, որ ներկայացման մեջ ամեն
ինչ պայմանավորված է գեղանկարչական-լուսային
մթնոլորտով: Հեղինակն ինարևէ չի պնդում ու
ապացուցում այս բանը: Դա կլիներ չափազանց
միակողմանի: Բայց այս միտումն ակնհայտ է նրա
դատողություններում, ակնհայտ է ոչ որպես տեսակետ
կամ միտք: Դա պարզապես տրամադրվածություն է:
Այլ տրամադրվածությունն է, որ Բնդինակին մղեկ է
մանրամասն դիտումների: Եվ ամա նա ընթերցողի
առջև է դրել այնպիսի տվյալներ ու փաստեր, որոնք
ժամանակին չեն շեշտվել, երբեմն էլ վրիպել են
քննադատների և տառմնասիրողների հայացքից:
Կարդալով այս գիրքը, հանգում ենք կարևոր մի
ներակացության. բեմադրական արվեստը (որը նախ
և առաջ գործող անձանց կենդանի
փոխարարերությունների կառուցումն է)
գեղանկարչությունը պետք է օգտագործի որպես
գրական նյութի տեսողական մեկնաբանություն,
դերասանի խաղաղին միջավայրի կոնկրետացում,
գործողության պացմանների գեղարվեստականացում,
դերասանի գեղարվեստական հույզների խթան: Բեմը
դերասանի համար պետք է լինի ոչ թե դատարկ ու
սառը տարածություն, այլ այնպիսի միջավայր, որ
տրամադրի գործողության ու դրույյունների
վերապրումի: Կարծում ենք, այս է ամենաօգտակար
ներակացությունը, որին պետք է հանգեն մեր
բեմադրիչներն ու բեմանկարիչները: Հեղինակը

բավական նյութ և առիթ է տալիս դրա համար: Ինչը է ամենից ուշագրավը այս գրքում: Այստեղ ամեն ինչ տրված է բևեռ լավ ճանաչող, թատրոնը զգացող, թատրոնի լուսով ու բույրով հմայված մարդու տեսակնետից: Հեղինակը թատրոնը զգում է և տեսնում նախ և առաջ դեստակներում, նկատում է Շերկայացման գեղանկարչական բոլոր մանրամասները, տեսնում է խաղի լուսային և գունային ամրող միջավայրը, բեմադրական կոնստրուկցիաները, Օրանց նպատակահարմարությունը, գեղանկարչական սիմվոլիկ մումենտների դերը, կապելով այդ ամենը դրամատորգիական նյութի ուժիսորական իմաստավորման և դերասանական հատվածների հետ: Հեղինակի շարադրանքը կրում է թատերական Շերշնչման ակնհայտ կնիքը, պատկերավոր է, թերևն և գումենի: Այս հատկանիշները կարող են ինքնանպատակ երևալ, եթե գիրքը հագեցված չլիներ առատ նյութով, բանասիրական կարգի զննումներով, եթե այնտեղ բերված չլինեն հայ բեմանկարչության բոլոր նշանակոր արժեքներն ու դեմքները: Այստեղ տեսնում ենք հայ ամենանշանակոր նկարիչների բեմական աշխատանքները՝ գործեր, որոնց արժեքը այսօր գրեթե մոռացվել է: Պարզվում է մեզ համար, որ հայ բեմանկարչությունը չպետք է սահմանափակել միայն հայ թատրոնում արված աշխատանքներով: Այս Խաղարջյանը վկայաբերում ու նկարագրում է Վարդես Սորենյանցի, Մարտիրոս Սարյանի, Գեորգի Յակովովի ուսանելու ստեղծած թատերական ձևավորումները: Այստեղ տեղ ունի նաև ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, որի բեմանկարչական աշխատանքի մասին չի խոսվել առ այսօր: Որպես բեմանկարիչներ այստեղ առաջին անգամ են

գնահատվում Կարո Հալարյանը, Հակոբ Կոջոյանը,
 Երվանդ Քոչարը, Սեղրակ Առաքելյանը, Հովհակիմ
 Միհանաջյանը: Ավելին, Սարյանը, Յակովովը,
 Միքայել Արուտշյանը ներկայանում են ու գնահատգվում
 որպես մեր ժամանակի թատերական նկարչության
 ամենախոշոր դեմքերը, որոշ դեպքերում՝
 առաջատարներ: Այս համգամանը մեծացնում է
 մեր թատերական մշակույթի արժեքը ամենաբարձր
 շափանիշներով: Տեսնում ենք, որ հայ նոր թատրոնը
 մեր դարի առաջին կեսին կանգնած է նղեկ,
 բևմանկարչական առումով, նորագույն ուղղությունների
 գծի վրա: Տեսնում ենք, որ հայ թատրոնում
 զեղանկարչական մշակույթի ամռեկի փորձ կա, մի բան,
 որ այսօր մոռացության է մատնվել: Մեր այսօրվա
 թատրոնում նկարչի խնդիրը փոքրացել է. նկարիչը
 դարձել է անգույն մակետներ կառուցող, մակետներ,
 որոնք շատ հաճախ ծանրաբեռնում կամ փոքրացնում
 են դերասանի խաղահրապարակը և ստեղծում
 արտաքին, արհեստական հենարաններ բևմանկարչակի
 վրա կենդանի շարժում ստեղծել չկարողացող
 բևմադրիշների համար: Մեր թատրոնից գրեթեն
 վերացել է գույնը, տիրապետող են դարձել սև
 վարագույնները, գորշ փայտամածը, անփայլ մետաղի
 խիտացիան, վերացել են ետնավարագույրը,
 բևմառացքի «զաղութի» լույսերը, և բևմը գրկվել է
 պայմանական լույսի խորհրդավորությունից: Նկարիչը
 գնալով դառնում է այնքան երկրորդական, որ
 ուժիսորմները, նկարիչ չի հնելով, չիմանալով գծի,
 գույնի և կոմպոզիցիայի ամենատարրական օրննքները,
 հաճախ իրենք են ձևավորում իրենց
 բևմադրությունները, ստեղծելով անկենդան ու
 գոնազորկ, տեսարանից տեսարան անփոփոխ մի

կոնստրուկցիա «մոդեռն» անվան տակ:

Այս գիրքը մեր առջև է: Դնում անցլալի ուսանելի և
մեծարժեք փորձը, հաղորդակից է դարձնում
բեմանկարչական արվեստի ստուգված
չափանիշներին: Գրքի գործնական օգտակարությունը
հայու և առաջ այս է:

Ինչպես նկատեցինք, այս ժողովածուն ընդգրկում է
Բեղինակի և հրապարակված, և չհրապարակված
ուսումնասիրությունները: Նրկուան էլ հավասարապես
կարևոր են, մանավանդ, որ հրապարակվածները
զգալիորեն մշակվել են: Առանձին ակնարկների
ներքին, բովանդակային կապը մասամբ իրավունք
է տալիս այս գիրքն ընդունել որպես սովետահայ
բեմանկարչական արվեստի պատմության համառոտ
որովագիծ: Ուրվագծի տեսքով է շարադրված գրքի
հիմնական մասը, որը լրացվում է առանձին
հոդվածներով: Հեղինակը, ինչպես նկատում ենք,
գիտական նպատակներ չի հետապնդում և չի մղում
տեսական նզրակացությունների ու ընդհանրացումների:
Շարադրանքի ոճը պատմողական և Ակարազդրական է,
բայց ոչ պասսիվ: Ընդհակառակը՝ իր վերաբերմունքի
մեջ հեղինակը շատ ակտիվ է և ոչինչ չի թողնում
առանց գնահատության ու արժեքավորման: Ընթերցողը
կարող է երբեմն շիամաձայնել նրա գնահատման
եղանակի հնտ, չընդունել որոշ նզրակացությունների,
և ինը կարող է մղվել տեսական նզրակացությունների:
Բայց կարելի է չկասկածել, որ նյութերն ու
տեղեկություններն այսուեղ տրված են հնարավորին
շափ լրիվ, իհարկե համապատասխանեցված հեղինակի
դիտակետին, երբեմն շրջադրված ըստ նրա տոնի ու
խոսկակերպի: Կարելի է ասել նաև, որ ամենից
ավելի նյութի հարստությամբ է արդարանում,

տեղեկությունների բազմազանությամբ է մնջանում այս գործի արժեքը: Հեղինակի ոճն ու նախասիրություններն ունեն ակնհայտ թերվածք, և նյութը երբեմն գոմավորվում է սուրյեկտիվ ընկալման լույսով: Մտածեակերպի ու շարադրանքի այս գծերը, կարծում եմ, պարտադրող չեն և չեն կանխում կերպարվեստի պատմարանին ու տեսարանին: Բոլոր դեպքերում այս գործը չի կորցնում փաստական կողմնորոշիչի արժեքը և իր բնույթով ու տեսակով մեր բատերագիտական գրականոթուան մեջ առաջժմ միակն է:

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

20 ապրիլի, 1983 թ.

ԿԵՐՊԱՐՎԵՍԻ ՄԱՐԴԻԿ ԵՎ ՀԱՅ ԹԱՌԱՆԵ
1917—1975

Կերպարվեստի ազդեցության ոլորտները շատ ընդարձակվեցին սովետական ժամանակաշրջանում: Հանրապետության, հատկապես Երևան քաղաքի կառուցապատումը, արդյունաբերության զարգացումը, գրքի, պարբերական մամուլի հրատարակման բույն թափը, մոնումենտալ արվեստի պրոպագանդան, ագիտացիոն աշխատանքի բազմապիսի ձևերը, հասարակական կյանքի աշխուժացումն ընդհանրապես,— իրենց շրջանակների մեջ ներգրավեցին մեծ թվով նկարիչների, լինեից դրանք դեկորացիոն, թէ կիրառական արվեստի, արձանագործության, թէ գրաֆիկայի մասնագետներ: Նկարիչը պետք էր ամենուրեք, երկրի կառուցապատման և գեղարվեստական օջախների ստեղծման համար:

Քսանական թվականներին այդ օջախներից ամենագործնականն ու կարևորը թատրոնն էր, որպես արվեստի ու ժողովրդի մարգարման հզոր միջոց:

Սովետական Հայաստանում սկսեցին գործել Առաջին պետքատրոնը, դրան զուգամեռ մի քանի թատերախմբեր, Բիմնադրվեց ազգային կինեմատոգրաֆիան: Եվ նկարիչը ժամանակակից բեմարվեստի պահանջների համաձայն անցավ թատերական մեկ օջախից մյուսը: Այս շրջանում Բիմնական ուշադրությունը նվիրվում էր Առաջին պետքատրոնին (Կինեմատոգրաֆը այնքան էլ չէր զրայեցնում նկարիչների միտքը): Երեսնական թվականներին Հայաստանում կազմակերպվեց արվեստի մի նոր օջախ՝ Օպերայի և բալետի պետական թատրոնը. Ժամը փոխվեց, մասշտաբները մեծացան. այս բոլորին զուգամեռ պրոֆեսիոնալ Բիմքի վրա դրվեց և սկսեց լուրջ գործունեություն ծավալել թատրոնը: Լեցինականում, ապա շուտով Երևանում Բիմնադրվեցին Պատաճի Բանդիստեսի, Սղորեցանական, Բանվորական, Ռուսական թատրոնները, բազմաթիվ թատրոններ բացվեցին շրջանային կենտրոններում և ամենուր մեծ էր նկարիչ-ձևավորողի կարիքը: Ի վերջո նկարիչը մուտք է գործում տիկնիկային-մանկական թատրոն, կրկես, ակտիվ մասնակցություն ունենալով ներկայացումների, ցուցադրական տարրեր Բանդեսների ստեղծման ու կազմակերպման բարդ աշխատանքներին: Հիսնական թվականներին նկարիչների առջև բացվում է բոլորովին նոր մի ասպարեզ՝ մեռուստանությունը: Այդ բոլոր վայրերում բարձրորակ նկարիչ-ձևավորողներ ապահովելը դժվարին խնդիր էր, քնականարար գեղարվեստական խոշոր արժեքների Բեղինակ-նկարիչների կողքին, շատ տեղերուած գործել և գործում են Բամեստ, շարքային դեկորատորներ՝ ավելի քան Բամեստ վաստակով:

Հայ նկարիչների ստեղծագործական միտքը իր վառ դրսնորուած գտավ նախ և առաջ թատրոնի ասպարե-

զում: Դեկտեմբերին գեղանկարչությունը այստեղ ի հայտ եկավ ամրող էությամբ, անցավ զարգացման աննախադիմակ, ուսանելի ճամապարհ⁶:

* * *

Թատրոնի զարգացման բովանդակ ընթացքը 20-րդ դարում ամենասերտ առնչության մեջ է կերպարվեստի մետ: Հոկտեմբերյան հեղափոխությունը, օրինակ Ռուսիայում, վրա հասավ դեկտեմբերին գեղանկարչության ծաղկման շրջանում: Նրան արդեն վերապահված էր միջազգային ճանաչում և առաջնակարգ տեղ: Պետք էր սուկ սրբագրել ու վավերացնել նվաճումները: Սակայն այդպես չէր վիճակը, և չէր էլ կարող լինել, Բայ իրականության մեջ: Թատերական հաստատությունների «խնդուկրակ», ընշագործ դրությունը, պրոֆեսիոնալ ռեժիսուրայի պակասությունը նախատվետական Հայաստանում, թեմանկարչության զարգացման պայմաններ չեն տվել: Ծատերն էին փորձում կապվել թատրոնի հետ, բայց միշտ չէ որ նրանց բերածը թատրոն ընկալվում էր որպես գեղանկարչական արժեք: Հիշալ տարիներին արթևստավորներն ավելի շատ էին, քան արվեստագետները: Ակամավոր դեմքեր հազվադեպ էին ուր դնում թատրոն, իսկ իրենց ստեղծագործական կյանքը ուստական իրականության հետ կապած մարդիկ, Ռուսաստանում էլ կատարում էին թատերական պատվերները: Սուրենյանցը, որ նախատվետական

* Առաջնապես Բայ դրամատիկական թատրոններում զկարիչների կատարած ակներն ձևավորումների մասին համեմատարար Բանգամանալից, Զան Փաստերի լայն ընդուրելու տես՝ «Հայ սովետական թատրոնի պատմություն» (1967), էջեր՝ 132—150, 181—193, 356—365, 470—482 և 612—628:

տարիներին ոլուսական առաջնակարգ թատրոններում մի շարք ուշագրավ ձևավորումներ էր ունեցել, սովորական շրջանում ոչինչ շնաւցրեց անեղու։ Ոմանք է ժամանակակից իրականությունից նոր լիցք ու թափ ստացած, դեռևս շարունակում էին գործել Մոսկվայում և Պետերբուրգում։ Դրանց մեջ էր հայ մշակույթի երախտավոր գործից, խոշորագույն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը։

ԺԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԵՐՍՉԱՆՔԸ

Կերպարվեստի, մանավանդ թատրոնի պատմության մեջ Օրա ամունը հազվագյուտ դեպքերում է նշվում, կամ հիշատակվում է սոսկ որպես ժողովրդական տաճ, Շերկայիս օպերային թատրոնի նախագծի հեղինակ։ Իսկ թե որտեղից է գալիս դրա պրակտիկ մտաժդացումը՝ քննրին է այդ հարցը զրադեցրել։

Իրականում, Թամանյանը թատրոնի մետ որպես Ակարիչ շիփել է երկու առիթով։ 1916-ին Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի պատվերով, Մ. Դորուժինսկու համագործակցությամբ աշխատել է Ա. Բլոկի «Վարդն ու խաչը» պիեսի թևմադրության վրա, որ երկար ժամանակ, շուրջ երկու տարի պատրաստվել, բայց ի վերջո չի ցուցադրվել (թատրոնի և դրամատուրգի միջև եղած սկզբունքային տարածայնության պատճառով), իսկ մյուսը, դարձյալ նույն Մ. Դորուժինսկու մետ, Պետրոգրադի Ողբերգության թատրոնում նրա ձևավորած «Մակրելն» է, որի առաջին ներկայացումը կայացել է 1918-ի օգոստոսին և շարժել մեծ մետաքրքրություն։

Մրանք պատահական փաստեր չեն։

Թամանյանը թատրոնը սիրել է մանկուց, իսկ երիտասարդության տարիներին ամենօրյա շփում ունեցել մեծանուն Ակարիչներ Ա. Բենուալի, Ե. Լանսերենի և Մ. Դորուժինակու հետ, որոնց ստեղծագործական կյանքում թատրոնը բացառիկ տեղ ուներ¹:

Արծնքավորը «Մակրեթի» թեմադրությունն է. ձեւվավորումը իրականացվել է արտասովոր իրադրության մեջ՝ Չինիզելիի կրկեսի արենայում: Հենց այդ հանգամանքն էլ առիյ է հանդիսացնել, որ նորաստեղծ Ողբերգության թատրոնի գեղարվեստական դեկավարության՝ Մ. Գորկու, Մ. Անդրեևվալի, Յու. Ցուրկի, Ֆ. Շալյապինի և մյուսների առաջարկով, ձևավորման աշխատանքների մեջ ներգրավվի ճարտարապետ ևս: Թամանյանը հրավերն ընդունել է ամենայն պատրաստակամությամբ և մեծ եռանդով գործի անցել:

Ծարտարապետական դեկորների իրացման անդրանիկ փորձն էր այդ, կիրառված սովորական իշխանության առաջին իսկ ամիսներին: «Հարկ է նշել, որ թեմադրության ճարտարապետական ոճի հաստատման փորձեր, ընդհուպ այդ գործի մեջ որպես դեկորատոր ճարտարապետի ներգրավելով, կատարվել են և Հոկտեմբերի առաջին շրջանում: Ներկայացման այդ պլանի լուծման փորձ է արել ճարտարապետ Թամանյանը կրկեսում (1918 թ.) «Մակրեթը» ձևավորելիս...»²,

¹ Բոլորն էլ Ա. Թամանյամի մտերիմ ընկերներն են եղել և օրականց Կամիլլա Էվդարսի մոտիկ ազգականները: Ա. Բենուան դեռևս իր կյանքի վերջում, 1959-ին Փարիզից Մ. Սարյանից հասցեագրած մի նամակում քամից նիշում է Թամանյամին և նուազությունում օրականց վիճակով: (Բամակիրը գտնվում է Մ. Սարյանի անձնական արխիվում):

²Տե՛ս «Театрально-декорационное искусство в СССР. 1917—1927», Լենինգրադ, 1927, էջ 70: Սովոր հոդվածի մեջ Թա-

գրել է Գ. Ստերնիցկին «Դեկորացիոն արվեստի միմական հոսանքների մասին» հոդվածում:

Կրկեսային արենայում ճարտարապետական ոճով ձևավորված դրամատիկական ներկայացումը սկզբունքային նշանակություն ուներ այն տարիներին: Դա կոտրում էր բնմախորշի ավանդական հասկացությունը և հնարավորություն տալիս հանդիսականին ավելի մոտիկից շփելու թատրոնի հետ, անմիջական կապ հաստատելով ժողովրդի և բնմարվեստի միջև: «Թամանովին առանձնապես գրավում էր մասսայական բնմադրությունների սկզբունքը, որն, ինչպես իրեն էր թըգում, նոր ձևորի, ընդհուպ մինչև ճարտարապետական նոր կառուցցների պահանջ էր դնում, որոնք պիտի հարմարեցված լինեին նման մասսայական թատերախաղերի համար»¹, — գրել է Յու. Ցուրել:

Հեղափոխական արվեստի մուտքը սկսվում էր թատերական շենքի վերանայումից: Ի դեպ, Թամանյանի փորձն էլ իր նախափորձն ուներ: 1910-ին Գնրմանական թատրոնի խոշոր բարենորոգի Մաքս Ռեյնհարդտը կրկեսային արենայում բնմադրել էր «Էդիա արքան» և նույն տարում Մոհսիի մասնակցությամբ ներկայացրել Պետերբուրգի՝ նոյն Չինիգելիի կրկեսում: Դա իր արձագանքը գտավ սոցիալական նոր պայմաններում, նեղափոխական Պիտերի կրկեսային արենայում, բայց ոչ անմիջապես ու նաջող: «... 1918-ի մայիսին, նոյն կրկեսում Յու. Մ. Ցուրելի նախաձեռնությամբ բնմադրված Սոֆոկլեսի «Էդիա արքան» գուտ պատճենավորումն էր և Ռեյնհարդտի մտահղացման

մամաթին է վերագրված զաև «Էդիա արքայի» ձևավորումը, որը թյուրիմացության արդյունք է:

¹ Ю. Юрьев, «Записки», т. II, Москва, 1963, стр. 279.

կրկնությունը, բայց հանգամանքները չեին կարող չկոչել և ինքնուրույն փորձի, որն արտահայտվեց նույն թվականին, նույն կրկնում թևմադրված Շեքսպիրի «Մակբեթ» մեջ¹, — նշել է արվեստաբան Վ. Վանդուլոդսկին (Գերեզոռուը):

Կրկնան առնաւարակ ամֆիթատրոնի շրջանագիծ կառուցվածք ունի և դրամատիկական ներկայացումներ ձևավորելիս արենայի տարածական լուծման մեծ դրվագություններ է հարուցում: Մ. Դորուժինսկին դեկորների գունանկարչական աշխատանքներն էր կատարել, իսկ Թամանյանը առանձնապես մտահոգվել էր ճարտարապետական միջոցներով հանդիսարանը հաղթաբերելու մասին:

«Երկնախ ամֆիթատրոնի արգելագծերը, վերից վար կառուցապատված էին դեկորներով, որ կարծես գրահիտն մոխրագույն սալեր լինեին: — Նկարագրում է Մակբեթի դերակատար, որու հշանակոր արտիստ Յու. Յուրենը: — Նախկին ցարական օթյակի տեղում, ինչպես և նրա դիմաց, որ սովորաբար գտնվում էր նվազախումբը, ծառացել էին համարյա թև բնական չափներ ունեցող երկու միջնադարյան դյուակ, իրենց առջևի տեռասածել լայն հրապարակներով: Այս ամենը նախատեսված էր ողբերգության գործողությունների համար և կատարված՝ Ա. Ի. Թամանովի ձեռքով»²:

¹ «Театрально-декорационное искусство в СССР», стр. 144—145.

² Թամանյանի ձեռքով նկարված որևէ էսքիզ մեզ չհաջողվեց գտնել: Լեմինգորանի բատերական թանգարանի ցուցարանում և Յու. Յուրենի «Հուշագրերի» 1948-ի հրատարակության մեջ զետեղված է ճարտարապետական ոճով լուծված մի էսքիզ Մ. Դորուժինսկու ստորագրությամբ:

Այս ձևավորման, ինչպես և Ողբերգության բատերանում ծրագրության առաջնային դրագորերի մասին տե՛ս

Զևավորումը մեծ տպավորություն էր թողնում կըրկնաի գմբեթի տակից դեկորմերը լուսավորելու պամերին, հատկապես Դումկանի մուտքի ժամանակ: Նախ մի քանի վայրկյան մթնում էր արենան և ապա աստիճանաբար, ասես աննկատելիորեն, լույսի ցոլքերը ընկնում էին քացառիկ հոգացողությամբ, մեկ առ մեկ մշշակված ճարտարապետական դեստալների ու գնդաննկարչական դեկորմերի վրա: Ծրջապատի խավարի մաջ ձևավորման մանրամասները գծագրվում էին շատ ավելի ցայտուն: «Եվ ամեն անգամ, երբ մթան միշից բնակարծ երևում էր վառ լուսավորված դյուակը... այդ սահման սրահից միշտ լսվում էին համերաշխ ծափահարություններ»: Իսկ ժամանակի մամուլը արձանագրել է. «Դեկորմերը, լուսավորությունը, մասալյական տեսարանները՝ բոլորն ել լավ էին, բոլորն ել անսահմանորեն քարձր մեր թատրոնի սովորական շարլոնից»¹:

«Մակրեթի» ձևավորումը թամանյանի ստեղծագործական կյանքում զուր չանցավ: Նա այնքան էր ոգևորվել «արենային բեմի» և առմասարակ մեծաշուր արարողությունների թատերական գաղափարով, որ շուտով ձեռնարկեց ճարտարապետական հատուկ մի շենքի նախագիծ (օգտվելով բեմական տեսմանիկային քաջատեղյակ ուժիսոր Ա. Ալեքսեև—Յակովլիի խորհուրդներից) և հանձն առավ նույն Ողբերգության թատրոնում ձևավորելու նաև Բայրոնի «Կայենը»: Այս ծրագրերը դըժրախստաբար մնացին անկատար, վերոթիշյալ թատրոնը փակվելու պատճառով: Սակայն անկատար չմնաց «արենային բեմով» թատրոնի կառուցման ծրագիրը: 1918-

¹ Տակ՝ Ю. Юрьев, «Записки», М. 1963, т. II, стр. 279, 292, 297.

¹ «Петроградская правда», 1918 г., 29 сентября.

ին Պետրոգրադի Բեղափոխական իրադարձությունների հորձանուտում ծնված մտահղացումները, կասկածից դուրս է, որ Բիմք ծառայեցին Թամանյանի ժողովրդական տան նախագծի ստեղծման համար:

Ինչպես փաստերն են վկայում, Թամանյանը սույն արտարապետական խնդիրներ չեր դնում իր առջև Սովետական Հայաստանում այդ մեծ գործն իրականացնելիս. նա Բարցին մոտենում էր նաև որպես թատրոնական գործիչ և մտածող: Ժողովրդական տան հատակագծի մեջ մեկի փոխարեն նա նախատեսել էր երեք բևմ և դրան զուգամենու տեխնիկական այնպիսի սարքավորումներ, որ անհրաժեշտության դեպքում գործողությունները այդ բևմերից անմիջապես փոխադրվեն հանդիսարարի կենտրոն: «Դարձինների այսօրինակ կազմությունը,— գրում է Ա. Թամանյանը,— հնարավորություն է: տալիս իրականացնելու նոր թատրոնի ճրգտումը՝ դերասաններին և հանդիսականներին մոտեցնել իրար, վերացնելով պայմանական միջնորմները»¹: Մեծ նարտարապետը ճգտում էր նոր թատրոնի համար իդեալական պայմաններ ստեղծել, այնպիսի մի շինություն, որը մտնելով, ժողովուրդը թատրոնը իր տունը ճանաչեր. ինքն էլ փափագում էր «անձամբ ձեւվավորել այդ թատրոնի առաջին բևմադրությունները, որոնցից մեկը, որա ցանկությամբ, պիտի լիներ «Արդան»²:

Հետագայում ամեն ինչ չէ, որ Թամանյանի ծրագրերի ու ցանկությունների համաձայն եղավ, սակայն ստեղծվածն էլ՝ օպերային թատրոնի շենքը Հայֆիլիարմոնիայի մեծ դահլիճով, որպես հանդիսանքային

¹ Ազերսամուր Թամանյան, 1960, Երևան, էջ 27:

² Տե՛ս Առաջնադրություն, Մարկ Գրիգորյանի հուշերը, էջ 162:

մոնումենտալ կառուց, բավական է հավաստելու, որ մեծ ճարտարապետի նրազանքը գեղեցիկ իրականություն դարձավ:

ԵՌԱԲԵՄ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՎՐԱ

«Դերասաններին և հանդիսականներին մոտեցնել իրար»— այս խնդիրը 20-ական թվականներին որքան ուժիուրներին, նույնքան էլ կերպարվեստի մարդկանց էր գրադացնում: Նույնիսկ Սեղրակ Սովորելյանը, որն իր ստեղծագործությամբ դեպի թատրոնը առանձին հակումներ չուներ, նա էլ մեղափոխական իրադրությամբ ոգեշնչված, նոր կյանքի շեմին փորձում էր քանդել թատրոնի և ժողովրդի միջև ընկած պատճեշները: Դրա օրինակը, Ս. Պոլիկանովի «Քուրմ Տարկվինի» բեմադրության ձևավորումն էր, թերևս Սովետական Հայաստանում առաջին լուրջ թատերական աշխատանքը, որին կարելի է մոտենալ գեղանկարչական չափահիշներով:

Ս. Սովորելյանի ստեղծագործությունը հետազոտող մի արվեստաբան համեմատելով Ակարչի նախորդ շըրջանի կտավները ետքեղափոխական առաջին տարիների գործերի հետ, նկատել է. «Եթե նախատվետական շրջանի հրա գործերը, առավելապես ներկայացնում են գյուղի մի ներփակ անկյուն, բնության տարածական մի փոքր կտոր, որոնք ըստ բնույթի ինտիմ-կամերային են, ապա այժմ Ակարչի արվեստում նաև տեղ են գրավում լիրիկո-էպիկական շնչավորում ունեցող լայնատարած, բազմապլան աշխատությունները». Տ—Թատերական Ակարչների մասին

օրինակ է թերվում սոսկ «Խջևան» և «Երևանի Բին շուկան» կտավները, որոնք «մոնումենտալության որոշ տարրեր են պարունակում»¹: Այս իրավացի դիտողությունը ավելի Բամոզիչ Բիմնավորում կստանա, եթե ծանոթանանք «Քուրմ Տարկվինիի» ձևավորման նյութերին:

Ներկայացումը ցուցադրվել է 1923-ի ամռանը, Երևանի Բանվորական ակումբի բակում, որ այդ նպատակով, Ամո Խարազյանի նախաձեռնությամբ, կյանքի էր կոչվել երեք բնմերից բաղկացած փայտաշեն մի կառույց: «Կոլեկտիվ թատրոնի» բանվոր-հանդիսականը տեղ էր գրավում փոքր-ինչ շրջանաձև դասավորված նստարանների վրա, բաց երկնքի տակ, իսկ դիմացը, կենտրոնում, ընդարձակ բնմանարթակն էր, երկու փոքր բնմերի Բարեկանությամբ: Ողբերգության նյութը առնված էր Բին աշխարհի կյանքից, Բոգևոր դասի կենծ բարեպաշտությունն էր խարազանում, գրպած՝ ժամանակի սիմվոլիկ-պայմանական թատրոնի ոճով: Պիեսի մեղինակը նախապես գգուշացրել էր բնմադրողներին, որ ամեն ինչ ընդգրկվի լայն մասշտաբների մեջ, վերացնող մթնոլորտում, մի Բանգամանք, որ «Բնարակորություն է տալու բավարարվել առանց գեղանկարչական միջոցների, որոնք միայն կվնասեն պիեսին»: Այդպես էր մտածել դրամատուրգը, թերևս նկատի ունենալով Բաստոցային գեղանկարչության ճնշումից ազատագրվող ոռուական բնմը (և բնականարար Բեղափոխության առաջին իսկ շրջանից ոռուական թատրոնը Բետգիեսն ազատագրվում էր, թոթափում իրեն՝ գեղանկարիչների տիրապետությունից):

¹ Վ. Հ. Մաքնոսյան, «Սերովակ Առաքելյան», Երևան, 1983, -էջ 40:

Հայ թատրոնը այդ տեսակետից շատ էր նու մնացել: Ամենուր իշխում էին Ակարովի հարթ դեկորները, ու դեռևս նոր-նոր էին կատարվում ծավալային դեկորների հաղթահարման փորձեր, այն էլ բավական պրիմիտիվ եղանակներով: (Օրինակ, Առաջին պետքատրոնում Գ. Չարրարչյանի «Պեպոն» և Գ. Երիցյանի մի շարք ձևավորումները): Այսպիսով, մեր Ակարիչները չէին կարող հապճեպ անցնել ճարտարապետական արստրակու դեկորների կիրառման: Դրա համար չկային ոչ միայն տեխնիկական հնարավորություններ, այլև մասնագիտորեն զինված ռեժիսուրա:

Նկարիչը պիտի կարողանար նախ կտրվել հաստոցային գեղանկարչությունից և մտնել թատրոնի բուն տարերքի մեջ՝ գործողությունների ոլորտը, հաղթահարնել բեմախորշը, բաժան-բաժան անելով նրա ոչ միայն հորիզոնական, այլև ուղղահայաց տարածությունը, գծա-պլաստիկական միջոցներով համապատասխան պալմաններ ստեղծել պիեսի գեղարվեստական բովանդակության լիարժեք դրակորման համար: Պետք էր յուրացնել բեմահարթակը, ապա նոր անցնել դեղինանրացումների:

Գեղանկարչական-ծավալային դեկորները, այն էլ եռարեմ հարթակների վրա, շատ ավելի մեծ տպավորություն կարող էին թողնել, հանդիսականի հետ խոսնել պատկերավոր, մատչելի լեզվով: Իսկ նման պայմաններում երինագիրը ավելի կարող էր նպաստել դեկորների ծավալային հնչեղությանը: Եվ Ս. Առաքելյանը, որքան էլ երիտասարդ ու անփորձ բեմանկարիչ, այնուամենայնիվ կանգնեց գեղանկարչական լուծման սկզբունքի վրա: Ելավ կոնկրետ թատրոնի և հանդիսականի պահանջներից, հաշվի առնելով թատերական գե-

դանիկարի պայմանականությունը, չիմնելով բնակ պրիմիտիվ:

«Զնավորման էսքիզները ավարտելուց հետո նա հրավիրեց ինձ, որ միասին դեկորները նկարենք,— գրում է Գարրինը Գյուրջյանը,— ... որքան հիշում եմ այդ էսքիզները մեռու էին պիեսի հեղինակի երազած անտիկ աշխարհի հնեանոսական, պարզ, համաշափ կոնստրուկտիվ տաճարի պատկերավոր լուծումից: Առաքելլանի տաճարը իր ստրոկտորայով հին էր, քարանձավային բնույթի և մոտենում էր բնական ժայռի կամարներով մի ինչ-որ ընդարձակ քարայրի... Կոլորիտը մալախիտի կանաչ-կապտավունն էր, ստվերներում մանուշակագույն, սևի թերումներով: Պարզ հիշում եմ, մի տեղ արտառոց խորհրդավոր մի ֆենոմեն, թանձրը խավարից տարօրինակ նայում էր Բակա առեղծվածային մի աշք»¹:

Երկր բնմերն ել Բագեցված էին դեկորներով և նըրանց կապը՝ իրար հատող բազմապիսի երկրաշախական ծավալներ, որոնք մոնումենտալ շունչ էին Բաղորդում ամբողջ ներկայացմանը: Իրոք «Էպիկական շրնչավորում, լայնատարած, բազմապլան», որ ծառայում էր թատրոնը ժողովրդին մոտեցնելու, ավելի մատչելի ու բազմարանգ դարձնելու գաղափարին²:

¹ «Սովետական արվեստ», 1968, № 4, էջ 28:

² Ի դեպ, Այս Խարազյանի ամձական արխիվում պահպանված է ջրաներկ մի նկար՝ Ս. Առաքելյանի նկերը, «Կովուտորան լեռներում» կտավի մի տարրերակը՝ Ուղտը՝ զվահին զարդարանք՝ սապատիզ համառ ու հաստատ հենակել է ներասանց: Լեռներից իշխում է ուղտերի քարավանը, բեռնված դեկորներով ու բնական այլ կամուրքներով: Այն տապակորությունն է թողմում, որ կարծես քատրոնց տարածվում է, ճգվում դեպի լեռները: Վրան մակագրություն կա՝ «Ժողովրդի սիրելին, ժողովրդին սիրող, ժող-

Որքան էլ ուշագրավ էր Սուաքելյանի աշխատանքը, շանադիր, այնուամենալիք բացօթյա պայմաններում ձևավորման հրերանգները հանդիսականին լրիկ հասնել չէին կարող: Դեկորացիոն արվեստի լիարժեք, բազմակողմանի փորձերի համար ավելի նպատակահարմար են փոքր բեմահարթակները: Պատահական չե, որ նոյն շրջանում ոռուսական բեմանկարչության անհամետաքրքրական նմուշները ստեղծվում էին գրլիավորապես Մոսկվայի Կամերային թատրոնում:

Սուազին պետքատրոնն էլ շնորի ծավալների առումով նման պայմանների մեջ էր: Բնականաբար, հանդիսասրահի տարածության՝ փոքր դահլիճի կազմակերպումն ու հաղթահարումը այն ժամանակ ավելի առաջնահերթ ու կարևոր խնդիր էր դառնում, քան նույնիսկ կոնկրետ ներկայացումների ձևավորման հարցը: Սուազ Շկարչի միջնորդության անկարելի էր այդ լուծել: Ինչպես տարիներ առաջ Մոսկվայի «Պիտորեսկ» կաֆեին Գ. Յակովովի կոնստրուկտիվ հնարագիտությունը թատերական կերպարանը տվեց, այնպես էլ Մ. Սարյանը Պառլամենտ կոչված խոճուկ շնորի դահլիճը դեկորատիվ-մոնումենտալ գեղանկարչության միջոցներով վերածեց գրավիչ թատերասրամի:

ՎԱՐԱԳՈՒՅՐԸ

Սարտիրոս Սարյանին էլ հեղափոխությունն է բնել թատրոն: «Նա, որ դրանից առաջ խուսափել էր

դովրյական դերասան Ամո Խարազյանից՝ Ս. Առաքելյանից, 8/8, 1988»: Դա կարելի է համարել արտիստի մկարշական յուրօրինակ բնույթագիրը, որ մնացել է որպես հիշատակ «Բուրմ Տարկվինի» համատեղ աշխատանքից:

Կամերային թատրոնի պատվերը կատարելուց, իսկ 1921-ին Դոնի Ռուսովի կրածշտական թատրոնում սիրահոժար աշխատել էր «Արքայադուստր Տուրանդուտի» բևմադրության վրա¹, Երևանի պետքատրոնի Բիմ-նադրման առաջին օրերին սկսնց մասնակցել նույնիսկ շնորհի Ենթին ձևավորման աշխատանքներին, պաշտոնապես համարվելով թատրոնի խորհրդատու Շկարի- Տլի:

Թատրոնի գոյության երկրորդ տարում (1923) էր, որ բնից կախվեց Սարյանի վարագույրը, դառնալով պրահի համար միանգամայն արտաստվոր երևոյթ: Թատերական վարագույրը նորություն չէ, գրեթե այնքան է Բին, որքան ինքը թատրոնը: Ներկայացում հասկացողությունն էլ անխօնի կերպով առնչվում է վարագույրի հետ: Դա մեծ մասամբ բնմը հանդիսարանից կամ գործողությունը գործողությունից բաժանող միջնորմ է: Սակայն ժամանակի ընթացքում, թատրոնի վրա տարածած կերպարվեստի ազդեցության հետևանքով, գեղարվեստական մշակման ենթարկվեց նաև վարագույրը: Այսուամենայնիվ շատ քիչ են նկարազարդված այն վարագույրները, որոնք իրենց թեմատիկ բովանդակությամբ և արծարծած գաղափարներով մտել են թատրոնի պատմության մեջ: Հայտնի են, օրինակ Լ. Բակստի, Ֆ. Շեխտելի, Կ. Սոմովի, Ա. Գոլովինի, Ֆ. Ֆեդորովսկու և ուրիշների գործերը: Մի դեպքում դրա թեման եղել է, ասենք, Էլիզիումը՝ մեռած Բոգիների միթոլոգիական հանգստավայր, մյուս դեպքում պատկերվել է ծովի կոթակների վրա թոշող ճայ, ապա ի-

¹ Զիրականացված բևմադրություն: Մոսկվայի Ա. Բախրուշինի անվան թատերական թանգարանում պահպանվել է միայն Պատմազլմեի տարազի էսքիզը:

տալական Դել արտելի պերսոնաժներով մի կոմպոզիցիա: Դիմել են նաև պլակատային ձևերի՝ Բամաշափ Շախշանկարի վրա՝ մուրճ ու մանգաղ: (Չենք նշում բազում ու բազմապիսի այն վարագույրները, որոնց նյութը ավանդական քնարն ու դափնեալսակն են, երկընքի կապուտում ճախրող հրեշտակները): Սրանք հիմնականում գեղանկարչական խնդիրներ են բարձրացնում կամ շշափում թատրոնի գեղարվեստական հակումներին առնչվող առանձին հարցեր: Թերևս բացառություն է կազմում Պիկասոյի ստեղծած վարագույրը Բ. Բրեխտի «Բեռլիներ անսամբլ» թատրոնի համար՝ խաղաղության աղավնին:

Իր թեմատիկ բովանդակությամբ և գաղափարական ուժով Սարյանի վարագույրը բացառիկ տեղ է գրավում: Դժվար է այն գերազնահատել. նրա ժամանակակից շունչն ու հնչեղությունը անժխտելի են:

Ի՞նչ էր պատկերված վարագույրի վրա. «Հայատանը, ամբողջականացած Հայոց տունը, որ հառնել էր մոխիրներից նոր մի կյանքի ծարավով»: Երկրի համայնապատկերը կար այնտեղ, ժողովրդի ցնծագին տրամադրությունները, արտաթայտած լեռների լեզվով. լեռներ, որ կարծես մեկ ծառու են լինում երկնքի առջև, մեկ տիրաբար հանգչում երկրի ընդերքին: Մարդիկ էլ ասես պատկերված են լեռնագագայթներին մոտիկ: «Կենտրոնում, աշքի առջև, վառ դեղին կտորի վրա՝ բոցեղնեն խարույկի նման բոնկվել էր կանանց ուրախ մի խմբապար: Եվ պարում էին մի քիչ նազով ու մի քիչ էլ մոռացած կանացի նազանքը, պարում էին տղամարդկանց նման»¹:

¹ Վիգեն Խեցումյան, «Գուշեր և երամգներ», 1962, Երևան, էջ 24, 25:

Թատրոնը տոնահանդես է, այս հայտնի միտքը կերպարվեստի միջոցներով հազիվ թե կարելի լիներ ավելի վառ ու պատկերավոր արտահայտել, քան արտահայտն Սարյանը: Հայրն անի բնության կերպար, ժամանակի վեհացնող շունչ, նոր կյանք կառուցող մարդու ամսահման եռանդ և մեծ հավատ ապագայի նը-կատմամբ: Գեղանկարչական ամենազոր միջոցներով այս միտքը հասնում էր թատրոնում նստած ամեն մի հանդիսականի:

Թերևս այս վարագույրի տպավորությամբ է Մկրտիչ Զանանը գրել. «Զանանք մեր արվեստին տալ մեր լեռների սլացիկ ու վերամբարձ վաևմությունը, նրանց կոպիտ ծանրության գեղեցկությունը, մեր հոգիները թող խմորվեն նրանց խոռոչների խորհրդավոր խորությամբ ու նրանց բազմագագաթ ու լայնածավալ միավորությամբ»¹: Դա ոչ միայն անհատական ընկալում էր, այլ արվեստագետի, թատրոնի ու հանդիսականի միարան եզրակացությունը: Վարագույրը դարձել էր յուրաքանչյուր ներկայացման ձևավորման բաղկացուցիչ մասը, անկախ այն հանգամանքից, թե ինչ պիես էր ցուցադրվում՝ յուրաքանչյուր ներկայացման վրա դնում էր ազգային արվեստի սարյանական դրոշմը: «Այս վարագույրի տպավորությունը այնքան ուժեղ էր և այնքան ինքնուրույն,— գրել է Վահրամ Փափազյանը,— որ նրա բարձրանալուց հետո էլ, հակառակ ներկայացված գործին, որ հայկական չէր, ես շարունակեցի ինձ զգալ միշտ Հայաստանում, միշտ հայ: Եվ եղան բոպեններ, որ այդ ոչ հայ հեղինակը, որը լսում էի, ինձ թվաց, որ ոչ միայն խոսում, այլև մտածում է հայերն: ... Գերմանացի Շիլլերն անգամ այդ հանդիսավոր գի-

¹ «Պալքար», 1923, № 10—11:

շերին նաև էր գուցե անգիտակցարար, շնորհիվ նայ նկարչի այդ վարագույրի¹:

Սպազմին ձևի և սոցիալիստական բովանդակության վառ համադրության արդյունք էր վարագույրը, և կոչ էր անում թատրոնին քայլել կյանքին ու ժամանակին համբեաց: Իսկ գործնականում թեմահարթակը հանդիսարանին մոտենցնելու, նրան անվերջ թատերական մթնոլորտում պամելու շատ յուրահատուկ մի դրսուրում, որ սովետական թատրոնի պատմության մեջ դըժվար է գտնել:

Վարագույրը սովետական տարիներին Սարյանի ստեղծած առաջին նշանակալից գործն էր և այժմ նայ թատրոնի պատմաբանը նրա կողքից անտարբեր անցնել չի կարող: Դա իր հերթին Սարյանի ստեղծագործության անկյունաքարտը դարձավ, նախերգանքը այն մեծ գործի, որ ծավալեց նա հետագայում առհասարակ և թատրոնի բնագավառում՝ մասնավորապես²:

¹ Լ. Խալաբյան, «Սարյանը և թատրոնը», 1980. Երևան, էջ 141—142:

² Վարագույրի թեմայից նույն տարրում ծնվեց Սարյանի համբաւայտ «Հայաստան» պամֆլետ: Մոտ տաս տարի կախված մնալուց հետո, վարագույրը հնտագայում, 1968-ին վերականգնվեց և տեղ գտավ Հայաստանի պատկերասարանում: Բացի այդ, Վարագույրը օգտագործվեց նույն թատրոնի «Նեապի ապագան» մերկայացման մեջ (1980), այս անգամ որպես պատմական ժամանակաշրջանի խորրդանշից: Կոմպոզիտորների միության նորակառուց շնորհում էստրադայի պատը ձևավորված է վարագույրի մի այլ տարրերակով, ինչպես և Կոմիտասի նրկների ակադեմիական թրատարակության ֆորզացը: Սումողության ամփամ թատրոնի նոր շնորհ վերակառուցումից հետո վարագույրը ծածկեց մեմսարանի ընդարձակ ճակատը՝ Սարյանի նոամկար կոմպոզիցիալով, որի կենտրոնում բում վարագույրն է:

1926-ին Փարիզում գտնված ժամանակ Սարյանը Ն. Բալինի «Զդիկ» թատրոնի համար ձևավորեց «Զյուլեյկա» մեջախաղ-ներկայացումը. Բիմնականում մի վարագույրի միջոցով, որը այս դեպքում հարթապատկերային բնույթի կոնկրետ դեկորացիար էր գունային սուր հակադրություններով լուծված: Տեղի ուսական մամուլը գովասանքով է արտահայտվել Սարյանի ձևավորման մասին¹: Խսկ 1930-ին Օդեսայի օպերային թատրոնում նա առաջին անգամ անդրադարձավ «Ալմաստի» բևմադրությանը: Երկուսն էլ իրենց բնույթով նետաքրքրական, ինքնատիպ ձևավորումներ լինելով, ուղի էին հարթում թատերական այն բնդմնավոր աշխատանքի համար, որ կատարեց Սարյանը 30-ական թվականներին:

Սարյանի վարագույրը որոշ իմաստով կենտրոնացրեց այդ շրջանի հայ բևմանկարիչների ուշադրությունը ձևավորման յուրահատուկ, «աննպաստ» պայմաններից առաջացած խնդիրների վրա: Նկարիչը իր ստեղծագործական երևակայությանը պիտի ապավիճներ ավելի և ամեն կերպ ձգտեր լինել սեղմ ու հնարամիտ: Նըման պայմաններում ճարտարապետական, պլաստիկական հստակ ձևերի կիրառումը երբեմն դառնում էր գըրեթե անխուսափելի:

¹Տե՛ս «Последние новости», (Փարիզ), 1926, 13 նույնագրերի: Այստեղ Օուզ թատրոնում Սարյանի կողմին ձևավորում են ուսուցել Ա. Բենիամ, Ս. Սուհելկինը, Մ. Շորումինսկին:

ՄԱՐՏԱՐՍՊԵՏԻ ԻՆՔՆԱՏԻՊ ՓՈՐՁԵՐ
ԵՎ ՀԵՏՈ ՄԻՀԱՆԱՋՑԱՆԸ

Այդպես էր ձևավորել «Անտիգռնեն» (1922) ապագա նշանավոր ճարտարապետ Կարո Հալաբյանը: Բնմահաթակը կարծես հանդիսասրահի անմիջական շարունակությունը լիներ: Դամիլիճից մտնելով, դերակատարները ուղղագիծ աստիճաններով բարձրանում էին վեր, ապա հանդիպում այունաշարով եզերված էլիպսաձև մի ճրապարակի: Խակ դիմացը հունական սքեման էր: Անտիկ ճարտարապետության պատրանք, դասական ողբերգության ոգուց բխող պարզություն, որոնք Շերդաշնակվում էին քեմադրության հույսքան պարզ սկզբունքների մեջ: Ամեն ինչ կոչված էր փոքր քեմի շրջանակները ընդարձակելու և դերասանին գործնելու լայն հնարավորություններ տալու համար: Բնմի և դամիլիճի սահմանները որոշում էր օրկեստրի վրա, զոհամեղանի կողքին նստած ծերակույտը, որպես հունական թատրոնի երգչախումբ: Նրանց զգեստները՝ սև և սպիտակ պարեգուտներ, ոչ թե ցրում, այլ հավաքում և կազմակերպում էին դիտողի ուշադրությունը:

Կ. Հալաբյանի ստեղծագործության մեջ 20-ական թվականների սկիզբը բնորոշ էր նրա տաղանդի բազմակողմանի դրսևորումներով (ծաղրանկար, քանդակ, գրքի ձևավորումներ և այլն). սակայն թատրոնը այն բնագավառն էր, որ իրեն դեռևս լրիվ չգտած Հալաբյանին մղում էր դեպի մոնումենտալ, մասշտարային արվեստը, որ նրա գեղարվեստական խառնվածքի էռթյունն էր: Դեռևս Մուսկվայում ուսանելու տարիներին, նա որպես Ակադիչ, իր ընկերոջ՝ ճարտարապետ Միքայել Մազմանյանի մեջ գործուն մասնակցություն է ու-

նեցնէլ Հայկական դրամատիկական ստուդիայի աշխատանքներին, իսկ Երևանում, դարձյալ Մ. Մազմանյանի թամագործակցությամբ, 1924-ին ձևավորել «Հրճիգներ» ժամանակակից դրամայի և «Քաջ նազար» կատակերգության թեմադրությունները:

Ուշագրավ են այս երկու աշխատանքներն ել, մասնակիանդ «Հրճիգները», որ փաստորեն առաջին բազմակողմանի, պրոֆեսիոնալ ձևավորումն էր Պետքատրոնում: Դեպի կոնստրուկտիվիզմ հակված ճարտարագետները, որքան էլ տարօրինակ թվա, այս ձևավորման մեջ ավելի գեղանկարչական էին, բան կոնստրուկտիվիստական: Հետաքրքրական էր բազմահարկ շենքերի հեռանկարով բացօթյա սրճարանի տեսարանը: Հեռավոր շենքերի պատութաններին փոխարինում էին կարմրին տվող գունզգույն լաթեր: Իսկ գլխավոր ներու Ռոդելիկոյին հետևող ծպտյալ շքախումքը վառ գունեղ զգեստներով, խոսում էր հեռապատկերի հետ, հարստացնում ներկայացման գեղանկարչական կերպարը: Հականեղափոխական, դավադիր ուժերը ծաղրի էին ենթարկված այն դիմակների միջոցով, որ կրում էին իրենք:

Թատրոնը հեղափոխությանը համահնչյուն խաղացանկի էր ձգտում, որոնում հեղափոխական պայտու և «Հրճիգները» դրա առաջին փորձն էր: Գեղանկարչական մտածողության տեսանկյունից դատելով, անկանակած, դա լավ սկիզբ էր, նոյնիսկ անակնկալ ու հանկարծակի առնաջադիմություն (թեև իր բնույթով միշտ չէ, որ համապատասխանում էր տեղ-տեղ մակերեսային, արտաքին դիմամիզմի վրա կառուցված ոեժիսրական մեկնաբանությանը):

Եթե «Հրճիգներում» պայմանական թատրոնի, հատկապես դեկորների թատերային ոճը կրում էր վախ-

թանգովյան «Տորանդուտի» գգալի ազդեցությունը, մի հանգամանք, որ ինքնին ուշագրավ էր, ապա «Քաջ Նազարը» միանգամայն ինքնատիպ լուծում ուներ*:

Պիեսի օպերական, սատիրական փոխարարերությունները ձևավորման մեջ ասես դիտված էին մանկան ակնապիշ հայացքով, մանկան անբասիր երևակայությամբ: Կենցաղի և կենցաղագրության ոչ մի նետք, ասեն ինչ ընդհանրացված էր ծավալային փոքր մասշտարքների մեջ: Նույնիսկ Նազարի խրճիթը մանկական խաղալիք էր հիշեցնում, բակում դրված ծառը՝ տոնածառ: Բեմը երբեմն վերածվում էր պարզամիտ Ակարագարդի: Փոքրածավալ դեկորների մեջ հերոսները պայմանական մեծ էին թվում, հեքիաթից առնված: Ժողովրդական հեքիաթի ոգին, նրա իմաստությունն ու խորաթափանց գաղափարը մատուցված էր նույնքան պարզ ժողովրդական մտածողության և պատկերավոր դեկորացիոն ձևերի միջոցով: Նման պարագաներում ասես ուռնանում էր բնմահարթակը, դուրս գալիս իր նեղինի սահմաններից:

Ավելի փոքր էր բնմահարթակը Մոսկվայի հայկական կոլտորայի տան շենքում, ուր գործում էր դրամատիկական ստուդիան: Այստեղ «Ապահովանի» («Պաղտասար աղքար») ձևավորմամբ էլ սահմանափակվեցին Հայարյանի թատերական ծառայությունները, եթե նկատի չառնենք որ նոյն, 1927 թվականին նրա ջանքերով է իրականացվել շինարարների ակումբ-թատրոնի շենքը¹:

* Այս հատվածները շարադրված են Մ. Մազմանյանի ներկայական ումեցած զրուցմերի հիման վրա:

¹ Մ. Մազմանյանի և Գ. Քոչարի համագործակցությամբ նախագծված շինարարների ակումբում ժամանակ առ ժամանակ գոր-

«Մեր տրամադրության տակ կար բնմ-էստրադա առանց վարագույրի, — գրում է ստուդիայի գնդարվեստական դեկանար Ռուբեն Սիմոնովը: — Հալարյանը առաջարկեց ներկայացման հետաքրքրական դեկորատիվ լուծում: Առաջին պլանի վրա դրված էին շիրմաներ, որոնք յուրովի փոխարինում էին վարագույրին: Յուրաքանչյուր շիրմա ուներ նրկու փեղկ, որտեղից ներկայացման սկզբում հայտնվում էին դերակատարները: Նախարանին հաջորդում էին գործողությունները, և այն ժամանակ, շիրմաները դառնում էին դեկորներ... Նրա աշխատանքները թատրոնում հետաքրքրի էին և նորարարական»¹: Թերեւս ավելի ճիշտ կլիներ ասել թարմ ու թերեւ, քանի որ Մոսկվայի պայմաններում այդ տիպի ձևավորումներ Մելեխյուլի և այլ ռեժիսորների կողմից 20-ական թվականներին հաճախ էին կիրառվում և նոյնիսկ արդեն արձագանք էին գրտել Առաջին պետքատրոնի թեմահարթակում Ա. Ալաջյովի ձևավորած «Պարտիզանի շունը», «Վարժապետ Բուրուսը» և այլ ներկայացումների մեջ:

Լոկ այս աշխատանքը չէր, որ աչքի էր ընկնում դեկորացիոն մտահղացումների, թեմական ձևավորման թարմությամբ: Հայկական դրամատիկական ստուդիայի ողջ գործունեությունն իր բնույթով կրում էր հեղափոխական տեսնողվ բռնված թատերական Մոսկվայի, նրա գեղարվեստական ոճերի բազմազանության, երբեմն էլ իրարամերժ գաղափարական հոսանքների ազ-

ծեղ և նը նրանի բոլոր թատրոնները: Այժմ գործում է Կ. Ստանիսլավսկու անվան պետական ուսուական թատրոնը:

¹ Լ. Բ. Կարսիկ «Կարօ Ալեքսի», Երևան, 1966, էջ 79: Սիմոնովի նույզագրական ակնարկի մեջ շիրման է թեմադրության ստուգա թվականը, որ պեսը է լինի՝ 1927: Բացի այդ, չի օշված ձևավորման նրկորոր հեղինակի անունը, որ Մ. Մազմանյան է:

դեցությունը: Իսկ այդ հարցում բեմանկարիչների ծառայությունը բնավ էլ երկրորդական չէր: Ամա թէ ինչ է գրում նույն Ռուբեն Սիմոնյան «*Standart*» շաբանցի խմբագրությամբ լույս տեսած «*Standart*» ամսագրում. «Ժամանակակից թատրոնը ձգտում է ազատագրվել պայմանական վարագույրից, դեկորից, քանդել թեմը, լայնացնել այն մինչև հրապարակային սահմանները: Եվ գալիք թատրոնի տեղը հրապարակն է, որը հանդես կգան հսկայական օրկեստրներ, երգեցիկ խմբեր, տնտի կունենան մարմնամարզական տոներ, ցուցահանդեսներ և այլն»¹: Այս մթաղորդում էր գործում ստուդիան ու թերևն այդ ազդեցությամբ էլ շատ ներկայացումների մեջ վարագույրը ձեռք բերեց կրկնակի ֆունկցիա՝ դեկորանկար էր և դարձինը բեմահարթակից զատող միջոց: Մի շարք ներկայացումների մեջ կամերային տեսարանները փոխարինվում էին բացօթյա տեսարաններով, մեծ կարևորություն էր տրվում բեմական զգացուների գեղանկարչական բովանդակությամը: Այդ սկզբունքով էր Մ. Մազմանյանը ձևավորել «Պեպոն» (1925), իսկ դրանից առաջ, դեռևս 1922-ին Հովհակիմ Միհանաջյանը՝ «Հերիաթ» և «Երկու վախկոտ» ներկայացումները:

Հ. Է. Միհանաջյանը 10-ական թվականներին Մոսկվայում ճանաչված նկարիչ էր, և իր ստեղծագործական խառնվածքով հակված դեպի Արևելք, դեպի Բնիաթային երևակայական աշխարհները²: Հեղափոխու-

¹ «*Standart*», 1924, Մոսկվա, էջ 18: Ամսագրից պահպանված թագավորություն օրինակներից մեկը գտնվում է Երևանի գրականության և արվեստի թանգարանում:

² Հ. Միհանաջյանի ստեղծագործական բնութագիրը տե՛ս Հ. Լավրսկի, «Ա. Է. Միհանաջյան» գրքում, Մոսկվա, 1916.

թյան տարիներին նրա ստեղծագործության վրա ուշադրություն դարձրեց Ա. Թափրովը, Բանձնարարելով «Երկնագույն գորգ» ներկայացման ձևավորումը¹, իսկ այնուհետև Սուրեն Խաչատրյանի հրավերով նա միաժամանակ աշխատեց Հայկական դրամատիկական ստուդիայում: Առանձնապես հետաքրքրական էր «Հերթափի» բեմանկարչական լուծումը: Հիմնականում դա մի վարագույր էր, որ պատկերում էր սիրահար հերոսներին՝ երկուսն էլ անդունի և զրին կանգնած, ձեռքերը պարզած միմյանց, լեռնային բնանկարի ֆոնի առաջ: Իսկ կամ-կարասին ամփոփում էր պարսկական մանրանկարչության ոճով կատարված գորգը, որի վրա գործող հերոսների՝ գունային հակադրություններով ըստեղծված՝ զգեստները առանձին շքեղություն և փայլ էին տալիս ամբողջ բեմադրությանը: Ուշագրավ է և այն, որ վերոհիշյալ վարագույրը տարիներ հետո օգտագործվել է նաև Ս. Ալաջալովի ձևավորած «Խաթարալա» ներկայացման մեջ (1928), այս անգամ արդեն որպես Մասիսյանի և Մարքրիտի զավեշտական սիրո իլլուստրացիա (Ելմելով անշուշտ պիեսի այն ժամանակվա մեկնարանության բնույթից):

ՍՔԱՆՉԵԼԻ ԺՈՐԺԸ

Սակայն Մոսկվայի ստուդիական ներկայացումների ոգեշնչողը, կամ ինչպես գրում էին ծրագրերում, դեկորների գեղարվեստական դեկավարը Գեորգի Ցա-

¹ 1917-ի ձևավորում, պիեսի՝ «Բնոյինակ» 1. Ստոյլցա:

կուլովն էր, մի Ակարիչ, որ կոչված էր մեծ գործ կատարելու ոչ միայն հայ, այլ նաև և առաջ ուսւ սովորական թատրոնի դեկորացիոն արվեստի զարգացման բնագավառում:

Յակուլովի թատերական գործունեությունը ամբողջությամբ համընկնում է եւտիեղափոխական կյանքի առաջին տասնամյակին: Նախատվեստական տարիները նրա համար անդադար պրատումների, հետևողական և համար նախապատրաստական աշխատանքի բարդ ու բովանդակալից մի շրջան է՝ կերպարվեստում իր ուրույն դեմքը գտնելու, իր տեղը հաստատելու ճանապարհին:

20-ական թվականներին թերևս ոչ մի թատերական Ակարչի մասին այնքան շատ, այնքան հիացական տողեր չեն գրվել, ինչպես Յակուլովի: Նա ոչ միայն թատերական ականավոր Ակարիչ էր, լայնորեն հայտնի ուսւ իրականության մեջ, այլև հասարակական երևելի գործիչ, արվեստի տեսաբան, հոնորոր, քաղաքացի, որին ճանաչում և բարձր էին գնահատում նաև արտասահմանում: Բավկական է հիշել, որ Փարիզի 1925-ի միջազգային ցուցահանդեսի ժամանակ, Արան ընտրել են թատերական մասնաճյուղի փոխ-պրեզիդենտ: Նա մոտիկից շփվել ու գործակցել է ժամանակի բազմաթիվ նշանավոր գորոդների, Ակարիչների, ուժիսորների, քաղաքական ու գեղարվեստական խոշոր գործիչների հետ, այդ թվում Շիրվանզադեն և Մայակովսկին, Սարյանը և Պիկասոն, Թամանյանը և Վ. Շչուկոն, Բուրգալյանը և Մելերխուլդը, Հովհ. Հովհաննիսյանը և Եսեմինը, Հ. Գյուրջյանը և Թահրուվը, Մ. Արուտչյանը և Լեմեն, Մ. Շահինյանը և Ս. Պրոկոֆևը, Արուս Ռոկանյանը և Արմենորա Դումկանը, Մուավյանը և Լուսաշարսկին: Այս մարդկանց շրջապատում է ստեղծագործել Յակուլով—Թատերական Ակարիչների մասին

վը, ապրել նրանց կողքին, շնչել միևնույն օդը: Բոլորն էլ հարգել են նրան ու սիրել, մեծ բավատ ընծայել որպես բարեկամի, բաղաքացու և խոշոր արվեստագետի: Այսուամենայնիվ մինչև օրս Յակովովի ստեղծագործական կյանքի մասին հրապարակի վրա որևէ ծավալուն աշխատություն չկավ: Նկարչի հարուստ ժառանգությունը տակավին կարու է հանգամանալից ուսումնասիրության: Եղած Այութերն էլ փաստագրական առումով բավական կցկոտոր են, հաճախ իրարամերժ, որոնք ավելի քան դժվարացնում են նրա գնդարվեստական գործունեության հավաստի շարադրանքը: Այդ իսկ նկատառումով էլ հարկ է նրա ստեղծագործության վրա փոքր-ինչ ավելի կանգ առնել:

Յակովովը ասիական բուռն խառնվածք ուներ և նվրոպական դաստիարակություն: Թիֆլիսից մանուկ Բասակում ընտանիքով փոխադրվել էր Մոսկվա, նախ սովորել Լազարյան ճեմարանում, ապա միաժամանակ հաճախել Գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը: «Մեծ սեր ունենալով իմպրովիզացիայի նկատմամբ, ես Ժիտում էի ամեն տեսակի ուսուցում և հրաժարվում ուրիշի աշխարհայացքը վզիս փաթաթելուց»²— գրել է նա իր կենսագրության մեջ: Առաջադիմու է ինքնակրթությամբ: Մոր օգնությամբ ինքն է իրեն դաստիարակել:

¹ 1979-ից Մոսկվայում հրատարակված Ե. Կոստինայի «Գեղորգի Յակովով» ալբոմ-ժողովածում, փաստական հարուստ Այութերով նկալ մասամբ միայն լրացնելու այդ բացը, քանի որ նայ իրականության մետ նկարչի ունեցած ստեղծագործական առնչությունները անտեսված են:

² Նույնը պիտի ասել նաև 1971-ին լույս տեսած Ս. Ալաջալովի գրքի մասին:

³ «Вечерняя Москва», 1928, 29 դեկտեմբերի:

1902-ին «Բամատեղելով Ըկարչի աշխատանքը զինվորական ծառայության հետ» նա կամավոր մտնում է: Կովկասյան գնդերից մեկը, որպեսզի Բնարավորություն ունենա որոշ ժամանակ լեռներում Բանապատրաստից էտյույներ անելու: Իսկ երբ վրա է Բասնում ոռուապոնական պատերազմը, որպես պամփասի սպա անվարան մեկնում է ուզմանակատ: Այսուղի, նրան զարմացնում և Բրապորում է անսպոր բնությունը: Նա տարվում է մանջուրական ավագարլուրների խենթ խաղերով, ամիսներ շարունակ ուսումնասիրում ոլորապուլյա մրրիկը:

Ցակուլովը Ըկարչական-ստեղծագործական խնդիրները ուսումնասիրելու և տեսությամբ հիմնավորելու մեծ հակումներ ուներ: Այդ հետաքրքրությունը պատահական չէր: Նրան հատկապես գրավում էին լուսի առանձնահատկությունները, նրա ազդեցությունը բնության տարրեր կազմվածքների, կենդանական ու բուսական աշխարհների վրա, ինչպես և չինական գծանկարչության ոճի ու ոիլումի ծագման խնդիրները: Նա այսուղի Ըկատեց, որ չինացիների Չախասիրած երկնագույն, կանաչ և դեղին երանգները բխում են այն հիմնական տոններից, որ չինական բնությանն է Բաղրդում արեգակը:

Որտեղի՞ց է գալիս տարրեր ժողովուրդների քաղաքակրթության զանազանությունը, պլաստիկայի, ոճերի և ոիլումների տարրերությունը, Բարց էր տալիս ինքն իրեն Ցակուլովը և պատասխանում՝ արեգակի ընկալման և ազդեցության առանձնահատկություններից: Սա նրա հետևողական պրատուռների և տեսության ձևավորման առաջին փուլն էր:

Վերադառնալով Մուկվա, նա մասնակցում է «Վենոկ» և «Միր խկուստվա» գեղարվեստական խմբավո-

րումների կազմակերպած ցուցահանդեսներին, ուր «Ձիարշավ» կոմպոզիցիոն կտավը (1905) բարձր գնահատականի է արժանանում: Սակայն Ալարիչը, անքավական իր կատարած փորձներից և դժգոհ ձևոք քերածով, դարձյալ նետվում է որոնումների և նոր դժվարությունների հաղթահարման ոլորտի մեջ:

Իր հետևողական զննումները միակողմանի համարելով, Յակովովը 10-աման թվականներին մեկնում է Խոտավիա, հետո Էլ Ֆրանչիա, Արևելյում կատարած եզրահանգումները Արևմուտքում ստուգելու ինչպես և կողորիտի հարցերով զբաղվող մասնագետների հետ խորհրդակցնուու համար: Մի փոքր շրջան նա այսուղի հարում է սիմուլտանիստներին: Նրա աշքին լուրաբանցյուր առարկա միանգամից երևում է բոլոր կողմնով, շարժման մեջ, ինչպես երևում են մի առանցքի շուրջ պտտվելիս:

Առաջին աշխարհամարտի տարիներին Յակովովը գտնվում էր պատերազմի առաջին գծում: Վիրավորվում է, ապարինվում և նորից մեկնում ուզմանակատ: Ինչպիսի պայմաններում էլ լիներ Յակովովը, երբեք չէր կտրվում իրեն անհանգստացնող մտքից: «Հետագայում,— գրում է Ակարիչը,— ապրելով Սև ծովի կովկասյան ափերին, ես շարունակեցի ուսումնասիրել տարերքի— ծովի, արշալուսի, կրակի շարժումն ու սպեկտորները, թռչումների և գազանների շարժումն ու գունափոխությունը, նեց իրենց իրերի և երևոյթների մեջ որոնելով պլաստիկայի և ոճի հիմունքները»¹: Պատասխանը ամենուրեք նույնն էր, նույն էր և եզրահանգումը:

¹ «Յակովով» (ինքնակննսագրություն), Մոսկվա, 1925, էջ 5: Այդ մասին տես՝ Յակովովի հանգամանալից մոռվածք «Գոլուծօ

Այսպես ձևավորվեց բազմաթիվ ու բազմերանգ արեգակների յակուլովյան տեսությունը։ Արեգակը թեև մեկն է, բայց մեկը չէ, գտնում էր նա, քանզի երկրագնդի տարրեր ծագերում նրա լույսը տարրեր թափանցում ունի, տարրեր յարվածություն և ուժ, կապված թեկման աստիճանի, ջերմության, աշխարհագրական անթիվ ու այլազան գործուների հետ։ Դրա հետևանքով էլ տարրեր ժողովուրդների մոտ տարրեր են շարժման ոիթմը, իրերի նրանքը, գծնրի ու ձևերի մարդկանց ընկալումը, հոգերամությունը, քաղաքակրթությունը առնասարակ։

Գծնրի և գույների շարժման փոխարարերության և ոների առաջացման յակուլովյան տեսությունը, եթե նախատվածական տարիներին զուտ գեղանկարչական նպատակներ էր հետապնդում (և դժբախտաբար, այդպես էլ մինչև վերջ ավարտված, ամրողությամբ հիմնավոր տեսություն չդարձավ), ապա հեղափոխության առաջին շրջանից սկսած լայն կիրառում գտավ թատրոնի բնագավառում, օգնեց նկարչին՝ իր ձևավորումներով նոր խոսք ասելու բեմանկարչության մեջ։

«Յակուլովը կարծես սպասում էր Հոկտեմբերյան հեղափոխությանը, որպեսզի հանդես գա առավելապես թատրոնի ասպարեզում, հեղաշրջելու նրա տրադիցիոն արվեստը»¹— ասել է Մարտիրոս Սարյանը, որ նկարչին լավ գիտեր դեռևս նախատվետական տարիներից։

Ֆանտաստիկայի հասնող ոռմանտիկան, բացառիկ հնարագիտությունը, գեղարվեստական անհատակ միտ-

«Ըստ Հայոց ազգագրության՝ «Ալիքոն» ազմանախում, Մոսկվա, 1914, ինչպես առև Մարինովա Շահիմազի բողվածը՝ «Ժօրժ յակով»։ — «Օբ արմանակություն» արմանակությունը, առաջնական առաջնական արմանակությունը»։

¹ «Խորբրդապիտակ» 1929, 9 հոկտեմբերի։

ըլ և մտածողության, երբմն հակասական թվացող ոճը դրսնորում գտան Յակովովի ստեղծագործական բռվանդակ կյանքում, քանի որ նա իրեն չէր սահմանափակում թատրոնով, հանդես էր գալիս նաև ճարտարապետության ու քանդակագործության բնագավառներում, իսկ հաստոցային գեղանկարչությունն ու թատրական դեկորացիոն արվեստը չէր անջրպետում միմյանցից:

Յակովովի թատերական ձևավորումներն ել անընհատ որոնումների արգասիք էին: Բազմերանգ արեգակների գաղափարը, հատկապես լուսի և գույների շարժման շուրջ նրա կատարած հետազոտությունները բնեմական պայմաններում փորձարկելու պարարտ հող գտան: «Յակովովը թատրոնում. նա ոչ միայն բեմի նկարիչ է, մի շարք փայլուն ձևավորումների հեղինակ, այլ թատերա-դեկորացիոն արվեստի ամրող մի փիլիսոփայության ստեղծողը, այն նկարիչը, որ ձգտում է ըմբռնել թատերական ստեղծագործության օրենքները և իր գաղափարների ճշմարտացիությունը սեփական գործերով հաստատել»¹— գրել է նկարչի ստեղծագործությանը լավագիտակ արվեստաբան Ն. Գիլյարովսկայան:

Յուրաքանչյուր բնեմադրություն, որ իրականացվում էր Յակովովի մասնակցությամբ, համարվում էր շրջադարձային կետ, ուղենիշ արվեստի հետագա զարգացման համար: Նա, որ թատրոն էր եկել նեղափոխության կոչով, «հատկապես նրան էլ վիճակվեց կատարել բուն մեղաշրջումը բեմում, որովհետև առաջինը նա փորձեց ըմբռնել թատրոնի քիչ ուսումնասիրված տարերքը»²:

¹ «Современный театр», 1929, № 3, 15 яւарյ.

² Տե՛ս Առյան տեղում:

Բեմական տարածության կազմակերպումը կերպարվեստի ժամանակակից միջոցներով՝ առա մի խնդիր, որ ամենից շատ էր գրաղեցնում նկարչին: Սուածին փորձը Պիտորեսկ կաֆեի ձևավորումն էր (1917), ուր Յակովովը հայտնագործեց թատերական այն օրենքը, նշվել է ժամանակի մամուլում, «որ հայտնի չէր նրա նախորդներ Կորովինին և Սապունովին: Այս վերջինները դեկորները ստեղծում էին անշարժ վիճակի մեջ, հաշվի չառնելով, որ դեկորատիվ առաջադրանքը իր էությամբ հարափոխուն է, և որ գգեստավորված դերասանների ֆիգուրները շարժվում են դեկորների ֆոնի առջև: Կատարվում է գույնների տեղաշարժ: Ընդհանուր գեղանկարչական կոմպոզիցիան պահանջում է թատրոնում հաշվի նստել այդ շարժման մետ: Յակովովը իր առջև դրված խնդիրը այստեղ լուծեց մեծ հնարամտությամբ, նետագայում նրա մյուս գործերը եկան զարգացնելու և խորացնելու այդ փորձը¹:

Այդ նորույթը, բեմական իրադրության անտովոր ընկալումն ու համարձակ «տեղաբաշխումը» գրավեց ժամանակակիցների ուշադրությունը: Նրա մետ սիրով էին աշխատում գրեթե բոլոր ականավոր ոնժիստրները, նույնիսկ նրանք, ովքեր իրար նկատմամբ ժխտողական վերաբերմունք ունեին: Միակ գեղարվեստական օջախը, որի մետ համեմատաբար երկար կապվեց Յակովը՝ Կամերային թատրոնն էր: Այստեղ, Թահրովի մոտ նա դարձավ 20-ական թվականների բեմանկարչության ամենագլխավոր դեմքերից մեկը, ձեռք բերեց միջազգային ճանաչում: Հատկապես այդ թատրոնի արտասահման կատարած հյուրախաղների ժամանակ, Փարիզում ցուցադրված «Արքայադուստր Բրամբիլլա»

¹ «Мастерство театра», 1922, № 1, с. 77.

և «Ժիրոֆին-Ժիրոֆյա» Շերկայացումները մեծ հուզում-մերի տևողիք տվեցին: Զնավորման կարծրացած սկզբարումքների յակուլովյան վերանայումը ոմանց նույնիսկ վտանգավոր թվաց: Անդրև Անտուանը գրեց, որ պետք է միջոցներ ձեռք առնել սովետական թատրոնի ազդեցությունից զերծ մնալու համար: «Ես կարծում եմ,— նշում էր նա,— որ սա ամենավտանգավոր հարձակողական շարժումն է, որ երբիցն սպառնացել է մեր թատրոնին: Այդ Շերկայացումներում ամեն ինչ, և' դեկորները, և' զգեստները, և' միզանցնեները, և' մեկնարանությունը ձգտում են ավերել մեր դրամատիկական արվեստը, այն արվեստը, որ ստեղծվել է աստիճանաբար, դարերի ընթացքում»¹:

Որն է այդ նորն ու առանձնահաստուկը:

«Արքայադուստր Բրամբիլլայի» գործողությունները ծավալվում էին կառնավալի ֆոնի վրա: Դիմակներ ու թիկնոցներ, պտտահարթակների անվերջ օգտագործում, լուսի փոփոխական գունապատկեր: «Գուշների գլուխապտույտ խաղը, յակուլովյան կոնստրուկցիաների կախարդական թեթևությունը վիճարկում էին ռեժիսուրական հնարամիտ միզանցնեների, արտահայտիչ մնջախաղի, դերասանական փայլուն կատարումների մեջ»— Աշնակ է Ալիսա Կոռնելին իր հուշագրերում: Խոկ արվեստաբան Աքրամ Էֆրոսը Յակուլովի «Բրամբիլլան» բնութագրել է այսպես. «Նաման և սովալուկ 1920 թվականին այդ կենսահաստատ կապրիչոն ջերմացնում և հուսադրում էր... Այդ ձևավորման մեջ Յակուլովը իրականացրեց իր հակումները պաթետիկայի

¹ Մեջքերումը կատարված է Ն. Գիլարովսկայալի «Театрально-декорационное искусство за 5 лет» գրքից. Կազան, 1924, էջ 5:

Ակատմամբ... Նա շնչող նկարից էր. լողում էր ցոլարձակումների մեջ: Նա տարածվել էր ծիածառի նման, սիրամարգի պես փոել փետուրները»¹:

Երկու տարի անց, 1922-ին թեմադրված «Ժիրոֆիլ-Ժիրոֆյա» հինգավորց օպերետը մի այլ սկզբունքով էր վերածվել հանդիսանքային ժամանակակից արարողության: Այստեղ դեկորները միանգամայն ուրիշ լուծում և կառուցվածք ունեին, ավելի շուտ դրանք, նույն էֆրոսի արտահայտությամբ, «շարժման մեջ դրված կաղապարներ էին, որ գործում էին դերասանի նետ և դերասանի համար»: «Ժիրոֆիլ-Ժիրոֆյան» համարվեց ներկայացում-տիխապը և դրա շնորհիվ գտնվեց Կամերային թատրոնի բազմաբնույթ ուղղության կատակերգական գիծը²: Իր այդ ձևավորմամբ Յակովովը հակադրվում էր ժամանակին գլուխ բարձրացրած չոր ու անկենդան կոնստրուկտիվիզմին, առաջ քաշելով բնմահարթակի տարածության լուծման ճարտարապետական սկզբունքը, երփնագրի սերտ համադրությամբ:

Յակովովի ոչ մի նորամուծություն առանց տեսական Բիմնավորման չէր մնում: Ու թերևս ոչ մի հայ նկարից այնքան նետաքրքրական, բովանդակալից գըրական ժառանգություն չի թողել կերպարվեստի մասին, որքան Յակովովը: Նվ բոլոր դեպքերում, տպագրված հոդվածներում, թե բանավոր գեղուցումների մեջ, յուրաքանչյուր հարցի նա մոտենում և լուծում էր իր՝ յակովովյան մելոդով. հաստոցային գեղանկարչության սկզբունքները կիրառելով թատերական դեկորացիոն արվեստի մեջ և ընդհանակառակն. միաժամանակ դրանք

¹ «Կամերանի թատր և եղա հայունություն», Մ., 1934, ստ. XXXI.

² Նույն տևողում, էջ XXXVI—XXXVII:

Բամադրում էր ընդհանուր ճարտարապետական կառույցների, լուսավորության, զգեստների և այլ միջու ելակետ ունենալով հեղափոխության և ժամանակակից թատրոնի շահերը:

Ամեն մի նոր գործ նախաձեռնելիս Յակովովն իր առջև դնում էր ոչ միայն գեղարվեստական, այլև գաղափարական ու քաղաքական խնդիրներ: «Աշխատելով «Քսանվեցի մոնումենտի» վրա, ես մտածում եի Արևմուտքի և Արևելյքի արվեստները Բամաշխարհային հեղափոխության պլատֆորմի վրա զոդելու մասին», — գրում է նաև շարունակում միտքը, — «հեղափոխական արվեստը անձի պաշտամունք չէ, այլ պայքարի պաշտամունք և կազմակերպված մասսաների վավերացում»: Այնուհետև. «Մենք վավերացնում ենք արվեստը, որպես դասակարգային մտքի Բաղյանակ: Սա մեր ոռմանտիզմն է»¹: Քսանվեցի մոնումենտը, որ Ակարիչը Բամադրում էր Խոհեղափոխական տարիների իր ամենագլխավոր ստեղծագործություններից մեկը, Փարիզի միջազգային ցուցահանդեսում մրցանակաբաշխությունից դուրս արժանացավ պատվավոր դիալումի և փաստորեն լեզինյան մոնումենտալ պրոպագանդայի իրականացման առաջին փորձերից մեկն է Սովետական Միության մեջ²: Այդ մոնումենտն էլ նրա աշքին

¹ «Յակովով» (ինքնակենսագրություն), Մոսկվա, 1925, էջ 15—16:

² Նախագծի ճարտարապետ-Բամադրիմակ՝ Վ. Շշուկո: Մակետը պատրաստվել է Բարվի Յախկին Ազատության Բրապարակում կանգնեցնելու նպատակով. 1924-ին տեղի է ունեցել Բամդիստավոր Բիմնադրությունը, սակայն Բանգամանքների բերումով չի իրականացվել. Այդ մակետը Ակատի ունենալով է, որ Ս. Եսեմիջը իր «Բալլար 26-ի մասին» երկը Ավերաբերել է իր բանկագին ընկերություն «Սիրով» Բիմաքանչ Ակարիչ Յակովովին մակագրությամբ:

«գրանիտյա թատրոնի» կերպարանք ուներ: Իրականության, նոր կյանքի խանդավառ ընկալումը ընդլայնում էր թատրոն հասկացողությունը:

Ցակուլով-Բասարակական գործի ողմանտիզմը բռնորոշվում էր նրա արտակարգ նվիրվածությամբ նոր թատրոնի ստեղծման գործին, թատրոն, որի սահմանները չեն սեղմում, այլ ընդարձակում էր, հանդիսանարային արարողությունների մեջ տեսնելով աշխատավորության դաստիարակման, նրա միտքը քաղաքականապես կազմակերպելու մեծ հնարավորություն:

Ցակուլով-ստեղծագործողը հախուս բնավորության տեր էր: 20-ական թվականների իրադրության մթնոլորտը պահանջում էր ակտիվ մասնակցություն կյանքի բոլոր բնագավառներում, որը մարդու տաղանդը վերաբասու էր օգնելու կյանքի վերակառուցման գործին: Այդ է պատճառը, որ Ցակուլովը, հիմնականում ուսութառունի Շկարիչ լինելով, Շկատելի շահախնդրություն էր ցուցաբերում նաև ազգային մյուս թատրոնների վիճակի Շկատմամբ:

Իր տասնամյա գործունեության շրջանում Ցակուլովը երեք անգամ անդրադարձավ Բրեկան թեմաների, տարրեր թատրոններում ձևավորելով «Երրայեցի այրին», «Թափառական Բրեա» (1928) և «Վենետիկի վաճառական» (1926) պիեսները: Եվ ամենուր հետապնդում էր մի նպատակ, որ նա պարզ ձևակերպել է Հարիմա թատրոնի «Թափառական Բրեա» ներկայացման կապակցությամբ՝ «Մարդկային գիտակցությունից դուրս մղել քաղքենիական ջիուդ հասկացողությունը...»¹:

¹ Н. Гиляровская — «Театрально-декорационное искусство», стр. 48.

Սպահական սահմանափակվածությունը ըստ Յակովովի Շերմակ էր սոցիալիստական մտածելակերպին:

Պաթոսի և ներռասկան թատրոնի որոնումները Յակովովը շարունակեց և օպերային բնմում, դիմելով ավելի բարդ մի ստեղծագործության, Զիմինի թատրոնում ձևավորելով «Վագների պաթետիկ «Ռինցին»» (1923): Արդեն իր Էությամբ թատերային հանդիսաբով լի ստեղծագործությունը նկարչին մղում էր բնմանկարչական ձևերի ճոխության և մոնումենտալության: Նա այստեղ էր, որ երփնագիրը փոխարինեց լուսագրով: Ծարտարապեսորեն լուծված մոնումենտալ դեկորների մեջ Յակովովը կարողացավ արամեստ քանալ դեպի պատմության խորքը, որպեսզի հավերժական նյութը մեկնաբանված լինի արդիականության լուսի տակ և իսկական պաթոս հաղորդի անցլալին, «որովհետև հեղափոխությունը որպես խորհրդանշան ապրում է բոլոր ժամանակներում»¹: Հատկապես մասսայական բուռն արարողությունների դրսնորման տեսակետից «Ռինցին» մակետը, ինչպես գրվել է մամուլում «դարշագրանք էր ոռուսական (և միայն ոռուսական) թատերական գեղանկարչության մեջ: «Ռինցին» հներռասկանությունը չէր կարող գտնել ավելի համահանճար պլատիկ արտահայտություն... Եվ պիտի ենթադրել, որ մոտիկ ապագայում լուսագիրը թատրոնում կգրավի երփնագրի տեղը»²: Իրոք Յակովովի լուսագրի հայտնագործումը իրականացավ ամենուր, թեև հետագայում 20-ական թվականների նվաճումները ինչ-ինչ արվեստաբանների թիրտ միջամտությամբ կասեցվեցին և խորթուչակվեցին մեր արվեստի համար:

¹ Գ. Յակովովի արտահայտությունն է: Տե՛ս ըույն տեղ, էջ 46:

² «Мастерство театра», 1922, № 1.

Սովետական երկրի հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերը Ակարչին մղում էին դեպի արդիական թեման, դեպի աշխատանքային սխրագործության առօրյան և նրա սիմվոլիկ արտացոլման եղանակները: Ցակուլովի մասշտաբները լայն էին, նրան պետք էր նոր կյանքի հաղթանակը ցուցադրել նաև երկրի սահմաններից դուրս: 1927-ին Ցակուլովը Փարիզում, Ս. Դյագիլին խմբի նետ, Զախաճեռնում է Ս. Պրոկոֆևի «Պողպատե ցատկ» բալետի թեմադրության ձևավորումը, ինքն էլ գրում լիբրետոն: Թեման սոցիալիստական արտադրությունն էր, վերակառուցվող Ռուսաստանի կերպարը. առ այսօր աննախադեպ փորձ խորեոգրաֆիկ թատերական արվեստի պատմության մեջ: «Բեմադրությունը,— Զախապես գրել է Ակարիչը,— մի անգամ ևս կմարվածի սպիտակ վտարանդիներին, որոնք պնդում են, թե Բեղափոխությունը սպանել է կուտուրան»¹: Փարիզի թեմի վրա և Բանկարծ արտադրական բալետ, մեռնող կարապների փոխարեն՝ գործարան: Դա փատորեն դասական պարարվեստի ավանդները վերանայելու հանդուգն փորձ էր: Բնական էր Շերկայացման «աղմկալից» հաջողությունը: Սպիտակ վտարանդիները այս անգամ էլ տանող տվեցին: «Հիշում եմ նրա (Ցակուլովի— լ. Խ.) անսահման ուրախությունը,— գրել է Ս. Լունաչարսկին,— երբ Փարիզում վիթխարի հաջողությամբ պսակվեց «Պողպատե ցատկը», որ հանգուցյալի ընկալմամբ նոր Ռուսաստանի ոճավորված ապոքեոզն էր»²:

Նոյն 1927-ին Ցակուլովը Թիֆլիսի Ռուսթավելու

¹ Բանքեր Հայաստանի արխիվների, 1981, № 1:

² «Красная газета», Լեմինգրադ. Նոնկոյան բողարկում, 1929,
7 Բութարի:

անվան բատրոնում ձևավորեց «Կարմննսիտա» Ընրկայացումը և վրաց մշակույթի գործիչների նետ այնպիսի կապեր հաստատնեց, այնպիսի սիրո և հարգանքի մթնոլորտ առեղծնեց իր շուրջը, որ պոնտ Տիցիան Տարիեն Յակուլովին դրվատնով որպես ազգերի բարեկամության շատագով՝ համեմատում էր Արան Հ. Թումանյանի հնտ, միաժամանակ նշում նկարչի այն ծառայությունը, որի շնորհիվ Նիկո Փիրոսմանիշվիլու անունը դուրս եկավ եվրոպական ասպարեզ, արժանացավ շատ խոշոր նկարիչների, այդ թվում և Պիկասոյի բարձր գնաճատակամին¹: Յակուլովը Թիֆլիսում հասցըրեց նույնիսկ աշխատել «Ամազոնութիւններ» կինոնկարի ձևավորման վրա, որն իրերի բերումով էկրան շրաբրացավ:

Սրանշելի Ժորժը, ինչպես Արան կոչում էին այն տարիներին, առիթներ ունեցավ նոյնային ոգևորությամբ մասնակցելու նաև Մինսկի և Բարսի մշակութային կյանքին: Կարդում էր զնկուցումներ, պաշտոնական հանդիպումներ ունենում գեղանկարչության և քննարկեալ գործիչների հնտ, ձևավորում ներկայացումներ:

Նույնքան ակներև, ուսանելի է Յակուլովի վաստակը նայ իրականության մեջ, թեև բուն Հայաստանում գործելու կոնկրետ առիթներ նա քիչ ունեցավ: Ռիշագրավ է այն փաստը, որ Յակուլովը հաստոցային գեղանկարչական աշխատանքներով մասնակցել է 1917-ին Թիֆլիսում կազմակերպված նայ արվեստագետների ամդրանիկ ցուցահանդեսին²: Բացի այդ, պար-

¹ «Заря Востока», 1928, 30 դեկտեմբերի:

² Հրապարակված կատաղոգի տվյալներով ցուցադրվել են՝ «Յակատամարտ», «Ամազոնութիւնների Կովկաս», «Ալևսուր» ամոռ

թերաբար անվարձահատուց, օգնել է Ս. Խաչատրյանին և Ռ. Սիմոնովին՝ Մոսկվայի հայկական դրամատիկական ստուդիայի դասավանդման գործում (նա ՎԽՈՒ-ՏԵՄԱՍ-ում պրոֆեսոր էր), ինչպես և ձևավորման աշխատանքներին՝ ստուդիայի գոյության առաջին շրջանից սկսած մինչև իր մահը¹: «Մենք այն ժամանակ չենք ել հասկանում, թե ինչ ուժի տեր մի վարպետ էր նստում մեզ թես քեմի հատակին, և մկրատը ձեռքին օգնում զգեստները ձևելու:— Գրում է այդ ստուդիայի դասատուներից մեկը, ոնժիսոր Ի. Մ. Շապուղորտը:— Ամա սովորական մի զգեստ, բայց նա շրտկում է այնպես, որ դա «մի քիչ» թատերական դառնա... Մենք, ոնժիսոր թե աշակերտ, ինչպիսի անհջականությամբ էինք ընկալում բարձր ճաշակի, գուշների, դեկորների ու զգեստների գուգորդման այդ դասերը»²:

Ցակուլովի մասշտաբները շատ էին լայն, ամենուրեք նա և ուսուցիչ էր, և աշակերտ:

Նոյն կարգի դասեր, թերևս հանպատրաստից տղվել է նա Հայաստանի Բանշրջիկ թատրոնի դերասաններին, երբ խումբը Դիլիջանում, 1928-ին աշխատում էր «Կարմիր արծվիկ» պիեսի քեմադրության վրա: «Կյանքի ու արվեստի հպարտ ոռմանտիկ», նոր ուղիների անխոնջ որոնող»³ նկարիչը մոլոկանների սալլակով

¹ Կիմը, «Պորտրետ» և «Գավիթ» գնդամկարչական աշխատանքները:

² Մահացել է Երևանում, 1928-ի դեկտեմբերի 28-ին, երբ Մոսկվան նախապատրաստվում էր մեծ շուբրով Զշենու մորա գնդարվեստական գործունության 25-ամյակը:

³ «Սովետական արվեստ», 1959, № 5, էջ 55:

⁴ Ա. Թահրովի արտահայտությունը է՝ տես «Современный театр» 1929, 15 մումպարի, № 8:

խմբի մետ երբեմն շրջում էր գյուղներ, օգնում Ս. Թարյանին ստեղծելու տվյալ թատրոնի պայմաններին հարմար դեկորներ՝ կամ-կարասին էլ ընդգրկված դրանց մեջ¹: Ֆաներայի և շիրմայի օգտագործմամբ կյանքի կոչված հարթ ու թնթև ձևավորումները դրանից հետո այդ թատրոնում լայն կիրառում գտան: Ռեժիսոր Տ. Շամիրխսանյանը «ընդհանուր հայտարարի բնրված» ձևավորումների այդ «սիստեմը» համարում էր «Յակուլովյան ժառանգություն»:

Սակայն բուն ժառանգությունը, որ նա թողեց հայ բնմին, Առաջին պետքատրոնում ձևավորած երկու ներկայացումներն էին՝ «Վեճետիկի վաճառականը» և «Մորգանի խնամին» (1926 և 1927 թվականներին): Երկու թեմադրության հեղինակն էլ Ս. Բուրջալյանն էր: Վերջինս «Վեճետիկի վաճառականին» կապակցությամբ հարկ է համարել հանդիսականին վաղօրոք իրազեկ պահել, որ «պիեսն իր արտաքին ձևի իմաստով կներկայացվի միասնական դեկավարությամբ (единая установка. 1. Խ.), այնպես, ինչպես մշակել է Մուսկայի հայտնի նկարիչ Յակովովը: Նա է մշակել նույնպես բոլոր զգնատները և թեմական սարք ու կարգը: Մակետը, որն անդրադառնում է Վեճետիկի կառնավալի ոգին, միևնույն ժամանակ ունի այն բոլոր տարրերը, որոնք անհրաժեշտ են 18 պատկեր դնելու համար»²:

Պահպանվել են այդ ձևավորումից ընդամենը մատիտով կատարած դեկորների մի ճնպանկար և դոժերի տարագների խմբակային մի էսքիզ: Բացի այդ, հրա-

¹ Ի դեպ, տարիներ առաջ, Բարձրում նողած ժամանակ Յակուլովը նման գործմական օժանդակություն է ցուց տվել նաև տեղի հայկական թատրոնի նկարիչ-ռեժիսոր Մուշեղ Սահյանին:

² «Արշակ Բուրջալյան», 1959, էջ 20:

պարակված է նույն պիեսի երկու մակետի լուսանկար՝ Մինսկի Բրենական թատրոնում Վ. Սախնովսկու և Գ. Յակովովի բեմադրությունից, որը նախորդել է երևանյանին¹: Ականատեսների վկայությամբ ձևավորման որոշ տեսարաններ նման են եղել:

Սուանձնահատուկը Բուրջալյանի բեմադրության համար՝ նրա կատակերգական ոգին էր, ոկտոմի խելամեռ թափը, դինամիկան: Նկարիչն այդ ամենին շատ էր նպաստել:

Վարագույրը բացվելիս Սուրբ Մարկոսի հրապարակն է, որտեղից երևում են առևտրական նավերի առաջատառները, իսկ բեմի կենտրոնում ամփոփված է մի կոյորդ Վենետիկի գինանշանով: Թվում է, բեմն էլ օրորվում է լաստանավերի նման: Ներիսապի դուամը ասես Ծելլոկի աշքերով հսկում է քարացած մի առյուծ. դա տաշենից ու թեփից պատրաստած մի արձան էր և այնքան ահաքեկիչ, որքան ահաքեկիչ Պորցիայի դատավարությունը: Միասնական հեմքի, բեմական հաստոցների վրա կառուցելով դեկորները, Յակովովը զարմանալի կերպով թեթևացրել էր բեմը, այնպես, որ կառնավալի հրապարակից անցումը դատարանի տեսարանին, վայրկյանների գործ էր:

Պիեսի միջավայրի նման ընդգրկումը բխում էր թատրոնի տեխնիկական պայմաններից: Խնչքա՞ն կարելի էր ընդարձակել բեմի առանց այն էլ ընդ հայելին: Նկարչի նպատակն էր գունեղ զգեստների, թեթև ու պլաստիկ դեկորների միջոցով ցույց տալ Վերածննդի ոգին, ծովահայաց Վենետիկի մաջ Ծերսապիրի նման

¹ Մինսկի Բրենական թատրոնում Յակովովի ձևավորած «Վենետիկի Վաճառականի» մասին տես՝ Բ. Գ. Сахновский, «Работа режиссера», М.-Л., 1937, стр. 160—161:

միաժամանակ տեսնել ծանր խոհն ու զավեշտալի իրականությունը։ Այդ օրերին մամուլում նշվել է. «Նկարիչ Յակովանը քերեց իր հետ մի նոր, թարմ առողջ խոսք ... Գովելի է բնմական արխիտեկտորան։ Միևնույն յակարդակի վրա դրված՝ ... Վենետիկում Շելլոկի տունը և Բալլոնտում Պորցիայի տունը, — Բիացնում են իրենց հակադիր էությամբ, իրենց հակադիր արխիտեկտորայով, ընդգծելով, մի կողմից Շելլոկի մոայլ հոգու արտահայտությունը և մյուս կողմից՝ կենսուրական Պորցիայի նիստ ու կացը»։ Նույնքան հետաքրքրական է լուծված պարտեզը վերջին պատկերում։ «Մի պարզ պատշգամբ և երկու պտղատու ծառ, որն իր ճրբությամբ կարծես թե վերլուծում է այնսի վերջավորությունը»¹։

Յակովովի քերած «թարմ, առողջ խոսք» առավել նկատելի էր «Մորգանի խնամու» մեջ։ Այստեղ նկարիչն իր գործն արել էր որպես ֆրանսիական քարքերին ու քաղաքական նիստուկացին քաջածանոթ արվեստագետ։ Խնչակու «Քրամքիլլայի» մեջ, նա մեկ խաղում էր ճրին գուներանգների հետ, մեկ բնմական նըմարամտությունների դիմում՝ գեղջկական խսիրը դարձնելով փառահեղ մի գորգ, և առա վերանայում բեմախորշի ծավալները։ Պահպանվել է երկու փոքրադիր աշխատանքային էսքիզ։ Խ' նշ կարող են դրանք պատմել ձևավորման մասին։ «Խոկ իրականացված էր իրոք փայլուն մի ներկայացում։ Այդտեղ դրսենորվեց թատրոնի իսկական նկարիչը։ Ծնորթիվ մեծ հնարագիտության և ֆանտազիայի նա կարողացավ փոքր բեմի վրա, չնշին միջոցների գործադրմամբ ստեղծել դեկորացիա, իբր դա Մոնմարտրի մի անկյունում ընկած փա-

¹ «Խորմրդային Հայաստան», 1927, 5 հունվարի։

ոիզլան կաֆե է: Բեմի ձախ կողմում արծաթն թղթերի և այլ էֆեկտների կիրառմամբ, ամփոփված էր հսկայական մի հայելի և այնպես, որ դամիլիճում հատած հասարակությունը արտացոլվում էր նոր մեջ: Թվում էր, ձեր առջև տարածված՝ մեծ ու ընդարձակ մի կաֆե¹: Բեմը կարծես ձգվել էր դեպի խորքը, իսկ Փարիզի Բենավոր կրակները կորցրած հայուննիքի տագնապ էին ստեղծում: Ժամանակակից պիեսը ստացել էր նույնան ժամանակակից մեկնարանություն նախ և առաջ ձևավորման շնորհիվ:

Ռուս մի արվեստագետ այն սխալ կարծիքն է հայտնել, որ իր թե Ցակովովը «չհասցրեց ձևավորել ոչ մի սովետական պիես, որ իր թե «նա ամբողջովին տարութերվում էր դեռևս անցյալի կուլտուրայում»²: Ցավալի թյուրիմացություն: (Ըստ երևույթին, արվեստաբանը չգիտե, որ Ցակովովը դեռևս 1928-ին Բարվի բանվորական թատրոնում ձևավորել է Ա. Ֆայկովի «Լյուլ լիճը», ինչպես և գաղափար չունի «Մորգանի խնամու» մասին): Իսկ «Պողպատն ցանկը»: Որքան էլ «Մորգանի խնամու» թեման օտար իրականությունից է առնված, պիեսն այսուամենայնիվ իր գաղափարական դրվագքով, անկասկած, սովետական երկ է, և այդ ձևավորման մեջ էլ Ցակովովը մնում է նույնքան վառ ու գունեղ, նույնքան գաղափարապես հագեցած, որքան «Բրամբիլլայում» և «Պողպատն ցատկի» մեջ³:

¹ Տե՛ս Հայաստանի Կերպարվեստագետների միությունում թատրոնի և կինոյի պարիչների ցուցանամենսի քննարկման՝ Ռ. Իրամբյանի եղույթի աղաջրությունը, 1968-ի դեկտեմբերի 17-ին:

²Տե՛ս Սամոյլ Մարգոլին «Художник театра за 15 лет», Москва, 1933, ст. 46.

³ Տե՛ս այդ մասին օանք № 3, 4, стр. 128—129:

«Литературная Армения», 1959,

Յակովիլովի ծառայությունները պատմական են Բայ բնմանկարչության ասպարեզում: «Նա Բայ թատրոն բնից ճարտարապետական լակոնիկ կառուցներ, բնմը հարստացնող նրինագիր, լույսի, գծապլաստիկական ձևների բազմազանություն և արդիական վերաբերմունք բնմադրվող երկի նկատմամբ: Եթե մինչև 1926 թվականը Բայ թատրոնում հանդես եկած նկարիչները փորձում էին վերափոխել թատրոնի դեմքը, ապա Յակովիլովը փոխեց նրա ոգին»¹:

Յակովիլովը Ա. Մոռգլանին հասցեագրած մի նամակում «Մորգանի խնամու» առիթով ասել է. «Համոզված եմ, որ մակետ սարքելու մասին մինչև այդ ոչ մի գաղափար չունեցող թատերախումբը հիմա շատ բան սովորեց: Այնպես որ Լուսժողկոմատը միանգամից երկու նայապատակ խփեց՝ տեր դարձավ բոլորովին նոր մի բնմադրության, որը ոչ Մոսկվան, ոչ Էլ Փարիզը, չեն տեսել, և թատրոնի մարդկանց ընտելացրեց աշխատանքի նոր մեջողներին»: «Նույն տեղում Յակովիլովը ավելացնում է. «Հայկական թատրոնը այդ երկու՝ «Ծելլոկ» և առանձնապես «Մորգանի խնամի» բնմա-

¹ Հայաստանում, հատկապես Դիլիջանում գտնված ամիսներից (1926, 1927, 1928 թթ.) Յակովիլովը ատեղծել է օսկ Բայ մշակուլիքի մի շարք գործիչների դիմանկարներ, բնակարներ, որոնք գեղարվեստական արժեքի տեսակներից անհանդմատ զիջում են նրա կոմպոզիցիոն կտավներին: Նրա աշքի ընկնող գործերից մի քանիսը («Եղունք Կառլո», «Բակում», «Թեղարան» և ուրիշներ) այժմ ցուցադրվում են Երևանի պատկերասրանի մշտական էքսպոզիցիալում, իսկ նրա գեղանկարչական աշխատանքների գեղայի մասը՝ շուրջ 100 գործ, որ գտնվում էր Փարիզում, (նկարիչը տարել էր անհատական ցուցահամելս կազմակերպելու համար, որը շրացվեց նրա Վերաբնա մահվան պատճառով), 1972-ին Ավերատվության կարգով հանձնվեց Հայաստանի պետական պատկերասրանին:

դրություններով կանգնեց մայրաքաղաքային թատրոն-ների գծի վրա: Անարդարացի կլիներ այդ ուղուց շեղեց¹: Իրոք, շեղվել այլևս Բնարավոր չէր, այդպես եղավ գոնե միառժամանակ:

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՈՒՏՅՈՅԱՆԻ ՄՈՒՏՔԸ

1926—1927 թթ. խաղաշրջանը բեկման տարի եղավ Բայ թեմանկարչության համար: Այդ տարում էր, որ Բայ գեղանկարչության ամենականավոր վարպետներից մեկը՝ Եղիշե Թադևոսյանը, Թիֆլիսի օպերային թատրոնի պատվերով անդրադարձավ «Սամսոն և Դալիլա» թեմադրության ձևավորմանը: Դա նրա սովորական տարիների առաջին և միակ թատերական աշխատանքն էր, ուր նկարիչը, արվեստարան Ռ. Դրամբյանի արտահայտությամբ «օգտագործեց ոչ միայն Արեվինքի ճանաչողությունն ու ըմբռնումը, այլև իր ըմբռնումն էլ մտցրեց թեմական կառուցվածքի մեջ»²: Դա ժամանակի պահանջն էր. թատրոնին պետք էին ոչ միայն գրական, ոճշտորական և դերասանական, այլև նկարչական ըմբռնումներ, դրանց համադրումը, այն ինչ կոչվում է Շերնկայացման կերպար:

¹ Բանքեր Հայաստանի արխիվների, 1981, № 1:

«Թատրոնի պատմության մեջ առաջին անգամ մակետ պատրաստվու», ինչպես և ձևավորման թագավառում Ցակովովի կիրառած աշխատամրային նոր մեթոդների մասին օշեկ է և Ս. Ազագալովը, որ բախու է ունեցել այդ ձևավորումների նկարիչ-կառուողու լինելու: Տե՛ս «Արշակ Բուրգայան», էջ 219—222:

² Ի. Դրամբյան «Եղիշե Թադևոսյան», Երևան, 1955, էջ 108:

Սակայն արվեստագետի վերաբերմունքի, նրա գեղագիտական ընկալումների հարցը, մեծապես կախված էր թատրոնի նորոգված խաղացանկի հետ: Փաստորեն այդ շրջանում էր, որ մեր թատրոնը ձեռնամուխ եղավ սովորական, այժմ արդեն դասական դրամատորգիային: Դա սկսվեց «Ելուրով Յարովայալի» թեմադրությամբ, որտեղ և առաջին անգամ հանդես եկավ հայ թեմի ամենախոշոր նկարիչներից մեկը՝ Միքայել Արուտչյանը: Հենց այդ շրջանում էլ մուտք գործեց թատրոն Մոսկվայում կրթություն ստացած ուժիսորների մի նոր սերունդ, որոնց մեջ հատկապես Ա. Գուլակյանը և Վ. Աննմյանը իրենց առաջին իսկ քայլերից սկզբունքային համագործակցության մեջ մտան նկարիչների թետ:

Միառժամանակ հեղափոխական իրադրությունների պատկերումը թատրոնում դարձավ խաղացանկի մեջը: «Բնեկում, «Խոռվություն», «Զրամագնացք 14—69», «Ճռ կամուրջ» և այլ պիեսներ, ինքնին մղում էին թեմադրական նոր ձևերի: Մակետի միջոցով իրականացված կոնստրուկտիվ ոճը դարձավ ժամանակակից ոռության (և ոչ միայն ոռության) պիեսների ձևավորման տիրապետող ոճ: Այստեղ էր, որ կազմակերպվեց ու բացահայտվեց Մ. Արուտչյանի տաղանդը՝ հեղափոխական երկերի մեկնարանման և թատրոնի վերակառուցման փուլում. Զա ինքն էլ մեծապես օգնեց այդ ստեղծագործական վերակառուցմանը:

Թերևս ոչ մի նկարիչ ժամանակակից հայ թեմում այնպիսի բազմակողմանի և բովանդակալից ծառայություն չունի, ինչպես Մ. Արուտչյանը: Լինելով վերին առաջինանի զարգացած ու կրթված արվեստագետ, լավագիտակ և վրոպական մշակույթին ու լեզուներին, նա չեր դժվարանում միշտնվել այս կամ այն պիեսի մեկ-

նարանության մեջ, երբեմն աշխատել և ռեժիսորի փոխարեն: Նա որոշ դեպքերում էլ, երբ այդ դառնում էր անխուսափելի, պարտադրում էր իր տեսակետը, իր ընկալումները, և ռեժիսորները հաճախ էին օգտվում նրա գործնական խորհուրդներից: Ցակուլովից մետք նա առաջին էր, թերևս միակը, որ ստիպեց թատրոնում հաշվի նստել Ակարչի մետք: Նկարչի ջանքերով հարստանում, գործնականապես իրականանում էր թատրոնի, որպես սինթետիկ արվեստի ըմբռումը: Նա ինքնուրույն էր, գործնականության մեջ համարձակ և մեռատես:

Սրուտչյանը ոչ թե ղեկավարվում էր դրամատուրգի ցշած հատուկ ցուցումներով, կամ կուրորեն ենթարկվում ռեժիսորին, այլ նախ և առաջ պիեսից իր ստացած տպավորությամբ, իր գեղարվեստական ըմբռումներն էր բերում թատրոն: Պատահական չէ, որ 1930-ին նրա ձևավորած «Քաջ Նազարի» էսքիզները 1986-ին կազմակերպված ցուցահանդեսի լավագույն նմուշները համարվեցին, իսկ Բարվի օպերային թատրոնում 1986-ին ձևավորած «Կարմենը» զետեղված էր 1965-ին Մուկվայում կազմակերպված Բիզեի հորելյանական ցուցահանդեսում:

«Քաջ Նազարը» թերևս սկզբունքային նշանակություն ունեցավ Ակարչի համար: Ուստի սկզբունքային նույն մոտեցմամբ էր ձևավորված նաև «Կրեչինսկու հարսանիքը» Բանվորական թատրոնում (1988): Անշուշտ նյութով խիստ տարրեր երկեր են սրանք, բայց Ակարչին հնտաքրքրում էր այդ երկերի գաղափարական էության մարմանավորումը պլաստիկական եղանակներով: Գրաֆիկական սպառիչ միջոցներով էր սըրվում կատակերգության սոցիալական բովանդակությունը, թե գունային հակադրությունների վրա ստեղծված

զգեստների շնորհիվ, միևնույն է, Ակարիչը դատապարտում էր արկածախնդիր ներումներին, քանի որ Առանք մարդկության բախտի նետ են խաղում: Այս էր ձևավորումների միտքը:

Բեմախորչի հայրահարումը այլևս պրորլեմ չէր, զյսավորը կերպարների և գործող միջավայրի գեղարվեստական պատկերն էր, որ պիտի ծառայեր գրական երկի խորն ու համակողմանի բացահայտմանը: Այդպես էր վարվում նկարիչը ոչ միայն գեղանկարչություն ցուցադրելու համար. Արուտչյանի ձևավորումներում բեմական միջավայրը ինքնարսինքան ծառայելով դրամատիկական երկի խորացմանը, կամ ամրողական նըկարագրին, ավելի հաճախ գործում՝ էր «դերասանի նետ, դերասանի համար», ինչպես լակուլովյան բեմադրություններում: Այդպիսին էր «Ֆիգարոյի ամուսնությունը» (1933)՝ Մ. Արուտչյանի և Գ. Սունդուկյանի անվան թատրոնի լավագույն ձևավորումներից մեկը՝ դա էլ իր տեղում յուրատեսակ մի «Բրամբիլլա»: Արուտչյանն էլ «Ֆիգարոյի» մեջ էր «լողում իր ցոլարձակումների մեջ. ջերմացնում էր և հուսադրում»: Դա արդեն պարտավորնեցնող որակ էր հայ բեմանկարչության համար, ձեռք բերված «տնդական» ուժերով:

30-ական թվականներին Մ. Արուտչյանը միաժամանակ պայքարում էր բեմում երևացող կենցաղային «մանրութների», այլ խոսքով Առ-Առ սաղմնավորվող նատուրալիզմի դեմ (որը նույստերազմյան տարիներին լուրջ խոչընդոտ դարձավ հայ բեմարդեստի զարգացմանը): «Ֆիգարոյի ամուսնության» մեջ կենցաղը վտանգավոր գործոն չէր. դեկորացիան գունանկարի ուժով և տնիսնիկայի հնարամիտ օգտագործմամբ էր հասնում ընդհանրացման: Սուավել ուշագրավ էր, որ կենցաղային ու ազգագրական նկարագրություններից

նա կարողացավ խուսափել այնպիսի կենցաղային մի ըլութի դիմելիս, ինչպիսին Պ. Պոռշյանի «Հացի խընդիրն» էր: Խոկ Ա. Օստրովսկու «Ամպրոպ» և Շիրվանգաղեի «Նամուս» քեմադրությունների մեջ թերևս ավելի ցալտուն երևաց նկարչի նպատակադրումը: Նա ըստ Էլության նպաստեց նաև, որ Լենինականի թատրոնում Արա Սարգսյանի հետ ձևավորած «Մեծապատիկ մուրացկանների» (1934) քեմադրությունը՝ շքեղ, բազմապլան, գաղափարական հստակ կերպարով աշքի ընկնի, բայց ոչ երբեք կենցաղային մանրությունով: «Ամրող ձևավորումից բուրում է կենսաթորթի թարմություն և մաքսիմալ նպատակալացություն»¹— գրել է: այդ մասին բանաստեղծ նաիրի Զարյանը: Դա իր ժամանակի ոլուսական քեմանկարչության օրինակելի մակարդակն էր, որ ի հայտ էր գալիս հայ իրականության մեջ: Խնչու միայն ոլուսական ուշագրավ է նաև հետևյալ փաստը: Նույն 30-ական թվականներին Գ. Սունդուկյանի անվան թատրոնում քեմադրվեցին վրացական երկու պիես, մեկը «Խատիջեն» էր, որ ձևավորեց Թիֆլիսից հրավիրված նկարչութի Թ. Արակելիան, իսկ մյուսը՝ «Արսենը», շատ ավելի ազգային մի գործ, որ սակայն, վրաց ռեժիսոր Գ. Ժուրովին գերադասեց քեմադրել հայ նկարիչ Մ. Արուտչյանի համագործակցությամբ: Եվ վրացական ազգային ձևի ու ոգու հաղթահարման տեսակետից Արուտչյանի ձևավորումը բընակ չէր գիշում նոյն դրամայի թիֆլիսյան քեմադրությանը, այն թատրոնի, որ միշտ էլ աշքի է ընկել սցենգրաֆիայի բարձր մշակույթով:

Այդպիսի նպատակալացությամբ էր գործում Արուտչյանը նաև օպերային թատրոնում: «Անուշի» առա-

¹ «Բանվոր», 1934, 16 մարտի:

շին թևմադրությունը (1935) Բնարավորին չափ գտված էր գորշ կենցաղից: Ոճավորված մի վարագույր՝ և դրա առջև երգում էին կժերն ուսած աղջիկները: Մնացած բացօթյա տևարանները Բիմնականում ձևավորված էին հաստոցների վրա, բնապատկերի ժաւու ակնարկներով: Սակայն, ձևավորման կոնստրուկտիվ ճանապարհով զնալիս, նա երբեմն էլ հավասարության նշան էր դնում «Ալմաստի» և «Շիգոլետոյի» միջև: Դա արդեն տուրք էր ժամանակին: Ֆ. Ֆեղորովսկին էլ 20-ական թվականների սկզբին Մնծ թատրոնում ուսական ազգային որոշ օպերաներն ու նվիռոպական դասական խաղացանկը նույնացնում էր, երբեմն ձևավորում միենում ոճով, հաշվի չառնելով նրանց գեղարվեստական ու ազգային առանձնահատկությունները: Կոնստրուկտիվիստական ձևավորումների մեջ հնտացած Մ. Արուտչյանը իր դիրքերը չգիշեց «Ալմաստի» թևմադրության ժամանակ (1933), թևն նրա կողքին Մ. Սարյանի նման գեղանկարչական սկզբունքների մեջ անհողող արվեստագետ կար: Դա Մ. Սարյանի համար թերևս պատահական տուրք էր ժամանակին, մինչդեռ Մ. Արուտչյանի վրիպումը թանկ նստեց թատրոնին. դրա հետևանքով տուժեց «Ալմաստի» առաջին հայկական թևմադրությունը:

1936-ից հետո, երբ կոնստրուկտիվիզմը ոչ միայն ճարտարապետության մեջ, այլև թատրոնում պաշտոնապես դատապարտվեց որպես ձևապաշտության լուրօրինակ դրսնորում, այնուամենապեսիվ, Մ. Արուտչյանը հարազատ մնաց և իրեն, և գեղարվեստին: Միայն «Օթելլոյի» (1940) մեջ էր նկատվում սահմանափակված ունալիզմի դրոշմը, իսկ «Թափառնիկոս» և «Լուսաբացին» օպերաների ձևավորումները (1938) մինչև օրս էլ մնում են նախապատերազմյան շրջանի նրա,

ինչպես և Ա. Սակենդիարյանի անվան թատրոնի լավագույն աշխատանքներից: Պյաստիկական ձևերի բազմազանությունը՝ գեղանկարչական վառ միջոցներով հարստացած դեկորները՝ նրանց ներդաշնակ տարագների և լուսի հետ, ուղեկցում էին այդ ներկայացումների հաջողությանը:

Հետաքրքրական մի մանրամասն՝ «Լուսաբացին» օպերայի բեմադրման ժամանակ Մ. Արուտչյանը, ի թիվս այլ էսքիզների, թատրոն է բերում և մի ճեպանկար, որ լիբրետոյի և ոչ մի պատկերով չեր նախատեսված: Ինչի՞ համար է այս էսքիզը, հարցնում են գեղարվեստական խորհրդում: «Կայծակի պամին երեւացող տեսարանի»— պատասխանում է նա: Այդպիսին էր Մ. Արուտչյանը, թատերական արվեստը ընկալում էր բոլոր օղակներով, գգում էր դիրիժորական փայտիկը, հաշվի նստում երգչախմբի պահանջների հետ, երբեք շանտեսնով նաև լուսավորող սարքավորման և հանդերձարանի հնարավորությունները: Հատկապես 20-ական և 30-ական թվականներին նա ապրում էր բուռն, ստեղծարար կյանքով: Կապված էր հանրապետության գրեթե բոլոր աշխի ընկնող թատրոնների հետ: 1926-ից սկսած պարերաբար մասնակցում էր ոչ միայն երկրի ներսում կազմակերպվող, այլ երբեմն էլ միջազգային ցուցահանդեսներին¹: Որ բնագավառն էլ ուրք դնե՞ր՝ բարձր պրոֆեսիոնալ էր, խըստապահանջ և արագ կողմնորոշվող: Նույնը և կիննամատոգրաֆիայի մեջ: «Խասփուշ» և «Զամալու» կի-

¹ 1980-ին մասնակցել է Ֆիլադելֆիայում կազմակերպված սպետակաց գրաֆիկայի ցուցահանդեսին, ազնութեան 1987-ին «Ծահնամին» մակետով Փարիզի և 1989-ին «Լուսաբացին» մակետով Նյու-Յորքում բացված միջազգային ցուցահանդեսներին:

Առնկարների (1927, 1928) ստեղծման գործում պարզ երևում էր տակավին երիտասարդ նկարչի սուր աշքը: Նկատենք որ «Խասփուշի» հնտաքրքրական կադրերից շատերը, և նիմնականում պարսից շամի պալատի տեսարանները, նկարահանվել են դեկորներով ձևավորված առանձին տաղավարներում:

30-ական թվականների բնմանկարչության առավելություններից էր այն, որ միմյանց կողքին, տարբեր թատրոններում հանդես էին գալիս մի շարք օժտված նկարիչներ: Արուտչյանը մենակ չէր ստեղծագործում:

ԾԵՐԻԾԵՎԻ ՎԱՍՏԱԿԸ

Լենինականում Երկրորդ պետքատրոնի նիմնադրման առաջին խև շրջանից արդեն դեկորացիոն գեղանկարչությունը գտնվում էր այնպիսի բարձր մակարդակի վրա, որի մասին 20-ական թվականների սկզբում մայրաքաղաքի որևէ թատրոն չէր կարող երազել: Դա անշուշտ ժամանակի ձեռքբերումն էր: Ծատ էին փոխվել պահանջները ձևավորման նկատմամբ, և Լենինականի թատրոնն օգտվեց ժամանակի «արտոնություններից»: Գուցե և այդ արտոնությունները տպավորիչ արդյունք չտային, եթե դրանցից օգտվել չկարողանային երիտասարդ ուժիսոր Վ. Ամենյանը ու Մուսկվայից, մի խոսք Բայ ստուդիականների հետ, Լենինական ժամանած Վասիլի Շերիշևը. որուս շնորհալի մի նկարիչ, որի ստեղծագործական թովանդակ կյանքը կապված է Բայ իրականության հետ:

Վ. Շերիշևը թատերական տեխնիկային և տեխնո-

լոգիային լավատեղյակ Ակարիշ էր, հասու մուկովյան թատրոնների նորամուծություններին. Բարեկ եղած դեպքերում փայլուն կոնստրուկտիվիստ: Նա այս թատրոնում սարքի գցեց և առաջինն օգտագործեց պտտահարթակը, հնարավորություն ստեղծեց ուժիսորական որոշ մտահղացումներ մարմնավորելու համար կինոէկրանի միջոցով, և այս էր, որ իր գործունեության սկզբից ևել մենց թատրոնին օգտվելու մակետի ընձեռած լայն հնարավորություններից: Թերևս «Մեծապատիկ մուրացկանների» ձևավորումը այնպիսի անթերի իրականացում շգտներ այս թատերախմբում, եթե դրան հայապատրաստած չլիներ Ծերիշև:

Նա հազվադեպ էր դեկորների էսքիզներ անում (գուցե այդ է պատճառը, որ այժմ պահպանված նրա որոշ էսքիզներ անավարտ աշխատանքի տպավորություն են թողնում): Նրա մտահղացումները բխում էին ոչ այնքան գունամկարչական, որքան ճարտարապետական ծավալների վառ ու ունալ պատկերացումներից: Թատրոնը, ինչպես և Վ. Անեմյանը, շատ են պարտական Վ. Ծերիշևի «Բնեկում», «Մարոկկո», «Հաց» ներկայացումների ամրողական, ընդհանրացված, գեղարվեստորեն համոզիչ գտնված մակետների համար:

«Հատակումի» ձևավորման մեջ Ծերիշև կարողացավ հեռանալ ՄԽՍԴ-ի բեմադրության շարլուֆից, և ստեղծել մի գործ, որը նույնքան գորկիական էր, նույնքան ուելիսատական, որքան և մուկովյանը, բայց և շատ համապատասխան տվյալ թատրոնի, տվյալ բեմադրության ուժիսորական սկզբունքներին: Նա հավասարակշռված Ակարիշ էր, հեռու հակառեալիստական ծայրամեղություններից: Մուկվայի գեղարվեստական օջախներից առանձնապես հակված էր դեպի Վախթանգովի անվան թատրոնը և այդ թատրոնի ձևավորման

լակոնիկ և գունեղ սկզբունքների ազդեցությունն էլ կը-
րում էր, մի հանգամանք, որ չափից ավելի դրսեռ-
վեց «Սեր և խարդավանք» Անրկայացման մեջ: Նրա
տաղանդն ու ստեղծագործական հետաքրքրություննե-
րը ամենից վառ արտահայտվում էին ուստական ժա-
մանակակից պիտիսեր ձևավորելիս. «Խնդրության փո-
ղոց», «Դատ» և «Իմ բարեկամը» Անրկայացումների
ինքնատիպ ձևավորումները այդ տեսակետից շատ բնո-
րոշ էին նրա համար: Սակայն, հետզհետո, բավական
կարճ ժամանակամիջոցում, նա, «Բայացավ» և այն-
պես, որ «Գոշ» պատմական պիեսի առաջին թեմադրու-
թյան ձևավորումը թատրոնը գերադասեց հանձնարա-
րել նրան: Այստեղ Շերիչնը դրսեռնեց հայկական ճար-
տարապետության երևելի իմացություն և ցույց տվեց
այդ ճարտարապետության «Երեմականացման» զարմա-
նալի օրինակ¹: Առավել հետաքրքրական էր, այս ան-
գամ արդեն գեղանկարչական լուծման տեսանկյունից,
«Շահնամեի» ձևավորումը: Մամուլում այդ մասին գրր-
վել է. «Շերիչն... հեռու է մնացել էժան Էկզուտիկայի
բնույթից, դետալիզացիայից, մանրակրկիտ օրնամեն-
տացիայից. Ակարչական խնդիրները լուծված են ժատ
և ընդհանուր գծերով ու գույներով— ինչպիսիք են
Իրանի երկնքի անսահման ու թունդ կապույտը, անա-
պատի դեղնությունը, փիրուզագույնը և բրոնզը: Չա-
փազանց էֆեկտավոր է գամի վոա իշխող որսի տեսա-

¹ Դա Շերիչնի վերջին ձևավորումն էր: Նկարիչը 1983-ին
Մոսկվայի հայկական կուլտուրայի տանը կազմակերպել էր իր
հայկական գործերի ամեատական ցուցանդեսը, որը Լենինականի
թատրոնի մի շարք մակետներից բացի զետեղել էր նաև «Հին
Գյումրին», «Արագածո», «Լենինականից մի տեսարան» և այլ գե-
ղանկարչական աշխատանքներ:

բանով հսկա բրոնզե սկավառակը, երկու կողմից ծառս եղած երախարաց աղյուծներով»¹:

Ծերիշևը Լենինականի թատրոնի պատմության մեջ կատարեց այն դերը, ինչ որ Մ. Արուտչյանը Սունդուկյանի անվան թատրոնի համար՝ նրա ստեղծագործական վերակառուցման շրջանում: Հատկապես կոնստրուկտիվ հրապարակների կիրառման խնդրում նրանք ետ չէին մնում միմյանցից: Լենինականի թատրոնը այդ տարիներին գեղարվեստական «ինքնավար» օջախ էր և Ծերիշևն էլ, որի կյանքն ընդմիշտ խզվեց 80-ական թվականների վերջերին, մնաց «ինքն իր մեջ», թեսնվորդներ չունեցավ. շատ էր երիտասարդ, ձևավորման պահանջներն էլ արդեն փոխվել էին: Ծերիշևին այսօր գնահատելիս Շկատի ննք առնում Նրկորդ պետքատրոնի անցլալ փառքը, որի ստեղծման մեջ Շկարիչն էլ իր շոշափելի վաստակն ունեցավ: Մինչդեռ Մ. Արուտչյանը, նոյնքան արգասապոր, շարունակեց գործել ընդհուպ մինչև 1960 թվականը, արդեն ունենալով թետևորդների և աշակերտների ստվար մի խումբ:

ԱՐՈՒՏՉՅԱՆԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԸ

80-ական թվականներին Բայ քեմանկարչությունը նոր համալրում ստացավ: Մեծ մասամբ Լենինգրադի Գևերդպետների ակադեմիան ավարտած Շկարիչների այդ խումբը Մ. Արուտչյանի ձեռքի տակ աճեց և նրա շնորհիվ երկրորդ, գործնական ուսուցման դպրոցն ան-

¹ «Բանվոր», 1985, 8 նույնիսկ:

ցավ: Այդ սերնդի աշքի ընկնող դեմքերը՝ Կարո Մինայան, Արմեն Չիլինգարյան, Սերգեյ Արուտչյան, Վասիլ Վարդանյան, Պատվական Ալիանյան և ուրիշներ, Մ. Արուտչյանի հովանու տակ էր, որ վստահ մուտք գործեցին թեմասպարեզ: Նրանց գեղարվեստական հետաքրքրությունները պտտվում էին գլխավորապես թատրոնի շուրջը: Եվ եթե զուգամիեռաբար դիմում էին նաև հաստոցային գեղանկարչությանն ու գրաֆիկային, ապա, մեծ մասամբ թատրոնական թեքումով (ազդագրեր, թեմանկան գործիչների դիմանկարներ, ծաղրանկարներ և այլն):

Սակայն Արուտչյանի ավանդներին մինչև վերջ չէ, որ հաավտարիմ մնացին նոր սերնդի նկարիչները:

Ուսուցչի դավանած սեղմ, պատկերավոր, ցալտուն ոճին և գունեղ ունալիզմի սկզբունքներին մի որոշ շըրջան կաշկանդեց այսպես կոչված հակաֆորմալիստական արշավը: Սակայն գեղարվեստի կոչման բարձր զգացողությունը, համարձակությունը, ուժիսորների նետ համերաշխ աշխատանքն ու փոխադարձ ըմբռնումը օգնեցին ճիշտ եզրահանգումներ կատարելու: Արստորակտ թեմահիմապարակներից նրանք բավական շուտ անցում կատարեցին դեպի կոմկրետ միջավայրը, ծավալային-գեղանկարչական դեկորացիան: Եվ նրանցից յուրաքանչյուրը ուժերի հնարավորության շափ, այնուամենայնիվ հավատարիմ մնաց Մ. Արուտչյանին, ինչպես Մ. Արուտչյանը, չնչին շնորհումներով, մնաց Յակովովի հավատարիմ մետևորդը և նրա գործի շարունակողը հայ իրականության մեջ:

Ժամանակը շատ բան փոխեց թատրոնի ոլորտում: Կյանքի դրդմամբ ու պահանջներով մեծապես աճեց թատրոնների քանակը. Արանց հյութա-տեխնիկական պայմանները դրվեցին շատ բարձր հիմքների վրա: Բա-

վական է նշել, որ Ա. Սպենդիարյանի և Գ. Սունդուկյանի ամփան թատրոնների համար կառուցվեցին նոր շենքեր, իսկ գրեթե բոլոր շրջկենտրոններում գործող ակումբները վերածվեցին թատրոնների: Յօ-ական թվականների վերջներին արդեն, Հայաստանում գործում էր շուրջ 40 պետական թատրոն: Մեզանում երբեք ալյուրան մեծ թվով թատրոններ չեն եղել, և երբեք այնքան առատ չեն եղել պետության կողմից նրանց հատկացվող հյութական միջոցները: Դա նաև թեմանկարչության զարգացման կարևոր ազդակ էր:

Թերևս դրա պատճառով նկատվեց ինչ որ անհավասարակշություն:

Մեծ հնարավորությունների ուսցիոնալ օգտագործումը ժամանակ և վարպետություն էր պահանջում: Մինչդեռ երիտասարդ նկարիչները սկզբում հրաժարվում էին ասկետիզմից, շատ պարզ ու պայմանական ձևավորումները դարձնում էին հազվագյուտ երևոյթ: Իսկ առանձին դեպքերում էլ, շարաշամելով հյութական միջոցները, թեմր եղևում էր անհարկի ծանրաբեռնված ու պճնված: Այսուամենայնիվ, զարգացման առողջ տեսնեցը ակնհայտ էր. գնալով ամրապնդվում, նոր իմաստ էր ստանում նախկինում ձեռք բերածը, համառորեն շարունակվում էին արտահայտչական նոր ձևերի որոշումները: Դեկորների և զգեստների գունային ներդաշնակությունը, կամ-կարասու, լույսերի գեղարվեստական լուծումը նպաստում էին թեմադրության ոիթմի ու նրա կերպարի ամրողականությանը: Այլ կերպ չեր կարող լինել. յուրաքանչյուր դերակատարի, ամեն մի տեսարանի համար նկարիչն ստեղծում էր կամուքի և զգեստի համապատասխան էսքիզ: Զեավորումներին մակետով նախապատրաստվելը նույնական դառնում է օրվա ամբիաժնշտություն, իսկ էսքիզների որակը այնքան է 8—Թատերական նկարիչների ժամանակական

բարձրանում, որ դրանք որպես գնդարվեստական ուրույն ստեղծագործություններ հաճախ են աչքի ընկնում կերպարվեստի ցուցահանդեսներում:

Բեմանկարիչները որքան էլ երիտասարդական ավյունով ու ոգևորությամբ գործեին, բնական է, որ Աղրանք բոլոր թատրոնների պահանջները լրիվ բավարարել չեն կարող, ուստի լուրաքանչյուրը հարկադրոված հանդես էր գալիս մի քանի թատրոնում: Այստեղ նրանք աշխատանքային մեծ փորձ կուտակեցին, խորամուխ նոյան թեմարվեստի գաղտնիքներին: Կարո Միհնասյանը, որ Լենինականի թատրոնում գլխավոր նեկարչի պաշտոնով միառժամանակ փոխարինեց Վ. Շերիշևին, մի քանի, և հատկապես «Փառք» (1936), «1905 թիվ» և «Վենետիկի վաճառականը» ներկայացումների մեջ (1937) այնպիսի մասնագիտական կարողություններ դրևածուց, որ նրա մասնակցությունը մյուս թատրոնների թեմադրություններին դիտվեց որպես օրինաշափ երևույթ: «Ամուսնություն», «Ամպրոպ» և տարրեր ժանրերի այլ ներկայացումներ, որոնք նա ձևավորեց Նրեւանի ռուսական թատրոնում 1939—1940 թթ., հաստատեցին, որ առաջարեն է նկել ձեռնահանաւա, տաղանդավոր մի նկարիչ:

Թատերական թեմը հաճախ էր անդրադառնում սոցիալական խոշոր կտավների, պատկերուա մարդկային մեծ հուզվեր ու կրքեր և ձևավորումը չէր կարող այլևս պասսիվ ֆոն մնալ. նրան տրվում էր «գործելու» իրավունքը: Դրամատորգիական նյութի սոցիալական էության մեջ խորանալու և վեր հանելու ձգտումը, որ ժամանակի թատրոնի ուժն էր, պակաս չեն մտահոգութ նաև թեմանկարիչներին: Գաղափարական մեկնարածության հարցը նույնքան և ձևավորողին պիտի վերաբերեն: Կ. Միհնասյանը նպատակին հասնելու համար

Բաճախ էր նրանագորի հարուստ միջոցներին դիմում։ Դա նրա նախայիրությունն էր։ Անշուշտ, ծավալային դեկորների գեղամկարչական լուծման մեջ անկարելի էր տպավորիչ արդյունքի հասնել առանց գումարի և լուսի բեմական առանձնահատկությունների տիրապետման։ Եվ Կ. Մինասյանը հաղթահարեց թատրոնում այնքան անհրաժեշտ տեխնիկան, տակավին երիտասարդ հասակում դառնալով քազմակողմանիորեն պատրաստված բեմանկարի։

Այդ շրջանի գրեթե բոլոր Ակարիչներին բնորոշ էր արգասապոր գործունեությունը տարրեր թատրոններում, կապը ալլևայլ ոնժիսուրների հետ։ Իսկ դրանից շահում էր ընդհանուր գործը։ Թատրոնային եռուն մըթուղորտի մեջ էր Արմեն Չիշմագարյանը։ Նրա ձևավորումներին կարելի էր հանդիպել ակսած Գ. Սունդուկյանի անվան, Բանվորական, Ռուսական, Աղրքեցանական թատրոններից մինչև Ալավերդու շրջանային կենտրոնը։ Դ. Դեմիրճյան և Մոլիեր, Ծիրվանգաղեն և Շեքսպիր, Պարոնյան և Օստրովսկի, Կիրշոն և Գորկի՝ ահա այն մեղինակների ոչ լրիվ ցանկը, որոնց անդրադառնում էր նա։ Եվ չնշին բացառություններով, նրա աշխատանքներում մկանուի էր դրամատորգիական ոճը, և ամբողջականության օգացողություն՝ դեկորների և գգեստների ներդաշնակ վերարտադրության մեջ։ Թատրոնի և ոնժիսուրայի պահանջներին զուգահեռ նա օգտվում էր և կոնստրուկտիվ հրապարակների, և՝ ծավալային-գեղամկարչական դեկորների ընձեռած առավելություններից։ Եվ, ինքնուրույն մոտեցումը աներկրա էր, այնքան, որ Մ. Արուտչյանի «Քաջ Նազարից» նետո ու նրա կողքին Բանվորական թատրոնում նրա ձևավագորած «Քաջ Նազարը» 1934-ին երիտասարդական մրցանակ շահեց։ Այդ շրջանի աշխատանքներից առա-

վել գնահատնելի էին և մնացին թատրոնի պատմության մեջ «Քաղքենին ազնվական» (1936) և «Պատվի Բամար» (1939) ներկայացումների ձևավորումները (Գ. Սունդուկյանի անվան թատրոն), ոչ պակաս հետաքրքրական էր «Ծղոտն գլխարկը», իրականացված Ռուսական թատրոնում (1940): ‘Նրա պրոֆեսիոնալ կարողությունները, թատերային մտածողությունը բնավ իսկ չեն զիշում տվյալ շրջանի ռեժիսուրայի մակարդակին: Եվ եթե որոշ ձևավորումներ («Հրաշալի ճուլվածք», «Խարդավանք և սեր») անհրաժեշտ հնչեղություն չունեցան, ապա այդ գլխավորապես հետևանք էր Բիշյալ բնմադրությունների ռեժիսորական պարզունակ ձևերի և մոտեցման:

Ներգեյ Արուտչյանի թատերական գործունեության սկիզբը նույնպես բնադրմավոր էր որ ու խոստումնալից: Բնամանկարչությունը ինչ որ շափով նաև ճարտարապետություն է: Տվյալ դեպքում ճարտարապետական կըրթությունը միայն նպաստում էր Արուտչյանի թատերական ձևավորումների, շատ հաճախ, կուռ և հստակ կառուցվածքին: Պատահական չէ, որ նրան հանձնարարվեց «Երկիր Բայրենի» պատմական դրամայի անդրադիկ բնմադրության ձևավորումը (1940):

Մտահղացումների հարստություն և ժամանակի շունչ՝ այդ է միշտ բնորոշ եղել Ըկարիչ Ներգեյ Արուտչյանի արվեստին: Այդ զգացողությունն էլ առկա էր Գ. Սունդուկյանի անվան թատրոնի «Վինձորի գվարճասեր կանայք» ներկայացման մեջ: Ծերսապիրյան կատակերգության ժամբարին յուրահատկությունները, սատիրական շունչը առանձնապես ցայտուն դրսնորվեցին բնմական զգեստների վերաբարության խնդրում: Դրանք թատերային կերպարը հարստացնող գեղանկարչական մտահղացումներ էին, թերևս շերսպիրյան

նրկերի հայկական մեկնաբանության լավագույն օրինակներից: Շատերի նման նա էլ անդրադարձավ, աղն էլ նրկու անգամ «Քաջ Նազարին»՝ մեկ Պատաճի հանդիսատեսի թատրոնում (1939) ապա, մի տարի անց, Հայֆիլմ կինոստուդիայի նկարի կապակցությամբ: Երկուատեք պլաստիկ լուծումը ընդհանուր գծեր ունեին: Պատճառը կինոնկարի մի շարք կադրերում արտահայտված թատերական լուծումն էր, որ գալիս էր գրական նրկի ռեժիսորական ոչ հատակ ու խոր ըմբռնումից: Կատակերգական ու ծաղրանկարային այն վառ մտահացումները, որոնք ետպատերազմյան տարիներին Սերգեյ Արուտչյանի գրաֆիկական աշխատանքների հիմքը դարձան, ծնունդ են առել նրա բնմական գործունեությունից: Այսպես, թատրոնը երթևմն բացահայտում էր նկարիչների ընդունակությունները, ուղղություն տալիս նրանց ստեղծագործական հակումներին:

Պատվական Անանյանը այդ տարիներին ոչ միայն ձևակերպեց որպես հասուն բնմանկարիչ, այլև Բետրագինետն կողմնորոշվեց դեպի օպերային լայնարձակ բնմահարթակը: Եվ այդ այն դեպքում, երբ մի շարք ուշագրավ ձևավորումներ էր ունեցել դրամատիկական թատրոններում, ինչպես «Հեռավորը», «Նորան» (1936—1937 թթ. սունդուկյանցիների մոտ), «Արիստոկրատները» և «Երկու տիրոջ ծառան» (Թուական թատրոնում, 1938) և այլն: Բացի այդ, նա Բեղինակ էր (Ս. Սաֆարյանի հետ) «Զանգեզուր» Էտապային կինոնկարի ձևավորման (1938): Պ. Անանյանը նակվեց դեպի օպերային թատրոնը իր գեղանկարչական մղումների և թատերապին մտածողության թելադրմամբ, մասամբ էլ Մ. Արուտչյանի խորհուրդով: Դրամատիկական թատրոնում արդեն գործում էր բնմանկարիչների թափական հզոր մի խմբակ և դժվար էր նրանց ստեղծագործական

մրցակցությանը դիմանալ, մինչդեռ երաժշտական թատրոնում մասնագիտացող նկարչի կարիքը գնալով մեծանում էր: Թերևս դրան նպաստեց և այն, որ նա Լենինգրադում ուսանելիս մի որոշ շրջան Ս. Կիրովի անվան ակադեմիական թատրոնում նկարիչ-կատարողի պաշտոն էր ստանձել և բավականաշափ փորձ ձեռք բերել Գոլովինյան սրահում:

«Անուշ» օպերայի ձևավորման մեջ դեռևս նկատնի էր ուսուցչի ազդեցությունը (մի հանգամանք, որ հավանորեն նպաստեց 1939-ին Մոսկվայում կայացած Հայկական արվեստի տասնօրյակի ժամանակ այդ գործի բարձր գնահատականից), սակայն «Թագավորի Բարսնացուն» (1940), «Կարմեն» և «Ալիդա» (1941) ներկայացումների ձևավորումները արդեն միանգամայն ինքնուրույն և բազմակողմանի ուսումնասիրության արդյունք էին: Առանց նոր խոսքի կամ նյութի թարմացման պահանջարկ ներկայացնելու, — որանք վերակենդանացնում էին դասական օպերայի վեհ ու ազնիվ ոգին: Եվ զգացվում էր մասշտաբների լայն ընդգրկում, բարձր ճաշակ, երաժշտությանը համապատասխան ոճ:

Որքան էլ թատրոնը «դրսից» նկարիչ հրավիրելու կարիք ունենար, այնուամենայնիվ պետք էր ձեռնահաս մեկը, որ կարողանար բավարարել ոնժիսուրայի պահանջները, մնալով տվյալ գեղարվեստական օջախին մշտապես կապված արվեստագետ: Եվ այդ պարտականությունը մեր օպերային թատրոնում Մ. Արուտչյանից հետո (որը 30-ական թվականներին զուգահեռաբար երկու խոշոր թատրոնների գլխավոր նկարիչ էր), մինչև Մեծ Բարեկամականի տարիները ներառյալ, նվիրվածությամբ կատարեց Անանյանը:

Զկար որևէ թատրոն, որը ուտք դրած չիներ մասնագիտական կարողություններով օժտված նկարիչը:

Բնմարվեստը գնալով զարգանում էր, հարստանում գեղանկարչությամբ, գծա-պլաստիկական և ճարտարապետական ձևերի շնորհիվ նոր որակ ստանում: Այդ վերաբերում էր ոչ միայն կենտրոնական թատրոններին: Վասիլ Վարդանյանը, որ այդ շրջանում գլխավորապես մասնակցում էր երկու գեղարվեստական օջախների՝ Երևանում նորաստեղծ Աղրբեջանական, իսկ Կիրովականում տեղի դրամատիկական թատրոնների աշխատանքներին, ձգտում էր ոչ միայն ամեն կերպ իր փորձն ու գիտելիքները լրացնել, այլև այդ թատրոնները դուրս բերել հնամոլությունից, նպաստել տեխնիկական խարիսուլ բազայի կարգավորմանը: «Մաշաղի Իրաթ», «Հաջի Ղարա» ներկայացումները աշքի էին ընկնում և աղրբեջանական կենցաղի ու կոլորիտի գեղարվեստական վերարտադրությամբ, և դրանց մատուցման թարմ եղանակներով: Իսկ «Ֆրոնտից եկած զինվորն» ու «Օղակում» ներկայացումները (1938—39) կիրովականի թատրոնի պայմաններում ձևավորված էին ավելի քան պատշաճ գեղանկարչական մակարդակով:

ՆՈՐ ՌԵՄԱՐԵՐ, ՆՈՐ ԲՆԱԳԾԵՐ

Ծրջանային թատրոնների գյութա-տեխնիկական վիճակի բարելավումը, դրա կողքին բևմադրական կուլտուրայի զարգացումը նպաստեցին, որ այնուղղ հաճախ հանդես գան մայրաքաղաքի Ակարիչները, իսկ այդ շփումը ինքնըստինքյան օգնեց անելու նաև տեղական ուժերին: Ռոբերտ Նալբանդյանը, որը մեծ համարում ձեռք բերելով, հետագայում կապվեց Թրիլի-

սիի հայկական և ոռուական թատրոնների նետ, աճել է: Բենց այդտեղ, Կիրովականում: Մ. Գորկու «Թշնամիներ», Օստրովսկու «Ամպրոպ» ինչպես և սունդուկյանական մի շարք ներկայացումների ուշագրավ ձևավորումները շատ նպաստեցին այդ համեստ թատրոնի նեղինակության բարձրացմանը:

Այս տասնամյակում մեկը մյուսի նունից նոր, մեկը մյուսի նունից տարրեր բնույթի թատրոններ ստեղծվեցին հանրապետության մեջ: Այսպես, Տիկնիկային թատրոնները նկարչի առջև բոլորովին նոր խնդիրներ էին դնում: Ստեղծել տիկնիկ-կերպարներ, մանուկ հանդիսականի նետ կարողանալ խոսել մեկ մանկական հրավառ երևակայության լեզվով, մեկ էլ պարզ, ցայտուն և շատ կոնկրետ: Պարզության և երևակայության միաձուլումը բարդ խնդիր էր առաջադրում նկարչին: Շերևացող դերասանի փոխարեն պիտի երևար ու խոսեր տիկնիկը: Եվ այդ դժվար ու լուրահատուկ լեզվին հախ տիրապետեցին մեր փորձված, օժտված բնմանկարիչները, բնավ չխուսափելով տիկնիկ հասկացողությունից: Լևինականի Ն. Կրուպսկայաի անվան թատրոնում Վ. Շերիչևի («Զախ-շախ թագավոր», «Ռուկե ձկնիկ» — 1936), Կ. Մինասյանի («Կարմիր գոլխարկ», «Նազելի» և այլն — 1938), Զ. Սիմոնյանի («Ջկան հրամանով», «Շունն ու կատուն» — 1939), իսկ նետագայում Ս. Ստեփանյանի («Գառնիկ ախանք», «Սոլոկուլ-ամենակուլ») ձևավորումներում մենք արդեն ունենք հնարամիտ, բարձր ճաշակով ու ներիաթային երևակայությամբ հարուստ աշխատանքներ, որոնք բնորոշ էին տիկնիկային թատրոնի առանձնահատկություններին: Հատկապես աշքի էին ընկնում Ս. Ստեփանյանի ձևավորումները: Ընդհանուր տպավորությամբ թվում էր, թե դրանք մենց այդ բնագավառի համար

կոչված նկարիչներ էին: Նույնքան մետաքրքրական էին Երևանի Հ. Թումանյանի անվան թատրոնում նըկարիչներ Ժ. Առաքելյանի «Ման Խվան», «Կախարդական կրկնակոշիկ», «Եղեգնութիւն» (1939—1940), Խ. Եսայանի «Ծուբա ու կատուն», «Ծովածաթ եղբայրները» (1940), Ն. Տոկարսկու «Սալյան թագավորի ներիարք» (1937) և այլ բազմաթիվ ներկայացումների ձևավորումներ:

Այդ նույն տարիներին էր, որ թատրոնի մետ ավելի հաճախ սկսեցին հանդիպել քանդակագործության, ճարտարապետության և գեղանկարչության բնագավառներից նկած մարդիկ: Եվ որքան էլ թատրոնը նրանց հիմնական մասնագիտությունը չիներ, նրանց աշխատանքները շատ կողմերով բնութագրական էին հայ կերպարվեստի զարգացման տվյալ փուլի համար: Ճարտարապետական մտածողությունն առկա էր Բանվորական թատրոնի «Խնդրության փողոց» (1932) ներկայացման մեջ, որ կատարել էր Մ. Մազմանյանը Մ. Արուտչյանի համագործակցությամբ, իսկ առավել ընդգծված՝ Ն. Տոկարսկու ձևավորած «Եվգենի Օգեգինում» (1937): Առանձնապես հատկանշական էր Արա Սարգսյանի օրինակը: 1931-ին Լենինականում նա աշխատում էր Մայիսյան ապատամրության ներուսների հուշարձանի վրա և զուգահեռաբար ձևավորում «Նապոլեոնի արշավանք» ներկայացումը: Եվ որքան կարելի է դատել այժմ պահպանված տարագների մի շարք էսքիզներից ու ներկայացման լուսանկարներից, քանդակագործի լակոնիկ մտածողությունը, արտահայտչական միջոցների զապվածությունը երկու դեպքում էլ իրենց դրական ազդեցությունն են գործել: Այդ ձևավորումը՝ ընդհանրացումների համարձակությամբ, պլաստիկ ձեւերով, ոիթմի ու ծավալների լուծման դիմամիկ բնույ-

թով արձագանքում է նրա «Մայիսյան ապստամբության հերոսները» աշխատանքին: Պոտյումկինյան աստիճանների վառ թատերալին լուծումով նոյնքան ուշագրավ էր «Խնտերվենցիան», որ ձևավորել էր Ա. Սարգսյանը Մ. Արուտչյանի համագործակցությամբ Սունդուկյանի անվան թատրոնում, 1934-ին:

Սուավել թեղմնավոր ու բազմազան էր Ստեփան Թարյանը. քանդակ, գրաֆիկա, օֆորտ, թատրոն, կինո և կրկես: Դժվար է ասել, թե որ մեկին էր Շա գերապատվություն տալիս: Համեմայն դեպք նրա անոնցը, որպես թեմանկարչի, անխօնիորեն կապված է հայ դասական դրամատորգների, հատկապես Սունդուկյանի ժամանակակից մեկնարանության հետ: Հին թիֆլիսի կենցաղի ու կոլորիտի յուրօրինակ ընրունումը օգնեց նրան ստեղծելու նախ «Խաթարալալի», ապա և «Պեպոյի» ու «Քանդած օջախի» շատ կողմերով վառ ու հետաքրքրական ձևավորումների ամբողջ մի շարք: Նա ևս Մ. Արուտչյանի նման թատերական գորշ կենցաղայնությունից հեռու մնաց, Սունդուկյանի դրամատորգիայի թեմանկարչական ընթերցման մեջ առաջին անգամ գտնելով կոնստրուկտիվ, ընդհանրացված ձեւվավորման եղանակներ՝ գունանկարի, լուսի և ստվերի պարզ հակադրություն և մանրությունից ազատագրված տարագ: Սակայն եթեն առաջին «Խաթարալալի» (1927) թեմանկարչական պատկերը մինչև վերջ համոզիչ էր ու ամբողջական, մանավանդ իր երգիծական ժամանակաշրջումը բնութագրով, մի հանգամանք, որ պայմանավորված է Ա. Գոլյակյանի ուժիշտորական ցայտուն մտահղացումների հետ, ապա «Պեպոյի» (1929) մեջ, այսպես ասած, հեռանալով իրենից ու հավատարիմ մնալով թեմադրության ոգուն, նա հարկադրված էր եղել թեմական դեկորատիվ միջավայրի սո-

ցիալական «շերտավորում» կատարել, Պեպոյին Բատկացնելով Խարփուղ, իսկ Զիմզիմովին՝ Սոլոլակ թաղամասերը: Պիեսի անհարկի վերամշակումը ազդել էր ձևավորման բնույթի վրա: Նկարիչը ուժիսորի նման մասնավորեցրել էր ու ավելորդ մասնատել ստեղծագործական խնդիրը, իր կողմից ևս տուրք տալով գոն-իկ սոցիոլոգիզմին: Հետագայում, նույն պիեսի վերաբեմադրության ժամանակ (1935) այդ սխալը մասսամբ շտկեց Մ. Արուտչյանը. սակայն մյուս բոլոր բեմադրություններում Ա. Թարյանը մնաց Սունդուկյանի լավագույն մեկնաբանը, ոգով միշտ հարազատ Սունդուկյանին:

Նկարչի սցենոգրաֆիական ձիրքը, որն իր Բատկացնական գծերով հիմնականում բացահայտվեց 30-ական թվականներին, երկու ուշագրավ դրսորում էլ ունեցավ՝ Գ. Սունդուկյանի անվան թատրոնի «Նապո-լեոն Կորլուտյան» (1934) և «Հրացանավոր Մարդը» (1938) ներկայացումների մեջ: Դրանք թե ժամռային, և թե գաղափարական բովանդակությամբ տրամադրուն Բակառուակ բնույթի պիեսներ էին, ուժիսորուական ընթերցման և ոճի տեսակետից էլ խիստ տարրեր միմյանցից: Թարյանին դժվար էր ճամաչել այդ բեմադրություններում. մեկը էկլեկտիկ ծայրամեղությունների, երրեմն պլակատային ծաղրանկարի ուշագրավ թանձրացում, մյուսը խորապես ունալիստական, բարձր ներշնչմամբ ստեղծված մի գործ:

Գրոտեսկը (շափազանցված ծաղրանկար), որպես գեղարվեստական մտածողության ինքնուրույն ձև, նայ բեմում թիշ է դրսորվել: Ուժիսորուական արվեստում էլ դրա լիարժեք պատկերմանը Բամենատարար ուշ ներ Բանդիպում, թեև առանձին ներկայացումների մեջ որոշ առանձնահատկություններ Բանձախ են բացահայտ-

վել (Բատկապես Ս. Բուրջալյանի, Ա. Գոլակյանի, Վ. Աճմյանի թեմադրություններում): Թարյանին խոր չէր գրուեակի զգացողությունը: «Նապուեն Կորկույանի» ձևավորումը կննցաղային երանգների խտացման բնույթով, թերևս դրա շնորհիվ, թեմանկարչական ծաղրանկարի բավական համարձակ մի փորձ էր, որը ժամանակին ճիշտ շընկալվեց: Այն տարիներին, միշտ չէ, որ Ակարչի աշխատանքը, այն էլ անսովոր բնույթի, սկզբունքային տեսանկյունից էր գնահատվում: Սակայն տպավորությունը մնում էր և, աննկատելիորեն, ըստ Բարկի փոխանցվում մի Շերկայացումից մյուսը:

Հայ թատրոնի համար դժվարին ու պատվավոր խնդիր էր լննինյան առաջին հայկական թեմադրության իրականացումը: Դրամատուրգիական նյութը պետք էր հաղթահարել ամրող խմբով. որքան ոնժիսոր Վ. Վարդանյանն ու գլխավոր դերակատար Վ. Վաղարշյանն էին անհանգատացած, նույնքան և Թարյանը: Արդյունքը միանգամայն գոհացուցիչ եղավ: «Հրացանավոր մարդը» իր արտաքին լուծման պարզ ձևերով, գունային ջերմ մթնոլորտով, ինչպես և պատմական վայրերի (Սմոլնիի տեսարանում) գեղարվեստական վերարտադրությամբ, այնպիսի արժանիքներ ուներ, որին այդ շրջանում չկարողացան հասնել մեծ առաջնորդի կյանքին նվիրված մյուս հայկական թեմադրությունների ձեւավորումները:

Ս. Թարյանը շատ աշխատեց թատրոնում «Յասում», «Ճարդ», «Վասա Ժելնզմովա», «Արշալույսին» (1937) և այլ ժամանակակից պիեսներ թեմ ելան հրաակտիվ մասնակցությամբ, բայց այնուամենայնիվ Սունդուկյանն էր նրա առաջատար թեման, այն դրամատուրգը, որին նա կարողացավ տիրանալ: Ազգային մի խոշոր դրամատուրգի գեղանկարչական ներքին ըմ-

բռնումը Թարյանի համար ճանապարհ հարթեց դեպի Բայկալան արվեստի այլ բնագավառներ: Փաստորեն Շուշն Սունդուկյանից էր կենում նա կինոնկարներ ձևավորելիս: «Կիկոս», «Քրդեր և եզդիներ» (1933) և մանավանդ՝ «Գիքոր» (1934) ֆիլմերի կենցաղագրական վերարտադրությունը նրա շնորհիվ որքան ստուգ էր, գեղարվեստական և պատմականությանը հարազատ, այնքան էլ պարմանական և զերծ ավելորդաբանությունից (անշուշտ որքան այդ թույլ են տալիս կինոարվեստի առանձնահատկությունները): Այդ գործում նա օրինակելի նախորդ ուներ:

1930-ից Հայկական կինոստուդիայում ուսու հշանափոր Ռկարիչ Եվգենի Լանսերեն ձևավորեց «Անուշը»: Այժմ պահպանված մի քանի էսքիզներ ցույց են տալիս, թե նա որքան խորն է ուսումնասիրել հայկական կենցաղն ու ազգային սովորությունները, մեր ազգային մեծ բանաստեղծին: «Անուշ» կինոնկարից այժմ ավելի հիշվում և գնահատվում են Լանսերեի էսքիզները, քան կինոնկարը, որը ჩեզու էր Հ. Թումանյանի գրական բուն մտահացումներից: Իսկ Լանսերեի տարագներն ու դեկորամկարները մի ամրող աշխարհ են Ռերկայացնում: Դա լոռվա պոետական աշխարհն է, ընկալված ժամանակակից խոշոր արվեստագետի աշքերով:

Կերպարվեստը տարեցտարի ավելի էր մտերմանում ոեժիսուրայի և դերասանական արվեստի հետ ու Բանդիսականի համար էլ դատնում թատրոնից անքածան հասկացողություն: Միքայել Արուտչյանն էր կենտրոնում, կողքին՝ եռանդուն հետևորդները: Զկար սերունդների պայքար, գեղարվեստական ըմբռնումների հակադրություն, թեև Մ. Արուտչյանի մանկավարժական ոլորտից դուրս գտնվող Ռկարիչները սկսում էին

ավելի հաճախ ու ավելի ակտիվ միսրճվել թատերական արվեստի խորքնը:

Քանդակագործներ Ս. Թարյանի և Ա. Սարգսյանի համար այդ շրջանից սկսած թատրոնը դարձավ ստեղծագործական հետարրբությունների մշտական բնագավառ: Իրերի բերումով Հայաստանում մի շարք ձեռվավորումներ ունեցավ Թրիխիից հրավիրված հմուտ ու Երրամաշակ Շկարիչ Զարար Սիմոնյանը: Լենինականի թատրոնի նրա աշխատանքներից, հատկապես «Էլի մեկ զոհ» (1938), «Արծաթե ձորակն» ու «Էմանվելը» (1939) ընդհանուր բեմանկարչական կուլտուրայով բնավ չէին զիջում Վ. Շերիչևի և Կ. Մինասյանի մինչ այդ կատարած ձևավորումներին, ընդհակառակ ամրացնում էին նրանց ձեռքբերումները այդ թատրոնում և հաստատում զարգացման մի նոր աստիճան:

Նկարիչը շահախնդիր հայացքով, կարծնս, հետևում էր արվեստի բոլոր բնագավառներին, որպեսզի իր մասնակցությունը բերի, իր ներդրումով նպաստի նրանց զարգացմանը: Երբ Երևանի օպերային թատրոնը բալետային բեմադրությունների անցավ, այդ նոր ասպարեզում կայուն արդյունքի հասնելու համար պակաս նշանակալից չէր հայ Ակարիչների ներդրումը: Խոկ բալետային ներկայացումներում, հատկապես, ձևավորման և երաժշտության ոիթմը տեսրատից դուրս՝ այն կարևոր ազդյանկներն էին, որոնց շնորհիվ հանդիսականին էր հասնում դերակատարի արվեստը, հետևապես և ներկայացման գաղափարը: Այդ էին ապացուցում բալետային առաջին պրոֆեսիոնալ ներկայացումները մեզանում, որոնց ձևավորման հետինակը Ալեքսեյ Դանդորյանն էր: Հատկապես «Վաղպորգյան գիշերի» բեմադրությունը (1934) դիտվեց շրջադարձային կետ «քալետային խումբը դասական պարի ուղու վրա դնելու

գործում¹, ինչպես նշել է Ա. Կարատովը: Այս կարծիքը նիմք է տալիս բակետմելուների մետ միասին գնահատելու և նկարչի աշխատանքը, քանի որ առանց զգեստների գեղարվեստական լուծման դժվար էր խորենգրաֆիկ կերպարի առավել ճկուն և պլաստիկ բացահայտման հասնել:

Հակված լինելով դեպի թեմական զգեստի մանրակրքիտ և նորը՝ մշակումը, լավագիտակ լինելով նրա տեսչութիւնը և գունադին իրականացման հնարավորություններին, Ա. Դանդուրյանը, ցայտուն արդյունքի հասավ «Պոյովցիների ճամբարը» ձևավորելիս (հատված «Եշխան Խոր» օպերայից), ինչպես և «Կարապի լիճը» բակետի թեմադրության մեջ (1935):

Ա. Դանդուրյանը թատրոնը զգում և պատկերացնում է նախ և առաջ պլաստիկ և գունագարդ զգեստների, երաժշտության ոիթմով գործող դյուրաքենք ու հարաշարժ ֆիգուրների, քան համր դեկորների և դեպի ստատիկան հակված դերակատարների միջոցով: Թերևս այդ էր պատճառը, որ նրա ձևավորած «Բոհեմա» և «Ճրավիատա» ներկայացումները (1936), ինչպես և «Գործազուրկին արգելված է սիրել» աշխատանքը (որ գրեթե նրա միակ փորձն է դրամատիկական թատրոնում), այնպիսի պլաստիկ վերարտադրություն և գեղարվեստական հմայք չունեին, ինչպես նրա բակետային ներկայացումները: Դերասանը խաղում է զգեստի մետ, հանդիսականին ներկայանում հաճախ մի քանի տարբեր զգեստներով. դրանք պետք է ներդաշնակեն միմյանց, բխեն երաժշտական կերպարի ոգուց, նպաստեն թեմադրության ոիթմի, արտաքին և ներքին դինամիկայի թատերային բացահայտմանը: Բե-

¹ «Թատրոնը ժողովրդին», 1960, նոյնան, էջ 265:

մական զգեստը արժեք է, գեղարվեստական ուրույն միավոր, նրա նետ պետք է խստորեն հաշվի նատել: Սա է Դանդուրյանի թատերական հավատամբը, նրա վաստակը նայ քեմանկարչության մեջ: Զգեստների բնագավառում Դանդուրյանի կատարած որոնումները շուտով նրան այդ բնագավառի լավագույն վարպետներից մեկը դարձրին: Դրան նա հասավ Ա. Սպենդիարյանի անվան թատրոնում իր ստեղծագործական համառ աշխատանքի շնորհիվ: Թերևս նետագայում ցուցադրված «Բախչիսարայի շատրվանը» (Ա. Շաքարյան), «Երջանկություն» (Ա. Ալաջալով) և «Անահիտ» (Սերգեյ Արուտչյան) բալետային ներկայացումները ձևավորման առումով այնպիսի պատշաճ մակարդակ չունենային, եթե դրանից առաջ և դրանց կողքին Ա. Դանդուրյանի վաստակը չիննար:

Այսահիտով, նայ կերպարվեստը խոսում էր իր և թատրոնի մասին, ձուլվում էր քեմադրությանը, որքան այդ անխուսափելի էր, քայլ միաժամանակ թատրոնինը մնում էր թատրոնին, կերպարվեստինը՝ իրեն: Երբ Երվանդ Քոչարը Գ. Սունդուկյանի անվան թատրոնում Ա. Պուշկինի «Քարե հյուրը» ձևավորեց (1937), ինքնըստինքյան նետաքրքիր էր օժտված մի նկարչի և թատրոնի հանդիպումը: Մինչ այդ անվանի արձանագործ-նկարիչը աշխատել էր ինքնուրույն, ինքն իր նետ, այժմ պիտի աշխատեր ամրող մի կոլեկտիվի մեջ և այդ կոլեկտիվի պահանջները հաշվի առնելով: 1937-ին Քոչարն ընդամենը մի տարվա ստվետական քաղաքացի էր՝ օտարամոտ հոսանքների բեռը վրայից տակավին շթոթափիած: Ծատերը թերահավատ էին նրա ուժերի նկատմամբ բացի Մ. Արուտչյանից: Այժմ տասը երթիգ է հայտնի այդ ձևավորումից, տասը պերճախոս փաստաթուղթ: Այնպիսի հասունություն, վարպետու-

թյուն, տեխնիկալի իմացություն կա այդ էսքիզների վերարտադրման մեջ, որ ասես Քոչարն իր կյանքի փառիվան շրջանը թատրոնում է անցկացրել՝ Ա. Բենուայի կողքին, Ա. Սուդեյկինի հարևանությամբ:

Ոչինչ վիճակի չէ «Քարե Բյուր» ներկայացման ձեւվավորման մեջ՝ այնքան հակասական ու վիճելի Քոչարի արվեստի ընդհանուր պատկերի համեմատությամբ։ Ասես ամեն ինչ հասցված դասական պարզության։ Ինչպես Պուշկինը Խսպանիան գտացել ու պատկերել է մոտիկից, այնպես էլ՝ Քոչարը։ Նրա գիշերները ևս բուրում են դափնի և կիտրոն։ Կատարյալ իսպանական մթնոլորտ։ Բևի ճարտարապետական անթերի լուծում, շքեղ երփնագիր։ Ինկ այն, ինչ ընկած է դեկորամկարների և զգեստների լուծման հիմքում, կարելի է գունային հարաբերությունների դրամատորգիա անվանել։ Քոչարը նայում է Դոն Գուանին Պուշկինի աշքերով՝ որպես ողբերգական հերոսի։ Սև ու ալ-կարմիր երանգները հատակ գծանկարներով ուղեկցում են նաև Դոնա Աննային, Լաուրային։ Այնքան կոնկրետ, այնքան շոշափելի են այդ զգեստները, որ թվում է դրանք ուր որ է ցած կիշտեն շրջանակներից ու կիսունն մեզ հետ Պուշկինի հրեղեն լեզվով։

Սուածին արտասովոր հաջողությունը դուռ քացեց նաև այլ թատերական աշխատանքների համար։ Պարզվեց, որ Քոչարը Քոչար է արվեստի որ բնագավառում էլ հանդես եկած լինի։

Փարիզում ապրած, արևմտյան Եվրոպայի գեղանկարչական կուլտուրան յուրացրած նկարչի համար դժվար չեղ նաև Կ. Գոլդոնիի հաղթահարումը։ Այդ էր վկայում նույն թատրոնի «Բամբասանք և սեր» ներկայացումը (1941), որի ձևավորման մեջ արդեն Քոչարը կատարյալ թեմանկարիչ էր, ավելի գունեղ, բազմա-
7—Թատերական նկարիչների ժամանակակից հասկան

պլան մտածողության տեր. նա այստեղ ոչ միայն իտալական դասական դրամատորգին էր ներկայացնում, այլև թելադրում էր ռեժիսորական լուծման եղանակներ, պիեսի բեմական ընթերցման ինքնատիպ ոճ:

Ոչ պակաս հետաքրքրական ու արժեքավոր էր Հակոր Կոջոյանի փորձը: Բեմարվեստից կարծես հեռու կանգնած Շկարիչը պատերազմի նախօրյակին Ա. Սպինոզիարյանի անվան թատրոնի պատվերով հանձն առավ ձևավորելու Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» նորաստեղծ օպերայի բեմադրությունը: Պահպանված է (և հաճախ ցուցադրվում են) յոթ էսքիզ, մեկը վարագույրի՝ մյուսները դեկորների համար: Բոլորն ել առնված գաղափարական միևնույն առանցքի շուրջ, բոլորն ել թատերային վառ մտածողության արգասիք: Դրանք, ինչպես գրում է արվեստաբան Ե. Մարտիկյանը, «ինքնարուխ մտահղացումներ են, անրոնազրուսիկ կոմպոզիցիոն լուծումով»¹: Միաժամանակ, որ առավել կարևոր է, այդ էսքիզներում յուրովի իմաստավորվել է «Սասունցի Դավիթ» եպոսի նկատմամբ ունեցած Կոչոյանի մշտավառ հետաքրքրությունը, որ ի հայտ է եկել քազմաթիվ առիթներով, նրա թե՛ գրաֆիկական, և թե՛ գունանկարչական աշխատանքներում: Ուրեմն, այս գործը ևս ընդհանուր ստեղծագործական մտահղացումներին է առնչվում և միայն այդ պիեսը շղթայի մեջ պիտի դիտել:

Հիշյալ էսքիզներում և «Սասունցի Դավիթ» գրաֆիկական կոմպոզիցիայից (1922) ինչ որ քան կա, և «Սասունա ծոների» նկարազարդումներից առանձին տարրեր. թերևս կարելի է ասել «Դավիթի ծնունդ» ել իր քազմաքանակ «դերակատարներով», որ հետագայում

¹ Եղիշե Մարտիկյան, «Հակոր Կոջոյան», 1961, Երևան, էջ 85:

ստեղծված կտավ է (1947), ընդհանուր կառուցվածքի տեսակետից, գալիս է նույն պատկերացումների բացահայտմանը ու զարգացմանը ծառայելու: Ինչ վերաբերում է 1958-ին կլանքի կոչված Սասունցի Շավշին, որն ասես ամպրոպ լինի մարդու կերպարանք առած, դա փաստորեն վարագույրի մի տարրերակն է, նույնպես թատերական էքսպրեսիվի բացառիկ օմուշ: Իսկ Բայկական պալատի բակը ճարտարապետական ամփոփ ու վեհանիստ լուծմամբ, Մարա Մելիքի ընդունարանը տարածության անսահմանափակ ընդգրկումով, այսինքն ինտերյերի և էքստերյերի բեմանկարչական պատկերման և դրանց միասնական ոճի մեջ, Կողոյանը այնպիսի հմտություն էր ցուցաբերել, որ թատրոնի ամենափորձված նկարչի համար էլ կարող է օրինակ ծառայել, որպես կերպարվեստի լայն ընկալումների և թատերական մոնումենտալիզմի դասական մի վերարտադրություն: Մոնումենտալ ձևերի մեջ էր նա դիտել ու վերապատկերել ավելի քան մոնումենտալ էպոսի ժողովրդական շունչն ու ազատափրական գաղափարները, նրա խորապես ազգային ոգին: Դա էպոսի դեռևս միակ դեկորացիոն շարադրանքն էր, նախագծված օպերային թատրոնի մասշտաբներին, ոճին և տեխնիկական պայմաններին համապատասխան: Անշուշտ, շատ ավելի մեծ կլինեին նրա գեղանկարչական արժեքն ու հնչողության շրջանակները, եթե պատերազմի հանգամանքը խոշընդուռ շինանդիսանար օպերայի իրականացմանը (թերևս բացառված չէ այդ ձևավորման երկրորդ՝ բեմական կյանքը):

Հետագայում, 1947-ին Հ. Կողոյանը ընդառաջնելով օժտված կինոռեժիսոր Լ. Ալտամանյանի ցանկությանը, մասնակցեց նաև «Կախարդավան գորգ» մոլուխիկացիոն ֆիլմի նկարահանման աշխատանքներին:

Հայտնի է, որ կինոարվեստի այդ ժամրը գգալապես ჩենված է նկարչի ստեղծագործության վրա, շատ բան կախված է դիմամիկ և հստակ գծանկարներից, մեկը մյուսին լրացնող պատկերների հետևողականորեն զարգացող ակտրունքից: Եվ ֆիլմը գրաֆիկական ցայտուն մտահղացումների, կուռ տրամարանության ու հերիտային կոլորիտի վրա կառուցված երկ դարձավ, որ պարզ ու մնակին դրամորվում էին Հ. Կոջոյանի թև գծապատճենական ձևերի մատուցման անթերի վարպետությունը, և թե նրա մոլեգին ֆանտազիան:

Կոջոյանի դեկորացիոն և դեկորատիվ գեղանկարչությունը քիչ է ուսումնասիրված, մինչդեռ դրա սկզբունքների յուրացումը պակասում է: Մեր քեմանկարիչներին:

ՍԱՐՅԱՆԸ ԲԵՄԱՆԿԱՐԻՉ

Թատրոնում համեմատաբար նպաստավոր պայմանների հանդիպեց Մարտիրոս Սարյանը: Նրա ձևավորումները, հատկապես «Ալմատը», ոչ միայն ըստ արծանվույն իրականացան, այլև ապրեցին տասնյակ տարիներ, բուռն հիացմունքի, մասնագիտական վեճերի նյութ դառնալով, թե թատրոնի ներսում, և թե թատրոնից դուրս:

Սարյանը շատ առիթներ է ունեցել թատրոնում հանդես գալու (հաճախ էլ գիտակցարար խուսափել է թատրոնից): Նկարչի արվեստում առկա, երթևմն ընդգծված, դեկորատիվ երինագրի մամերան, վառ թատերայնությունը չէին կարող նրան չմղել դեպի թատ-

բո՞ց: Դեպքեր են եղել, որ նրա հաստոցային այս կամ այն գործը, մեղինակի ցանկությունից անկախ, Բիմը է հանդիսացել թատերական ձևավորման համար¹: Սակայն այն ինչ արել է նա 30-ական թվականներին՝ դրժվար է գերազանահատել: Այդ շրջանում է նա հանդիպել և, Ստանիլավսկու հետ «Ուկի աքլորիկ» օպերայի երկրորդ գործողության ձևավորման կապակցությամբ (1932) և արժանացել թեմի մեծավաստակ վարպետի այնպիսի վստահությանը ու հարգանքին, որին շատ քիչ Շկարիշներ են արժանացել²: Եվ երբ հետագայում Ռուբեն Միհոնովը ասում էր, թե «Սարյանի վաստակը որպես թատերական Շկարչի... չափազանց թանկ է բոլոր նրանց համար, ովքեր ճշմարտապես սիրում են թատրոնը»³— միանգամայն հասկանալի է դառնում:

Նույն տարիներին նա Դոնի-Ռուստովի դրամատիկական թատրոնում Յու. Զավադսկու խնդրանքով ձեվավորեց Ֆ. Գորյանի «Տիգրան» ժամանակակից պիեսի թեմադրությունը (1938), վերջապես այդ ժամանակահատվածում էլ նա Սպենդիարյանի անվան թատրոնում անդրադարձավ «Քաջ Նազար» կոմիկական օպերայի թեմադրությանը (1935) և երեք անգամ ձևավո-

¹ Ուշագրավ է: Թեկուց այն փաստը, որ 1961-ին Հազեպում «Մեծապատիկ մուրացկաններ» ինսցենիրովվայի թեմադրության համար մի խումբ արար թատերասերներ տեղի «Սարյան» ակադեմիայի առաջարկով «Փողոց Կոմստանդիուպոլսում» կտավը վերածել են դեկորացիոն ձևավորման:

² Ձևավորումը իրականացվել է Մոսկվայի Շերկային Կ. Ստանիլավսկու և Վ. Նեմիրովիչ-Դամչենկոյի անվան երաժշտական թատրոնում: Այս մասին տե՛ս «Театр и драматургия», 1935, № 7, էջ 29: «Սովետական արվեստ» 1960, № 3, Կ. Ս. Станиславский «Собрание сочинений», т. 8. 1961, М., стр. 293—294.

թեց «Ալմաստը»: Թնրես թատերական այդ արգասովոր տարիների հնետևանք համարվի այն, որ Սարյանը սիրով ձեռնամուխ եղավ հայկական երգի-պարի անսամբլի և սասունցիների հնքնագործ պարախմբի տարագների ստեղծմանը, ինչպես և իրականացրեց Մոսկվայում կայացած հայկական արվեստի առաջին տասնօրյակի եզրափակիչ համերգի վարագույրը: Այս ամենին զուգամիտո, նա հրապարակ թերեց թատերական գործիշների մի ամրող շարք դիմանկարներ:

Այնուամենայնիվ Սարյանը գործնական իմաստով դժվարությամբ էր գալիս թատրոն. 1933-ի «Ալմաստը»՝ Բամանդինակությամբ, «Ռակի աքլորիկի»՝ միայն մեկ գործողությունը, «Զյուլեյկան», որ նա ձևավորեց Փարիզում գործող Բալինի «Հողիկ» թատրոնում՝ ընդամենը մի պատկեր... Հայ իրականության մեջ առաջին ծավալուն աշխատանքը «Քաջ Նազարն» էր:

«Ռակի աքլորիկի» ձևավորումը Սարյանին արդեն մղել էր մի բնագավառ, որ նրա արվեստում քիչ է դըրսկորպել՝ սոցիալական սատիրայի բնագավառը: «Քաջ Նազարը» ստիպեց բազմափորձ Ակարչին ավելի հնուանալու իր նախասիրած թեմաների շրջանակից: Թեև Հ. Ստեփանյանի երաժշտությունը ինքնին բավական վիճելի էր, այսուհանդեռձ, ելնելով Դեմիրճյանի լիրուետոյից, Սարյանը ստեղծեց հեքիափի ոգուց բխող հնարամիտ և բազմակողմանիորեն հարուստ մի ձևավորում: Այսպես օրինակ, գամ բարձրացած «Նազարին Ակարիչը» այնպիսի պալատ էր հատկացրել, որի արտաքին տեսքից արդեն անսնան ծաղրի էր ենթարկվում բախտախմելիր նազարը. բայց ոչ միայն նա: Պատերին փակցված երկգլխանի գալիի կամ արծվի ուրվապարները, որոնք արքունական զինանշաններ էին միշնեցնում, այն ընդհանրացմանն էր հանգել, թե նազարը

մենակ չէ գամի դրա, թագավորները բոլորն եւ միանձան են ու դաժան, ժողովրդի ճակատագրին անտարքնը: Նկարչի մտահղացումը ասում էր, որ այդ գանձակիր գունազարդ շնչը ինքնամփոփ ու նսասիրական պատսպարան է, կտրված կյանքից ու աշխարհից:

Զարմանալի նրանկատություն և թատերային մուտքում էր հանդես քերված նաև տարագների ստեղծման մեջ: Ելենով քեմադրության ոմից (ուժիսոր Ա. Բուրջալյան), Սարյանը տարբեր սոցիալական շերտավորման պատկանող տիպերը դիմակազերծ էր արել նագուստի միջոցով: Հիշալ տարագների «Էսքիզներում Սարյանի կատակերգական ձիրքը դրսկորվեց իր բռվամդակ շուքով, — նշել է արվեստարան Ա. Գաստոնը, — դա արդեն ժայիտ չէր, այլ զլնգուն, բռքացող ծիծաղ (ի դեպ դրան կարելի է համոզվել նայելով թեկուզ «Տերտերն ու տիրացուն» զգեստների էսքիզին): Այդպես ծիծաղել է ժողովուրդը բալագանների մոտ խեղկատակներին և նվագածու-երգիշներին ունկնդրելիս»¹: Դրանց մեջ բացառիկ սրությամբ էր արտահայտվել ժամանակակից մարդու վերաբերմունքը դեպի կերպարները. մյուս կողմից՝ համեմարձանքը ուժիսորական մեկնարանություն, խաղաղի թելադրանք էր երգիշ-դերասնի համար: Զգեստներին այսքան կարևորություն ու կշիռ տալը նորություն էր մեր օպերային թատրոնի ստեղծագործական կյանքում:

Սարյանի թատերական գլուխգործոցը անշուշտ «Ալմաստն» է: «Իր ստեղծագործական կամքի կրքոտ խոյանքով և երփմագրային լնզվի իմաստուն պարզեցմամբ Սարյանը Մոսկվայի Մեծ թատրոնում ստեղծում է լուսի և գունի ուժով շողշողացող իր ցնցող ձևավո-

¹ А. Гастев, Сарьян, 1961, М., стр. 25.

բումները, որպիսիք շատ բան տեսած բազմավաստակ թատրոնը չէր տեսնել¹ — Աշել է այդ առիթով ակադեմիկոս Խգոր Գրաբարը²: Նույն հիացմունքով են արտահայտվել տարրեր շրջաններում Անն Ա. Պլաստովը, Ա. Գերասիմովը, Ա. Նեժդանովան, Պ. Վիլյամսը, Կ. Ֆեղինը, Վ. Ռինդինը և շատ ուրիշ ականավոր արվեստագետներ, բարձր գնահատնով ձևերի պարզության և նպատակադրության բացառիկ ներդաշնակությունը:

«Ալմաստի» ձևավորման գեղանկարչական կերպարը շնչում էր բարձր հայրենասիրության և թատերային վեճացնող տրամադրությամբ, ճարտարապետական դեկորների և ազգային բնանկարի յուրօրինակ զուգակցությամբ. շարժման մեջ դրված տարագների խաղը, ավերված հուշարձանների նպատակասալաց օգտագործումը՝ մկարից մինչև վերջ ձայնակցում էին Սպենդիարյանի երաժշտության, բևմադրության շքեղ կառուցվածքի մեջ: Հայկական երաժշտական թատրոնը «Ալմաստի» այդ բևմադրության շնորհիվ դրվեց ուսալիստական արվեստի բարձր հիմքի վրա, իսկ այդ նվաճումը Սպենդիարյանից հետո, մեծ շափով Սարյանի վաստակն էր:

Թատրոնը մտքերի, հակադիր ուժերի և զգտումների բախման արենա է: Սարյանը իր ձևավորած ներկայացումներին հաղորդում էր մոնումենտալ թոփշը, էպիկական խորություն, գաղափարական պացը, բանաստեղծական շունչ, դրանցով ստեղծում մեծ հնարավորություններ մարդկային բնավորությունները լիարժեք մեկնարանելու համար: Սարյանի երփնագիրն ինք-

¹ «Սովետական արվեստ», 1955, № 1:

² «Ալմաստի» առաջին ներկայացումը կայացել է Մոսկվայում 1939-ին, հայկական արվեստի տասնօրյակի բացման օրը:

Եին դրամատիկական գորություն ունի, նրա գույնը գործում է քեմի վրա աննախաղենաց ուժով: Նա թատրոն քերեց հայրենի բնության հումկու տարերքը և ամենից առաջ այդ տարերքի ուժով էր ազդում հանդիսականի գեղագիտական մտքի ու զգացողության վրա: Սարյանը մի խոշոր քայլով առաջ մղեց հայ քեմանկարչությունը, ազգային շրջանակներից դուրս քերեց համամիութենական ասպարեզ: Հետագա և առանձնապես Հայրենական մեծ պատերազմի շրջանում հայ քեմանկարչության նպատակալաց գործունեությունն ու վերընթաց ուղին, զգալի շափով պայմանավորված նն Սարյանի ազդեցությամբ:

Հայ քեմանկարիչների աշխատանքը տարիների ընթացքում շոշափելի արդյունք քերեց: «Արմատը» մասսամբ էլ կուտակումների արգասիք էր: Նկարիչը պայքարով հաստատեց իր պատվավոր մեծ տեղը թատրոնում, դարձավ անվիճելի անհատականություն, ստեղծագործող մի դեմք, որի հետ ուժիսորդը, դերասանը և հանդիսականը ստիպված էին հաշվի նատել:

1940-ին Երևանում բացվեց հայ թատերական ըկարիչների անդրամանիկ ցուցահանունը: Սուածին անգամ ի մի քերլեց ազգային կերպարվեստի մի քնազավառ, որ մինչ այդ առանձին ուշադրության չէր արժանացել: Պատահական չէ այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբերեցին հայ քեմի ականավոր գործիչները այդ ցուցահանդեսի ըկատանամբ: Մամուլում, ինչպես և ցուցահանդեսի քննարկման ժամանակ, հանդես եկան Հ. Դասինյանը, Ա. Ռուկանյանը, Ա. Բուրջալյանը, Վ. Վաղարշականը և ուրիշներ: Բարձր գնահատվեց Մ. Արուտչյանի, Ա. Չիլինգարյանի, Ս. Արուտչյանի, Կ. Մինասյանի, Պ. Անանյանի գործունեությունը, այսինքն այն ըկարիչների, որոնց գլխավոր զբաղմունքը թատրոնն

Էր: Հիմնական մտահոգությունը նկարչի, ոնժիսորի և դերասանի միջև նղած կապը ամրապնդելու հարցն էր: Բեմանկարիչը պետք է շատ մոտ կանգնած լինի թատրոնին, ապրի նրա ամենօրյա ստեղծագործական հոգսերով: Պետք է նետենի որոսական թատրոնին, սովորել նրանից, բայց զարկ տալ ազգային բնմանկարչությանը ինքնուրույն ճամապարհությունը: Այս էր ընդհանուր նզրակացությունը, սրանք էին այն ցանկությունները, որ արտահայտվեցին մամուլի էջերում և ցուցահանդեսը բննարկելիս: «Առանց ձևավորման թոհիչի,— նըշում էր Վաղարշյանը,— թատրոնը չի կարող առաջ գնալ»¹: Եվ այս համոզմանը հանգելու համար պետք եղավ մի ամրող խումբ հայ նկարիչների քանամյա համառ ու նվիրական աշխատանք: Ընդհանուր առմամբ ցուցահանդեսը վկայում էր, որ հայ բնմանկարչությունը հիմնավորապես ամրապնդվել է, դարձել կերպարվեստի լիիրավ բնագավառը, միաժամանակ խթանել թատրոնի պրոֆեսիոնալ գարգացման գործը:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԵԾ ՆԵՐԾՆՉԱՆՔՈՎ

Հայրենական պատերազմը վրա հասավ հայ թատրական արվեստի բուռն զարգացման էտապում: Բեմանկարիչներից շատերն արդեն կազմակերպված, հա-

¹ «Նկարիչը թատրոնում», 1940, ԹԱՅԱՐԿՎԱԾ սղագրություն, Հայկական թատրական ըմբկրության ձեռագիր Ալուքենի բաժին, էջ 19:

սուն գործիշներ էին, ետևում թողած պատկառելի մի փորձաշրջան:

Անեղ ժամանակները փոխել էին նաև գեղարվեստական կյանքի մթնոլորտը, ստեղծագործական աշխատանքի նախնին ուժումը խախտել: Թատրոնների հապեսպ վերակառուցված խաղացանկը նկարիշներից պահանջում էր ուժերի արտակարգ լարում: Ամեն ինչ անհրաժեշտ էր կապել օրիվա հրատապ խնդիրների մետ, իննել շատ ավելի ժամանակակից, քան խաղաղ պայմաններում: Եթե մինչ այդ ոգևորում էին նաև առանձին հաջողություններ, նկարչի աշխատանքի այս կամ այն կողմն էլ գրավում էր հանդիսականին, այժմ այդքանը քիչ էր: Ժողովրդի մեւ միասին նկարիչը պիտի մաքառեր արհավիրքի դեմ: Եվ այստեղ ի հայտ եկավ 20-ամյա փորձը՝ կրկնակի պատասխանատվությամբ երկրին ծառայելու համար:

Նոր թեմատիկային համապատասխան պատրաստի, կանոնորշված ձևավորման միջոցներ չկային: Ռազմական կյանքից առնված պիեսների թեմադրության համար զուր կլիներ առանձնահատուկ ոճ կամ գեղագիտական ուրույն հատկանիշներ փնտրել: Ժամանակն էր թերապրում և ոճ և մեթոդ: Արվեստագետը գաղափարական գենքով էր մարտնչում ազատության գործի համար և հաճախ՝ հանպատրաստից: Զուր չէ Գ. Ցակուլովը ասել, թե «արվեստը ներգործում է ինչպես հրանոթային արկ... սա չի հրամայում, չի աղերսում, ոչ էլ նախազգուշացնում է, այլ պարզապես ներգործում: Արվեստագետն էլ Բենց այդպիսի հրանոթային արկ է, իսկ նրա գենքը՝ իմպրովիզացիան¹:

Թշնամուն պետք էր հարվածել, հարվածել ոչ մի-

¹ Современный театр, 1929, № 3, 15 января.

այն հրագենով: «Ալմաստը» շարունակում էր մնալ խաղացանկում որպես ավելի քան ժամանակակից երկ և ներգործում էր հրանորային համազարկի պես: Նադիր շահը իր նվաճած հողում հանդիպում էր սոսկ փլատակների: Իսկ Թմուկ թերդը անս հավերժուն կանգուն, հավերժ անսասան լիներ: Դա այլևս Թմուկ թերդը չէր, այլ հայ ժողովրդի հերոսության խորհրդանիշը: Պատճեռագիր տարիներին այդ ձևավորումը դիտվում էր հայրենի քության առնական գեղեցկության փառարանում և ավելի ուժգին էր տպավորվում, ավելի մեծ զորությամբ ազդում՝ դասական ճարտարապետության մասունքներով: Այսպես, երկիր հայրեննին թեմանկարչական նոր կերպարանը և ժամանակակից հընչեղություն էր ձեռք բերում օպերային թատրոնում:

Այս թեմահարթակի մեծ մասշտարքները շատ էին նպաստում դեկորների առարկայական ծավալներին: Հանդիսանքային շքեղ արարողությունների համար նման մասշտարքների լայն օգտագործումը ճարտարապետական լուծման բարդ խնդիրներ էր դնում նկարչի առջև: Պատահական չէ, որ Մեծ օպերա երաժշտական հասկացողությունը առաջին անգամ կյանքի կոչվեց պատերազմի տարիներին և Թամանյանի նախագծած թեմահարթակի վրա: «Հուգենուտների» թեմադրությունն էր այդ (1943): Այստեղ սիրային դրաման օրվա պահանջով իր տեղը գիշել էր Բարդուղիմեռույան գիշերվա արյունոտ դեպքերին, իսկ այդ դեպքերի ռեժիսուրական նկարագիրը չէր կարող հուզիչ և ամրողական, միաժամանակ պարետիկ բնույթ ունենալ, եթե Վ. Խվանովի դեկորները չտրամադրեն դրան, եթե թեմական գործողությունների, հատկապես մասսայական տեսարանների համար տրված չլիներ ուժիւրապես խթանող լայնահուն հրապարակ: Մեծ շնչով ստեղծված ներ-

սական «Իվան Սուսանին» (1942) և «Արշակ Երկրորդ» (1945) երաժշտական ստեղծագործությունները, որոնք մեր օպերային թատրոնի խաղացանկում ծանրակշիռ տեղ գրավեցին, զգալապես շահում էին ճարտարապետական կառույցների, մասշտարային, վերանձնատ դեկորների կիրառման շնորհիվ: Պատերազմի դաշտից հաղթանակով վերադարձող Միջնա ու Պոժարսկին մտնում էին Կրեմլ, ինչպես և Արշակ թագավորը՝ Բայլոց մայրաքաղաք՝ ուղղմակառքին կամ նժոյգներին բազմած: Պ. Անանյանի ձևավորումների մեջ երկու դեպքում էլ ընդգծված մասշտաբները արդարացվում էին ուժինորական (Ա. Գոլակյան) հարուստ մտանացումներով, ժողովրդական տեսարանների հնարամիտ մատուցմամբ: Երգչախումբն այդ բեմադրություններում իրեն շատ ազատ էր զգում: Բեմական մեծ տարածության, խոշոր ծավալների մեջ կատարվող թատերական արարողությունը խոսում էր հանդիսականի պրտից, ավելի բորբոքում գրա հայրենասիրական զգացումները:

Ծարտարապետական հուշարձանը միշտ էլ կայուն արժեք ունի. այն մշտապես առնչված է հայրենիք և ազգ հասկացողություններին: Կրեմլյան մի պարիսպ, Էջմիածնի վանք, թե մահմեղական որևէ մզկիթ (որն այնքան դիպուկ արտամայտություն էր ստացել նույն օպերայի բեմում «Քյոռ-օղլիի» արուտչյանական ձևավորման մեջ) ժողովրդի ստեղծագործ անցյալի վավերագրերն են և այդ վավերագրերի լեզվով խոսելը հայ բեմանկարիչների հատու գննքն էր, այն միննական միջոցը, որով գրանք պատերազմի տարիներին կյանքի էին կոչում հայրենասիրական դրամատուրգիան՝ լիներ դա երաժշտական, թե դրամատիկական թատրոններում:

Պատերազմը բեմանկարիչներին դարձրեց շատ ա-

վելի համարձակ, ինքնավստահ, բազմաժանր: Խաղացանկի թետ բավականին արագ վերափոխվում էր նաև նկարիչների գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական միջոցները դառնում էին ավելի ցայտուն և նպատակասկաց: Զեսպորումների մեջ նաև և առաջ ընդգծվում էր հայրենասիրական գաղափարը: Ժողովրդի անցյալին նվիրված ամեն մի ներոսավեպ պատկերվում էր որպես ժամանակակից իրականություն, իսկ ժամանակակից երկերի բնմադրություններում ընդգրծվում էին այն ներոսական շունչն ու գաղափարը, որոնք ոչ միայն օրվա թեղադրանքն էին, այլ մասամբ էլ գալիս էին այդ նույն ժողովրդի ներոսական անցյալից: Այսպես, իրար զուգակցվում էին անցյալն ու ներկան, ի մի բերելով ժողովրդի մարտնչող ոգին: Ֆիլիի բնմանկարչական պատկերումը, «Ֆեղմարշալ Կուստուկով» ներկայացման մեջ Սերգեյ Արուտչյանից պահանջում էր նույնքան ակտիվ վերաբերմունք, որքան «Ռազմակատում» նեռավոր ստեղները վերարտադրելիս:

Սզգային պատմա-հայրենասիրական երկերի բնմադրության ժամանակ, հայ նկարիչները իրենց ձևավորումներում ասես կրկնակի հմտություն էին ներդրում: Եթե նախկինում թագվարեալ էին նման այնքան քեմ բարձրանում, ապա այժմ դրանք ոչ միայն խրախուսվում էին, այլև դրանց առիթով կոնկրետ խնդիրներ ու պահանջներ էին տրվում ձևավորողին, որպեսզի ներկայացման տեսողական կերպարը հարստացվի պլաստիկ, շոշափելի դեկորներով, պատմական հուշարձանները ստանան հնարավորին չափ հավաստի նկարագիր: Ժողովրդի անցյալը պետք էր ավելի խորն ըմբռնել և ներկայացնել ավելի իմաստավորված: Սառն հայեցողական մոտեցումը անհանդուրժելի էր: Ժամանակը պահանջում էր անցյալի արժեքների վերընթեռ-

նում, նախ և առաջ Բայրենասիրության տեսանկյունից: Խոկ այդ երևոյթները ավելի քան երբեմն բեմանկարչության միջամտության կարիք ունեին: Չէր կարելի «Սամվել», «Գևորգ Մարգարետունի», «Ռուզան», «Երկիր Բայրենի» և պատմական այլ երկերի գաղափարական բարձր հզենությանը հասնել բնմում, առանց լիարժեք ձևավորման:

Տվյալ շրջանում առաջ քաջվեցի՞ն բեմանկարչական-ոեթիսորական արվեստի նոր սկզբունքներ: Այո:

Ներկայացման կերպարը, ինչպես խաղաղ տարիներին, այնպես էլ պատերազմի ընթացքում ստեղծվում էր պիեսի կամ օպերայի ներքին ճշմարտության թելադրությամբ, հենվում նրա գաղափարական պաթոսի վրա, և քանի որ խաղացանկի հիմքը Բայրենասիրական գործերն էին, ուստի և դրանց վրա գործադրվեցին նոյած սկզբունքային ամեն տեսակի հնարավորություններ: Գեղեցիկ, անհաղթ Բայրենիքն իր առինքնող կերպարով, լինի դա բագրատունյաց շրջանին վերաբերող մի դրամայի մեջ, թե ժամանակակից իրականությունից առնված պիեսում: Գլխավորը պաթեստիկ զգացումների, կրքուտ գաղափարների ոգին էր, և' իբրև սկզբունք, և' որպես գեղարվեստական առաջադրանք:

Թատրոնը հանդիսականի գիտակցության մեջ ամրապնդում էր ազգային հպարտության գաղափարը, միաժամանակ Բարազատ երկրի, նրա բազում գեղեցկությունների, անվեմներ մարդկանց գովքն էր անում: Եվ Ակարիչները օգտվելով խաղացանկի ընձեռած լայն հնարավորություններից հիշեցնում, զնդգծում էին դեկորմերի մեջ նվիրական այն վայրերը, ուր անդուլ պայքար է մղել ժողովուրդը օստարի լուծը թոթափելու, իր մշակույթի ստեղծման և ազատ կյանքի համար: Ընդորում, այս ամենին Ակարիչները հասնում էին մեծ մա-

սամբ կերպարվեստի սեղմ ու պատկերավոր լեզվով։ Այդպիսին էր Սունդուկյանի անվան թատրոնում Ա. Սարգսյանի ձևավորած «Գևորգ Մարգարետումին» ուր «Սևանը, Գառն ամրոցը,— ինչպես մամուլն է հշել,— անմոռաց էին մնում»¹ կամ «Ռուզան» դրամայի ուրսական թեմադրությունը խոխ անմատչելի քերդի ու Գանձասար լեռան ուրվագծով (Ակարիչ Սերգեյ Արուտչյան)։ Նույնիսկ «Ըստանդութ» բալետի ձևավորման մեջ, վարդերի եղեմական պարտեզի տեսարանում և այլուր, Կ. Մինասյանը հավատարիմ մնալով ժամանակի առաջդրած պահանջներին, մտցրել էր հայկական հին ճարտարապետությունից առնված գողտրիկ կամարներ, թեր սյունաշարերի վրա հենված։ Նույն հետևողականությամբ Մ. Արուտչյանը ձևավորեց «Շավիթ թեկ» կինոնկարը (1944)։ «Բնմադրական տեսակետից շատ բարդ այս ֆիլմում ըստ ամենալինի փայլատակներ սովորական թեմանկարչության ինքնատիկ ու բարձր պրոֆեսիոնալ դեմքերից մեկի՝ Միքայել Արուտչյանի տաղանդը,— գրել է Ս. Ռիզականը։— Հմտորեն համադրելով նատուրան դեկորների հետ, գտնելով բազմաթիվ առարկաների ստուգ արտահայտիչ պատկերը, Մ. Արուտչյանը Պ. Բեյլտների հետ միասին ստեղծել էին Ակարի համար հավաստի ու պատկերավոր ֆոն։ Հատկապես հետաքրքրական նն լուծված ֆիլմում հայկական հինավորց ճարտարապետական կոթողների կառուցները։ Ֆիլմի լավագույն դրվագը՝ Շավիթ թեկի լուսակյաց խոստովանանքը տաճարում շատ բանով է պարտական Ակարիշների ձևավորմանը²։ Խակ Փիլմի

¹ «Սովետական Հայաստան», 1942, 15 Ումազարի։

² С. Ризаев, Армянская художественная кинематография, Ереван, 1965, стр. 229.

Բեղինակ Ա. Բեկ-Նազարյանը ավելացնում է. «Միքայիլ Արուտչյանի աշխատանքը ներծծված է Բայկական արվեստի լավագույն տրադիցիաներով: Նրա դեկորատում արտացոլվել են հնագույն ճարտարապետության և պլաստիկայի խևկական նշումները. դրանք արտահայտիչ են, փառաթեղ, մոռումնանալը»¹:

Այսպես, անցյալը վերապրում էր նաև դեկորների մեջ, ճարտարապետական կոյողներն էլ շունչ էին առցում, դիմագրավելու համար թշնամուն:

Պատերազմը քանդում էր, ավերում ամեն ինչ, այդ թվում և գեղարվեստի կոյողները, իսկ բատրոնը Բամառորեն վերստեղծում: Երբեք, սովորաբար բատրոնի պատմության և ոչ մի շրջանում թեմանկարչի լուսան այդքան մեծ չէր եղել և պարտականությունները այդքան կոնկրետ ու շոշափելի: Հանդիսականի ցանկությունն էր Բայրենիքը միշտ աներեր ու կանգուն տեսնել. կարծես դրան ընդառաջնորդ, Բայ Ակարիչները դեկորներով կանգնեցրին Դվին ու Արտաշատ, Անի ու Արշակավան: Ավերված, անհետացած Բայրենի քաղաքները նոր կյանք ստացան թեմահարթակներում և դրանց մեջ առանձին վեճությամբ քաղաքներից ամենանվիրականը՝ ԱօհիԱ:

¹ А. Бек-Назаров, Записки актера и кинорежиссера, Москва, 1965, стр. 229.

Ֆիլմի կոնսուլտատուն է նույն Հ. Օռբելին, «որի օգնության շնորհիվ, ինչպես գրում է ականավոր կինոռեժիսորը, —մեր Ակարիչներին, Արուտչյանի դեկապարության մերքը, Բացողվեց բացառիկ ճշգրտությամբ վերականգնել անցյալ ժամանակաշրջանի տարագները, պատմականորեն միշտ կամավորել իմաստներները, Բամապատաժան զեմք ու զրամով զիմել Դավիթ թեկին»: Տես Ցույց տեղը, էջ 227:

8—Քատերական Ակարիչների մասին

ՍՎԱԽ ՀՅԱՆԻ ՎԱՍՏԱԿԸ

Դ. Դեմիրճյանի «Երկիր Բայրենին» առաջին անգամ չեղ թևադրվում: Պատերազմից առաջ, 1941-ին, Մոսկվայում ցուցադրված սունդուկյանցիների Շերկալացման առիթով, Մարինտա Շահինյանը գրել է. «Անիի ծանր ու մոնումենտալ ճարտարապետությունը... Շերկալացման վրա իշխում է իր գեղեցիկ տեսքով, բայց և անշարժությամբ: Հանդիսատեսները թեմին նայում են մեծ հաճույքով, բայց և պիտի ուղղակի առել, որ դեկորմերի պալատական ու եկեղեցական շքեղությունը շատ է դժվարացնում դրամայի սոցիալական հակասությունների, նրա մարդկային տիպերի ամրող բազմազանության ըմբռնումը»¹: Փաստորեն այն ժամանակ Սերգեյ Արուտչյանի ձևավորումը դեռևս դժվարին թեմական ոճի որոնում էր, թենիված պատմական հուշարձանների ուսումնասիրության վրա. թեմայի հաղթահարում գրւիսավորապես ճարտարապետական ձևի միջոցով:

Մեծ Բայրենականի թելադրությամբ հայ թատրոնը վերստին անդրադապ նույն գրական երկին, այս անգամ հետամուտ լինելով նրա ներքին բովանդակությանը, դեկորացիոն ոիլոմի մեջ ընդգծելով պիեսի հովժ ժամանակակից ոգին: Այս դրամայի 1943-ի թեմադրության ձևավորմամբ էր, որ աշքի ընկավ հայ թեմակարչության ամենաօժտված դեմքերից մեկը, Մելիքսեթ Սվախյանը: Նա, որ մինչ այդ նույն Լենինականի թատրոնում ուժինոր Ա. Բուրգալյանի հետ աշխատել էր մի շարք հակաֆաշիստական պիեսների թեմադրու-

¹ Мариятта Шагинян, Об армянской литературе и искусстве, Ереван, 1961, стр. 191.

թյան վրա («Պրոֆեսոր Մամլոկ», «Հրաբիսի վրա», «Սպասիր ինձ» և այլն) և զգալի փորձ ձեռք բերելու, պատմա-հայրենասիրական դրամայի ձևավորման մեջ բացահայտնեց այն, ինչ տվյալ դեպքում ամենակարևոր էր հանդիսականի համար: Անին, կենողամի ավանդությունից, համաժողովրդական պատրանքից դարձավ շոշափելի կերպար: Նկարիչը Անիի ճարտարապետական անսամբլի մեջ տեսավ նրա կառուցող ժողովորդի կամքն ու տոկունությունը, ստեղծագործական հանճարը, որ թաքնված է ամեն մի խոյակի ու կամարի, յուրաքանչյուր պարսպի ու աշտարակի, «գոռող բուրգերի» (Դեմիրճյանի տերմինը է) ետևում: Զևավորման կերպարի հիմքում ընկած էր ամրոց-քաղաքը: Գործողությունները հիմնականում ծավալվում էին ամրոցների ու պարիսպների, այդ բուրգերի շրջապատում: Քաղաքը ձևավորման ոգով դարձել էր ինքնապաշտպանության հզոր պատվար: Այդպես էր թատրոնը կամրջում անցյալը ներկայի հետ, մեռավոր պատրանքը վերածում իրականության, դրանով իսկ Դեմիրճյանի հայրենասիրական խոսքին տալիս պլաստիկական ցայտուն կերպարանք:

«Երկիր հայրենիի» այդ ձևավորումն այնքան ժամանակաշրունչ էր, որա գեղարվեստական հնչնդությունը այնքան մեծ, որ երկու տարի անց, 1945-ին Գ. Սունդուկյանի անվան թատրոնը անդրադարձավ նույն պիեսին և վերաբեմադրեց Սվախչյանի շատ կողմերով տարրեր ձևավորումը: Ծարտարապետական խորհրդագություններին այս նոր աշխատանքի մեջ նկել էին փոխարինելու գումանկարչական ընդհանրացումները: Հայոթանակը մոտիկ էր, և նկարիչը հակված էր հարցին գումային պատասխան տալու:

Թեև 1946-ին թեմադրված, սակայն Հայրենական

պատերազմի պաթոսով լեցուն էր նաև Մ. Սվախչյանի «Արա գնդեցիկը»: Գաղափարական ոգեշնչմամբ հարուստ այդ ներկայացման ձևավորումը, յուրովի ամփոփում էր հայ բնմանկարչության ամրող մի շրջան. որպես պատմահայրենասիրական երկի դեկորացիոն շարադրանք «Ալմաստից» հետո, դա լավագույց է մեր իրականության մեջ: Ն. Զարյանի դիցա-պատմական ողբերգությունը, նրա լեզվա-ոճական հենքը, գեղարվեստական մտահղացումները և հուզիչ ոգին բնմանկարչական սպառիչ արտահայտություն էին գտել: Նույն ժամանակի ծնունդն էին, դրանով էլ մինչև վերջ միմյանց հետ համերաշխ:

Ներկայացման կերպարը իր սինթետիկ էությամբ կատարելության էր հասել ձևավորման բոլոր կոմպոնենտներում¹: Դա ժամանակակից ողբերգության լիակատար փոխադրումն էր թատերա-դեկորացիոն արվեստի լեզվի, և դրամատուրգիական հագեցման տեսակենտից ավելի կուռ ու ամրողական, քան ողբերգությունը: Ասորեստան և Ուրարտու աշխարհների միջև մղված մասու և կենաց կոփվը մոնումենտալ մարմնավորում էր գտնել հեթանոս աստվածների քանդակագործական կերպարներում՝ դրանց վառ հակադրության մեջ: Բնեմում մի կողմից ուազմատենչ ու բռնակալ ոգու բախումն էր ազատության դեմ, մյուս կողմից միշտ նին ու միշտ նոր աստվածների հավերժական ընդվզումը: Դա կարծես ազդարարում էր ծանր կորուստների գնով երկրի ձեռք բերած հայրանակը: Հին ոսլիսի մը-ուայլ կերպարանքը անհետանում էր նորիզոնից ամրող

¹ Սվախչյանի ամակեմպալ մարված պատմառով, տարազները՝ ոչի նույր զգացողությամբ և դեկորացիոն լուծման սկզբունքներից մերիաշնակ, ստեղծել էր Կ. Մինայանը:

բևմի լայնքով ծագող արեգակի շողերից: Բեմադրության ռեժիսորը Վ. Ամենյանը ստեղծագործական նոր խնդիրներ էր լուծում, հինավորց երգախումբը դարձնում օրվա մունետիկ, դերակատարներին մատուցում մոնումենտալ ամրողությամբ և հաստակ ձևերի մեջ, իսկ այդ նշանակալից գործում Սվախչյանի վաստակը բընավ էլ երկրորդական չեր: Այլ հանգամանքներում թերևս անկարելի լիներ հայկական նորաստեղծ երկը հունական անտիկ արվեստի դրասական պարզության հասցընել թեմում,, միաժամանակ ընդգծելով նրա ազգային ուրույն կերպարանքը:

Պատերազմը երիտասարդ նկարչին օր առաջ դարձրեց փորձառու, շատ ավելի վաղ հաստինացրեց, քան այդ կարող էր անել մի քանի տարվա կուտակումը: Նոյն շրջանում Սունդուկյանի անվան թատրոնի «Ժայռ» և մանավանդ «Վանքաձոր» ներկայացումների (1944—1945), ինչպես և նետագայում «Կրեչինակու հարսանիք» մեջ Սվախչյանի տաղանդը խոսում էր հմուտ, ինքնատիպ արվեստագետի մասին, որն իր ստեղծագործական կարողություններով, վառ երևակայությամբ, թեմարվեստի առանձնահատկությունների մեջ խորամուխ լինելու իր արտակարգ տվյալներով, չեր զիջում ավագ կոլեգաներից ոչ մեկին: Դրա ցայտուն օրինակներից մեկն էլ «Տասներկունրորդ գիշերի» ձևավորումն էր, նորից Լենինականի թատրոնում:

Շեքսպիրյան Համամիութենական 8-րդ փառատոնը, որ տեղի ունեցավ Հայաստանում 1944-ին, ոչ միայն յուրովի հավաքագրեց մեր դերասաններին, այլև ստեղծագործական նոր ոգեշնչման աղջուր հանդիսացավ ռեժիսորների և նկարիչների համար:

Հայ թատրոնում շեքսպիրյան հարուստ ավանդները, անցած հարյուրամյա ճանապարհին, Քիմինականում

կապված են եղել խոշոր դերասանների կատարողական բարձր արվեստի հետ: Շեքսպիրը հայ դերականության մեջ նախ և առաջ դերասանական մենաշնորհ է եղել: Իսկ որպեսզի դերասանի մենաշնորհ չմնար պետք էր ժամանակ, մասնագետ ոնժիսորների հաստատուն խումբ, և պետական թատրոն: Սակայն սկզբանական շրջանում, քանի ու երեսնական թվականներին էլ մեր թեմանկարիչները չկարողացան ըստ ամենայնի հայոթահարենի Շեքսպիրը: Պատճառները շատ էին. անցյալից նկող և առանձին դերասանների մոտ դեռևս չհայտահարված անհատապաշտական մոտեցումը, նոր-նոր ձևակերպվող ոնժիսորայի միակողմանի պահանջները թեմանկարիչներին դրել էին կրավորական վիճակի և անհարկի սահմանափակության մեջ: Մասնակի, թերևս պատահական ձեռքբերումներ էին Գ. Յակուլովի «Վենետիկի վաճառականը», Շույն կատակերգության երկու ձևավորումը Ս. Մովսիսի և Կ. Ստանիսլավսկու անվան թատրոններում (1938, 1940), որ ստեղծել էր և Մինայանը, վերջապես Մ. Արուտչյանի ուշագրավ որոնումները «Մակրեթ» Անրկայացման մեջ (1933): Փաստորն հայ թեմանկարիչները Շեքսպիրին ընդուուած մոտեցան միայն Հայրենական պատերազմի տարիներին ու պատերազմական թեժ մըրնոյրտի թելադրությամբ:

Շեքսպիր, ժամանակակից թատրոնի համար, նշանակում է նաև գեղարվեստական ուժերի համախմբում, թատրոնի լեզվով՝ անսամբլ: Նրա յուրաքանչյուր պիեսի թեմադրություն փորձաքար է ոչ միայն դերասանի համար, այլև ոնժիսորի ու նկարչի, որ նրանց ստեղծագործական հնարավորությունները և գեղագիտական հակումները կարող են լայնորեն դրսևրվել:

«... Շեքսպիրյան ներկայացման ամրողականու-

թյունը, — գրել է Վ. Ռինդինը, — միայն ընտրովի անսամբլի հետևանք չէ, այլ նաև Անրկայացման բոլոր Բեղինակների ջանքերի՝ իմաստային ու ոճական կատարյալ միասնականության արդյունք»¹: Անավասիկ նման Անրկայացում էր Վ. Անժմյանի և Մ. Սվախչյանի «Տաներկուերորդ գիշերը»: Նկարչի աշխատանքը նույնքան նշանակալից ու օրգանական էր, նյութի գեղանկարչական վերարտադրությամբ նույնքան կապված դրամատուրգիական տեքստի հետ, որքան և յուրաքանչյուր դերակատար, ընդհանուր ձևի, կոմպոզիցիոն լուծման սկզբունքի տեսակետից՝ ռեժիսորական մտահղացումներին միաձուլ:

Զևավորման մեջ նկարչի վառ երևակայությամբ յուրովի վերարտադրված էին ելիզաբերյան թատրոնի բեմադրական «միամիտ» սկզբունքները և պիեսի ժամանակակից առանձնահատկությունները: Գեղարվեստի պատմական մի դարաշրջան էր արտացոլված բեմում, նաև շեքսպիրյան թատրոնի մոլեգին Բանդիսականը, որպես այդ թատրոնից անրաժման միավոր²: Դա ստողծագործական երևակայության հազվագյուտ թոփք էր, հարազատ Վերածննդի արվեստի մարդասիրական գաղափարներին. կյանքի և սիրո հիմն, որ պոածին, բուրցիկ հայացքից արտադրություն կարող էր թվայի պատերազմի տարիների համար: Համաժողովրդական վշտին

¹ Պահմու, Խոջոյն և թատր, Մ., 1966, որ. 126.

² Երանք օթակներում բազմած մարդաշափ պուպերիկներ էին, ռեժիսորական մեկնարանությամբ էլ առնված գործողությունների ուրուսում: Ուշագրավ է, որ շեքսպիրյան Բանդիսականից ձևավորման մեջ ներմուծելու այդ գաղափարը մի տարի անց օգտագործվեց ուստա ակամավոր թեմանկարից Վ. Շետակովի՝ ՄՕՀ-ի մրցանակարաշխությունում խրախուսանքի արժանացած «Ամառային գիշերվա երազ» Անրկայացման ձևավորման մեջ:

թատրոնը գալիս էր հակադրվելու շնչապիրյան կենսապիրությամբ: Բնականաբար, անհազ սիրո ու հաղթանակող երջանկության կատակերգական մթնոլորտ ստեղծելը պիտի ունենար գեղագիտական ելակետ: Երբ այսօր նևտադարձ հայացք ենք գցում ներկայացման ընթիանուր տեսարանների լուսանկարներին, դժվար է լինում որոշել՝ որտեղ է ավարտվում նկարչի և որտեղ ուժիսորի աշխատանքը¹: Գնդանկարչության և բնմարդկան սովորական սահմանները փլուզված էին այդ բնմադրության մեջ: Զնավորումը պայմանական էր և այդ պայմանականության մեջ մինչև վերջ հավաստի ու կոնկրետ, պատկերավոր ու լակոնիկ և բոլոր դեպքերում թատերային: Ծերսպիրյան կատակերգությունը զորացնում էր կյանքի սերը, գրական հյութեղ կերպարները վետվետում էին բեմում ոչ միայն հիմարքանչ դերակատարումների, այլև դիպուկ գտնված տարագների, խնդությամբ շնչող արտաքին միջավայրի շնորհիվ: Ռումանտիզմ, քնարական տրամադրություն Օլիվիայի, Վիլայի, Օրսինոյի հանդիպման պահերին և պոռթկացող խինդ ու շառաչ թորի բնելչի տեսարաններում: Քնարական զեղումներին փոխարինում էին ոռոքենայան տրամադրություններ: «Սիլենի» ներթի» նմանությամբ նկարված ետնապատառը ժամանակավեճառ չէր թըվում, քանի որ գալիս էր հարստացնելու բեմական Ծերսպիրին, ընդգծելով նրա կերպարների անզուսպ կենսապիրությունը:

¹ Զնավորումից պահպանվել է ընդամենը մի-երկու փորձնական էսքիզ: Ներկայացումը պատրաստվել է շուրջ երկու շաբաթվա մեջ և մկարիչը ստիպված է եղել ամեն ինչ կատարել տեղանուտեղը, բեմի վրա: Հնարամտության և գեղարվեստական արագ կողմնորոշման բացառիկ օրինակ:

ԾԵՔՍՊԻՐԸ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՆԱՊԱՐՀԻՆ

Գ. Սունդուկյանի անվան թատրոնի «Համլետ» ներկայացման մեջ էլ այլ կերպ արտացոլվեցին ժամանակակից իրականության պահանջները, պատերազմող ժողովողի հերոսական ոգին: Զենք ու զրահի, բուռն էքսպրեսիայի մթնոլորտի մեջ էր առնված ամրող ներկայացումը: Ասպազեն ասպետներ, որ արձանացել են թևի աջ ու ձախ անկյուններում, պահուգայի վրա ծառս եղած առյուծներ, սև վարագույրի վրայից արշավող բրոնզե հնձյալ, կամուրջի, Օրա դասավորության մեջ անգամ զգացվում էր ձևավորող նկարիչ Ա. Սարգսյանի հետևողական վերաբերմունքը և հարազատությունը պիեսի մեկնարանության նկատմամբ (ուժինոր Ա. Բուրջալյան): Բրոնզե կամավորանք, ուկենրիզ պատմուման, բրոնզե արձաններ, որպես արքունի իշխանության վավերացում, ասես ամենուր շրջափակել էին Համլետի ճանապարհը: Դա Դանիայի քանտ-կերպարի նոր ըմբռնումն էր, իրագործված դեկորացիոն արվեստի թանձը ու լակոնիկ «շքեղությամբ»: Ոչ թե ամրոցի ծանրանիստ ու մոայլ պարիսպներ, ինչպես երեմն պատկերվում է «Համլետոր» այլ ձևավորումների մեջ, այլ քանտի տեսիլքը լոկ նրա հսկիչ պահպանների քանդակագործական կերպարներով: Բանդաղափարի սիմվոլացված դրսևորումը ավելի ցայտուն էր ընդգծում Համլետի պայքարը իրականության դեմ, քան եթե այդ Համլետը գործեր ճարտարապետական մանրամասներով վերարտադրված քանտ-ամրոցի ներսում: Այստեղից էլ հակազդեցության ակտիվ երևույթը, Համլետի բուռն ընդվզումը շրջապատի դեմ: Դա մարտնչող Համլետի վաղարշյանական մեկնարանու-

թյանը լիովին հարազատ մի ձևավորում էր, էքսպրեսիվ թե ոիթմի, թե կոմպոզիցիոն լուծման, և թե գունային պարզ հակադրությունների մեջ:

Հայ բեմանկարիչների միջն, շեքսալիրյան հողի վրա, արգասավոր մրցույթ էր առաջացել, նկարիչները նույնիսկ գերազանցում էին իրենք իրենց: Ա. Մինայյանի «Օթելլոն» ադրբեջանական թատրոնում գրաֆիկական խատորոշ ձևերի մեջ դրված լակոնիկ ու շատ տպավորիչ մի աշխատանք էր, իսկ Աշոտ Միրզոյանի ձևավորած «Ամառային գիշերվա երազը» Պատաճի հանդիպատեսի թատրոնում, ինչպես քննադատությունն է Արշել, «անկանակած հերիաթային էր և իր մեջ ներծծնել էր ինչ-որ բան հայ ազգային էլեմենտից՝ թե գույների պայմանությամբ, և թե հավերժական ուրախության ու բնության բանաստեղծական ապրումի զգացումով»:
 Նույնքան հետաքրքրական, ըստ հարկի շքեղ ու մասշտաբային ձևավորում էր Ա. Միրզոյանի «Օթելլոն» օպերային թատրոնի բնմահարթակի վրա: «Օպերայի գեղարվեստական ձևավորումը,— գրել է Գ. Տիգրանյանը,— արտահայտիչ է պատկերում հարավի գեղանկարչական բնությունը և Վերածնության դարաշրջացի ճարտարապետական մոնումենտալ ձևերը»²: Հիշյալ երկու ձևավորումն էլ անհամեմատ բարձր էին Միրզոյանի մինչ այդ ունեցած աշխատանքներից: Շեքսալիրը դեռևս երիտասարդ նկարչին դարձրել էր հնարագնետ: Նրա գործերն աչքի էին ընկնում ժամրային առանձնահատկությունների, տարրեր ոճերի նուրբ զգացողությամբ և տարածության լուծման պրոֆեսիոնալ բարեմասնություններով:

¹ Ա. Հարությունյան, Ամրիոնի վրա, Երևան, 1947, էջ 91:

² Կոմմունիստ, 1942, 26 հունիսի:

Ծերապիրը, ազգային պատմա-հայրենասիրական պիեսները, որոնք նույնքան ազմեական էին ընկալվում, որքան և ժամանակակից երկերը, մեծ խթան հանդիսացան Բայ թեմանկարչության զարգացման համար։ Սակայն թատերա-դեկորացիոն արվեստը ոչ նվազ մակարդակի վրա էր նաև մի շարք այլ ներկայացումներում։ Դրանց մեջ առանձնապես ուսանելի էին Մ. Արուտչյանի ձևավորած «Կովկասի գերին» (օպերային թատրոն), Մ. Սվախչյանի՝ «Երկու տիրոջ ծառան» (Լեռնականի թատրոն), Կ. Մինասյանի՝ «Ֆրու Խնգերը» (Շուստական թատրոն), Խ. Եսայանի՝ «Ալլոց համար Բիմար, իրեն համար խեղոքը» (Գ. Սունդուկյանի անվան թատրոն), Ա. Միրզոյանի՝ «Հագարան բլրովը» (Պատամի հանդիսատեսի թատրոն) և այլ ձևավորումներ։

Երևանի երաժշտական կոմեդիայի նորաստեղծ թատրոնում, նրա գոյության առաջին շրջանից, Արուտչյան եղբայրների, Կ. Մինասյանի, Ա. Դանդուրյանի, Խ. Եսայանի ակտիվ աջակցության շնորհիվ, դեկորացիոն արվեստը գտավ իր համապատասխան տեղը։ Այդ էին վկայում «Լերլեքիջի», «Խնեմա Ցոնաթան», «Աշուղ Մուրադ», «Հրո քրմութին», «Բայադերա» և այլ օպերետային ներկայացումները իրենց գեղարվեստական որակով։ Սակայն դրանց կողքին, ինչպես այս, այնպես էլ այլ թատրոններում տեղ էին գտել նաև հապճեպ կատարված, մակերեսային, պիեսի գաղափարական մըտահացումից թեուու ձևավորումներ։ Բնմանկարչական կուլտուրան դեռևս ցածր էր շրջանային կենտրոններում գործող, հատկապես Կիրովականի և Ամո Խարազյանի անվան շրջիկ թատրոններում, որոնք լայն շփում ունեին հանդիսականի հետ և մեծ դեր կատարենու հրա ճաշակի զարգացման գործում։ Սակայն դժվար էր

ամրող «ճակատով» գրոնել, երբ սույն էին նաև տընտեսական միջոցները:

Այնուամենայիշիվ, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Բայ թեմանկարիչները ձեռք բերեցին մեծ փորձ ու վարպետություն: Հայրենասիրական երկերը թատրոնի առջև բացեցին Բայ դասական ճարտարապետության գանձարանը, իսկ Շեքսպիրը նկավ հարստացնելու, խորացնելու օժտված նկարիչների գեղարվեստական ձիբը: Պայքարի և արգասավորման շրջան էր այդ, բարդ՝ Բնեց Բաղթամիարման ընթացքի մեջ. ձեռք բերածը շատ էր հիմնավոր, նվաճումները՝ իմաստալից: Կենսաշող նրբինագիրն ու պատկերավոր տարագները, սլացիկ կառուցները և ազգային թեմանկարով հարստացած թեմաթարթակները, ստեղծագործական վերակառուցման այդ ծանր պայմաններում, վավերացրին Բայ կերպարվեստի բերած մեծ նպաստը թատրոնին:

ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թատրոնում նկարչի ստեղծագործությունը բառի լայն նշանակությամբ գոյատևում է այնքան, որքան ինքը ներկայացումը: Պահպանված նյութերից, որքան էլ դրանք առատ ու կատարյալ լինեն, Բնետագալում այլևս դժվար է ամրողական պատկերացում ստանալ բուն ձևավորման մասին. վերանում են դեկորների ու զգեստների փոխադարձ ներդաշնակությունը, չկա դըրանց շնչավորող դերասանը, թեմական լուսավորու-

թյան և թատերա-դեկորացիոն արվեստին առանձնահատուկ այլ պարագաներ: Բեմադրության ընդհանուր պատկերը աղճատվում է և առաջին գիծ են գաղիս պատառի երփնագրային անկախ արժանիքները: Սրա հետևանքը է, որ բեմանկարչի գործը, թատրոնից դուրս՝ թատրոնի աշքերով դժվար է տեսնել:

Իր էությամբ բեմանկարչությունը կենդանի որոնումների արվեստ է, հաճախ հակված դեպի իմպրովիզացիան: Ստեղծագործելով մեծ մասամբ դերասանի և ոնժիսորի կողքին, գրական նյութից ոգեշնչված՝ նկարիչը նաև իր երևակայությամբ անուղղակի կապ է հաստատում հասարակական կյանքի մետք: Նա չի կարող հաջվի շնորհականի գեղարվեստական մտածողության մետք, որ իրական կյանքի արգասիքն է և, նույնիսկ կարողանում է այն ընկանու զարգացման հարափոխին ընթացքի մեջ: Դա է, որ նրա արվեստին տալիս է արդիական շունչ, մեծացնում կերպարվեստի տնօր ժամանակակից թատրոնում:

Մեծ հայրենականի շրջանում մնայում գործեր շատ ստեղծվեցին, ինչ որ չափով գերաձանց նաև նկարչի անելիքը, նրա հեղինակությունը զգալապես բարձրացավ: Ռեժիսորան ավելի պահանջելու էր դարձել բեմանկարչության նկատմամբ: Ներկայացման կերպարի ստեղծումը այլևս անկարելի էր առանց նկարչի ակտիվ մասնակցության: Գեղարվեստական մթնոլորտը լի էր նորանոր երկերի բեմական ոգեկոչման հնարավորություններով, հատկապես առաջնակարգ թատրոններում: Եվ դա իր բարերար հետևանքը ունեցավ: Սակայն նույնը չի կարելի ասել հաջորդ տասնամյակի մասին, որն ինչպես արվեստի մյուս բնագավառների, այնպես էլ բեմանկարչության համար դարձավ փորձությունների ու լճացման մի շրջան: Այդ տարիների բեմանկար-

չույզան վիճակը բնութագրելիս ոռու արվեստարան Մ. Օստրովսկին գրել է՝ «... Մեզանում, դժբախտարար թիշ չեղան թեմադրություններ, որոնք վկայում էին ըստեղծագործական մեթոդների, ձեռագրերի, մաներայի դիմակապրկության մասին։ Մեր թատրոնի թեմը հաճախ դառնում էր սնամնջ շընդության և նատուրալիզմի ապաստարան։ Համարձակ որոնումները փոխակերպվում էին շտամպներով, կենցաղի և պատմական դարաշրջանների պատկերումը՝ փաստագրական անտարքեր ճշգրտությամբ, ազգային ներկայացումներից տրվում էր կենցաղագրական մեկնարանություն»¹։

Այդ երեսույթը նույնքան բնորոշ էր և հայ թեմանը-կարչության համար, մանավանդ, երբ հարցը վերաբերում էր ժամանակակից թեմայով պիեսների թեմադրությանը։ Արթեստական, երեսմն էլ կեղծ ընդհարումների վրա կառուցված դրամատիկական երկները նկարչի ստեղծագործական երևակայությանը հյութ չէին տալիս և նա մնում էր կենսական բախումների ոլորտից դուրս, արտաքին միջավայրի թոռուցիկ պատկերման շրջանակներում։ Միապաղադ երփնագիրը հաճախ թեմական արտահայտչականության միակ միջոցն էր դատնուն. պայմանական դեկորների լուծման որևէ փորձ, կամ տարագներին տրված որևէ երկիմաստ բնութագիր դիտվում էին որպես մնացուածում։ Դա փաստորնն սոցիալիստական ռեալիզմի հնարավորությունների սահմանափակումն էր և այդ միտումը, պետք է որ բացասական ներգործություն ունենար ետպատերագմյան շրջանի արվեստի վրա։

Նախորդ տարիների համեմատությամբ, պատերագմից մետք մեր համդիսականների գեղարվեստական

¹ М. Островский, Художник и театр. М., 1965, стр. 69.

ճաշակն ու շափանիշները շատ էին փոխվել, այլ էին մարդկանց աշխարհազգացողությունն ու Բոգերանական ազդակները: Սակայն թատրոնը չկարողացավ դրսանց լիարժեք գոհացում տալ: Իրականության ակտիվ ընկալումը հաճախ փոխարինվում էր պասսիվ ու գունազարդված արտացոլմամբ: Ծատ թատրոններ միաժամանակ տուրք տվեցին կենսական հարցեր շշոշափող, գեղարվեստական արժանիքներից զուրկ դրամատուրգիային, իսկ նկարիչն էր, ականա, ստիպված էր նպաստելու դրան:

Նույնիսկ պատերազմյան իրականությունից առ ըլված որոշ պիեսներ այդ շրջանում նույն սկզբունքով էին ձևավորվում:

«Բարձունքներում», «Արարատյան դաշտի աղջիկը», «Հրաշալի գանձ» և այլ պիեսներ, որ այդ տարիներին Վասիլ Վարդանյանի ձևավորմամբ թեմ բարձրացան Գ. Սումբուկյանի անվան թատրոնում, կրում էին իրականության պաճումանքի դրոշմը: Սարգիս Արուտչյանը, տակավին սկսնակ, բայց խոստումնալից նկարիչ, «Անհանգիստ մարդիկ» ներկայացման մեջ երկրարկանի մի առանձնատուն էր կանգնեցրել թեմի վրա, ամրող մի տուն տան մեջ, իրու պերճաշուր կյանքի արտահայտություն, սակայն դեկորները ճշնշում էին դերակատար ներին, որոնք ասելիք չունեին: Լենինականի թատրոնի թեմադրություններում աչքի ընկած դեկորատոր Սերգեյ Արուտչյանը նույն ոգով ձևավորել էր «Սեր առանց խարդավանքի», «Մոր սիրտը» և այլ պիեսներ, թեև մինչ այդ նրա ստեղծած «Քանդած օջախը» անհամեմատ կոլորիտային և հետազայում նկատվող շարլոնից մեռու ձևավորում էր:

«Հայֆիլմ» կինոստուդիան այդ տարիներին հազվադեպ էր գեղարվեստական նկարներ արտադրում,

Առ էլ ձևավորման կուլտուրայի տեսակետից ոչ բարեհաջող վիճակի մեջ էր: «Անմիտ» ֆիլմում ազգային հերիաթի համարյա անտեսված սոցիալական բովանդակությունը կորչում էր շքեղ դեկորների փայլից, իսկ Ա. Դանդուրյանի ճոխու ու փարթամ տարազները, համապատասխան արդարացում չգտնելով Էկրանի վրա, ավելի էին խորացնում այդ բացը: Տարազը այս ֆիլմում «գործում էր» ազատ ու աններդաշնակ: Նույն շրջանում Դանդուրյանի ձևավորած «Քաջ նազարի» (Երաժշտական կոմեդիայի թատրոն, 1948) գունային շքեղ համադրություններով և պլաստիկական նրբությամբ ստեղծված հագուստները նույնպես նպատակին չօգտագործվեցին. դրանք այնքան չէին ծառապում հերիաթների գաղափարական մեկնարանությանը, որքան հերիաթաքարնույթ զարդարանք էին դառնում:

Ժամանակակից թեմատիկան օպերային թատրոնում ևս մկարիչներին առանձնապես չոգևորեց: «Հերոսումի» օպերան, որի երաժշտությունը (կոմպոզիտոր Հ. Ստեփանյան) որոշ հատվածներում հուզական ջերմություն ուներ, հանդիսականին վանող շինծու լիրետոյի պատճառով սխալ ճանապարհով տարավ մկարշին: Ու թեև այդ մերկալացումը, ինչպես և ձևավորման հեղինակ Աշոտ Միրզոյանը, հատուկ խրախուսանքի արժանացան (1950), այնուամենալիք այն շատ կողմերով զիջում էր նույն մկարշի՝ «Մազեպա», «Շշիսան Դգոր» օպերաների ձևավորումներին:

Զարմանալի է, բայց նյութական մերդրումները, որ այդ տարիներին նման նպատակներով անեցին, ոչ թե նպատեցին, այլ արգելակեցին ձևավորման գեղարվեստական որակի բարձրացումը: Ավելորդ շքեղությունը, իսկ երբեմն էլ դեկորներին բնական չափերի պատրանք տալու ձգտումը մկարիչներին վարժեցնում էին

Բնշտ միջոցների, փոխանակ խթանելու գրանց ստեղծագործական հնարամտությունը:

Անհրաժեշտ է որպես դրական երևոյթ օշել, որ դասական դրամատորգիան, ինչպես և գաղափարական ազմիվ պաթոսով ստեղծված ժամանակակից մի շարք երկեր, դժբարությամբ էին ներարկվում բեմական կեղծիքին: Այսուամենայնիվ նոյն նկարիչները, կյանքի էին կոչում նաև շատ կողմերով ռեալիստական և գումեղ ձևավորումներ: Այսպես, Մ. Արուտչյանը «Խիզախումի» արտաքնապես գունազարդ, բայց բովանդակությամբ ի վերջո դժգուն աշխատանքի կողքին ստեղծեց «Ռուսական Բարցի» ուշագրավ ձևավորումը: Վ. Վարդանյանը «Այս աստղերը մերն են» ներկայացումից հետո՝ նոյն քատրոնում իրականացրեց «Ռատապարտվածների դավադրությունը» և ապա՝ «Ըողոքորր» ու «Եվայլն կամ նոր Դիոգենես» աշխատանքները, որոնք Երաժշտական կոմեդիայի քատրոնի լավագույն բեմադրություններից եղան (1949): Վ. Խվանովն էլ «Ստալինգրադից հեռու» բեմադրությունից դժգոհ, կյանքի կոչեց իր «Երիտասարդ գվարդիան» և «Մած քարենկամությունը»՝ ուժիսորական մտաჩուացումներով հարուստ ձևավորումներ, որոնք վերահստատում էին հերոսականը քատրոնում: Սարգիս Արուտչյանը ստեղծեց իր իսկ «Կանաչ փողոցի» համեմատությամբ նշանակալից՝ չեխովյան «Բալենու այգին»:

Նկարիչները, այնուամենայնիվ, լճացումից դուրս գալու և դեկորացիոն արվեստի նախնին մակարդակը քատրոնում վերականգնելու եղք էին որոնում: Այդ անհաշտվողականությունը դրամորվեց նաև Կ. Մինասյանի ստեղծագործության մեջ: Նա, նոյն 1950 թվականին, Ռուսական քատրոնի բեմում ստեղծեց ոճի ու բընույթի տեսակենուից մեկը մյուսին տրամադրեն Բագ-Քատերական նկարիչների ժամանակական մասին:

կառակ երկու ձևավորում. «Մեր թանկագին հյուրերը»՝ սիմեոպ թնդաղրված տարտամ ու գորշ մի աշխատանք և «Զյունն թագումին» ուսուական մերժաթիվ գնդանկարչական պատկերման օրինակելի մի նմուշ: «Նև օպերան էլ, որ դեկորացիոն մեկնարանությամբ ետպատերազմյան շրջանի ամենացայտուն Անրկալացումներից էր, թեմ բարձրացած դարձալ Կ. Մինասյանի ջանքերով, անհամենատ բարձր էր «Բերքերոյի» («Արեգակի ցոլքնում») ձևավորումից: Մի կողմից խորապես գեղարվեստական, թարմ ու ինքնատիպ ստեղծագործություններ, ուր դրսնորված էին դեկորների թև գունավին, և թե ծավալային լուծման բազմապիսի ձևեր, մը յուս կողմից՝ իրականության լուսանկարչական պատճենավորում: Գրեթե բոլոր դեպքերում գորշ կամ «շքեղափայլ» աշխատանքները, որքան էլ տարբեր անհատականության տեր վարպետների մեղինակածը լինեին՝ զարմանալի կերպով նմանվում էին միմյանց:

Ուշագրավ ձևավորումները՝ ուշագրավ էին յուրովի: Գեղանկարչական ընդհանրացումների, տարածության լուծման ինքնաჩնար ձևերի դրսնորման և բարձր վարպետության տեսակետից առանձնանում էին երեք բնմադրություն՝ Լենինականի թատրոնում Մ. Սվախչանի ձևավորած «Կրեչինսկու հարսանիքը» (1948), Երաժշտական կոմեդիայի թատրոնում՝ Ե. Քոչարի «Կըրկեսի իշխանութին» (1947) և Արա Սարգսյանի ձևավորմամբ թեմ բարձրացած «Պաղտասար աղպարը» (1954), որ Սունդուկյանի անվան թատրոնի լավագույն Անրկալացումներից եղավ, նվաճում համարվեց ազգային դասական խաղացանկի յուրացման առաջնօրում:

1953-ին Երևանում կազմակերպված հայ թատերական մկարիչների ցուցահանդեսը հանրագումարի թերեց նրանց ետպատերազմյան ստեղծագործությունը: Մոտ

250 աշխատանք էր ներկայացված ցուցահանդեսում: Սակայն այդ քանակը համեմատարար փոքրաթիվ նը-կարիշների էր բնութագրում, որովհետև բոլորը չեն, որ մասնակցում էին. ընդամենը տասնվեց հոգի, գլխավո-րավեն նրանք, որոնց հիմնական մասնագիտությունը սցենոգրաֆիան էր, բացառությամբ Մ. Արուտչյանի, Ա. Դանդուրյանի և Պ. Անանյանի: Ցուցահանդեսի հու-սադրիշ առանձնահատկությունն այն էր, որ մասնա-կիցների կեսը նոր դեմքեր էին, Երևանի Գեղարվես-տական ինստիտուտը նոր ավարտած երիտասարդ քե-մանկարիչներ:

«Ենունային լճի գաղտնիքը»՝ առաջին հայկական գումարու կինոնկարի համար Սերգեյ Արուտչյանի ա-ռած հետաքրքրական էսքիզների կողքին մնացյալը, չնշին բացառությամբ, Երևանի և Լենինականի թատ-րոններում իրականացված ձևավորումներ էին. Արանք հատակ պատկերացում էին տալիս այն դժվար ճանա-պարի մասին, որ այդ շրջանում անցել էր մեր քեմա-նկարչությունը: Այդ ցուցահանդեսը անկասկած, ապա-գայի խոստում էր պարունակում, որ Սարգիս Արուտ-չյանի, Գևորգ Վարդանյանի, Գրադեկոն Գևորգյանի, Շահեն Հակոբյանի, Երեսն Միօրինակ ու տարտամ թվացող աշխատանքների ետևում զգացվում էին այն հնարավորությունները, որոնք մոտ ժամանակներում պիտի յուրովի զարգանային՝ նախորդներին արժանի փոխարինողներ տալու համար: Առաջմ Արանք դեռևս խարիսխում էին, Բաճախ կուրորեն գնում թատրոնի ետևից, սեփական ըմբռնումները կամ անհատականու-թյունը մի կողմ թողնելով: Խնչպե՞ս վարվել երիտա-սարդ Ակարչին, երբ զման դրությունը խրախուսվում էր նրապարակավ, Բամարվում «բացահայտ վկայություն» այն բանի, որ «Հայաստանի թատերական-դեկորացիոն

արվեստի մեջ ունայիստական ուղղությունը հաղթանակ է: տարել զանազան ֆորմալիստական հոսանքների նրանքատմամբ, որոնք մինչ այդ գոյություն ունեին թատերական ձևավորման բնագավառում»¹: Եվ դա տարածված տեսակներ էր: Իրականում հայոցանակի մասին դեռ վաղ էր խոսելը: Անցյալի լավագույն գործերն արժեքագրիկերպ չեր կարելի հասնել նոր մակարդակի: Եվ, որքան էլ տարօրինակ թվա, երկու տարի անց, 1955-ին Մոսկվայում կազմակերպված Բայ թատերական մկարդիների անդրամիկ ցուցահանդեսում նախ և առաջ աչքի ընկան թենց այն աշխատանքները, որոնք «մինչ այդ էին գոյություն ունեցել». դարձալ Սերգեյ Արուտչյանի տարագները, կատարված «Վիճակորի գրավարասեր կանանց» Բամար, Կ. Մինասյանի «Վենետիկի վաճառականի» ձևավորումը, Ս. Թարյանի առաջին «Խաթարալան», Ս. Չիլինգարյանի «Պատիի համար», Պ. Անանյանի «Լակմե» և ինչպես միշտ Մ. Սարյանից, Գ. Ցակուլովից և Մ. Արուտչյանից բազմաթիվ էսքիզներ². նաև այն, ինչ երիտասարդները հասցրել էին ստեղծել վերջին տարում, և որոնք արդեն որակական ինչ որ փոփոխություն էին մտցնում ընթանուր պատկերի մեջ: Դրանցից էին Սարգիս Արուտչյանի «1905 թիվը», Գ. Վարդանյանի «Հոչակավոր կապիտանների ակումբը», Գ. Գևորգյանի «Արշին-Մալանը», Գ. Ասատրյանի և Հ. Հախվերդյանի «Հնարամիտ տարփումին» և ուրիշ գործեր: Մոսկվայում դըժվար քննության դիմացան Վ. Վարդանյանի «Երիտա-

¹Տե՛ս «Ավանգարդ», 1958, 5 դեկտեմբերի:

²Դա Բայ թատերական մկարդիների միակ հետամայաց ցուցահանդեսն էր, որ տարօրինակ կերպով տեղ էր գտել Մ. Սվայանցանի ձևավորումներից ոչ մեկը:

սարդ գվարդիան», Ա. Շաքարյանի «Պորտ-Արտուրը», Ա. Միրզոյանի «Տուկան», Ծ. Հակոբյանի «Կարմիր կակաչը» և այլ ձևավորումների համար արված ցուցանմուշներ: Ընդհանուր տպավորությունը այն դրական երևոյթի հաստատումն էր, որ երիտասարդները հնտևում են անցյալից նկող լավագույն ավանդներին, իսկ ավագները վերտոնն ստեղծագործում են երիտասարդական ավյունով: Զգումն ակնհայտ էր, թեև զարգացման բուն տեսնենցները տակավին անորոշ:

Բնեմարվեստի անկոնֆլիկտայնության ու հատուրալիզմի վերջնական հայցամարդումը տեղի ունեցավ 50-ական թվականներին: ՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո երկրի գեղարվեստական կյանքը մտավ իր զարգացման նոր ու յաղն հունի մեջ: Բնեմանկարչության համար ևս դա ունեցավ շրջադարձային հշանակություն: Բնական է, որ արագ չէր կարող կատարվել այդ շրջադարձը: Սումերուլյանի անվան դրամատիկական թատրոնում դա նկատելի էր Շուշինկ նրիտասարդ Ակարիչ Հր. Մերինյանի «Նախուա», «Վարդեր և արյուն» ձևավորումների մեջ, առավել ցայտուն և բազմակողմանի՝ Մ. Արյուտշյանի «Եղովագոսում», որոնք ստեղծվել էին մինչև 1960 թվականը, (քարեփոխման պրոցեսը զուգամեռաբար տեղի էր ունենում նաև Պատանի հանդիսատեսի թատրոնում՝ Գ. Վարդանյանի և Երաժշտական կոմեդիայի թատրոնում՝ Գ. Գևորգյանի նախաձեռնությամբ): Ինչ վերաբերում է օպերային թատրոնին, ապա այն համեմատաբար պահպանողական գտնվեց և բավականին ուշացումով ուժը դեպք դեկրացիոն արվեստի վերակառուցման ուժին:

Թնդնս դրամով պիտի բացատրել, որ 1958-ին Մուսկվայում կայացած հայ գրականության և արվեստի երկրորդ տասնօրյակի ժամանակ օպերային թատրոնի

ցուցադրած թեմադրությունների մասին համամիտութեական մամուլում արվել է: ծանրակշիռ մի դիտողություն. «Ինչով, նեն ոչ թատրոն և երթափանցած նատուրալիզմով պիտի բացատրել Ա. Սպենդիարյանի անվան թատրոնի և երկայացումների ձևավորման թերթությունները (բացառությամբ «Դավիթ բնկի»): Ացտարքերություն դեպի անփական երկրի կյանքն ու արվեստը, դեկորներով բանաստեղծական կերպար ստեղծելու անկարողություն, դեպի գունին արմեստավորություն տանող հժան փայլի, շքնության և «Էկզուտիկայի» հետապնդում՝ ահա «Սևան», «Անուշ», «Արշակ Երկրորդ» և երկայացումների ձևավորման վշտացնող հատկությունները, որոնք առանձնապես որոշակի են դատնում ականավոր Ակարիչ, ի բնե գունագետ, թեմի օրենքները Բիանալի իմացող Մ. Սարյանի ստեղծած դեկորների կողքին»¹:

Խիստ ասված և դառը ճշմարտություն կա այդ գնահատականի մեջ: Գունին անտուրալիզմի ոլորտից, անշուշտ, դուրս էր մնում նաև թեմի օրենքները ոչ պակաս «Բիանալի իմացող» Մ. Արուտչյանի «Պիկովայա դաման», որ գիտակցորեն չի հիշատակված Բոդվածում: «Դավիթ թեկո» շահեկան օրինակ էր Բակարության իմաստով, բայց ոչ բացառություն: Գալով մեր մյուս թեմանկարիչների մետ Սարյանի դեկորացիոն արվեստի համեմատական գնահատությանը, ապա ճիշտ չէ այն լոկ հայ իրականության վրա տարածելը: Դրու թատրոնի ականավոր շատ Ակարիչների գործեր ևս նըսմանում են այդ բաղդատությունից: Հայ թեմանկարիչները, Բամենայն դեպք, ստեղծագործելով Սարյանի

¹ В. Рындин, «Традиции нашего искусства», Советская культура, 1965, 15 сентября.

կողքին, մշտապես հաղորդակից լինելով նրա մեծ արվեստին—միայն շաբել են, միշտ մնալով ազգային գեղանկարչությանը հարազատ, խստապահանջ ու պատրաստակամ՝ գեղարվեստական բարդ խնդիրներ լուծելու։ Այդ հանգամանքը նպաստել է, եթե ոչ շատ քեմանկարիչների, այնուամենայնիվ նրա մի փոքր խմբի, միութենական ասպարեզ դուրս գաղուն։

ՎԵՐՍԻՆ ՍԱՐՑԱՆԸ

Խշպես նախապատերազմյան տարիներին «Արմատի» ձևավորման թերապրանքով, այնպես էլ մետագալում դեկորացիոն այլ աշխատանքների շնորհիվ, Սարյանի ստեղծագործական անհատականությունը գնալով ավելի ու ավելի սկսնց օրադիցնել թատրոնի մարդկանց միտքը։ «Գեղանկարչության մեջ Սարյանն ինձ համար նույնն է, ինչ Ստամիլավսկին թատրոնում»¹,— նշել է Յուրի Չավադակին։ Սարյանին որպես երիմագրողի ու քեմանկարչի, բարձր են գնահատել մեր դարաշրջանի գրեթե բոլոր ականավոր ռեժիսորները, այդ թվում Ս. Էյզենշտեյնը, Գ. Տովստոնոգովը, Ն. Օխլոպկովը, Ս. Յուտիկինը, Ռ. Սիմոնովը, Ն. Ակիմովը և ուրիշներ։ Ի՞նչն է նրանց գրավել շքեղ թատերայնությունը, գեղանկարչական ընդհանրացումների դեկորա-

¹ Տե՛ս Յու. Չավադակու սղագրված կույտը՝ Ա. Սպենդիարյանի անվաճ թատրոնում, 1961-ի թ., Սարյանին Լեհական մրցանակ շնորհվու կապակցությամբ տեղի ունեցած նրեկուին։ Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ։

տիվ մաներան, փիլիսոփայող միտքը, թեմաթիարքակի մոնումենտալ ընդգրկման ոգին: Սարյանի ձևավորած ներկայացումների մեջ, լինեն դրանք դրամատիկական, թե օպերային թատրոնում, թեմադրված երկի լեզուն և ոճը, գրական-երաժշտականի, ոնժիշտական-դերասանականի հետ մրցելով, հաճախ առավել տպավորիչ են դառնում, ստանում կրկնակի հնչեղություն:

Այդպես էր նաև «Դավիթ թեկը»: Պատմական իրադարձությունների պատկերում և դրա կողքին ժամանակակից արվեստագետի խոհերը, արտահայտված մի դեպքում հայկական լեռնանկարի, մյուս դեպքում ճարտարապետական հուշարձանների խատերային սպառիչ լեզվով: Ա. Տիգրանյանի տեղ-տեղ քնարական երաժշտությունը լրացվում էր դեկորների էպիկական շրնչով, շեշտվում նախ և առաջ որպես ազատահրական երկ: Հանդիսականը գգում էր, որ այդ վեճ ու անառիկ բարձունքներում կովող զինվորին պարտություն չկա: Խոկ զավթիչների ու ավերողների բաժինը միայն ավերակն է, ինչպես «Արմատի» ձևավորման մեջ:

Մահարեր թշնամու դեմ ապստամքում է ոչ միայն ժողովուրդը, այլև երկրի ըմբուտացած բնությունը, սևա ապառաժների, անհասանելի գագաթների միջոցով: Դրամատիկական հագեցում ունի Սարյանի ձևավորած յուրաքանչյուր պատկեր, ամեն մի տեսարան: Տեղին է հիշել Գառզուի պարադոքսը. «Ձևավորումը միայն աշքի համար չէ... դեկորացիան դեկորատիվ չի պիտի ըլլա: ԱՅ շլացնելու չէ: Սարեցնելու է: Դեկորացիան դրամատիկ պիտի ըլլա»¹: Սարյանը իր այս ձևավորմամբ ապացուցում էր, որ դեկորացիան դեկորատիվ լինելով կարող է և խորապես դրամատիկական լինել:

¹ «Սովետական արվեստ», 1967, № 1, էջ 50:

«Ռավիթ բեկի» դեկորներն ու տարագները,— գրել է երաժշտագետ Մ. Սարինինան,— ըստ Էռլիյան, օպերային թևմադրության սուկ արտաքին սարքավորումը չեն, այլ գեղարվեստական բարձրարժեք նմուշներ... Լեռնային Հայաստանի արևակեզ գագաթների և մյուն կիրճների հոյակապ պատկերները, «Սարյանական» գուների ինքնատիպ համատեղումը թևմում վերարտադրում են Հայաստանի անկրկնելի կերպարն ու ոգին: Այդ ֆոնի վրա օպերային երաժշտությունն ու գործողությունը էլ ավելի խորն են ընկալվում հանդիսականի կողմից»:

Դարձյալ 1956-ին Սարյանը պանորամայի մի էսքիզով մասնակցեց Ն. Զարյանի «Արմաշեն» պիեսի թևմադրությանը: Դա ժամանակակից Հայաստանի բանաստեղծական պատկերն էր, երկնամքարձ Արարատի կոմպոզիցիայով, միաժամանակ Արարատյան հովտի թևմական համայնապատկերը: Զմրուխտ Բարթավայրը, թատերայնորեն տեղաբաշխված բարդիներ և դեպի հեռուն ձգվող մարգագետին: Բնեմական Բեռանկարն այստեղ բացառիկ լուծում էր գտել, իր մեջ ընդգրկելով անսահմանափակ տարածություն: Սակայն գլխավորը ձևավորման ներառնեքստն էր, փառաբանումը Բողի և բնության, որպես բարիքների առառանձու աղբյուրի: Կանչազարդ Բողը ծիծաղում է, կանչում. պիտի ձրգտել Բողին, տիրանալ նրա Բարստությանը, ապրել թեր-

¹ «Սովետական արվեստ», 1956, № 7—8, էջ 7: Զնավորումն իրականացվել է Ակադիքներ Խ. Եսպանի և Ա. Միրզոյանի համագործակցությամբ: Սարյանի էսքիզներով են կատարվել Տաթևի գործողությունը, Սյունիք աշխարհի բացօթյա տեսարանները. Բամակատեղին, ինչպես և զնավոր Բերոսի, իշխան Մալիքի և այլ գգեստներ:

քի գեղեցկությամբ՝ այս էր ձևավորման գաղափարը, արտահայտված մեն-մի պանորամայի միջոցով¹:

Սարյանը թատերական մղումներով, թերևս իրենից անկախ, մասնակցում էր ժամանակակից բնմարվեստի վերակառուցման աշխատանքներին: Լուծման ընդհանուր սկզբունքի, էպիկական շնչավորման և դեկորացիոն թարմ ձևերի լակոնիկ պարզության տեսակետից «Արմաշենի» հետ կապվող գծեր ուներ մի տարի անց Մոսկվայի Սովետական բանակի թատրոնում բեմադրված «Հերկած խոպանը», որի ձևավորումը (Ն. Շիֆրին) էտապային նշանակություն ունեցավ սովետական բեմանկարչության համար: Այն գնում էր դեպի ընդհանուրացում և լակոնիզմ: Գեղանկարչական ընդհանրացումների, դեկորացիոն պարզեցված ձևի իմաստով, վերոթիշյալի վկայությունն էր նաև է. Ֆիլիպովի «Ճիլումենա Մարտուրանո» պիեսի բեմադրությունը Վախթանգովի անվան թատրոնում, որ Սարյանի վերջին ձևավորումն էր: Պատահական չէ, որ 1964-ին Մոսկվայում, ապա և Լենինգրադում բացվեց ականավոր վարպետի թատերա-դեկորացիոն արվեստին նվիրված հատուկ ցուցահանդես. այնուղեք բեմական գործիչների դիմանկարների հետ, տեղ էին գտնել շուրջ 150 աշխատանք: Դա յուրովի գնահատում և ամփոփում էր Սարյանի թատերական ծառայությունները: Մուրեն Սիմոնովը այդ առիթով գրել է. «Վարպետի ստեղծագործությունը, զարդարելով մեր օրերի սովետական թատրոնի դեկո-

¹ «Արմաշենի» Սունդուկյանի անվան թատրոնում, իրերի բերումով ընդհանենց երկու անգամ խաղացվեց, այդ պատճառով է Սարյանի աշխատանքը անմատչելի մնաց Բանդիստականի լայն շրջանակներին: Ներկապացման մյուս տեսադիմումները Բամապատասխան ոճի զգացողությամբ ձևավորել էր Սարգսի Արուտչյանը:

բացիոն արվեստը, օրինակ է ծառայում երիտասարդ բնեմանկարիչների համար»¹:

ԽՈՍՏՄՆԱՀԻՑ ՏԱՍԽԱՄՅԱԿ

1956 թվականը, առնասարակ, Բայ թատերա-դեկորացիոն արվեստի բարեփոխման սկիզբը դարձավ: Բոլոր բնեմանկարիչները միահամուռ համախմբվածությամբ ու մեծ նվիրումով, ամբողջ բնագավառով մեկ գործի անցան: Իսկ բնագավառը միայն թատրոնով չէր սահմանափակվում: Այդ թվականից «Հայֆիլմ» կինոստուդիան տարեկան մի քանի գեղարվեստական նկար է արտադրում, Հայաստանում սկսում է գործել մեռուստատելոյան ստուդիան, հիմնադրվում է ազգային կրկեսը, Երևանում և Լենինականում վերակազմվում են տիկնիկային թատրոնները: Արտասահմանյան լավագույն թատերախմբերի ելույթները մեր երկրում, Շերմուճվող կինոնկարների բազմազանությունը, առանձին նկարիչների կատարած շրջագայությունը եվրոպական երկրներ, և ինչպես միշտ, սերտ շփումը ժամանակակիցից ուսաւական բնեմարվեստի մետ, ոչ պակաս կարևոր խթան հանդիսացան մեզանում դեկորացիոն արվեստի բուռն զարգացման համար: Հայ բնեմանկարիչները իրենց աշխատանքը հաճախ բաղդատության մեջ դրեցին «դրատում» ստեղծվածի մետ և ավելի նկատելի եղան մեր ուժեղ ու թույլ կողմերը: Այս ժամանակաշր-

¹ Выставка театральных произведений М. С. Сарьянна (каталог), Москва, 1964, стр. 3.

շանում առանձին հոգացողությամբ հայտնարերվեցին երիտասարդ տաղանդներ, իսկ բարենպաստ պայմանները յուրովի բացահայտեցին ավագ սերնդի փորձը:

Զևավորման բնույթով թարմություն էր բնույթ Միքայել Արուտչյանը «Պիկովայա դամա» վիճելի բնմադրության մնջ: Եկատերինյան ժամանակաշրջանից ըստով ալեքսանդրյան Էպոխային մոտենցնելը, որպիսի խնդիր իր առջև դրել էր ուժիսոր Ռ. Սիմոնովը, պարտավորեցնում էր Եկարչին վերանայելու տրադիցիան: Բնականարար, ուժիսորական նոր մոտենցումը պիտի բացահայտվեր նաև դեկորների լեզվով: Զկար Եկատերինյան ժամանակներին բնորոշ պեղճաշուր հանդիտանքը: Նույն օպերայի նախկին բնմադրություններում եղած դեկորների ակնհայտ փարթամությունից հետք անգամ չէր մնացել: Տիրապետողը կոնստրուկտիվ չոր ոնով կառուցված գորշ տաղավարներն էին. Առվանիս զառամյալ կոմսություն մենարանը զրկված էր գունագեղությունից: Երածշտությանը համահնչյուն, ուժեղ տրամադրություն էր ստեղծում հատկապես գորանոցի պատկերը: Նույն ոճն ու սկզբունքը կիրառված էր նաև զգմատների մնջ՝ առանց շլացնող, ակնախտիտ պանումանքի: Բացօթյա տնօսարաններն էլ՝ ներդաշնակ տաղավարների հետ, իսկ այս բոլորը՝ իրենց սառը տոններով ամրողացնում էին ցարական իրավակարգի հեղձուցիչ մթնոլորտը: Նման ձևավորման մնջ ավելի մատշելի էր դառնում Զալկովսկու երածշտությամբ բացահայտվող սոցիալական երևոյթների ողբերգականությունը և հերոսների ապրած հոգեկան ծանր դրաման:

Որքան էլ տարօրինակ թվա, միննույն տարում, գոկարն զուգահեռարար Մ. Արուտչյանը աշխատանք էր տանում նաև հայկական կրկեսի ազգային հատկանիշ-

Ժերը դպրացիոն արվեստի միջոցներով վերարտադրելու ուղղությամբ: «Պիկրված դամայի» կողքին... Արքիս, այն էլ աղօային ինքնատիկ նկարագրով: Թերևս Բենց այդ ազգային լորաճառությունների վերականգնման հարտակն էլ Օրան քերել էր կրկեսային արենա: Դա Չոր երևոյթ էր բվում, սակայն իրապես դարավեր տրադիցիա ուներ: Պետք էր եղանակ ժողովրդի ստեղծած հինավորց ավանդներից: Ազգային կրկեսի անդրամասիկ մերկայացման ծրագրում իսկ ի հայտ էին նկան Աշուշչամի վարպետությունն ու Բարուստ գիտելիքները: Մեծ տպավորություն էր թողնում ընդհանուր մթնոլորտի մեջ Բայկական զարդանկարներով Շախչ-վաճ գորգը, որ փուփած էր ամրող արենայով մենք: Այդ բոլորան և «քեմանադրակն» իր արտաստվոր «Բագուստով» փշում էր սրամի վրա, բորբոքում հանդիսականի երևսկայությունը, տանում Օրան դեպի Թեքիաթքային աշխարհ: Այդ մասին պղոփ. Գ. Գոյանը ցշել է. «Մինչև մեր օրերը հասած փոքրիկ, Շուրջ զարդանկարներից առնված նախշերն այստեղ, կրկեսում, անտպանելորեն փառանել մասշտաբներ էին ընդունել: Թվում էր, թե արենան նզրապատղ պարսպի շրջանակը վեր է ածվել ֆանտաստիկ խոշորացույցի, որը Օրեւարիչ Միքայել Արուտչյանի ձեռքով մոտեցել էր Կիլիկիայի հայկական թագավորության մասնանկարի հոչակապոր վարպետ Թորոս Ռուտինի նկարագրության մասնակիությամբ: Խնչայելու խոշորացույցի միջով մարդ սկըսում է սատիճանաբար տեսնել այն, ինչ. որ մինչ այդ աննշանարնի էր, այնպես էլ այստեղ, կլասիկ ժառանգության հարստությունների ազատ օգտագործումը դըրամը տեսանելի է դարձրել հանդիսանենարդին՝ այդ

Բարստությունները ցուցադրմալով նոր լուսի տակ»¹: Դիտի առնելացնել նաև գորգի գարդանկարներին համապատասխան ստեղծված տարբեր տարագներն ու ունկիթութը (որ կրում էին Էկվիչիրիստ Վ. Արզունանշանը, գագանաշուրպ Ս. Խոահակյանը և այլ արտիստներ), այս բոլորը ոճական միամբություն էին կազմում, ամրողացնում ուժի, Բավասարակշության, անվեհներ ոգու ցուցադրման մթնոլորտը:

Հաջլական կրկեսի նորաստներ ազգային խումը իր ծրագիրը բարձից կրկնեց Սոսկվաչում, ինչպես և արտասահմանյան մի շարք երկրներ կատարած շրջագայության ժամանակ և, ամենուր, արտիստների ելույթից բացի բարձր գնահատականի սրժանացավ նաև արևնացի ծևալորումը: Հեռագայում, Մ. Արուտչյանի մահից հետո, նոր ծրագիրը թարմացնեցու կարիք դգայիլնեց, նրան փոխարինելու եկավ Շկարչոնի Մ. Աւամալյանը, ուրիշ երիմագրի իր հնարամսությամբ:

Հայ Շկարչներն ամեն կերպ ձգտում էին թարմություն մտցնել ծևալորումների մեջ, օգտվել կնրապարվեստի բնձեռած բազմազան հնարավորություններից, ավելի շատ հնավել հանդիսականի երևակայության վրա, հաշվի առնել նրա գեղարվեստական ընկալման մեծ կարողությունները: Եվ առա, մեկը մյուսի ետևից, տարբեր թատրոններում երևան եկան այնպիսի բեմադրություններ, ուր Շկարչի վաստակը իր մասնագիտական հնատկանիշներով բնավ չեր գիշում ուժիսորին և հարաւացնում էր հայ թեմարվեստն առնասարակ: Բազմաթիվ աշխատանքներից բավական է նշել Բեղողութիւնից հրավիրված Շկարչի Արմեն Գրիգորյանցի «Ծմահիրտը լնումներում է» և «Պեպոն», Սերգեյ Արուտչյանի

¹ «Սովետական արվեստ», 1958, № 4, էջ 50:

«Կապկազ թամաշան», Ա. Չիլինգարյանի «Աֆրոդիտեի կղզին», Ա. Ստեփանյանի, Ք. Վարդանյանի և Սարգս Արուտչյանի «Դեպի ապագան», Ա. Շաքարյանի «Չար ոգին», Կ. Մինասյանի «Ռումեն և Զուլիետը», Ա. Միրզոյանի «Սպարտակը», Ծ. Հակոբյանի «Սայաթ-Նովան», «Ժորժ Շանդեն» և այլն:

60-ական թվականներին աննախադեպ քարձրության հասավ Կիրովականի թատրոնը: Ռ. Նալբանդյանի ձևավորած «Բակում կատաղի շուն կա», «Էլի մեկ զոհ», «Մննդյան տոները սինյոր Կուսպելոյի տանը» և այլ ներկայացումներ իրենց դեկորացիոն գեղանկարչական մակարդակով չեն զիշում մայրաքաղաքի թատրոններում ստեղծված աշխատանքներին: Առաջընթաց մի շարժում էլ տեղի ունեցավ Նրեանի տիկնիկային թատրոնում: Արամայիս Սարգսյանի համար, հետևողական ու հնարամիտ ջանքերի շնորհիվ այս թատրոնն ունեցավ լիովին ձևակերպված, վառ երևակայության տեր մի մկարիչ, որը սցենոգրաֆիական նոր հնարավորություններ է որոնում տիկնիկային թատրոնի համար և հաճախ արդյունավետ:

Այդ նույն շրջանում ստեղծագործական աշխույժ մթնոլորտի շնորհիվ «Հայֆիլմ» կինոստուդիայում նոր մասնագետ մկարիչներ ի հայտ եկան: «Հյուսիսային ծիածան», «Տժվժիկ», «Բաղաքավարության վճաներ» (Ս. Անդրանիկյան), «Բարեն, ես եմ» (Ռ. Ս. Բարյան և Հ. Կարապետյան), «Հասուկ առաջադրանք», «Կարինե» (դեկորների հեղինակ Վ. Պողպողով) և այլ կինոնկարների դեկորացիոն ձևավորման որակը վկայում էին, որ այդ ասպարեզում ևս հայ կերպարվեստը լուրջ առաջնադացում ունի և զարգացման մեծ հեռանկարներ:

Հեռուստատեսության նորաատեղծ ստուդիայում Ծ.

Հակոբյանի ղեկավարությամբ տարիներ անընդհատ շնորհակալ աշխատանք ծավալեցին մի խումբ Շկարիչներ (Ա. Զիգիլկյան, Գ. Առատրյան, Զ. Սամթելյան): Նրանց ձգտումն էր մշակել, ամեն կերպ կատարելագործել գեղանկարչական ու գրաֆիկական այն սկզբունքները, որոնք կիրառվում են և պիտի կիրառվեն նեուուտատեսային բազմապիսի հաղորդումների ժամանակ: Չատ կողմերով դժվար, նոր ու նետաքրքրական մի բնագավառ, որ մինչև կատարելության հասնելը դեռևս բազում ջանքեր է խնելու հայ Շկարիչներից:

Նույն տասնամյակի գեղարվեստական կյանքում հատկանշական երևույթ դարձավ առանձին բնմանկարիչների ցուցահանդեսների կազմակերպումը: Դա նըպաստում էր պարզ պատկերացում կազմելու հայկական սցենոգրաֆիայի մասին, հետախուզելու հրա զարգացման աստիճանները տարրեր թատրոններում, բնականարար և կանխագծելու ապագան: Սարյանի թատրական ցուցահանդեսից բացի, և Օրանից առաջ, Երևանում և ապա Մոսկվայում կազմակերպվեց Կարո Մինասյանի անհատական ցուցահանդեսը (1960), Ավերակած վաստակավոր Շկարչի ծննդյան 50-ամյակին, Բնտո, միևնույն տարվա մեջ թատերասեր հասարակայնությունը առիջ ունեցավ ծանոթանալու Ս. Ալաջալովի և Ա. Շաքարյանի ի մի հավաքված աշխատանքներին, իսկ մինչ այդ էլ երևանում բացվել էին Մ. Սվախչյանի և Գ. Յակովովի հետմահու ցուցահանդեսները: Այս ամենին զուգահեռ, բնմանկարչական գործերը պատվավոր տեղ ունեին Արա Սարգսյանի, Խաչատրյան Եսայանի, Սերգեյ Արուտչյանի անհատական, և մյուսների հետ, առմասարակ, կերպարվեստի հանրապետական գործեն բոլոր ցուցահանդեսներում: Սակայն, հայ իրականության մեջ նրան կազմակերպված դնկորացիոն

գեղանկարչության ցուցահանդեսներից լավագույնը, անկանած, 1966-ի նոյեմբերին բացված ցուցահանդեսն էր, նվիրված մեծ Հոկտեմբերի փառապանծ Բիւնամյակին:

Նկարիչների տան լայնարձակ ցուցահանդերում շուրջ 400 աշխատանք էր գետեղված. թատերական ներկայացումներն արտացոլող դեկորների ու տարագների էսքիզներ և դրանց կողքին բազմապիսի մակետներ, հեռուստատեսային տարրեր Բաղրությունների համար կատարված գրաֆիկական աշխատանքներ, կինոնկարների դեկորացիոն մտահղացման նմուշներ և այլն: Ցուցահանդեսին մասնակցում էին բոլոր այն նկարիչները, որոնք 20-ականներից սկսած մինչև 1966 թվականը Բայ թատրոնի, կինեմատոգրաֆիայի, ապա և հեռուստատեսության մարզում շատ թե քիչ աշքի ընկնող գործ էին կատարել:

Ժամանակակից Բայ թեմանկարչության բոլոր շրջաններն էլ արտացոլված էին այդ բազմահարուստ ցուցահանդեսում, աղքատիկ էր միայն ետպատերազման շրջանը, որ 1953-ի ցուցահանդեսի հիմքն էր կազմում: Նշանակում է նկարիչներն ու գործը կազմակերպող մարդիկ քննադատական վերաբերմունք էին Բանդես թերել անցյալի լուրջ վրիպումների նկատմամբ: Այնուամենալիք, ցուցահանդեսը ոչ միայն ամրողական պատկերացում էր տալիս անցյալի մասին, այլև լայնորեն լուսաբանում ներկան, ընդգծում էր այն, ի՞նչով Բարուստ է և Բարստանում է արդի Բայ թեմանկարչությունը:

Մի խումբ նկարիչների գործերից, ինչեւ և Բայ թատրոնի վիճակից դատելով, Բայ թեմանկարչությունը գտնվում էր իր զարգացման նոր աստիճանի վրա: Երբեք Բայ թեմում կերպարվեստին այնքան մեծ կարե-

վորություն չեր տրվել: Ժամանակակից բևմարվեստի պահանջմանը միանգամայն Բամապատասխան ձևավորումներ էին Սարգիս Արուտչյանի «Սալեմի Վթուկ-Անդրը», «Դատական գործը», «Շուռմեռն, Զույեատը և խավարը»: Երկար որոնումներից մետք Գ. Սունդուկյանի ամփան թատրոնի գլխավոր նկարիչը ձգտում է ամեն կերպ ընդունել կոմատրուկտիվ ձևավորման լավգաույն հաստիկանիշները մեր թեմահարդրակներում, բացերով մեծ տարածություն դերասանի ստեղծագործության համար:

Դա յուրօրինակ թոյիչք էր նկարչի արվեստում, անցյալի լավագույն փորձի վերականգնում և վերագնահանում: Նա «եւտ էր նայում» դեպի Գ. Ցակուլովի և Մ. Արուտչյանի պարզ ու դիպուկ, լակոնիկ ու պատկերավոր ձևավորման արտահայտչածները (դա առավել ևս թելադրուում է ժամանակակից բեմական տեխնիկայի պահանջներով, տեխնիկա, որին Արուտչյանը տիրապես ու կատարելապես):

Պոտովող կրկնակի թեմահարթակների, «շարժական» գունանկարի հնարավորությունները երբեք այդրան վառ ու տպավորիչ չեն դրսեռորվել, ինչպես այդ շրջանում, և դա ակներև վաստակն է այն նկարիչների, որոնք զգում են տվյալ արվեստի ժամանակակից շունչը, նետամուտ են ուժիւուրայի, դերասանական վարպետության զարգացման ընթացքին:

Թատրոնը մնում է թատրոն՝ և Ծերսայիր թեմադրելիս, և ժամանակակից նեղինակի երկ: Հայուսաբարել գրական գործը ամեն գնով, եթե հնարավոր է նրանից բարձրամալ: Գ. Վարդանյանը «Սալմկալից փողոց», «Սաման Մթեր» և «ԽՄ սիրելի փոքրիկը» ներկայացումների մեջ ստեղծել էր ժամանակակից պիեսների ձևավորման օրինակելի ոճ, իր ակտով վերաբերմուն-

բը դրսնորելով պիեսում ծավալված գործողությունների նկատմամբ: Սովետական իրականության արտացոլումը թատրոնում կերպարվեստի միջոցներով առաջնահերթ խնդիր էր դառնում Բայ բեմանկարիչների համար:

Գեղանկարչական այն բարձր կուլտուրան, որ ունի ժամանակակից Բայ կերպարվեստը՝ նաև թատրոնի հարստությունն է: Այդ հարստության ներթափանցման համոզիչ օրինակն է Մինաս Ավետիսյանի աշխատանքը Օպերային թատրոնում: «Նրա մի շարք ձևավորումներում («Հերոսական բալլար», «Լոռնցի Սաքո», «Ռունեն» բալետները) բեմական տարածությունը կազմակերպում է ոչ թե ծավալային դեկորների կամ կոնստրուկտիվ եղանակներով, այլ գույնի, լուսավորության և գծանկարի օգնությամբ: Երբեմն նույնիսկ երաժշտությունը բեմի վրա շոշափելի կերպարանք է ստանում ավելի գեղանկարչական, քան պարային միջոցներով: Նա ձևավորում է ոչ թե հանդ ու արոտ, այգիներ ու տաճար, այլ ընդհանրացնում է դրանց միտքն ու ոգին: Ավետիսյանի պատկերած միջավայրը երբեմն այնքան ակտիվ է, քազմահնչյուն, որ ասես անշարժ դեկորանկարներն ել գտնվում են գործողության մեջ: Բեմածավալների ֆանտաստիկ ընդգրկումներ, էքսպրեսիա և գաղափարական նպատակալացություն երփնագրի գորեղ օգնությամբ, ուր գծանկարն ու լուսն ել իրենց ներթին ներազդման ակտիվ գործուներ են դառնում:

Պիտի ցավել, որ Մինաս Ավետիսյանը օպերային բեմի շրջանակներից առայժմ, ինչպես հայկն է, չի կարողանում դուրս գալ: «Արա Գնդեցիկի» ձևավորման փորձը Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, նրանից անկախ պատճառներով, փորձ էլ մնաց, թեև կողքին գործում էր հիանալի մոնումենտալիստ Հ. Մինասյանը:

Վճռական նշանակություն ունեցավ Էստրադային ընդհարձակ արենայի մասշտաբներով մտաժիղացված դեկորների տեղափոխումը Շեղլիկ թեմասրամ։ Այստեղ նույնիսկ առասպելական ոգով լուծված տարազները չհնչնցին, այն տարազները, որ կոչված էին կրկնակի ֆունկցիա կատարելու՝ գունային միջոցներով տարածության նայեամբարման և ճարտարապետական պարզ դեկորները արդարացնելու ֆունկցիան։

* * *

Երփնագիրն ու ճարտարապետությունը քաղաքացիության իրավունք են ձեռք բնրում այդ շրջանի հայ թեմանեկարչության մեջ։ Դրանք միաժուտավում են կամ խաչաձևվում, սակայն բոլոր դեպքերում ծառայելով թատրոնի սինթետիկ ստեղծագործությանը, գաղափարական ու գեղարվեստական բարդ խնդիրներ արծարծելու նպատակին։ Դա հայ թատերա-դեկորացիոն արվեստի անցյալն էր ու Շերկան, դրա մեջ էր առաջընթացի երաշխիքը։ Այդ տարիների լավագույն թեմադրությունների փորձը վերստին ցուց էր տալիս, որ հայ թատրոնի վերակառուցման տվյալ շրջանում Ակարչին շինարարի պատվավոր տեղ էր վերապահված։

1970

ԲԵՄԱՆԿԱՐՀԻ ՌԵԺԻՍՈՒՐԱՆ

Ժամանակակից բատրոնի գեղարվեստական գործը տնօրինում են ոչ այնքան Ակարիշները, որքան ուսմիտուրան՝ Ակարիշների սերտ համագործակցությամբ:

Գեղարվեստական ներքին փոխազդեցությունների, ատեղծագործական ներթափանցման յուրովի բարդ և անսահմանափակ մի ոլորտ, ուր երբեմն դժվար է մնալ մյուսից անջատ ըմբռնել: Առավել դժվար է նրանց գործունեությունը դիտել դերասանական արվեստի ոլորտներից դուրս:

Ներքին հնարավորությունների մեջ նըլկարիքը ուսմիտոր է, ինչպես և ուսմիտոր՝ Ակարիշ, պլաստիկ մտածողության տեր, լավագիտակ ոչ միայն գունանկարչության և գծանկարի, ճարտարապետության և քանդակի օրինաշափություններին, այլև հաշվետու երաժշտության, լուսի, շարժման և գործողության տարրեր երևույթների համար: Այդ տեսակներից 20-րդ դարի տևականական հայտնագործություննե-

ոք մեծ ազդեցություն և սպողել թատրոնի և, մանավանդ, հեռուստատեսության վրա: Սովորական կտավի և լույսի միջոցով այսօր կարելի է հասնել գնդանկարչական և ծավալային այնպիսի էֆեկտների, որ երազել անգամ չեր կարող 19-րդ դարի ամենավառ երևակայությամբ օժտված թատերական գործիչը:

Նկարիչը դարձել է ունիվերսալ, սինթետիկ պահանջներին ավելի ենթակա, քան առաջնարում: Փոխվել են նաև հանդիսականի գնդագիտական ըմբռնումները, երևակայությունը դարձել է ավելի խորաթափանց: Այսպես, բացարձակ արստրակտ ոճով լուծված մի վարագույր թատրոնում կարող է ընկալվել որպես միանգամայն ռեալիստական գործ, իսկ հաստոցային երփնագրի օրենքներով կյանքի կոչված դեկորացիան՝ իրեն տաղտկալի հատուրալիզմի արտահայտություն: Այն դեֆորմացիան, որ հաճախ է կիրառվում մուլտիպլիկացիոն ֆիլմի կամ տիկնիկային մերկայացման մեջ, հաստոցային գրաֆիկայի պայմաններում կարող է դիտվել որպես գնդարվեստական ծամածության փորձ:

Պայմանականության սկզբունքն ու նրա ընկալումը դարձել են սովորական երևոյթ: Դրամատիկական թատրոնում Հրաշյա Ղափլանյանի և Վասիլ Վարդանյանի բեմադրած «Սեր և ծիծաղը» 25 տարի առաջ առնվազն ֆորմալիստական մերկայացում կհամարվեր, մինչդեռ մեր հանդիսականը այն ըմբռնում է իրեն ռեալիստական վառ գույներով հարուստ կատակերգական մի հանդես: Եվ ոչինչ չկա զարմանալի: Ժամանակը խոսում է գնդարվեստական սինթեզի, պայմանականության, վառ ձևերի համադրության օգտին, հանուն գաղափարի ցայտուն դրսնորման: Բայց այստեղ կա կարևոր մի հանգամանք, որ մեր մկարիչները հաճախ անտեսում են: «Մերկայացման, մասամբ ել մեռուստատե-

սային հաղորդման մեջ շատ բան արդարացվում է ներքին կամ արտաքին շարժման, լոկ ռեալիստորեն բացահայտված գործողությունների շնորհիվ: Ծարժում և գործողություն հասկացություններն այստեղ սկզբունքորեն տարրեր են կետ ունեն՝ մի դեպքում երևոյթը ֆիզիկական է, մյուս դեպքում՝ հոգեքանական: Եվ նըկարիչը առանց ռեժիսորի, իսկ կինոյում՝ նաև օպերատորի հետ համագործակցելու, շատ հաճախ դառնում է անզոր իր ստեղծագործական մտահղացումները իրականացնելիս: Ծարժման անընդհատ առկայությունը, հարափոփոխ լուսը դեկորատոր-նկարչին դնում են արտակարգ պայմանների մեջ, և հիմնականում այստեղ է, որ նա զգաղացես տարրեղովում է հաստցանցին գեղանկարչից:

Միզանցենավորում, ռեժիսորական կոմպոզիցիա՝ ահա թե ինչը պետք է նախ և առաջ նկատի ունենա նկարիչը: Այստեղից է՝ նրա կայսումը ռեժիսորից: Բայց ինչ կարող ես ամել, ներկայացման «տերը» նախ ռեժիսորն է: Ուստի մի ելք կա միայն՝ համագործակցություն:

Լոկ մի օրինակ, թե ինչպես նկարիչը տուժում է առանձին դեպքերում: 1955-ին Արա Սարգսյանը և Վարդան Աճեմյանը թեմայություն «Պաղտասար աղբարը»: Համատեղ ստեղծագործական աշխատանքի հիմնալի օրինակ: Բայց նետագայում նախ՝ Մուկվայի Նրմոլովայի անվան, ապա և Սումերուկյանի անվան թատրոնում Աճեմյանը փորձեց նոր թեմայությամբ ներկայացնել պիեսը: Հրավիրեց Սուրեն Ստեփանյանը: Բայց վերջինս հայտնվեց կաշկանդված վիճակում. նախկին թեմայության կոմպոզիցիան մնալու եր նույնը և փոխվելու եր միայն արտաքին կենցաղային միջավայրը: Փոխվեցին մանրանասներ կամ-կարասի-

ների մեջ, ընդհանուր ինտերյերը վերանայվեց ճարտարապեսական իմաստով, բայց և այնպես, ոտք նոր ձևավորում չէր:

Ս. Ստեփանյանն ակամա մնաց Ա. Սարգսյանի լուծման շրջանակներում: Ժամանակին գրեթե նման փորձարկման և ներարկվեց նաև Շահնեն Հակոբյանը: Նա ավելի մնուուն գնաց: Փոխեց նաև գունային գամման, նեռացակ զուտ արևելյան կոլորիտից, եղումուտի նոր դուներ բացեց, բայց, ըստ Էռիթյան, դարձյալ ներկայացման մեջ ոչինչ չփոխվեց, բանի որ ոնժիսորը չէր կամենում նեռանալ իրենից, վերանայել շարժման կոմպոզիցիան, գործողությունների բնույթը: Այսինքն, մի անգամ արդեն գտնված ներկայացման կերպարը Բիմնականում մնաց նույնը, թեև առաջին ձևավորույթը նետու միանգամայն տարբեր նկարիչներ էին աշխատել քննադրույթան վրա, փոխվել էին նաև դերակատարներից շատերը:

Մասնավորապես թատրոնի և կինոյի պրակտիկան նկատի առնելով, պիտի ասել՝ ինչպես որ այստեղ որևէ ստեղծագործական խնդիր անկարելի է ոյտել կերպարվեստի ոլորտներից դուրս, այնպես էլ կերպարվեստի որևէ խնդիր դժվար է լուծել առանց ոնժիսորի կամ ոնժիսորական մտածողության: Սրանք թեև հարափոփոխ, բայց և հարակից երևույթներ են, արդեն միաձուլլ, գրեթե անքածանելի: Կոմպոզիցրայի, սինթեզի, անսամբլի ընդհանուր երևույթներ: Այսօր թատրոնն տեսարանը Բոտիչելիին ակամա համարում է կոմպոզիցիայի մեծագույն ոնժիստը, իսկ կերպարվեստի տեսարանը Ռեյնիարդու ոնժիստը մեջ տեսնում է նաև խոշոր նկարիչ-քանդակագործին: Վախթանգովի ոնժիստրական որոշ մտաթղացումներ ճիշտ հասկանալու համար ոռու թատերագետները հաճախ դիմում են Գո-

յայի օֆորտների օգնութանը: Նույնը կարելի է ասել Վ. Սուրենյանցի կոմպոզիցիոն կտավների կամ Սմելյանի լավագուց թեմադրությունների կապակցությամբ: Մրանցից յուրաքանչյուրը միաժամանակ և ռեժիսոր է, և նկարիչ: Ո՞վ կարող է ասել, թե Ս. Էլզենշտեկն և Ս. Փարաջանովի ֆիլմերում որտեղ և ինչպես են անջատվում նկարչի և ռեժիսորի ֆունկցիաները, կամ արդյո՞ք անջատվում են:

Ի՞նչ օրինակների էլ դիմենք, դեկորացիոն արվեստի, նրա ձեռք թերած նոր որակի, անշուշտ, նաև լուրջ թերությունների մասին խոսելիս, անհրաժեշտ է նարցերը դնել ռեժիսորական մակարդակի վրա, ելնելով նույն դեկորացիոն արվեստի շահերից:

Ի՞նչ ենք ձեռք թերեկ:

Որքան էլ տարօրինակ թվա՝ այն, ինչ կորցրել էինք ետպատերազմյան տարիներին:

Ինչպես մի առիթով արդեն ճշել ենք, ոուս արվեստաբան Մ. Օստրովսկին, 1965-ին Բրատարակած իր «Նկարիչը և թատրոնը» գրքում այդ տարիները Բամարել է լճացման մի շրջան, որ ազգային ներկայացումներին տրվում էր կենցաղագրական թնույթ, պատմական դարաշրջանի պատկերը Բննվում էր լոկ փաստագրական ճգրտության վրա՝ ստեղծագործական ձեռագորերի և մաներայի Բամահավասարեցման կամ նկարչի կատարյալ դիմագրկության պայմաններում:

Այս գնահատականը շնչին բացառությամբ, կարելի է տարածել նաև նայ թատերական իրականության վրա: Դրան նեշտ է Բամոզվել, դիմելով նախ թեմանկարչությանը, որովհետև թատրոնում նման նրկույթները ավելի ցայտուն են արտահայտվում, և, բացի այդ, ռեժիսորի և նկարչի փոխհարաբերություններն ել այսունու անհամեմատ պարզ են:

Եկեր մի պահ վերթիշներ «Օյելլուն» Սունդուկյանի անվան թատրոնում 1956 և 1969 թթ. բեմադրություններով: Մի դեպքում Կ. Մինասյանն ու Լ. Քալանթարն են հեղինակը, մյուս դեպքում Սարգիս Արուտչյանը՝ Հր. Ղափիանյանի ռեժիսորական դեկավարությամբ: Կամ եկեր մտովին համեմատենք ետպատճրագմյան տարիների «Գայանեն» Պ. Անանյանի և Ն. Անիսիմովյանի հեղինակությամբ և այն «Գայանեն», որ ցուցադրվում է այսօր Մ. Ավետիսյանի և Վ. Գալստյանի խորեգրաֆիկ-պլաստիկական վերընթացումով: Եկեր գուգամին անցկացնենք Ալ. Շաքարյանի և Լ. Քալանթարի, ապա և Գ. Վարդանյանի և Զ. Տատինցյանի «Չար ոգու» միջն, բեմադրություններ, որոնց արանքում ընկած է շուրջ տասը տարվա ժամանակահատված: Կամ եկեր համեմատենք «Անուշը» մի դեպքում Ա. Միրզոյանի և Ա. Գուլակյանի, մյուս դեպքում՝ Ռ. Նալբանդյանի և Վ. Ամենյանի բեմադրությամբ (թեև այս վերջին «Անուշ» էլ իր թերությունն ունի՝ շատ է տարած): Բայց ինչու դիմել միայն տարբեր նկարիչների գուգամիններին, երբ նույն Ալ. Շաքարյանի այսօր ցուցադրվող «Դոն Քիշուտը» անհամեմատ բարձր է և շահնեկանորեն տարբեր 50-ական թվականներին նորա ինչ ձևավորած «Դոն Քիշուտից»: Մի դեպքում բալետմայստերը Զ. Մուրադյանն է, մյուս դեպքում՝ Ե. Չանգան:

Որքան խուսափենք անցյալի քննադատությունից և այնտեղ միայն լավը փնտենք, միևնույն է, անցյալը ներկայի առաջ ասես գունաթափկում է: Եվ հարցը տըկյալ դեպքում ոչ այնքան նկարիչների մեջ է, որքան ժամանակի և ռեժիսորայի: Բալետմայստեր Զանգայի հետ աշխատելիս և կողքին ունենալով այնպիսի մի վտանգավոր մրցակից, ինչպիսին Մինաս Ավետիսյանն է բալետային ներկայացումներ ձևավորելիս, բնական

է, որ Ծաքարյանի նման փորձված նկարիչը նախկինում կիրառած գեղարվեստական պարունակման պահպանության համար դաշտում է գործի դներ իր ուժացած ամրող հնարավորությունները:

Թատրոնը սիրում է ձևերի բազմազանություն, գուներանգմեր, պլաստիկական արվեստները գալիս նն հարստացնելու նրան:

Կ. Մինասյանին, Պ. Անանյանին, Ա. Միրզոյանին կամ Ալ. Ծաքարյանին չի կարելի մեղադրել պահպանողականության մեջ, նրանք պարզապես ժամանակի և ուժիսության առաջադրանքներն են կատարել: Բավական է մթնոլորտը փոխվեր, որպեսզի Խ. Նսայանը, վավիկ Վարդանյանի հետ թեմադրած կենցաղարույր «Սոս և Վարդիթերից» հետո, հաջողությամբ փորձարկեր «Էղիաց արքան», և դա ոչ այնքան այդ երկու օպերաների միջև եղած երաժշտական և թեմատիկ նկարագրի մեծ տարբերությամբ էր թեմադրված (այսուղև Խգոր Ստրավինուսին և Վարդան Տիգրանյանը «մեղք» չունեն), որքան ժամանակի և ուժիսության պահանջներով: Խ. Նսայանի «Սոս և Վարդիթերը» այն ժամանակ էլ չէր կարելի ընդունել, մինչդեռ «Էղիաց արքան», ճարտարապետական պարզունակ ձևերով հանդերձ, տպավորություն է թողնում նաև այսօր:

Դեկորացիոն արվեստում հայ իրականության մեջ առաջատարը, անշուշտ, թեմանկարչությունն է: Կոնկրետ օրինակների համար բավական է թեկուզ դիմել Սարգիս Արուտչյանի և Մինաս Ավետիսյանի ձևավորումներին: Նախ՝ այդ երկուսի, որովհետև նրանց աշխատանքներում արտացոլվում են մեր օրերի հայ թատերա-դեկորացիոն արվեստը, նրա օրենքոր ամրապնդվող օրգանական կապը ուժիսության մեջ, ինչպես

և անցյալից ժառանգած լավագույն ավանդությունների կենացրար ոգին:

Կոմպոզիցիայի և գծանկարի հստակություն՝ վերացարկված ձևների մեջ, մեծ մասամբ քննական խոշոր ընդհանրացումներով՝ առա Արուտչյանի բուռն ու քեղմանակոր գործումներության հաջարաբանը: Բոլոր թատրոններում, տարբեր ժամրերում, նույնիսկ տարբեր ռեժիսորների մետ աշխատության, Արուտչյանը վերջին տասնամյակում զարմանալիորեն հավատարիմ է մնում իրեն, իր ոճին, իր ամրողականությանը, որ մեծ մասամբ հաջարաբում է գծանկարի և դեկորի միասնական դրվածք: Մի առիթով ֆրանսիացի հաջարաբոր ճարտարապետ Շ. Կորրուային ասել է՝ «Տունը քնակության մերենա է»: Այս թևավոր ասացվածքը կարենի է տառածել Արուտչյանի ձևավորումների վրա, սակայն այլ շարադրանքով: Բնմական դեկորացիան ստեղծագործության յուրատիպ մի քնակավայր է, որ մղում է տաքիս ռեժիսորին և դերասանին տարածության մեջ ազատ ստեղծագործելու, քեմի վրա զգալու ինչպես տանը, այսինքն՝ քեմը դարձնելու ստեղծագործական կյանքի տուն-մերենա: Դրա լավագույն օրինակներն են, իմ կարծիքով, Աճնմյանի քեմադրած «Դատական գործ», Հր. Ղափլանյանի «Յոթ կայարանները», Ալ. Գրիգորյանի «Զինվորի ալրին» և Ռ.Ռ.Ռ.-ը: Արուտչյանը կատարելապես տիրապետում է քեմական տեխնիկային, ըստ անհրաժեշտության կարողանում է քարացած ձևներից խուսափել, կոնստրուկտիվ թրապարակները դնել անհանգիստ շարժման մեջ, լույսերի մետ խոսել լույսերի լեզվով, լույսից ստանալ քեմական գունանկար: Դա այն է, ինչ որ չի երևում ցուցահանդեսում գետեղված նրա էսքիզների մեջ: Դրանք ավելի շատ հիշեցնում են դեկորների գունածածկ նախագծեր,

կամ, ասենք, դեկորաշինության պայմանական չափագրում: Այսինքն, ուզում եմ շնչտած լինել, որ Արուտչյանի ձևավորումը բնմից ավելի թատերային է հընչում, ավելի բարձր մակարդակ ունի, քան ցուցահանդեսում առնասարակ:

Տեխնիկական ցուցանիշներից դատելով, օս աճում է զարմանալիորեն արագ, ձևավորումից ձևավորում: Բավական է ասել, որ 1972-ին Բրատարակված Օրա ապագա ցուցահանդեսի կատալոգը երկու տարի հետո բացված ցուցահանդեսի համեմատությամբ շուրջ 35 տոկոսի տարրերություն ուներ: Երկու տարվա մեջ Արուտչյանը հասցրեց Բրաժմարվել իր նախակին շատ աշխատանքներից և դրանք փոխարինել նոր և ավելի որակալ աշխատանքներով: Նրա գործեղակերպը ոճով հիշեցնում է երիտասարդ Միքայել Արուտչյանին, որը չեղ հասցնում է սրբազնը անել, այլ մեծ մասամբ մակետներով: Եր սկսում ու երբեմն էլ մակետով ավարտում ձևավորման ողջ նախապատրաստական աշխատանքը:

Ինչպես ասվեց, Սարգիս Արուտչյանը շատ ուժի-սորմերի հետ է աշխատել, բայց ոչ մեկի հետ այնքան համերաշխ չի գործել, ինչպես Հրաչյա Ղափլանյանի: Մեծ մասամբ այս համագործակցության շնորհիվ է, որ նա էլ իր ներթին նպաստեց կորցրածը գտնելուն:

Հրաչյա Ղափլանյանը 1965-ից սկսած իր ստեղծագործական տեմպերը արագացրեց, նետո այդ արագության վրա ավելացրեց մի նոր տեմպո-ոիլոմ, և Սարգիս Արուտչյանն այստեղ նրա լավագույն և նպատակաբաց գլուխկիցներից մեկը եղավ: Ամեն ինչ ակտիվը «Սալեմի վրուկներից» ու հասավ մինչև «Անօժիտը»: Երկուսն էլ՝ արտաքին դինամիկայի մոլեուլայի հետեւորդներ: Ղափլանյանը, թերևս նաև Արուտչյանի շը-

նորմիվ, այնքան վարպետացավ ու խորացավ թեմասարքավորման ու դնեկորացիոն մշակույթի գաղտնիքների մեջ, որ ինքնուրուց լուծեց «Էթիչարդ Նրբորդի» նման քարդ մի ողբերգության ամրող ձևավորումը, ընդորում, մնալով ռեժիսորական մտահղացման և նրա պլաստիկ ըմբռնումների գեղարվեստա-գաղափարական մակարդակի վրա:

Բայց... ցավն այն է, որ Ղափլանյանը իր գործն առաջ է մղում նաև առանց Արուտչյանի, մինչդեռ Արուտչյանը նրբեմն լուրջ դժվարությունների առաջ է կանգնում, երբ համագործակցում է այլ ռեժիսորների թետ: Այդպես եղավ, երբ նա իր և Ղափլանյանի տեմպերը կամ տեմպո-դիրքը առաջադրեց Զ. Տատինցյանի «Գիբրորը» թեմադրելիս: Ռեժիսորն այդ տեմպերին չհարմարվեց, համագործակցությունը մնաց առկախ: «Գիբրորը» չենթարկվեց կոնստրուկտիվ նդանակով սարքավորված թեմահարթակին: Խակ երբ «Շումենը, Չույինտը և խավարը» պիեսի թեմադրության առիթով նրանք հանդիպեցին՝ ամեն ինչ խկույն տեղն ընկավ: Երվանդ Ղազանչյանն էլ, իր ներքին, լենինականի թատրոնում շատ հոգսնը քաշեց, որ կարողանա արդարացնել Արուտչյանի թերթասահ դեկորները «Հարսանիք—73»-ում, մինչդեռ «Հանցանք ու պատիժը» իրեն լիովին արդարացրեց: Բանն այն է, որ Արուտչյանը ամեն կերպ խուսափում է կենցաղից, բայց ոչ միշտ է այդ կենցաղը փոխարինում դեկորների վերացարկված համոզիչ պատրանքով: Նրա վերջին շրջանի ձեզավորումներում պատրանքին և ստեղծագործական երևակայությանը հաճախ գալիս են փոխարինելու բոլորանիստ կամ անկյունավոր հարթակները, տարբեր մակարդակների վրա դրված հաստոցները, երկաթակուր ձողերն ու աստիճանները, ել չենք խոսում պտտա-

Բարթակի օգտագործման մոլեգին թափի մասին։ Դեռևս ոչ մի հայ Ակարչի հրամանով հայ բեմը այնքան շատ չի պտտվել, ինչպես Արուտչյանի ձևավորումներում։ Այս ամենը, մանավանդ շքեղ լուսավորությամբ և ուժիսուրայի արդարացված միզանացներով, մեծ տպավորություն է թողնում, բայց, ցավոք, միշտ չէ, որ նպաստում է դերասանական հստակ խաղին և, մանավանդ, պիեսի գաղափարական բովանդակության ցայտուն դրսերմանը։ Նրա ստեղծած բեմածավալները, որքան էլ ճարտարապետորեն մտածված, որքան էլ դրված մասնագիտական ամուր միմքերի վրա, հաճախ բեմական իրադարձությունների նկատմամբ մընում են անտարբեր։ Արուտչյանին սպառնում է մերև սխեման, միջավայրի պլաստիկական կաշկանդրումները։ Ստացվում է այնպես, որ ուժիսուրան այսօր Արուտչյանի հետ դաշն կնքելուց առաջ պիտի գգուշանա նրանից, եթեն նա շարունակի բեմի վրա ավելի ազատ գործելու, բեմին ավելի «ազատություններ» տալու իր միտումները, քանի որ նա գրեթե հավասար ուժով ու ոգևորությամբ շարունակում է գործել մեր համրապետության գրեթեն բոլոր աշքի ընկնող թատրոններում։ Ժամանակակից թատրոնը որքան էլ ձգտում է բարձր տեխնիկայի, մեքենայաբար շրջադարձ է կատարում դեպի ապագան, այնուամենայնիվ, սուկ մեքենա մնալ չի կարող։ Այդ է պահանջում ոչ միայն թատրոնը, այլև ազգային արվեստի զարգացման ուղին։

Մեկ այլ նշանավոր ճարտարապետ՝ ամերիկացի Ֆրանկ Լոյդ Ռայթը, Կորրուզյնին յուրովի լրացնելով, ասել է. «Տունը իրոք բնակության սարքավորում է, բայց գեղարվեստն սկիզբ է առնում այնտեղից, որ ավարտվում է այդ մեքենան»։ Արուտչյանի ձևավորումներում տասը տարի առաջ է կանգ առել այդ մեքենան,

բայց գեղարվեստն իր ամբողջ թափով դեռևս իր ընթացքի մեջ չէ: Այստեղ ավելի իշխողը Մինաս Ավետիսյանի աշխատանքներն են, գլխավորապես քանդակական ներկայացումների ասպարեզում:

Մ. Ավետիսյանը ունի հաստոցային գեղանկարչությունից փոխանցված այնպիսի շնորհներ, որ քչերին է տրված: Նա քննից գույների լեզվով անու գրուցում է համդիսականի հետ: Լուսա-օդային արստրակտ միջավայր լինի թե կոմկրետ տարածություն՝ հաղթահարում է ոչ միայն գունանկարով, այլև գծանկարով: Ընդորում, այդ գծանկարը քեմանկարչության մեջ ավելի տպավորիչ է: ու պարզորոշ, քան նրա հաստոցային ժանրում: Սա, իմ կարծիքով, այն եզակի առավելությունն է, որ թատրոնի ժանրում ունի Մ. Ավետիսյանը՝ իր իսկ հաստոցային աշխատանքների համեմատությամբ, որը նա ավելի հակած է դեպի արստրակտ ընդհանրացումներ:

Մինաս Ավետիսյանը սկզբից ևեք գործ ունեցավ տաղանդավոր քաղաքացիությունը և շահագայի հետ, և թատրոնին մասնագիտորնեն մերձենալու ընթացքը մեկնութեակ իսկական հունի մեջ: Նրա որ ձևավորումն էլ նայես, թվում է, թե նկարիչը կոմպոզիտորի միտքն է հյուսել երփնագրի լեզվով: Գույնը այստեղ քեմական գործողության շարունակությունն ու բացահայտումն է, նաև լրացումը, բայց ոչ երեք տարածական չեզոք միջավայր: Նա տեխնիկայի բազմազան միջոցներից օգտվելու կարիք չունի, քանի որ տեխնիկայի ազդակը նրա գունանկարչության մեջ արդեն կա: Ամենուր գործում է Մ. Ավետիսյանի գունախիտ երանգապահակը, որի միջոցով քեմական մյուս բաղադրիչների թույլ օդակները կապակցվում են, ամրանում իրար: Նրա ձեռվավորումները, շնչին բացառությամբ, ամուր կոմպո-

զիցիա ունեն, քայլ ոչ ծավալային, այլ պայմանական դեկորների գունանկարի շնորհիվ։ Գույնն ու գծանկարը արդեն ստեղծում են գործողության պատրաճք։ Առանց պոտաժարթակի օգնության, նոր ստեղծած դեկորները «շարժվում են», երբեմն արտացոլվելով արտիստի խաղի, երբեմն էլ շարունակելով իրենց ընթացքը հանդիսականի երևակայության մեջ։ Մ. Ավետիսյանը ևս կենդանացային մանրամասներից առարկայական իմաստով խուսափում է։ Բայց կենցաղն իր անհրաժեշտ ներկայությունը զգացնել է տալիս գունային տարածությամբ, գունաքերի խաղերով ավելի, քան այդ կարող են անել տափարակ հաստոցները կամ թեմի մակարդակները տարբերակող մերկ դեկորացիան։ Դրա լավագույն օրինակները՝ «Հերոսական բալլադ», «Հոռեցի Սարո» բայետային մանրապատումներն են և, մանավանդ, «Անտոնին»։

Մինաս Ավետիսյանը դիմամիկ գործողության է մըդում գուներանգների, երփեագրի ներդաշնակությամբ, երբեմն էլ նոյն գուներանգների հակադրության միջոցով։ Երկու դեպքում էլ առկա է դրամատորգիական և թատերային մտածողությունը։ Նա ազատ և ինքամրտորեն օգտվում է հայ միջնադարյան մանրանկարչության ոճերից ու գունային լուծումներից և դրանք մշակում այնպիսի պոլիֆոնիկ վարպետությամբ, ինչպես Արամ Խաչատրյանն է մշակում հայ ժողովրդական երգը։ Պատահական չէ, որ այդքան շատ է խոսվում «Գայանեի» նոր ձևավորման մասին։ Դրանք իրոք համարնույթ և համառ ստեղծագործություններ են, հարազատ արվեստի ազգային ավանդույթներին։ Բայց Մինաս Ավետիսյանն ունի մի աշխատանք, որի նկատմամբ ես ունեմ ավելի բարձր կարծիք և հաստուկ լինրաբերմունք։

Վերոհիշյալ աշխատանքները, որքան էլ բարձր գը-
նահատենք, միևնույն է, գալիս են, ի վերջո, նաև Մ.
Սարյանի «Քաջ Նազարից», գեղարվեստական մա-
կարդակով ավելի չեն, իսկ բնույթով՝ դարձյալ հաս-
տոցային գեղանկարչության ծնունդ: Այլ է Ա. Տերտեր-
յանի «Կրակե օղակ» երաժշտական դրամայի ձևավո-
րումը, մի աշխատանք, որ, նկարչից անկախ պատճառ-
ներով, դժբախտաբար, երկար կյանք չունեցավ Սպեն-
դիարյանի անվան թատրոնում: Այստեղ նա առաջին
անգամ դիմեց կոնստրուկտիվ դեկորներին, սակայն
հարազատ մնալով գեղանկարչությանը, այսիցք՝ ի-
րեն: Նա համարենց կոնստրուկտիվ եղանակը երփնա-
գրի հետ յակուլովյան սիստեմով: Պտտահարթակ
կննտրոնում, որ օգտագործվում էր տարրեր ու կուրս-
ներով, իսկ շրջապատում թիճավորց տաճարի փլա-
տակներն են: Անցյալն ու ներկան ոճական առումով
միաձուլված են: Փլատակ տաճարների զարդանկար-
ները շարժվող դեկորների հետ անհախաղեա անամրի
են կազմում: Հեղափոխական իրադարձություններով
պայմանավորված օպերայի թեման գաղափարական
ցայտուն բովանդակություն և ազգային վառ նկարա-
գիր էր ստացել: Այդ օրա՝ Մինաս Ավետիսյանի մեջ
շանքերով էր նաև, որ բնանկարչության մեջ կենցա-
ղագրական մեկնարանությանը, մանրութներին փոխա-
րինեց ազգային հարուստ ավանդույթներից սնվող գե-
ղանկարչությունը:

Այնուամենայնիվ, Մինաս Ավետիսյանի աշխատանք-
ները ևս զերծ չեն թերություններից: Սարյանի նման
նա էլ դժկամությամբ հաշտվեց թատրոնի հետ: Նրա
ձևավորումները դեռևս կարելի է մատների վրա հաշ-
վել: Միշտ է, քանակը այստեղ հարց չի լուծում: Կարե-
վորն այն բարձր որակն է, որ, իբրև կանոն, երաշխա-

վորում է: Աա, նրաշխավորում է, բայց ոչ միշտ: Օրինակ Ս. Պրոկոֆիև «Մոխրոտը» բալետը ասես մի նկարչի աշխատանք չլիներ: Օգտվելով Բերհաթի «աշխարհագրական քարտեզից», Աա յուրաքանչյուր արար յուրովի էր լուծել, տարրեր գեղանկարչական ոճարանությամբ, իսկ մոռացել՝ այդ բոլորը ընդհանուր հայտարարի բերել: Խմ խորին համոզմամբ տակավին չի հաղթահարված նաև «Ալմասի» ձևավորումը, ընդ որում վարագույրից սկսած, որ և Թմուկ բերդը կա, և Աջուղը, և Կառավարական տան շենքի ուրվանկարը, ու թեթև ակնարկով Զվարթնոցի գմբեթածծելը և դեռ կողքին էլ լոռեցիսաքրոյական տիպարներ: Եկ չգիտես ինչի համար: Մի քիչ խիստ եմ ասում, բայց Թաթուի պալատն ու պալատի գավիթը արմեստականորեն մեծացված խաղալիք-մակետի տպավորություն է թողնում, չի համոզում նաև ձևավորման կոլորիտը, որ Բիմնականում լուծված է սկի և կարմիրի, ավելի շուտ արնավառ կարմրի տուներով: Այստեղ պատրանքայինը ավելին է, քան թույլ են տալիս Ս. Սպենդիարյանի առանց այն էլ պատրանքային վառ տեսիլներով հարուստ երաժշտությունը և Վ. Աճեմյանի ռեալիստական ռեժիսուրան: Ուզում եմ ասել, օպերայի հոգերանական խորությունը չի գտել բնմանկարչական այնպիսի համարժեք, ինչպիսին գտնված է «Գայանե» բալետի ձևավորման մեջ: Մինաս Ավետիսյանի սցենոգրաֆիան առաջմ օրինակելի է, բարձր ու նպատակալաց, գլխավորապես բալետային ներկայացումներում: Այստեղ է, որ նա մրցակից շունի և ուղևնիշ է մեր բնմանկարչության զարգացման ճանապարհին:

Խմիջիալլոց, անհրաժեշտ է Բիշել, որ օպերայի թատրոնում տարիներ առաջ բնմահրված «Տանհոյզերն» ու «Հյուպատոս» բացադիկ արժեքներ էին, ատեղծված

Պողոս Աֆեյանի և բուլղարացի Ակարիչներ Մ. Պոպովի այլի ու Մ. Միխալլովի համագործակցությամբ:

Ականավոր ռեժիսոր և Ակարիչ Նիկոլայ Ակիմովը մի առիթով ասել է: «Մեր արվեստի բովանդակ սպեցիֆիկան տաղանդավոր Ակարիչը կարող է լուրացնել մի քանի շաբաթվա մեջ, եթե մինչև թատրոն գալը թեմարվեստը սիրել է: որպես հանդիսական»: Մեր Անրիա թեմանկարչության փաստերից դատելով, այս միտքը կարիք ունի որոշ խմբագրման: Այս, այդ սպեցիֆիկան կարենի է լուրացնել մի քանի շաբաթվա մեջ, եթե մինչև թատրոն գալը նա թեմարվեստը սիրել է: որպես հանդիսական և թատրոն մտնելուն պես գործ է ունենում օժտված ռեժիսորի կամ, առնվազն, թատրոնով ապրող և թատրոնը հիմնալի գգացող ռեժիսորի հետ: Այլապես, ինչով բացատրել, որ Հ. Զարդարյանի նման նրկարիչը, օժտված դեկորատիվ արվեստի բազում շնորհներով, Սունդուկյանի անվան թատրոնում փաստորեն ձախողեց «Միայն մարդն է ուղիղ քայլում» ներկայացման ձևավորումը, իսկ դրանից հետո էլ հաջողության շիասավ «Գայանեի» թեմադրության մեջ: Մինչդեռ Արտաշես Հովհաննյանը հասավ հիմնալի արդյունքի օպերային թատրոնում առաջին իսկ ձևավորմամբ («Հերիաթ մեծահասակների համար»): Իսկ իրականացվելու դեպքում ինչպես կմնչի նոյն Ա. Հովհաննյանի «Հին աստվածները», ցույց կտան ժամանակն ու դարձյալ ռեժիսորան: Այն մի քանի հերիաթ-պիեսները («Մեծ անտառի զավակները», «Ֆանֆարոն թագավորը», «Հազարան բլրու»), որ նա ձևավորեց սունդուկյանցիների թեմում, խոստման երաշխիք են, բայց ավելին սպասել առաջմ դժվար է, եթե նա չգտնի իր ռեժիսորին և իր թատրոնը: Մի խորքով, որ էլ գընանք, ինչ էլ անենք՝ հարցերը լուծվում են մեծ մա-

սամբ ուժիսորական մակարդակով։ Ուժիսորը հայտաձեռնողն է, ուժիսորը ընտրողն է, ուժիսորը հրավիրողն է ու պատվիրատուն։ Լավ նկարիչների արժանիքներն էլ, թերություններն ել երբեմն գալիս են ուժիսորայից։

Օրինակների համար դիմենք Վ. Աճեմյանի փորձին։

Սուանց Արմեն Գրիգորյանցի դժվար էր հասնել «Պևպոյի» նորոգ մեկնաբանությամը, ինչպես և առանց Ռոբերտ Նազարյանի հազիվ թե «Սայաթ-Նովա» օպերայի բեմադրությունը ունենար գեղանկարչական այնպիսի վառ կերպար, ինչպիսին ունեցավ։ Բայց արի ու տես, որ երբ Աճեմյանը հրավիրեց Վ. Պոդպուրովին «Բնեկումը» ձևավորելու, նրանք իրար շնասկացան, և հրապարակ եկավ ստանդարտը՝ բեմի վրա սովորական մի գրահանավ և անհրապույր ինտերյեր։ Կարելի է, և նոյն Պոդպուրովի «Առավոտները այստեղ խաղաղ են» ներկայացման ձևավորման հետ շնաշտվել, բայց նա ոնժիսոր Հր. Ղափլանյանի նման է մոտեցել խնդրին, բեմ-հրապարակ է բերել պատերազմյան թեմայով ու հայրենասիրական գաղափարներով առհասարակ հագեցած մի պիես և գոհ է դրանից։ Պիեսի փիլիսոփայական-հումանիստական մտորումները անտեսվել են և անտեսվել են երկուստեր։ Այս դեպքում նկարչից դգործել չի կարելի։

Սուանձին/ ուշադրության է արժանի Ա. Զիլինգարյանի գործունեությունը գլխավորապես ուսուական թատրոնում, ուր նա հիմնավորվել է վերջին տարիներս։ «Խելքի եկ, Քրիստությոր» և, մանավանդ «Մակուքը անտառում» ներկայացումների մեջ, թեև տարբեր ոճով ու սկզբունքներով լուծված, Զիլինգարյանը հասնում է լակոնիկ ու պարզ ընդհանրացումների։ Գեղանկարչականն ու կոնստրուկտիվը նրա ձևավորումներում թեկա-

դրված նմ գրական նյութի և դերասանական խաղի պահանջմանը: Բայց այն էլ պիտի ասն, որ Զիլինգարյանը, Բամագործակցելով երիտասարդ Ըկարիչ Ե. Սոֆրոնովի հետ, «Պարտքնը մեր» պիեսը ձևավորելիս ընկել է պայմանական ոճի թակարդի մեջ, թեմը ցանցապատել պանորամայով, որպես գլխավոր հերոսի հոգերանական վիճակը արտահայտող խորհրդանիշ: Իրականը կորել է պայմանականի մշուշում, ցանցը ծանրաբնույթի է ապիկացիա հիշեցնող լուսանկարներով, որոնք ոչինչ չեն ասում: Սակայն այդ առումով պեսի բնորոշը նույն թատրոնում Ե. Սոֆրոնովի և Ալ. Գրիգորյանի թեմադրած «Իմակահանդեսն» է: Այսունո՞ւ ամեն ինչ արդեն խճճված է կեչիների անտառ հիշեցնող սյունաշարով և դրանց գլուխն անցած կոպիտ դիմակներով: Պետերբուրգյան «Փայլուն, բայց սնամեջ դարի» սոցիալական պատկերը իր տեղը գիշել է ուժինորական մտացածին մեկնարամությանը: Նկարիչը դարձել է ուժինորի գերին, մնացել նրա չիմնավորված ու չարդարացված մտահղացումների անձուկ սահմաններում:

Պատաճի հանդիսատեսի թատրոնում Գ. Վարդանյանը մնում է ձեռք թերած բարձրության վրա: Նա էր, որ այս թեմը ազատագրեց սնամեջ շրեղությունից, Բավավորությունը փոխարինեց կենդանի գեղանկարչական պատրանքով, որ կյանքի է կոչվում պատաճի հանդիսականի վառ երևակալությամբ: Նույնիսկ «Չար ոգու» նման կենցաղարույր պիեսը նա զտեց կենցաղայնությունից, վերջինս փոխարինելով երփնագրի զորեղ ԲԱՀԵՂՈՒԹՅԱՄԲ: Գույնն ու գծանկարը նրա ձևավորումներում հնչում են Բամագոր, Բերիաթը Բարստանում է նոր հերթայներով: «Մաթենոց Առաջին թագավորը» դրա պերճախոս ապացուցն է: Գեղանկարչական, բայց

և պայմանական այնքանով, որքանով լույլ է տալիս նրանագրի ոգին: Վարդանյանը ևս առիթ ունեցավ փորձարկելու կոնստրուկտիվ ոճը և ապացուցեց դրա առավելությունները «Աղմկալից փողոց» Շերկալյացման մեջ: Եվ շատ լուրպվի: Բայց երբ «Պատվի համարին» նա մոտենաց Հույն եղանակով, պիեսը դիմադրեց: Մերմակ կոնստրուկցիան երկարկանի ինտերյերով, այնուամենայինվ, չեն կապակցվում միմյանց: Մ. Ռաֆայելյանի հետ ոնժիստրական համագործակցությունը շըստացվեց: Մինչդեռ «Սասնա Միեր» և «Մակագրություն ծաղին» Շերկալյացումներում Վարդանյանը արդեն հաղթահարել էր իր առաջ քաշած խնդիրները ոնժիստրական մակարդակով, և շնորհման այդ գծից ցուց տրվին, որ նա գիտն իր ճանապարհը՝ պատահի հանդիսականի երևակայության դուրը: Իսկ դա ինքնին քարձը արժանիք է:

Մանկա-պատանեկան թատրոնի լուրատեակ վարպետ է նաև Արամայիս Սարգսյանը: «Քաջ Նազար», «Որտե՞ղ ես, Զոննի» և «Երեք Նարինջ» պիեսների ձևավորումները խոսում են իր գործի մեջ հմտացած մասնագետ-մարշի մասին: Ոնժիստրական մտածողությունը տիկնիկային կերպարներով է նա արտահայտում և երբեմն առաջ ընկերում թատրոնի տակավին աղքատ ոնժիստրայից:

Ծանեն Հակոբյանը, «թատրոնում» սակավապես, վերջին տարիներս բուռն գործունեություն է ծավալել Ռեպուստատեսության բնագավառում: Բայց «Հրացանավոր մարդու» նրա ձևավորումը Լենինականի թատրոնում հատուկ ուշադրության է արժանի: Ի վերջո, լուսանկարչական պատճենաւորմանը եկան փոխարինելու գումարյան խստորոշ ձևերի մեջ դիտված պայմանական ինտերյերները, որոնք վառ պատկեր ունեին ոչ

միայն դեկորացիոն-կոնստրուկտիվ առումով:

Մի քիչ հայ Ակարիցների կիթեմատոգրաֆիական աշխատանքների մասին: Այս բնագավառում երևությունը է «Նոռան գույնը»: Արդեն բավական գրվել է այս նրկարի մասին, բայց ոչ Ակարչական տեսանկյունից: Մինչեւ Ակարչականն այստեղ վճռական նշանակություն ունի, գույնն է առաջ մղում նրա սլուժեն, պատկերները, ձևին ու բովանդակությանը տալիս գաղափարական ուղղություն: Փաստորեն առաջին անգամ ժապավենի վրա առնվազ հայկական բնության, նրա հարուստ գուներանգների տակավին չտեսնված զաման, և այդ բնության մեջ տառապած հայ մարդու հոգենկան տվայտանքները բացահայտվեց գլխավորապես գունային փոխմարաքերությունների ճնշումներով: Դա գունային նոր ու բարդ փոխմարաքերությունների, տեղադրության հակառակ հակադրությունների սիմֆոնիկ կտավ է, ամրողական կերպար, անընդհատ զարգացող կոմպոզիցիա և անշուշտ այդ ամենը չի կարելի վերագրել սուկ Ակարիչ Ս. Անդրանիկյանին կամ նրա կողքին աշխատած օպերատոր Ս. Շահրապյանին: Նման ֆիլմի հետինակը գունագետ-մտածող, գեղանկարչական բացառիկ տաղանդով օժտված ունժիսորը միայն կարող է լինել:

Գույնի դիմամիկան, լույսի շարժման ընթացքն իսկ մաթեմատիկական ճշգրտությամբ հաշվարկված է այս ֆիլմի մեջ գունանկարի այն օրենքներով, որ հնարավոր է կիրառել միայն ժապավենի հետ գործ ունենալիս: Ֆիլմի սլուժետային հոված արտաստվոր գիծը, գաղափարական հարցադրումը, փիլիսոփայական խորհուրդը գլխավորապես արտացոլված են ազգային գունաշարի և վառ նրանագրի միջոցներով: Մեր երկրի նույնիսկ կենդանական աշխարհը, բուսական կյանքը

իրենց Շերքին գունային ծալքերով արձագանք են գըտնում այստեղ և ստեղծում մարդու հոգևոր վերածննդի գաղափարը, միաժամանակ այդ նույն մարդու ամեն պայքարը հետզինետե ահագնացող միջնադարյան խավարի դեմ: «Նուան գույնը» հայ կինեմատոգրաֆի երրած: Ստեղծած գուներանգմերի մեսրոպյան այրութենուն է, որ դուրս է գալիս ազգային շրջանակներից և հայութականորեն մտնում միջազգային ասպարեզ, որովհետև գույնի միջոցով լուծվում են համամարդկային հետարքրություն Շերկայացնող հարցեր և լուծվում անհամարեալ վարպետությամբ: Այս նկարից հետո, նույնիսկ սև ու սպիտակ նկարները մարդ ակամա սկսում է տեսնել գունային թափանցումներով: Ոչ միայն նրանից հետո ստեղծված ֆիլմերը, այլև նրանից առաջ ստեղծվածները ակամա դիտում են նույն տեսանկյունից և մոտենում հարցերին նոր չափանիշներով:

«Նուան գույնը» իրոք պարտավորեցնում է:

Անգամ պայմանականորեն կիսա-գունավոր «Քառո» ֆիլմը դիտում են գունային ամրողական պրիզմայի տակ: Այստեղ էլ Ալ. Շաքարյանի և Լ. Վաղարշյանի վաստակը: Մերժ ընդ մերժ փոփոխվող կադրերը գունային փոփոխությամբ են զարգանում և ստեղծում իր տեսակի մեջ շատ ինքնատիպ մի կինոնկար: Ափսոս որ նույն Շաքարյանի մի այլ ֆիլմ, որ կոչվում է «Երեվան 2750», այն էլ հանված գունավոր ժապավենի վրա նման հնչեղություն չունի: Պարադոքսի նման է: Գույն չկա՝ գույն գգում ես: Գույն կա, չես զգում: Դրանք չեզոք են, ոչինչ չեն ասում քո աշքերին, քո սրտին, բնականաբար չեն էլ նպաստում ֆիլմի գաղափարական բովանդակության լիարժեք դրսնորմանը: «Կարինե» ֆիլմն էլ իր տեսակի մեջ մի այլ գունային լուծում ունի և նույնքան ինքնատիպ է, տարրեր լինելով հան-

դերձ: Այստեղ թատերա-դեկորացիոն լուծմանն ննը պարտական, որ տվել է այդ ֆիլմին Վ. Պողպոմոգովը: Առնասարակ Պողպոմոգովի տաղանդը մեր կինոարվեստում առանձին ուշադրության է: արժանի մուլտիպլիկացիոն ֆիլմերի նոր բազա ստեղծելու կարևոր մարգում: «Մի կարի մեղր», «Փարվանան», «Էլուրդա» լուրջ խոսում են նկարչի մեծ ջանքերի մասին ու նրա ճաշակի, քանի որ մուլտիպլիկացիայի բնագավառում նկարչի անելիքները շատ մեծ են: Մի կողմից՝ կոմպոզիցիայի վարպետություն, մյուս կողմից՝ հստակ գծանկար, ապա և վառ պատկերների լեզու: Եվ դժվար է այս ամենը ներդաշնակ միասնությամբ հանդես բերել: Մինչդեռ Պողպոմոգովը կարողանում է:

Որքան նետաքրքիր ֆիլմ, որքան օժտված ունեմիսը, այնքան էլ նետաքրքիր և օժտված նկարիչ է բաժին հասնում նրան: «Եռանկյունի» ֆիլմում նետաքրքրական լուծում էին ստացել Ռ. Պ. Բարայանի ընտրած բնության տեսարանները, դարբնոցը (ռեժ. Հ. Մալյան), իսկ «Բարն, ես եմ» կինոնկարի մեջ Ռ. Ս. Բարայանը Ֆ. Դովլաթյանի նետ ստեղծել է այնպիսի կադրեր, որը կամերային տեսարաններն ու բնության գեղեցկությունները յուրովի ի մի են բերված և նպաստում են այդ նկարի թե գեղարվեստական և թե գաղափարական ցայտուն նկարագրին:

Նույնքան ուշագրավ է Ստեփան Անդրանիկյանի գործունեությունը: Նա այնքան է մասնագիտացել իր գործի մեջ, որ «Հեղմար աղբյուր», «Մենք ենք՝ մեր սարերը» նկարչական առումով նետաքրքրական ֆիլմերից նետո, որ նա հանդես էր գալիս որպես նկարիչ, վերջերս ուժինորի պարտականությամբ, այս անգամ արդեն նկարիչ Ալ. Գրիգորյանի նետ, նկարահանեց «Կախարդական լավաշ» մուլտիպլիկացիոն ֆիլ-

մը: Խիարկե, այն, ինչ կարելի է ասել «Մենք ենք՝ մեր սարերը» ֆիլմի պլաստիկական լուծման առթիվ, նույնը չի կարելի ասել «Հեղմար աղբյուրի» մասին: Այստեղ կենցաղն ու կենցաղային մանրամասները գրական հյութի ոգուց չեն բխում, պասիվ են ու աննպատակադիր: Պարզ օգացվում է, որ ուժիսորն ու նկարիչը իրար հասկացել են, բայց ոչ հօգուտ ֆիլմի գեղարվեստական բովանդակության: Համեմատաբար հաջող են այդ առումով «Խաթարալա» ֆիլմի կոլորիտն ու պատմա-կենցաղագրական միջավայրի վերարտադրությունը, մանավանդ Ռ. Էլիբեկյանի տարագներում:

Մի քանի խոսք ჩեզուստատեսության նկարիչների մասին:

Մոխրագույն երփնագիր կամ մոխրոտ գեղանկարչություն՝ այսպես են կոչում ոռու արվեստաբանները նկարչության այն ժանրը, որ ծառայում է կապուտակ էկրանին: Լուծումները գունավո՞ր, թե աև ու սպիտակ պիտի լինեն: Փորձը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, գունավորը գերադասելի է: Տոնավճությունն ու ստվերները գույնից հեշտությամբ փոխանցվում են փորքը էկրանին: Ներկապանակը այստեղ ակամա հանգում է կինոյից և թատրոնից վարձով առնված օգեստներին, երբ թատերական կամ գրական-դրամատիկական բնույթի հաղորդումներին է վերաբերում խոսքը: Սակայն գծային լուծումները վարձով չես առնի: Այստեղ թնարամտությունն է պետք և ჩեզուստատեսային որոշակի մտածողություն: Հեռուստագրաֆիկայի առանձնահատկությունները երբեմն որոշում են նախորդները, որոնք հաճախ օգտագործվում են թատերական վարագույրի փոխարեն, հարթապատկերային սկզբունքով: Օպտիկական էֆեկտը ձգտում է խորության:

Կապուտակ էկրանի նկարչությունը սինթետիկ է

լուրովի և ունիվերսալ ավելի, քան թատերաբնմի և կինոէկրանի վրա: Պահանջը՝ ներդաշնակ լինել գրաֆիկայի և դեկորացիոն արվեստի օրինաչափություններին: Ընդ որում, գրաֆիկան այստեղ երբեմն ելնում է գրքի ձևավորման, իսկ դեկորացիոն արվեստն է՝ մեկ կինոյի, մեկ թատրոնի սկզբունքներից, քայլ բոլոր դեպքերում կաշկանդված է տեսմանիկայի հնարավորություններով: Առաջմն: Այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ թատերական հաղորդումների ձևավորումն անահման հնարավորություն է ընծեռում համարձակ որոնումների համար:

Հեռուստատեսությունը կոչում են մարդկային խառնվածքի ունտգեն: Այդ «ունտգենը» գործում է նաև հաստոցային ու դեկորատիվ-մոնումենտալ կտավների ցուցադրման ժամանակ: Օրինակ, օպերային թատրոնից տրվող տոնական մի համերգի ժամանակ օգտագործվել էր Մ. Սարյանի «Հայաստան» պանոն և Հ. Կոչոյանի «Մունետիկը»: Մեկը ընդհանուր ֆոն էր՝ ետնավարագույր, անսամբլային ելույթների համար, մյուսն օգտագործվում էր անհատական համարների պահերին: «Մունետիկը» հաճախ իջնում էր և բարձրանում ըստ անհրաժեշտության: Ահա այստեղ էլ ունտգենը մատնեց: Ասեն արյունահեղություն էր փոքր էկրանի վրա, երբ այդ երկու կտավները դիմացում էին իրար, փորձում մեկը մյուսին ծածկել: Դամիլինում նստած հանդիսականը դա հազիվ թե նկատեր, մինչդեռ նեռուստատեսային «ունտգենը» ամեն ինչ ի ցույց դրեց: Ռեժիսորան այստեղ երբեմն գործում է փակ աշքերով, համագործակցության հարցը տակավին լայն ըմրոնում չունի, նույնիսկ անմատչելի է, քանի որ ուժիսորներն իրենք նոր-նոր են միայն մասնագիտանում:

Այնուամենայնիվ, ձեռքբերումներն այս բնագավա-

ոռւմ ևս շոշափելի են: Բավական է Շահեն Հակոբյանի մի քանի աշխատանքներին ծանոթանալ, և պատկերը պարզ կլինի: «Միջնորդ տեր պապան» նա Բըրամցրել էր Կերպարվեստի երկու լեզվով՝ գծանկարչական-պայմանական և դեկորատիվ: Կերպարները գատ-գատ մատուցվում էին ծաղրանկարի միջոցով, իրքն նրանց բնաբան, իսկ ինտերյերը՝ թատերական եղանակով, արևելյան կոլորիտի նույր գգացողությամբ: Ը. Հակոբյանը այլ մոտեցում էր Բանենս քերել «Երևակայական հիվանդի» թեմադրության մեջ: Ինքնատիպ պայմանականություն: Ընդամենը մի մահմակալ է, բայց պտտվելով դառնում է և օգտագործվում որպես ոնալ դեկորացիա: «Վեպի Զեկունի արկածները» և «Խոր աշնանային երեկոն» ևս յուրատիպ թատերականացված լուծում ունեին, բայց այնպիսի թատերականացում, որ թատրոնում մատչելի լինել չի կարող: Սակայն նույն հնարամիտ մոտեցումը չնպաստեց Ակարչին, երբ նա գործ ուներ Հ. Իրսենի խորապես հոգեբանական «Ուրվականներ» պիեսի հեռուստատեսային թեմադրության հետ, առավել ևս, երբ նա դիմեց «Մղոտն գլխարկին»: Այստեղ ինտերյերի ձևավորման մեջ ճեղքվածքներ երևան եկան: Տեղի տվեց լակոնիկ մտածողությունը: Արշալույս Զիֆիլիյանն այդ քանի գգացողությունն ունի՝ «Գողացված երջանկությունը» և «Ալպակե գագանոցը» դրա լավագույն օրինակներն են: Ոչ պակաս հաջող էր ձևավորված նաև «Ես, տատիկս, Իլիկոն և Իլարիոնը» ներկայացումը, որ բացօթյա տեսարանների կողքին ներդաշնակ և ոճական միասնության մեջ էին ինտերյերի տեսարանները: (Ի դեպ, օրինակելի մակարդակ ունի «Ամուսինների» ձևավորումը սումդուկ-յանցիների թեմում և քարձր ճաշակ, և ամբողջականության գգացողություն, որի համար նա պարտական

է Անեմյանին, մանավանդ տարագների լուծման մեջ):

Սակայն Հեռուստատեսությունն էլ իր պայմանականության սկզբունքներն ունի, հատուկ միայն փոքր էկրանին: Դա հիանալի է զգում Ռուբեն Ղևոնյանը: Բավական է միայն հիշել Վ. Ռոզովի «Ծանապարհին» դրաման: Ամեն ինչ լուծված է գծանկարի միջոցով, ամեն ինչ նկարովի է, լինի երկաթուղի, գործարանի արտադրամաս թե ճաշարան, բոլորն էլ՝ լուծված գծանկարի հատակ ու համոզիչ միջոցներով: Ափսոս, որ այդ ոճը հետագայում սկզբունքային զարգացում չըստացավ:

Այս ոճին իր մտածողությամբ հարազատ է և Գաստելլո Գասպարյանը: Նրա ձևավորած հաղորդումների մեջ գծանկարները շահում են ամեն դեպքում: Վահան Թոքովինցին և Դանիել Վարուժանին նվիրված գրական հաղորդումներում դրանք ծառայում էին որպես պատկերի լրացման պլաստիկ միջոց: Մուլտի գգացողություն ունի Գասպարյանը և այդ զգացողությունը բնավ չի կորցնում արագ փոփոխվող գծանկարները ցուցադրելիս, որովհետև դրանք հագեցած են սուր բովանդակությամբ և եղնում են հաղորդվող տեքստի ոգուց:

Հեռուստատեսության նկարիչը հաճախ գործում է «ցայտնուտի մեջ»: Հինգ օր կարող է աշխատել մի գծանկարի վրա, որը պիտի ցուցադրվի, ասենք, լոկ հինգ վայրկյան: Ուրեմն պարզ և դիպուկ պիտի լինի ամեն ինչ: Այն, ինչ Գ. Գասպարյանը առայժմ դժվարանում է հայթամարել դրամատիկական թատրոնի ձևավորումներով («Հաջի Փայլակ», «Տոպազ»), կատարում է կապուտակ էկրանի սահմաններում և հասնում գումեղ ու սպառիչ բնութագրման: Ցավալի է, որ հեռուստատեսության մարզում արդեն որոշակի փորձ կուտակած

Ակարիչներ Գ. Ասատրյանն ու Զ. Սանթելլանը հաջող աշխատանքների («Ուրիշը», «Վաղենտին-Վաղենտինա» և այլն) կողքին թույլ են տալիս այնպիսի սայթաքումներ, որոնց Ակատմամբ ներռողամիտ լինել չի կարելի: Հեռուստատեսությունը վտանգավոր ռենտգեն է նաև կենցաղային երևույթները ցուցադրելիս, մինչդեռ «Հացի խնդիր» և «Լիսարոնցի վարպետը» բնմադրությունների մեջ փուչ կենցաղայինը իրեն շատ է զգալ տալիս:

Նկարչի շահավետ օգտագործման խնդրում ռեժիսորան կապուտակ Էկրանում ևս մեծ անելիքներ ունի, անշուշտ յուրովի մասնագիտացած, իրեն գտած ռեժիսորան, քանի որ այստեղ ստեղծագործական փոխարքարերությունները, խնդիրներն ու տեխնիկան բոլորովին այլ են, այլ է և արտահայտչականության լեզուն: Թատրոնից պատրաստի կադապարներ չի կարելի տանել կապուտակ Էկրան, չի կարելի ծանրամեծ հաստոցներ ու պտտահարթակ տեղադրել այնտեղ, քանի որ այդ նույն գործը քավական դյուրին և տպավորիչ կարող է անել օպերատորը, երբեմն նույնիսկ չխորհրդակցելով Ակարչի կամ ռեժիսորի մետ:

Թատրոնը, կինոն, հեռուստատեսությունը այսօր կամա թե ակամա ձայնակցում են իրար, քայլ խոսում տարբեր լնգումներով: Ներկայացումներն ու ֆիլմերը ստեղծվում են ոչ միայն դերասանի և ռեժիսորի, այլև Ակարչի մետ ունեցած նրանց ջերմ ու վստահ համագործակցության շնորհիվ: Նկարիչը մնում է առաջնակարգ, անփոխարինելի դեմք: Նա ունիվերսալ է: Նա ռեժիսորի կողքին է և դերասանին մոտիկ: Նա երևում է ամենից առաջ և ամենից շատ: Նա գալիս է հաստ-

ցային և դեկորացիոն գեղանկարչությունից, նա գալիս է ճարտարապետությունից և գծանկարչությունից: Նա հարստություն է բերում: Ոնժիսուրան պիտի ձգտի, կարողանա տիրանալ այդ հարստությանը, իսկ բեմանկարչությունը իր ստեղծագործական դիրքնոր չգիշի, ինքնարավ երևոյթ չդառնա, չդադարի հարստություն լինելուց: Մինչդեռ ներկա վիճակում մեր ոնժիսորները գնալով ավելի հաճախ են իրենց «ծանրաբեռնում» նըկարչությամբ, քան նկարիչները զարգացնում իրենց ոնժիսորական ձիրքը: Այս անհարկի մրցակցության մեջ տուժում են նրանք: Բեմանկարչի ոնժիսուրան, առանձին փայլատակումներով հանդերձ, հետզհետև աղքատանում է: Իսկ դա, ի վերջո, կլինի ի վճառ թատրոնի, եթե շարունակվի այդպես:

1975

ԹԱՏԵՐԱ-ԴԵԿՈՐԱՑԻՈՆ ԱՐՎԵՍՏԻ ՑԱՒՑԱԿԱՆԴԵՍՆԵՐՈՒՄ

1. «ԿՏԱՎԵ ԹԱՏՐՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԳՐԱՆԻՑՑԱՆ ԹԱՏՐՈՒՆ»

Սխալված շենք լինի, եթե ասենք՝ ոչ մի ցուցահանդես շարքային այցելու-Բանդիստականին թերևս այնքան չի գրավել ու այնպիսի մեծ հետաքրքրությամբ չի դիտվել, ինչպես թատրոնի, կինոյի և մեռուստատեսության նկարիչների 1966-ի նոյեմբերյան ցուցահանդեսը։ Պատճառը պարզ է. գրեթե լուրաքանչյուր էսքիզի նույնում կա ստեղծագործական մի ուրույն կյանք՝ ապրված ներկայացում։ Բացի այդ, Բաճախ չէ, որ մեզանում կազմակերպվում են նման ցուցահանդեսներ։ Վերջինը, որ նվիրված էր մեր նկարիչների թատերական, մասամբ էլ կինո-ստեղծագործություններին, բացվել էր 1958-ին, իսկ դրանից առաջ՝ 1940-ին։ Ահա և բոլորը։ Մնացյալ դեպքերում մեր քեմանկարիչները ցուցադրվել են Բաստոցային գեղանկարչության, քանդակի, գրաֆիկական գործերի հարևանությամբ և պիտի խոստովանել, ոչ-շամեկան վիճակում։ Այստեղ, շատ կողմերով ամրող-

շական ու հարուստ այս ցուցահանդեսում է ի հայտ գալիս մեր «Բիհն» ու նոր թևմանկարիչների վարպետությունը և այն մեծ վաստակը, որ, անտարակուս, նըրանք ունեն ժամանակակից հայ թատրոնի գարզացման մեջ:

* * *

Մեզանում թատրոնն ու կերպարվեստը անհավասարաշափ են զարգացել: Կերպարվեստը, մշակույթի դժվարին մի բնագավառ, իր մակարդակով թվում է բարձր է: Եղել թատրոնից, մանավանդ՝ հաստոցային գեղանկարչությունը: Այս ցուցահանդեսում էլ է դա նըկատվում: Եթե նույնիսկ մի կողմ թողնենք Մ. Սարյանի «Ալմատն» ու «Քաջ Նազարը», ապա Մ. Արուտչյանի, Մ. Սվախյանի, Կ. Մինասյանի, Ե. Քոչարի, Ա. Դանդորյանի էսքիզներն էլ դրա համոզիչ արտահայտություններն են: Նրանց աշխատանքների գեղանկարչական որակը ստեղծագործական բարձր կուլտուրայի վկայագիր է և պիտի ցավել, որ ժամանակի թատրոնը ամեն ինչ չէ, որ վերցրել է Ակարիչներից: Մեր թատրոնում թևմանկարչական ավանդների բացակայությունը խանգարում էր Ակարչի հետ ինչպես հարկն է մերձենալուն, և վերջինս թատրոնի մեջ մնում էր մեծ մասմբ կղզիացած, որպես առանձին գործիշ:

... Վերստին մտուի անցնում ենք երկարամյա ուղի պատկերող ցուցահանդեսի սրահներով, ուր կարծես պատառների տեղն ու ընտրությունը պատմական արժեքավորման նշանակություն պիտի ստանային: Իմար-

կե, Գոգոյի «Ամուսնություն» պիեսի էսքիզներն ել բավական են մի անգամ ևս համոզվելու, որ ի դեմս Կ. Մինասյանի, Բայ թեմանկարչությունն ունեցել է թատրոնին մոլեռանդորեն նվիրված վարպետ, որի համար երփնագրի «արտօնությունները» բնավ էլ երկորդական չեն. սակայն, ցավոք, Կ. Մինասյանը երևում էր մասնատված, այն աշխատանքներով, որոնք լիովին չեն բնորոշում նրա մեծ վաստակը: Պարզապես չեր երևում Սերգեյ Արուտչյանը, այն նկարիչը, որի ստեղծագործության հետ կապված է Գ. Սունդուկյանի անվան թատրոնի մի շրջան՝ մեծ Հայուննականի տարիները: Նույնը պետք է ասել նաև Պ. Աճանյանի մասին: «Անուշի» գրեթե պատահական մի էսքիզ հազիկ պատկերացում տա այդ բնումնավոր նկարչի ստեղծագործության մասին, որի ուսերին է եղել մեր օպերային թատրոնի շուրջ մեկ տասնամյակի սցենոգրաֆիան: Պարզապես ցավում ես, որ Արմեն Չիլինգարյանի Բանվորական և Ռուսական թատրոններում ունեցած բազմաթիվ հետաքրքրական աշխատանքներից պատահիկ են են միայն ցուցադրված: Մի շարք թեմադրություններ, որոնք էտապ են կազմել Բայ թատրոնի պատմության մեջ կամ թեկուզ ունեցել ակներև հաջողություն, համարյա չեն արտացոլված ցուցահանդեսում:

Որտե՞ղ են «Կենդանի դիակի», «Բալենու այգու», «Դիմակահանդեսի», «Երիտասարդ գվարդիայի» էսքիզները, չե որ դրանք որակ են տվել նաև դերասանական խաղին ու ողջ թեմադրությանը: Իսկ ցուցադրվածներ ել կամ, որ բնավ չեն հիշեցնում ներկայացումները. այդպիսիք են՝ Սերգեյ Արուտչյանի «Ռազմամակատը», Ս. Թարյանի «Խաթարալան», Հ. Մերինյանի «Նամուսը»... Այն էլ ասենք, որ մի շարք էսքիզների «կարինետային», ոչ-թեմական տարրերակը այս-

օրվա հասկացողությամբ քննադատության չի դիմանում: Ինչո՞ւ, տարրերա՞կն է վատ, թևմական պրակտիկ իրացման վրա՝ և եղակ հույսը (մշտապես թատրոնում գործող Ակարիչներին է վերաբերում սա), թե՝ պարզապես պահանջներն են շատ փոխվել... ըստ երեւույթին, թե՛ մեկը և թե՛ մյուսը: Եվ Էսքիզների մեջ ծանոթ Շերկայացումը շես տեսնում: Մնում է եզրակացնել, որ թատրոնի պատմության, նրա լավագույն, էտապային ներկայացումների պատկերը թերի է արտացոլված այս ցուցաჩանդեսում:

* * *

«Ձեռքերի վրա պտտեցնելով մակետը, մենք մեր ձեռքում ժամանակակից թատրոնը ենք շուտումուտ տալիս», — ասել է մի առիթով Մեյերխոլդը և համառ շանքերով փորձել հաստատել, որ ոնժիսորի աշխատանքը շատ մոտ է ճարտարապետությանը, իսկ դերասանի ստեղծագործության մեթոդը լիովին համընկնում է քանդակագործի մեթոդի նետ, քանի որ դերասանական լուրաքանչյուր ժեստ, թևմական ամեն մի շարժում, առհասարակ, գալիս են արձանագործական գծերի ու ձևերի պլաստիկ էությունից: Նույն Մեյերխոլդը հաճախ դերասանի առջև խնդիր էր դնում վարժություններ կատարել՝ դաս առնելով Վերածննդի վարպետների կտավներից: Ռուս թատրոնի պատմության և Մեյերխոլդի ստեղծագործության մեջ դա սովոր անցողիկ էտապ էր, որը, սակայն, խորապես նպաստեց սովետական թևմարվեստի ու մասնավորապես ոնժի-

սուրայի հետագա զարգացմանը, իսկ ոլուսական թեմանկարչությունն էլ համեմ միջազգային ասպարեզ։ Մինչդեռ մեր ոնժիսուրան և դերասանները բնավ մտահոգված չեն թատերա-դեկորատիվ արվեստի վիճակով։ Հայ արվեստի տվյալ բնագավառում վաղուց արդեն նկատվող բաց։ Այդ անջրայետը դեռևս օգալի է մեր շատ թատրոններում, և այդ իսկ պատճառով ցուցահանդեսը պիտի որ սթափեցներ մեր թատրոնի մարդկանց։ Ցուցահանդեսը դիտելիս դժվար է կուամել, թե որ նկարիչն ու ոնժիսորն են միմյանց հարստացրել, կամ որ բնագավառն է այս կամ այն ձևով ազդել մյուսի վրա։ Թերևս այդ առումով բացառություն կազմի Մ. Արուտչյանը, որի աշխատանքների, հատկապես «Քաջ Նազարի», «Թափառնիկոսի» և «Երեք երգի» տպագորությունն այնքան մեծ է, որ ասես նրանցում արտացոլված լինի ոչ միայն թեմանկարչության հետագա շրջանի լավագույնը, այլև ոնժիսուրան իր թատերային գունեղ դրսնորումներով։ Դրանք, ինչպես և Մ. Սվախչյանի և Ե. Քոչարի աշխատանքները դեկորացիոն գեղանկարչության ինքնուրույն արժեքներ են, և միաժամանակ թեմարվեստն են ներկայացնում լայն առումով, ցուց տալիս, որ մեր թատրոնը սուկ դերասանի թատրոն չէ, այլև գեղարվեստական սինթեզի հարցերով մտահոգված օջախ։ Ասենք, դա կարելի է օգալ նաև ցուցահանդեսում փաստորեն առաջին անգամ լայնորեն ներկայացված մակետների միջոցով։ Լավագույնը դրանցից, անվերապահորեն պետք է ասել, Սարգիս Արուտչյանի «Սալեմի Վիուկներ» է։ Արժե այս նկարչի մասին փոքր-ինչ հանգամանալից խռովել, քանի որ նա վերջին երկու տարում «մոռացած» իրեն, կտրուկ շրջադարձ կատարեց դեպի ձևավորման արվեստի հախեկին, բայց և միշտ թարմ սկզբունքները։

Խոսքը թեմական տարածության կոնստրուկտիվ լուծման մասին է, մի սկզբունք, որից հայ թեմում այնքան փայլուն կերպով ժամանակին օգտվել են Մ. Արուտչյանն ու Վ. Շնրիշևը:

Ամեն մի ժամանակաշրջան գնդարվեստական իր ձևերն են թելադրում. կոնստրուկտիվ թեմահարթակները 20-ական թվականների մենաշնորհն էին: Անցյալից հրաժարվելը կամ այն ժմտելը միշտ չէ, որ զարգացման ու առաջադիմության նշան է: Հենց այն, որ հիմա շատ բան հնից կրկնվում է և ընդունվում հասարակության կողմից, նշանակում է, որ նախկինում դրանք լորիվ չեն լուրացվել, ընդհատվել են արթեստական նախապարհներով, որեմն կարելի է և պետք է լուրովի վերականգնել: Եվ Սարգիս Արուտչյանը փորձում է, ահա քանիներորդ ձևավորմամբ, վերահաստատել կոնստրուկտիվը մեր թեմահարթակներում (ոա մասամբ էլ գալիս է սունդուկյանցիների նոր ջենքի ընձեռած լայն հնարավորությաններից և նետզինետն զարգացող տեխնոլոգիաներից): Այսպէս, «Փորձադաշտից» դեպի «Սակեմի վիրուկները», «Հետախուզմներից» դեպի «Ռումեն, Զուլինետը և խավարը»: Դա համարյա թոփշը է նկարչի ստեղծագործության մնջ, անցյալի լավագույն փորձի վերականգնում և վերագնահատում: Նա այժմ «ետ է նայում», դեպի պարզ ու դիպուկ, պատկերավոր ու պլաստիկ ձևավորման արտահայտչաձևերը:

«Սակեմի» ճկուն կոնստրուկցիան, գունային լուծման մնջ էլ իմաստալից է, իսկ պիեսի ոգուն բնորոշ այնքան, որ ֆինալում պտույտների ժամանակ թակուր թեմով, լուսավորության ազդեցիկ միջոցների օգնությամբ կարծես գալիս է ասելու՝ Մարդիկ զգոն եղեք, անցյալի ցավագին դեպքերը կարող են կրկնվել: «Ռումեն, Զուլինետը և խավարը» ասես դրա շարունակու-

թունն է, ավելի խտացված ու բռվանդակալից և ավելի մոտիկ դրամատուրգին: «Սալեմի» ձևավորումը, ի վերջո, տեխնիկական հնարամտության վրա հիմնված հայտնագործում է, իսկ «Ռոմեոն»՝ խորիմաստ մեկնարանության: Խավարը, քառոր ընթանրացված է գորական ճարտարապետության բեմական սեղմ պատկերի մեջ: Գյորեթային կառույց ունեցող դեկորացիոն իրենցում կրում են ոչ միայն ներքին ձևավորման՝ ինտերիերի նկարագիրը, այլև մի փոքր կացարան կապում արտաքին աշխարհի, նաև պատերազմի հետ: Երկու դեաբրում ել մոռալ ու ծանր իրադարձությունների նկարչական պատկերման մեջ դիմամիկա կա, շարժում, առաջընթաց: Այս հիմանալի գործերի մոտ մնում է: զարմանալ միայն, թե ինչու է ցուցադրված «Վարդանանքի» բացօթյա բեմադրության մակետը, որի գեղարվեստական լինելն իսկ վիճարկելի է, իսկ դրա կողքին՝ չկա Գ. Ցակովլովի «Մորգանի խնամու» մակետը, որ հնարավորություն կտար ծավալների մեջ տեսնելու Սրանցնելի ժողովի հիմանալի ձևավորումներից մեկը:

Երիմագրի հարուստ միջոցներից է օգտվում Շ. Հակոբյանը, որ կանգնած է Մ. Սվախյանի և Կ. Մինասյանի ուղղության վրա և պրոֆեսիոնալ մղումներով չի զիշում նրանց: «Սայաթ-Նովայի» և «Ծործ Ռանդենի» Էսքիզները դրա վկայություններն են, իսկ «Քո կյանքի ժամանակը» հեռուստատեսային ներկայացման համար կյանքի կոչված մտաჩագումները ել ավելի ամբողջական են և գունեղ: Գունը և լուսը այսօր նշանակալից տեղ ունեն բեմանկարչության մեջ: Թերևս ապագայում նրանց վրա դրվի հակիրճ լինելու պարտականությունը: Այդ ուղղությամբ արժի ավելի համարձակ շարունակել որոնումները:

Մակետի կուլտուրան հանրահայրու է բեմական ըս-

տնդագործության մեջ, սակայն դա ևս մեր յատեռական գործիշները նորենմն անտեսում են: Գ. Վարդանյանն էլ, մակետի միջոցով (ոչ էսքիզների) փորձել է: «Աղմակի փողոց» Ծերկալացումը ցուցահանդես տեղափոխել: Թվում է, ավելի լավ չեր կարելի Ծերկալացներ Պատաճի հանդիսատեսի թատրոնը: Մակետը «շընչավոր» է: և կյանք է: տալիս ձևավորմանը, բանի որ գործում է: և այն էլ լուսավորության և պրոյվոդ բնմանառակի աջակցությամբ: Եվ մեծ ու փոքր այցելու կանգնում են այդ մակետի առջև: Պատիկ մի պատահարթակ, հաստոցների վրա բացվող մի դուռ, դուան վրա միջավայրը հուշող, ասես մանկան ձեռքով գծագրված ուրվանկարներ: Եվ այս ամենի շնորհիվ՝ իրոք աղմկալից փողոց, ապա ուրիշ փողոցներ, որոնք լայն պողոտաների նման բացվում են իրար ետևից, իրար մեջ, մերժ ուղղագիծ, մերժ ոլորուն: Իսկ թեմը թվում է միանգամայն ազատ, ասես ոչինչ չկա, միայն լույս, փողոցալիս ուղեցույցներ, որոնք հանդիսականի հայացքը տանում են հեռուն, թեմի «անսահման» խորքերը: Բեմախորշը ձևավորված է շատ ավելի բարձրության, քան հորիզոնական տարածության մեջ: Կյանքի նոուզեռն է տրված: Պատաճի հանդիսականի երևակայությունը հազիվ թե մրցել կարողանա Ըկարչի երևակայության հետ: Սա Ըկարիշ-ձևավորողի բացառիկ հնարագիտության արդյունքն է, միաժամանակ տեսակետ՝ թե ինչ է մտածում նա արդիական թատրոնի, զրա ձևավորման սկզբունքների պարզեցման ու լակոնիզմի մասին:

Թատրոնը մնում է թատրոն՝ և՛ Ծերսապի թեմադրելիս, և՛ ժամանակակից հեղինակի երեկ: Հայթահարել գրական գործը ամեն գնով, եթե հնարավոր է՝ զրանից բարձրանալ: Գ. Վարդանյանն իր աշխատանքով ստեղծել է ժամանակակից ձևավորման օրինակելի ոճ (այդ-

պես, տարիներ առաջ, Սարգիս Արուտչյանը աշխատեց Սունդովկանի անվան թատրոնի «Հուսամուտ» ներկայացման վրա, բայց ապարդյում):

Ռեժիսոր Հրաչյա Ղափլանյանը շնամանջեց իր իսկ մակարդակից և, «Ալլմկալից փողոցի» կողքին, ակադեմիական թատրոնում բարձրացրեց Ա. Արաքսմանյանի «Վաթուն տարի և երեք ժամ» պիեսը՝ օժտված ճարտարապետ Զ. Թորոսյանի աջակցությամբ (հրերի բերումով այս հետաքրքրական ներկայացման էսքիզները ևս տեղ չեն գտնել ցուցահանդեսում): Սա էլ մեր բնմանկարչության համար նույնական հնարամիտ ու հանդուրդն մի փորձ է:

Բանն այն չէ, որ ձևավորողը միակ ինտերյերին տվել է ճարտարապետական շատ ինքնատիպ ու արտատվոր պայմանական լուծում՝ մի քանի անդուռ և անպատուիան սենյակ իրար կողք-կողքի, առանց առաստաղի, միևնույն պտտահարթակի վրա տեղադրված, այլ այն, որ ներկայացման ետնավարագույրին փոխարինել է Երևանի իրականությունից առնված ընդհամենը մի լուսանկար: Քաղաքի ինչ-որ նրբանցքից երևացող քարե ահոնելի պատվանդան, զրկված արձանից. մոռյլ օրերի ծանր հուշ: Պիեսում խոսք է գնում ոչ-հեռավոր անցյալի իրական դեպքերի շուրջ: Եվ ամեն ինչ իսկույն հասկանալի է դառնում, պիեսի բովանդակությունը ստանում է ավելի կոնկրետ մեկնարանություն, ենթատերստը դառնում է ակնհայտ: Եթե սրան ավելացնենք և այն, որ ներկայացման վարագույրին էլ փոխարինում է փայտյա ցածրադիր մի ճաղաշար, և հանդիսականը դամբիճ մտնելուն պես նախ տեսնում է թափոր պատվանդանը, ապա ավելի քան պարզ է դառնում Ակարչի մտահղացումը: Վավերագրական Այութը վերածվում է կերպարի, ձևավորումը կանխում է

պիեսի նորեմբեր տարտամ թվացող գաղափարական մեկնաբանությունը։ Կուսանկարի օգտագործումը գյուտ է, որի միջոցով դրսեռորշում է ոչ միայն պիեսի, այլ նաև և առաջ նկարչի քաղաքացիական վերաբերմունքը իրականության հանդեպ։ Էլ ինչպես մեր նկարիչներին արժանին շնատուցես, երբ նրանք ստեղծագործում են դրամատուրգի նման, և ոչ միայն լրացնում ու հարըստացնում ներկայացումը կերպարվեստով։

Սռնամարակ նոր, երիտասարդ բեմանկարիչներին շատ է բնորոշ ակտիվ ու համարձակ վերաբերմունքը բեմադրվող նյութի նկատմամբ։ Այդպիսին է և Մ. Ավետիսյանը։ Նա իր գեղարվեստական գաղափարների իրացման համար նախընտրում է բալետը, քանի որ պարող արտիստը շատ է ճկուն և կարող է հնչտությամբ տարրապուծքել իր մտահղացումների՝ արտիստի մարմնին ներդաշնակ գեղանկարչական կերպարի հետ։ Դրա օրինակներից մեկն է «Հերոսական բալլարդի» ձևավորումը։ Ցուցադրված էսքիզի ետևում ներկայացումը թերևս ավելի պարզորոշ են տեսնում։ Նկարիչն, ասես, գործում է դիրիժորի նման։ Երփնագրային պլաստիկ ձեւվերով հագեցած, միմյանց հաջորդող վարագույրները պատկերում են առանձին դրվագներ, ֆիգուրներ տարրեր կուպոզիցիաներով և համադրում, ամրապնդում են ներկայացման երաժշտա-պարային կառուցվածքը։ Տեսարաններ կան այս փորձածավալ բազեստում՝ Պատերազմ, Խաղաղություն, Ռեքվիեմ—ուր, թվում է, նկարիչն ինքն է որոշում խորեոգրաֆիայի ոլիթմը, Շուշնչիսլ Ռեքվիեմը նրա շնորհիվ ներոսական բացահայտ ընդգծում ունի։ Պաթեստիկ երաժշտությունը բեմի վրա շոշափելի կերպարանք է ստանում երբեմն ավելի գեղանկարչական, քան պարային միջոցներով։ Եվ գույներն են գտնված դիպուկ, և գծանկարն է բնորոշ։ Անհանգըս-

տություն, էքսպրեսիա և կրքու վերաբերմունք կա ամբողջ ձևավորման մեջ։ Գեղանկարչական վառ պատկերներ, ֆանտաստիկ ընդգրկումներ, որոնք երեմն էլ չեն հաշտվում թեմադրվող երկի կոնկրետ պահանջմերի հետ։ Դա թատրոնի տարերքի մեջ միշտնվելու ակընթայտ ձգտում է, բայց որը և մատնում է իրեն, նկարչին։ Ձգում ես, որ Ավետիսյանը ընդհուպ տարված չէ թատրոնի գաղափարով, դանորադ ու դժկամությամբ է հաղթահարում թեմի տեխնիկան, հատկապես տարածությունը։

Ավետիսյանը մեծապես օժտված գունանկարիչ է։ Թատրոնում էլ նա ամենից շատ գույներով է տրամարանում, զարգացնում իր միտքը։ Նա ձևավորում է ոչ թե անտառ ու ծով, գրասենյակ ու պալատ, այլ բացահայտում դրանց գաղափարները։ Սա ևս ուշագրավ, էությամբ թատերային երևոյթ է արդի հայ թեմանկարչության մեջ։ Եվ որքան պարզ է դրսնորվում այդ երեւույթը թատրոնում, դժբախտաբար, նույնքան պարզ չի դրսնորվել ցուցահանդեսի սրահներում։ Մինչդեռ նորի նկատմամբ ուշադրությունն ու հոգատարությունը, թվում է, ավելի մեծ պիտի լիներ։

Բայց սրանով չեն սահմանափակվում մեր քառասունինգ տարվա նվաճումները, ուստի խոսքը ունեցածի մասին պիտի հնարավորին չափ լրացնել։ Ավետիսյանի ամենավերջին ձևավորումներում տարածությունը կազմակերպվում է ոչ թե ծավալային դեկորների միջոցով, այլ գույնի, լուսի և գծանկարի։ «Էռուեցի Սարո», «Ախտամար», «Ռուսնի»—դարձյալ երեք բալետ, կյանքի կոչված այս անգամ Թումանյանի սյուժեներով։ Բայց թատրոնի, ինչպես և Ավետիսյանի համար, Թումանյանի տեքստը ոչ թե նպատակ է, այլ առիթ՝ պարային գողտրիկ տեսարաններ, երաժշտական համահնչուն

պատկերներ ու գեղանկարչական առինքնող միջավայր ստեղծելու համար: «Ախտամարում» ոչ պատմական վանդի տեսարանը կա, ոչ կղզին, ոչ էլ ծիծաղախիտ Վանա ծովը. բայց ընդհանուր տրամադրությամբ, գծանկարի լուծման մեջ խորապես ազգային է՝ և ծովի, և վանդի, և կղզու հեռավոր պատրանքով:

«Ռուննին» ավելի միաձույլ կառուցվածք ունի: Բեմը... մի աղջիկ, բայց ոչ ոտենու նման, այլ քառահարկ, պիրկ ու առնացի կնոջ մի գլուխ: Ընդ որում, ներքսի «Բարեկերը» շարժական լինելով, մեկ դառնում են վարագույր, մեկ՝ անցույի պարող գուգերի ելումուտի համար: Սուանձնապես Բետարքրական եց ստացվել ըգգեստները, որոնք «Ախտամարի» պես հավաքական հնչողություն ունեն: Ասես դողացող տերևներ են քո առջն, կանաչ ներդաշնակություն, կատարյալ համանվագ:

«Հոռեցի Սաքոյի» մեջ արդեն Ավետիսյանը փորձում է գերազանցել իրեն: Լուսի միջոցով ստեղծել տարածություն: Բեմախորշը կազմակերպել լուսերանգների օգնությամբ: Սկզբում մերկ բեմահարթակը լուսերանցների մեջ էլ պարփակված է մնում: Բայց ահա, Բետգինուն բեմը լցվում է կուրքերի հարթանկար դեկորներով, և որպիս ձորերում սկսում են լիստալ անքուն ու անդարրում շարքերը: Ներկայացման մեջ չկա «մութ ու ահավոր գիշեր», որի անմեկնելի խորհրդավորությունն է միայն բաշ ու միամիտ Սաքոյին ողբերգության հասցենում: Սաքոն քուն է մտնում բաց երկնքի տակ, և ոչ թե իր փարախում: Սա, անշուշտ, պայմանականության շարաշաբում է և թատրոնի սպեցիֆիկան անտեսելու հետևանք: Գեղանկարիչ Ավետիսյանը այսպես է, որ երբեմն առանձնանում է բնի վրա, և գովնը, լույսը, գծանկարը, նույն ոճով լուծված գգեստների մետ, ան-

կախ միավորներ դառնալու «հանցանշաններ» են ի հայտ բերում: Դրա համար, անշուշտ, կարելի է դժգութել և բալետմենստերից, սակայն նկարիչը տեղ-տեղ այնքան շատ է հեռանում իր պարտավորություններից, որ նրան «Ճատ բերելը» անհնար է:

Ժամանակակից արտահայտչական նոր ձևերի համար որոնումները հետզհետև թատրոն են գրավում ոչ միայն ճարտարապետների ու գեղանկարիչների, այլև քանդակագործների: Արա Սարգսյանի օրինակին կարելի էր և պետք էր հետևել: «Հավերժական կուրքի» ձևավորումը խորհնել է տալիս, որ ինչքան շատ լինի կերպարվեստի տարրեր բնագավառների մարդկանց մուտքը թատրոն, այնքան լավ բեմանկարչության համար:

Էղդար Հովհաննիսյանի բալետը սկսվում է ներանուսական բուռն պարով: Թմրուկների ընդհատ զարկերն ու փողերի զիլ կանչը, թվում է, նույնպես վառդեկորատիվ կառուցվածք ունեն: Զնավորման մեջ նիրնում են գույները: Քարեն երգեր, քարեն մեղեդիներ: Նույն այդ թմրուկների «քարեն» նշանակներով էլ ստեղծված է ներկայացման արտաքին պատկերը: Հեթանոսական շունչ կա ամբողջ ներկայացման և առանձնապես ձևավորման մեջ: Վերջին տեսարանում բեմի վրա գտնվող միակ արձանը՝ ձուլված երկու գլուխ, վիթխարի ժայռնեն մարմնի վրա՝ հսկայատիպ ձևերի պատկերավոր մատուցմամբ, այնպես է իշխում ներկայացման կառուցվածքի վրա և լիացնում բեմական տարածությունը, որ թվում է միակողմանի կիխներ երաժշտության և պարային պատկերների ընկալումն առանց դրան: Տվյալ դեպքում սերը դառնում է հավատի, համերաշխտության ու ցամանակական խորհրդանշից: Ընդգծվում է, քանդակագործական կերպարանք առնում երաժշտության և լիբրե-

տոյի բուն գաղափարը: Բնական է, որ գաղափարին հետամուտ Ըկարիչը նախորդ պատկերներում՝ Վրեժիսընդուրության սյանը,—որ խաչելություն է: Բիշնցնում,—պիտի տար արստրակտ գումավորում, իսկ Բեթանոսական տաճարն ու Արա խրոխտ աստվածություն դիտեր որպես ալլարանություն: Եղեգնաձորի բրոնզափայլ առյուծն է: պատահական չէ, որ տեղ է գտել քեմի վրա: Նա նպատակ ունի վերստեղծել դարաշրջանի ոգին, Բեթանոսական արքշիո խրախնաճների անվերջ ահագնացող թափը: Հեռավոր անցյալը բեկված է տարտամ պատկերներում. մերիյանը իր գոհին լացով է դիմավորում: Դա արցունքն աչքերին քարացած մի դիմակ է արծիլի Բայացքով: Բնական իրադարձությունների Ըկատմամբ ցուցաբերված ժամանակակից արվեստագետի վերաբերմունքը ընկալվում է պարզ ու մեկին: Ափսոս, որ մեր քեմի սահմանափակ տեխնիկան Բնար չի տվել Ըկարչի մտահացումներն ըստ ամենայնի իրականացնելու: Իսկ նախաքննի պարային տեսարանները չեն հաջտվում մեռագրերի ոճով լուծված վարագույրի մետ, և չենք խոսում զգեստների մասին, որոնք մերիյանի տեսարանում անցանկալի, էրոտիկ լուծում ունեն:

Ներկայիս ձևավորումները ինչ-որ չափով բարդացնում են Արանց ցուցահանդեսալին մատուցումը: Առանց գործողության, առանց քեմական շարժման, այսինքն ձևավորման ամբողջական պատկերի, ընկալվումը թերի է մեռում: Հավանորեն մեծանում է մակետի նշանակությունը: Մեր քեմանկարչության մեջ Առ Բոսանք է Աըշմարվում, որը, անշուշտ, Արա զարգացման, աճի առհավատշյան է, նոր ժամանակաշրջանի առանձնահատկությունը:

Նկարիչները այժմ, երբեմն ել ներքին մղումով, անձնական նախաձեռնությամբ են դիմում ձևավորումների,

անկախ Ծրանց իրականացման մեռանկարից: Գնահատելի է, որ հաճախ դասական դրամատուրգմերն են այդ պատվին արժանանում: Մեծ գաղափարներից է առաջանում ոգևորությունը, նշանակում է մետագայում մեծ արդյունքներ: Կրերի: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել ցուցահանդեսին մասնակցած ամենակրտսեր, դեռևս անծանոթ մի նկարչութեալ՝ Ա. Գարրինլյանի աշխատանքները: Նա ներկայացրել է տակավին չիրականացված մի ձևավորում «Մակրեթի» մակետն իր էսքիզներով: Սա հավաքական կերպար է, ընդհանրացված պատկերացում, ամրոց է, ժայռաբներ, բացօթյա բանտի տեսիլք, բայց բոլոր դեպքերում ծերսպիրի: Դրա կողքին էլ, բոլորովին այլ ոճով ու սկզբունքներով, ցուցադրել է էսքիզներ՝ Ղափանի թատրոնում բեմադրված «Նրանք հանդիպում են նորից» պիեսի համար: Սրանք ավելի շուտ գունային պարզ միջոցներով արված դեկորների համագծեր են, որ պատիվ կարող են բերել ամեն մի շրջանային թատրոնի:

Մեր բնմանկարչությունը շամելանում է: Դրա մեջ է նրա առաջընթացի երաշխիքը, դրա մեջ են նաև ցուցահանդեսի արժանիքները: Գեորգի Ցակուլովի պատկերավոր արտահայտությամբ՝ մենք «կտավն թատրոնից գնում ենք դեպի գրանիտյա թատրոն»:

2. ԶԵԽՈՍԼՈՎԱԿՅԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԾԵՔՍՊԻՐԸ

Արդի թևմարվեստը նկարչության հետ այնպէս է կապված, որ երբեմն դժվար է պատկերացնել մեկը առանց մյուսի: Այլևս արտաքին, շաղկապող օդակներ չկան, ժամանակակից թատրոնում նկարիչը նույնքան ուժիսոր է, արտիստ, որքան ուժիսորը նկարիչ, եթէ ոչ գործով, գոնե իր գեղարվեստական մտածողությամբ: Այդպէս ներկայացան մնաց չեխուլովակյան թատրոնի նկարիչները, այդպիսին են նաև ուժիսորները՝ նկարիչների աշխատանքներից դատելով: Դրանում համոզվելու համար բավական էր մի այցելություն չեխ և պովակ սցենոգրաֆիստներից ցուցահանդեսին: Վայրն էլ շահեկան էր ընտրված՝ Գ. Սունդուկյանի անվան թատրոնի ապակեպատ ճեմարանը, Մ. Սարյանի եռամկար պանոյի ստորոտում: Պանոն բարձունքից չէր ճընշում, հանգիստ նայում էր հեռուն, դեպի այգու ծառազարդ անդորրը, կամարելով սրան ու ցուցանմուշները, ո-

րոնք մնում էին իրենք իրենց հետ, թատրոնի ստեղծագործական մթնոլորտին ձուլված:

Դա արտաքուստ համեստ հավաքածո էր, Էսքիզների թիվը հազիվ էր ամենում հիսունից: Ցուցադրված էր նաև երեք մակետ: Մեծ մասամբ դրամատիկական թատրոնի համար կատարված ձևավորումներ. որը ո՞ր թատրոնում և երբ, կամ թե բոլո՞րն են արդյոք իրականացված, նշված չեր: Թերևս գործի կազմակերպիչները չեն կամեցել մեր ուշադրությունը շեղել փաստերի մանրամասներով. կարևոր ընդհանուր պատկերացումն է ժամանակակից չեխուղովակյան թատրոնի մասին: Առհասարակ թատրոն և ոչ միայն սցենոգրաֆիայի, որովհետև այստեղ ամեն մի նկարիչ թեմահարթակի ճարտարապետ է, երփնագորող, արձանագործ, լուսերի, տարածության բաշխման հիմնայի վարպետ, իր գործի լիարժեք տերը, կատարյալ արտիստ: Էսքիզների գունավոր վերատպություններից ել արդեն տպագրություն ես ստանում, թե Չեխուղովակիայում ի՞նչ նախանձելի բարձրության վրա է գտնվում թատրոնը, զգում երա խաղացանկի մասշտաբները, տեսնում զեղարվեստական տարրեր ոճերից, գունանկարչության տարրեր եղանակներից օգտվելու երանց գործնական հմտությունը:

Ցուցահանդես և թատրոն. ապակիների տակ ամփոփված անշարժ պատկերներ և ստեղծագործական կենդանի օրգանիզմ՝ սրանք առաջին հայացքից անհամատեղելի հասկացություններ են: Սակայն էքսպոնատները հայտահարում են դժվարագույնը՝ ստատիկան: Մարդու երևակայության մեջ վերակենդանանում են էսքիզները, և մենք կարծեն տեսնում ենք երանց շուրջը կատարվող գործողությունները: Ամա Ֆ. Տրեստերի ձևավորած «Համեստից» մի տեսարան: Օֆելիայի

Բուղարկավորությունն է: Բնմի նրկու կողմերի բարձունքից թափորը լուսայն իջնում է դեպի գերնզմանատուն: Առջևում մի հողաթումք կա ու մի տապանաքար: Համեստը սոսկահար գրկել է: Հորացիոյին: Նկարիչը տվյալ դեպքում առաջադրել է կոնկրետ տեսարանի ոճածիսորական լուծում, որի շնորհիվ որոշակի գաղափար կարելի է կազմել բնմադրության ոճի և սկզբունքների մասին: Դրա կողքին նկարիչ Վ. Նիվլտը «Համեստ» պատկերել է գրաֆիկական լակոնիկ գծերի միջոցով, խիստ պայմանական միջավայրում: Փոթորկվող ալիքներ, որ ասես նայում են երկնքից կախված մի փշագնդի: Գլխավոր հերոսի ճակատագիրն ու ուղին այստեղ համեմատության մեջ են երկնային տատասկների հետ. այլարքանական պատրանք:

Ցուցափեղկերում ամեն ինչ պատկերավոր է, սեղմ, մեծ մասամբ սկի ու սպիտակի կուտ տրամարանությամբ: Միտքը նոր միտք է արթնացնում, բորբոքում հանդիսականի երևակայությունը: Այդպես է և «Հովիոս Կեսարի» ձևավորումը: Զ. Կոլարժի էսքիզը իր բնոյթով քանդակագործական լուծում ունի: Բոռմեական օգոստոսափառ կայսրերը՝ արձանացած: Նրանք ասես քարացել են պատմության դատաստանի սարսափից: Մի ուրիշ նկարիչ՝ Վ. Տոմեկը, նույն «Հովիոս Կեսարին» միանգամայն այլ մեկնաբանություն է տվել: Ողբերգության գաղափարը նա տեսել է ոճրագործ աշխարհի դատապարտման մեջ: Դեկորներն այստեղ արտակարգ գունավորում ունեն: Աչքերիդ առաջ ասես շանթի ակնթարթային լուսավորումից առաջացած զիգզագներ են, իսկ վերևում կախված է արեգակի ուժասպառ, խամրած սկավառակը: Ողբերգականի բացահայտման յուրահատուկ զգացողություն, որ ոչ միայն

ինքնատիպ է, այլև տաճում է դեպի փիլիսոփական ընդհանրացում:

Տարբեր ոճերի, տարբեր մտածողության բնմակարիշներ: Հիշյալ աշխատանքների կողքին ի. Սլադեկի «Վենետիկի վաճառականը» եղեմական պարտեզ է Բիշնցնում: Տրված է Զեսիկայի առևանգման տեսարանը: Գեղանկարչական նորը տոներով, բանատեղծական երանգներով պատկերված այս առանձնառուան շրջապատում ֆիգուրներ չկան, բայց զգում են սիրո մթնոլորտը, մարդու առկայությունը, արրում ծաղիկների բույրով: Քչով շատ բան ասելու կարողությունը չեխ և սլովակ նկարիշների բնորոշ հատկանիշներից է: Յա. Կոնեցնան ցուցադրել է «Ռիշարդ Երրորդի» տիպաժի համար զգեստի մի էքրիզ, ասես ֆիգուրը գլխատված լինի, բայց հագուստների գծա-պլաստիկական և գունային նկարագիրը լրիվ պատկերացում է ստեղծում տվյալ կերպարի, ինչպես և նոյն ողբերգության Վ. Օրամեկի ձևավորումը՝ դեկորների մասին:

Ընթացք, գործողություն, գրաֆիկական լուծումների մեջ էքսպրեսիա. Յա. Վենիգի «Մակրեթն» ու Լեոյի Մակրեթի կերպարը ականատեսի առջև ապրում են լիարյուն կյանքով: Դարձյալ Ծեքսպիր, այս անգամ Յա. Գարրիելի «Զմեռային Բերիաթը» իր ճարտարապետական-գունանկարչական և Բերիաթային կոլորիտով: Դեկորները թվում են երկնածիգ աստիճաններ:

Այսպես, աստիճանաբար ցուցահանդեսը նվաճում է այցելուին նախ և առաջ շեքսպիրյան երկերի ձևավորումներով: Յոթ պիես միայն Ծեքսպիրից, ընդ որում «Ռիշարդ Երրորդին» անդրադարձել են չորս նկարիչ, «Համլետին»՝ երեք, «Հովիլոս Կեսարին»՝ երկու: Բոլորը ել մեկը մյուսից հետաքրքրական, մասնագիտական առումով անթերի, ստեղծագործական վառ երևակայու-

թյան և համարձակ մտահղացումների արգասիք: Անընդհատ շեքսպիրյան թեմաներ, ծրագրեր, խորհրդածություններ: Մեր այսօրվա հայ բնմանկարիչներն ու ռեժիսորները շատ բան ունեն յուրացնելու այդ աշխատանքներից. դրամատուրգիական նյութի գեղանկարչական վերարտադրության ազատ եղանակներ, լակոնիկ և թատրոնային մտածողությունը կոնկրետության և պարզության մեջ, արստրակցիա՝ խորն ու դիպուկ ընդհանրացումների դիմելիս:

Ցուցահանդեսում առանձին ուշադրություն նն գրավում այլ աշխատանքներ ևս, այդ թվում Վ. Հոֆմանի «Անտիգոն» և Յա. Սվորոդայի «Էդիպ արքան» երկուսն էլ կոնստրուկտիվ մատուցմամբ, Ֆ. Մուգիկայի «Խաղաղությունը», Լ. Վիխոնիլի «Տեսարանը կամըրշից»: Ռուս դասական պիեսների մի քանի ձևավորումներ նաև կապապես հետաքրքրական են երեք Էսքիզ՝ Ֆ. Տրեստերի «Վերաբնմիշը», որ քաղաքապես ընդունարանից բացվում է փողոցային մի տեսարան (աստիճանավորների ուսերին՝ Բարբած Խլեստակովի պատկերը, որպես եւտնավարագույրի նախագիծ). իսկական ռեժիսորական մտահղացում), Ի. Սլատեկի «Վասսա Ժելեզնովան» դարձյալ գունային նուրբ տոններով, ինչպես նրա «Վենետիկի վաճառականը» և Վ. Սինեկի «Կատյա Կարանովան» («Ամպրոպ»), նույնքան ինքնատիպ իր լուծումով:

Ամեն մի ցուցանմուշ հաստատում էր, զգացնել տալիս, որ նկարիչը չեխուսովակյան թատրոնում պատվավոր, առաջնակարգ դեմք է, ամեն մի էսքիզի մոտ տեսնում էիր այն ռեժիսորին, որ գիտե աշխատել նկարչի նետ, մտքեր տալ նրան, նրանց վերցնել այն, ինչ այսօր շատ պետք է թատրոնին: Էսքիզները պատկերացում էին տալիս ռեժիսորայի մասին առհասարակ: Այս

ամենից մետո, ինչպես շցավել, որ ցուցամանդեսում տեղ չէին գտել միջազգային համբակ ունեցող շեխութ-վակյան տիկնիկալին թատրոնի ձևավորումները, Լս-տեռնա Մագիկա թատրոնի համար Յոզեֆ Սվորոդայի աշխատանքներից գոնե մի-մի նմուշ:

Շեխութովակյան արվեստի տաճարյակի ժամանակ Գ. Սունդուկյանի անվան թատրոնի ճամասրահը հագեցած էր Ծերսապիրով: Մեծ բրիտանացին նվաճել էր ցու-ցամանդեսի փեղկերն ու, ինչպես միշտ, թատրոն հա-ճախող բյուր մարդկանց: Մեր բարեկամների սցենո-գրաֆիան նախ և առաջ բացամայտվում էր Ծերսապիրի միջոցով: Շեխ և սլովակ ժողովուրդների գեղարվեստա-կան լեզուն էր այդ, բոլորի համար միշտ պարզ ու մատ-չելի:

1966

ՀԱՅ ՆԿԱՐԻՇԱԽԵՐԸ ԾԵԺՄՊԻՐԻ ՄԵԿՆԱՐԱՆ

Հայ թեմի գործիշները վաղուց, տակավին անցյալ դարի վերջին քաջ գիտակցում էին այն մեծ դերը, որ կարող էր ունենալ Ծերսպիրի դրամատուրգիան ազգա-

լին թատրոնի գարգացման մեջ: Հայ թատրոնում Ծերսպիր Շերկայացնելու պատիվը պատկանում է դերասանական խոշոր անհատականություններին: Ամեն մի աչքի ընկնող դերասան ուզում էր իր խաղացանկում ունենալ Ծերսպիր և իր խոսքն ասել: Ծերսպիրի հայկական ավանդները դերասանական ավանդներ էին և՝ 19-րդ դարում, և մեր դարի առաջին երկու տասնամյակում: Մինչդեռ համաշխարհային թեմում Ծերսպիրը դարասկզբին արդեն սկսեց Շերկայանալ ուրիշ կերպարանքով. անհատ կատարողների մենաջնորժից դառնում էր բարի լայն իմաստով անսամբլի մենաջնորժ:

Խորմրային թատրոնը չէր կարող շմբուածել ստեղծված ասվենդների վերանայման մասին: Պետք էր հասնել

շնքապիրյան ներկայացման արդիական ըմբռնմանը: Բայց ինչպես: Արելյանն ու Փափազյանը, Արմենյանն ու Մանվելյանը, և էլի ուրիշներ, նոր թատրոն էին նկել իրենց հաստատուն համոզմունքներով: Ժամանակ անցավ, մինչև որ շնքապիրյան մեծահամրավ դերակատարները սկսեցին հաշվի նատել ներկազգացում նոր հասկացության, ինչպես նաև մի քանի նորահաջոտ մեկնարանների՝ ոնժիսորի, մկարչի, նուղանիկ երաժշտի ակտիվ գործունեության մեջ:

Քսանական թվականներին, ինչպես և դրանից մետու միաժամանակ, Բայ ոնժիսորիայի և թեմանկարչության մակարդակը չհասավ և չեր էլ կարող հասնել դերասանական արվեստի մակարդակին, հատկապես Գ. Սունդուկյանի անվան թատրոնում: Պիտի տարօրինակ ժովա, որ շնքապիրյան ողբերգությունները, փոքր բացառությամբ, ժամանակակից Բայ թատրոնում չունեցան այնպիսի մի թեմադրություն, ուր դերասանի կողքին փայլեր ոնժիսորը կամ մկարիչը: Կարո՞ղ էր ներկայացման կերպարի կամ թեմանկարչի մեկնարանության մասին խոսք լինել, երբ ողբերգությունը հաճախ թեմադրվում էր որևէ խոշոր դերասանի պատվին:

Համեմատաբար դյուրին ճամփա անցան շնքապիրյան կատակերգությունները: «Կամակոր կմոջ սանձահարումը» որ շնքապիրյան անդրանիկ լուրջ թեմադրությունն էր Սուածին պետքարոնում, չնայած իր երկարամյա հաջողությանը, վերստին աչքի ընկավ գիշավորապես դերասանական կատարումներով: Նկարիչն այստեղ դեռևս չկարողացավ գործուն դեր ունենալ: Ոնժիսոր Լ. Քաջանթարի և մկարիչ Գ. Երիցյանի համար դժվար էր մասնագիտական լիարժեք ձևավորում, ներ-

կայացման գեղանկարչական պատկեր ստեղծել թեմական տեխնիկայի խնդության պայմաններում, նին շնորհի ննդիլիկ թեմահարթակի վրա: Զևավորման փոխառնեն սխեմա, ընդհանուր ուրվագծեր:

Այնուամենայնիվ, մեր դերասանները Շեքսպիրով էին շնչում, ապրում նրա մասշտաբներով, իսկ թեմադրական ընդհանուր մակարդակը բարձր չէր: Թնրւս ճիշտ կլինի ասել, որ ժամանակ էր պետք այդ թերությունը հաղթահարելու համար, քանի որ թեմարվեստի բնագավառում նայ ուժիորների կողքին կային նաև Շեքսպիրով տարված նկարիչներ:

Հայաստանից հեռու, հեղափոխական Պետրոգրադի կոկեսային արենայում Ս. Թամանյանը Մ. Դորուժինսկու հետ ստեղծել էր «Մակրեթի» մի զարմանահրաշ կառույց-ձևավորում, որ գնահատում էին Մ. Գորկին, Ս. Պրոկոֆիև, Յու. Ցուրնը, իսկ Վ. Մայակովսկին հիացած գրում էր, թե «Բոլոր թատրոնները «Մակրեթով» են բռնված»¹: Այդ նույն տարիներին Մոսկվայի Ցուցադրական թատրոնում Ցակովովն իր դեկորներով ու տարագներով թեմ հանեց Շեքսպիրի հազվագյուտ թեմադրվող երկերից մեկը՝ «Խոտորանակին խոտորանակ» դրաման, որի ընդհանուր կառուցվածքը, Լունաշարսկու բնութագրումով, շեքսպիրյան թատրոնի խևական իմացությամբ էր արված, իսկ գլխավոր հերոսների տարագներն այն տպավորությունն էին թողնում, կարծես մարդիկ իշած լինեին մեծ վարպետների կտավներից²: Ժամանակի հայկական թատրոնը խիստ կարիք ուներ Թամանյանի և Ցակովովի նման մարդկանց, որ հնարավոր լիներ ըստ ամենայնի Շեքսպիր բարձրացնել: Այ-

¹ Ю. Юрьев, «Записки», 1948, № 595—609.

² «Известия», 1919, 28 նոյեմբերի:

սոսամբով պիտի ասենք, որ նույն Գ. Յակովովը 1920 թվականին աշխատել էր «Համլետի» ձևավորման վրա, ապա մի կողմ դրել, իսկ Բուրջավանը Ակարիչ էր փընտրում «Համլետը» թեմադրելու համար:

1926 թվականի դեկտեմբեր, Սուածին պետքատրոն, «Վենետիկի Վաճառականի» պրեմիերա: Այս թեմադրության արժեքը անտեսված է եղել և անտեսված է մեր թատերագիտության մեջ: Ավելին, Միքայել Մանվելյանի գործունությանը նվիրված մենագրության էջերում նույնիսկ ասված է, որ «Շեյլոկ-Մանվելյանը... զոհաբերվեց ուժիւրի «նորարար» մեկնարամությանը»¹:

Կարծես կանխազգալով դա, Բուրջավանը ժամանակին գրել է: «...Շեքսպիրին դեկավարողը ոչ թե հակառակ միտական տնենդենցներն են, այլ ընդհակառակը, համամարդկայինը»: Ուստի և, պնդում է Բուրջավանը, պետք է այն մեկնարանել շեշտը դմելով պիեսի կատակերգական բովանդակության վրա: Անշուշտ, իրավացի էր ուժիւրը: Ներկայացման մեջ Շեյլոկի մեկնարամությունը փաստորեն ազգային պրոբլեմից դուրս էր մղված: Ունժիւրը ձգտել էր, գուցե և վախտանգույյան «Տուրանդոտի» տպավորության տակ, այս կատակերգությունը մատուցել որպես մի խրախնանք, ծիծառ ու խնդություն:

Բուրջավանը հանդիսականին իրազեկ էր պահել, որ «պիեսն իր արտաքին ձևի իմաստով կներկայացվի միասնական դեկավարությամբ», ինչպես մշակել է Մուկվայի հայտնի Ակարիչ Յակովովը: «Նա է մշակել նույնպես բոլոր գգեստները և թեմական սարք ու կար-

¹ Ս. Սարգսյան, Սիրնի անուաներ, Երևան, 1962, էջ 109.

գը, մակնտը, որ անդրադարձում է Վենետիկի կառավալի ոգին¹:

Շելլոկի դատը հնում Բայ թատրոնը միշտ էլ պաշտպանել է, բայց Բիմա ժամ է ուրախության: Թող ուրեմն, խնդա Բայյանակող Պորցիան, թող Բասանիոն երջացիկ լինի, Անտոնիոն վատնի գաճճերն իր ուզածի պես— Վենետիկում խրախնանք է:

Դրա Բամար նախ պետք է, որ դերակատարները պատշաճ զգեստներով Բանդես գան, ասում է Յակովիլովը, կրեն վենետիկյան տիպականացված բնույթի ըգգեստներ, բայց ոչ պայմանական, այլ գերագույն պարզության Բասցված, որովհետև ժամանակակից դերասանութու շարժուձնը շատ հնուու է 16-րդ դարի վենետիկութու շարժուձնից: Ժամանակակից դերասանի Բամար իդեալական զգեստը տրիկոն է, միայն թե նուր ակնարկ է պետք, որ Բասկանալի դառնա, թե դա Շերսպիր է, և որ վենետիկցիների մետ գործ ունենք²:

Այդ բեմադրությունից պահպանվել է մատիտով արված մի ճապանկար և զգեստների անավարտ մի էսքիզ: Բեմահարթակի վրա իշխում են առևտրական նավերի առագաստները, իսկ Պորցիայի և Շելլոկի տըները կարծես ուժացած առագաստանավերի մի մասն են կազմում: Սովոր քաղաքի մեջ է, երբեմն էլ կարծես փուլած քաղաքի վրա: Կենցաղի կատարյալ անտեսում և արստրակցիա: Միասնական մենքի, բեմական Բաւտոցների վրա կառուցելով դեկորները, Յակովովը բեմը

¹Տե՛ս «Արշակ Բուրջալյան», Երևան, 1959, էջ 19—20. այստեղ միասնական դեկավարություն ասելով մեղինակը Ակատի ունի ուղարկան единая установка артистичности и ясности.

²Տե՛ս՝ Վ. Գ. Սախновский. Работа режиссера. М.-Л., 1937, էջ 149—150:

թեթևացրել էր այնքան, որ կառնավալի հրապարակից դատարանի մուայլ տեսարանին անցելը վայրկյանների հարց էր: Այլ կերպ դժվար էր տասնութ պատկերների միջցով, ինչպես Բուրջալյանն էր հղացել, այդքան թեշտ ու թեթև արտահայտել Վերածննդի ոգին: Ներիսայի դուանը Շիրիող մի առյուծ, թվում է, Շելլոկի աշքերով հսկում էր տանը. դա էլ տաշնոյ թեփով առննած մի արձան էր, Յունքան իրական ու համոզիչ, որքան Պորցիայի վարած դատական ծխակատարությունը: Կատակ է՝ թող կատակ լինի:

Մասշտաբայնությունը, կյանքի լայն ընդգրկումը և կել և՛ և ներքին բովանդակությունից: Ըստ հնարավորին մնացվել էր թեմի հայելին: Նկարչի նպատակն էր ցուց տալ կառնավալի ոգին, ծովահայաց Վենետիկի մեջ Շեքսպիրի պես միատեղ տեսնել ծանր խոհն ու գավեշտը: Այս ամենը, ինչպես ժամանակին մամուլն է նկատել, «համապատասխանում էին Աերկայացման, թեմադրության ոիլումին: Այդ վերջին հատկությունը Բուրջալյանի թեմադրությանը տալիս էր առանձնահատուկ գեղեցկություն և իմաստ»¹:

Ո՞րն էր այդ գեղեցկությունն ու իմաստը: Ընդգրկիր հոգուր մեջ աշխարհն իր ուրախությամբ, վերակենդանացրու մանկական պատրանքները, կյանքը վայելը է ու մեր. թող դառնություններդ, վիշտ ու ցավ, ամեն ինչ մոռացիր այս երեկո: Մի՞թե պարզ չէ սրանից հետո, որ Շելլոկը չէր կարող հանրածանոթ Շելլոկը մնալ, ինչպես քննադատն է նշել, «մարազատ Բուրջալյանի մեկնաբանությանը՝ Մանվելյանը համեմետ չի թերու Շելլոկին, որպես մի կենտրոնական ֆիգուրա, առ կար-

¹ «Խորհրդային Հայաստան», 1927, 5 հունվարի:

ծես ինչ-որ անցորդ լինի Բելմոնտի և Վենեցիայի տեսարանների միջև»¹:

Այն տարիների համար, իմարկե, այս մեկնարանությունը շատ կողմերով արդիական էր, հրապուրիչ, Ցակովով աշխատում էր մի թատրոնում, որի վարագույրը Սարյանն էր ստեղծել և որի իմաստն ու գնդեցկությունը հայթանակող ժողովրդի ցնծագին երգն էր: Ինչպես կարող էր Ակարիչը այդ հաշվի շառնել:

Ցակովովը մի քանի ամիս դրանից առաջ, 1926-ի գարնանը Մինսկի Հրեական թատրոնում, Վ. Սախնովսկու խնդրանքով աշխատել էր «Վենետիկի վաճառականի» վրա և, ինչպես ականատեսներն են պատմում, նրա երեանյան ձևավորման մեջ Աայլին լուծման ըսկըզբունքները մասամբ պահպանվել էին. Էական վերամշակման էին ներարկվել միայն տարագներն ու կամ-կարասին, ելնելով փոքր թեմահարթակի հնարավորություններից և Բուրջալյանի ոնժիսորական մեկնարանության ոգուց, ուր կառնավալի շունչը նույնքան զգալի էր, որքան Վ. Սախնովսկու թեմահրության մեջ:

Սախնովսկին, որ լավ գիտեր Ցակովովին, սիրում ու գնահատում էր նրան որպես մեծ վարպետի, գրել է. «Ցակովովյան Անրկայացումը մշտապես ներթափանցված էր Ակարչի սրատես ու խորուն հայացքով: Նա բեմին նայում էր բարձունքում ճախրող ուրուրի աշքերով: Ռատի և նրա թեմահրություններում չկային կենցաղայնության գծեր: Այն կետից, որ դիտում էր նա, կենցաղի մանրամասներ չեն երևում»²:

Ցակովովը, այդ առումով, Բայ թեմում շեքսպիրյան կատակերգություններ թեմահրելու առողջ միմք դրեց:

¹ Խոզմ տեղը:

² В. Г. Сахновский, с. 155.

Չի կարելի ասել, թե նրանց մնատ մեզանում Շեքսպիրը երևաց նույնքան լակոնիկ ու պերճ, նույնքան պատկերավոր մատուցված, բայց, այնուամենայնիվ, երբ Մ. Արուտչյանը վրձին էր առնում ձեռքը «Մակրեթ» կամ «Օթելլո» ձևավորելու համար, կամ նրա կրտսեր նդրայրը փորձում էր քեմականացնել «Փալստաֆը» մոտեցումն արդեն այլ էր: Նոր ժամանակների գգացողությունը կար նրանց մոտ: Ցակովովի «Վենետիկյան առյուծը» վերատին, բայց նոր կերպարանքով խաղաց Մ. Արուտչյանի աշխատանքներում: Խոկ Կ. Մինասյանը Լենինականի թատրոնում «Վենետիկի վաճառականի» մի նոր, մնատաքրական ձևավորում ըստեղծեց:

Սրանք գնահատության արժանի աշխատանքներ են. այսուհանդերձ, շեքսպիրյան երկերի ինքնատիպ մեկնարանության ամենաբնորոշ օրինակը մեզանում «Տամներկուխրորդ գիշերն» է:

Մի ընդհանուր գիծ կար այս երկու կատակերգությունների միջև: Շելլուկը Ժիստում է կյանքի հրճվանքը, մերժում ազատ սերն ու զվարճանքը. Առյնը քարոզում էր և պուրիտան Մալվոլիոն: Լենինականի թատրոնում 1944-ին քեմ բարձրացած «Տամներկուխրորդ գիշերվա» գլխավոր հերոսը ևս ծիծաղն էր, ուրախությունը, սակայն՝ Հայրենական Մեծ պատերազմի միջնորդու գգացողությամբ: Համաժողովրդական վշտին ու ցամանը թատրոնը կարծես գալիս էր հակառակ վեցու շեքսպիրյան կենսասիրությամբ, ծիծաղով. զուր չի ասված, թե «ծիծաղը լացի քաջությունն է»:

Այդ կենսասիրությունը ողջ մերկայացման մեջ այնքան էր հորդ, անբռնագրու և ինքնարուխ, որ դրա պատկերը ստնդել սուսկ դերասանական ուժերով՝ պարզապես մնարավոր չէր: Անեմյանի ոնժիսորական մտա-

Բղացմամբ, արտաքին աշխարհի ակտիվ առկայությունը անխուսափելի պայման էր. Բերումների հոգեկան կյանքը դեկորացիոն միջավայրի հետ սերտ ու անմիջական փոխազդեցության մեջ էր դրված: Հետևապես այս ներկայացման նկարիչ Մ. Սվախչյանը ուժինորին համազոր մեղինակ էր: Խսկ դա նրան ստիպում էր որպան երևակայությանը ապավիճել, նույնական էլ լինել իրական, այժմեական ու հավաստի:

Սվախչյանը գիտեր, որ Ծերապիրը զվարճանքի ժամին էլ խորիմաստ է ու կոնկրետ: Եվ Ծերսպիրը մուտք գործեց թատրոն՝ իր հանդիսականի հետ: Մարդաշափ պուպրիկներ բազմել են երկրարկանի օթյակներում, կարծես թատրոնի տերը նրանք են, ներկայացումը տղրվում է նրանց պատվին: Անգլիական «Գլորուս» և սուանձնապես «Կարապ» թատրոնների արտաքին ըսկը ըստ գրունքով լուծված այս հիմնական տեսարանը, սակայն, առաջին հայացքից այնքան էլ ուժեղ տպավորություն չէր թողնում: Սակայն պուպրիկները կարծես աստիճանաբար ներգրավվում էին գործողության մեջ: Հատկապես սըր Թորիի և Էգյուչիկի տեսարաններում թվում էր թե պուպրիկները գործող անձ են, գեղանկարչորեն այնքան ակտիվ վիճակի մեջ էին նրանք: Ներկայացումը դիտում էին, վերջում էլ, ինչպես հարկն է, դուրս գալով իրենց մունջ ու անշարժ վիճակից, ծափերով ողջունում դերակատարներին:

Սվախչյանը պիեսի կանոնական ներումներին ըստ ամենայինի կատակերգական ոլորտում բացահայտելու նպատակով, Թորիի, Մարիալի, Էգյուչիկի, Ֆարիանի հանդիպման գրեթե բոլոր պատկերներում օգտագործել էր նրանց վարքագծին բնորոշ մի ետնավարագույր, որը շատ էր նման Ռուբենսի «Սիլենի նրթին»: Այդ կտավի օգտագործումը, թեմատիկ առումով, ինքնին

շատ թետաքրքրական էր: Իմարկե, կարելի էր և մեղադրել Ակարչին անախրոնիզմի մեջ, բայց Սվախչանը դրանից երկուու չուներ: Պատմական ճշմարտության սկզբունքն այստեղ բնակ չէր խեղաթյուրվել: Այդ աշխարհահոչակ կտավը Ակարիչը հանդմնել էր նույնիսկ վերամշակել: Խեղկատակ Ֆեռտեն, ծաղրելով իր Բարբած բարեկամներին, իմիջնայլոց ասում է: «Տեսէ՞ եք արդյոք «Մենք երեքն ենք» ծաղրամկադրը»: Պարզվում է, որ Ծերսապիրի ժամանակներում Լոնդոնի պանդոկներից մի քանիսն ունեցել են ցուցանակ, որի վրա Ակարփան է եղել ավանակի երկու գլուխ՝ «Ծրբորդը հայողն է» մակագրությամբ: Ամենայն հավանականությամբ Սվախչանը եղել է այս փաստից, և «Սիլենի երթը» հիշեցնող կտավում թեթևակիորեն գծագրել էր ավանակի երկու գլուխ: Այս դեպքում մակագրությունն արդեն ուժինորական բեմավիճակներն էին ու դերասանական խաղի Բարուստ ենթատերսը: Սա, իր Բերթին, յուրօրինակ մեկնակետ էր ուժինորի և դերակատարների համար, անցում՝ գեղանկարչական մթնոլորտից դեպի բեմական իրականություն:

Ամեն ինչ կոմեդիական հիմքի վրա էր մեկնարանել Ակարիչը և միաժամանակ ընդգծել իր, ալսինքն օրվա հանդիսականի մեգնական վերաբերմունքը Բնրուների փոփոխական գգացմունքների Ակատմամբ:

Նկարչի Բնարամտությունները հանդիսականի երեվակայությանը անսպառ նյութ էին տալիս: Պատկերներից մեկում դուքս Օրսինոն բեմ էր մտնում խաղալիք հիշեցնող փայտն ձիուն Բեծած: Մենք Ակատում ենք նույնիսկ այդ ձիու անիվները: Ինչ փուլո՞: Այդ ձին թատերային, կատակերգական, բեմի պայմանականությունը ցայտուն կերպով և դիտավորությամբ ընդգծող հատկանիշ էր: Հանդիսականը թող իրականը պատկե-

բացնի: Այդպես Ակարիչը ծիծաղում էր Բանդիսականի նետ և՝ Օլիվիայի վրա, որ երեկ մի ամսփոփ սգավոր էր, այսօր խելացնոր սիրահար, և՝ Էզյուշիկի վրա, որ Բառաշում էր սրտաճմլիկ՝ կարծեցյալ սիրո Բամար, և Ֆեստնի, որ ինքը մի խեղկատակ, բայց շարունակ թախծոտ երգեր է ասում, և Մարվոլիոյի, որ կարծում է, թե կարող է ուրախության դեմ պատճեց կանգնել...

Մի կողմից դեկորների, տարազների գեղանկարչական ոնալիստական լուծում, մյուս կողմից՝ պայմանականության լուրատեսակ շնչտադրում: Եվ ոնժիսորն ըստ ամսնայնի օգտագործել էր Ակարչի ընձեռած Բնարակորությունները: Անա մի տեսարան, որի Բնելինակը դժվար է որոշել, գինու տակատին փառավոր բազման թորի Բնելը, գինով լի երկու գավառ ձեռքներին, ծիծաղից մարած Էզյուշիկը գետին է փուլել, գլխարկը Բագել ոտքին, Ֆեստն երգում է բարձրաձայն, մինչդեռ Մարվոլիոն, գիշերվա Բանդերձով, լապտերը ձեռքին, ջւանում է կասեցնել Սիլենի այս երթը: «Մնաս բարով, իմ սիրութի-սիրենկան», — ասես կվարտեսով երգում են, և այս խենթ Բրճվանքին վերջ չկա:

Ֆլամանդական Բյութեղություն կար ամբողջ Անրիկայացման մեջ, Վերածնության դարաշրջանի բուոն ու անզուսապ ոգորումներ: Անձնատոր մի լինիր վշտին, ձգտիր դեպի կյանքը, եղիր սիրո և ուրախության մունետիկ:

Երբ Ստրենֆորդից շեքսպիրյան մեմորիալ թատրոնը 1958-ին ժամանեց Մոսկվա և նրա Բայտագրերի վրա երևաց «Տասներկուերրորդ գիշեր» անունը, Բայթատերագետներին կանխավ Բետաքրքրում էր այն Բարցը, թէ ինչո՞վ առավել կամ տարբեր կլինի Շեքսպիրի Բայթենակիցների մեկնարանությունը Բայկականից: Մեր մամուլում նշվեց, որ կատակերգական վա-

բակիչ ուժով, մեկնաբանության ցայտումությամբ, և որ գիշավորն է, մերկայացման ընդհանուր պատկերով Բայկական «Տասներկուերրորդ գիշերը» «բնավ չեր զիշում ստրենֆորդանին», ոչ էլ «Բիշեցնում Վ. Ամեմյանի զահավեծ թափով, խեցյ հրճվանքով շնչող բնմադրությունը»¹: Սա, անշուշտ նաև Մելիքսեթ Սվախյանի վաստակն էր, նրա ստեղծագործության մի նոր գնահատությունը՝ տարիներ մետո:

Ինչպես ոեժիսորական հղացումներից տեսակետից, այնպես էլ սցենոգրաֆիայի առումով «Տասներկուերրորդ գիշերն» արդեն իր տեղն ունի մեր թատրոնի շեքսափիրյան ավանդներով հարուստ պատմության մեջ:

Ոչ Ս. Սիրզոյանն ու Տ. Շամիրխանզանը նույն շըրջանում ստեղծած «Ամառային գիշերվա երազ» բնմադրությամբ, ոչ Սարգիս Արուտշյանը և Գ. Գարբինյանը «Սխալների կոմեդիայով», ոչ էլ Ս. Զիյնգարյանը և Վ. Ամեմյանը «Լիր Արքա» կամ և. Մինայանն ու Լ. Քալանթարը «Օթելլո» մերկայացումների միջոցով,—որքան էլ դրանք տարբեր գեղանկարչական մակարդակ ունենային,—չկարողացան լիակատար անսամբլի մեջ դիտել Շեքսպիրին, իրենց խոսքն ասել՝ Բիմք ընդունելով բնմական բոլոր բաղկացուցիչները, մատուցել նրան Վերածնության դարսչշրջանի Բուժկութափի, գեղարվեստա-թատերային վաս ձևերի, մարդկային խոր մտքի ու լիարուն զգացմունքի այնպիսի կենսահաստատ եղանակներով, ինչպես «Տասներկուերրորդ գիշերում» էր դա արված: Էլ չենք խոսում Երաժշտական կոմեդիայի թատրոնում Գ. Գևորգյանի ձևավորած «Ձոր տեղը մեծ աղմուկ» և «Կամակոր կնոջ

¹Տե՛ս «Սովորական արվեստ», 1959, № 3, էջ 41, Լ. Հակովերդամի հոդվածը:

սանձահարումը» Անրկայացումների մասին, որոնք ուշագրավ էին սոսկ այդ թատրոնի ընձեռած հնարավորությունների սահմաններում: Եվ նեև մի բացառություն կա, ուստի դա Համլետն է, որ կյանքի կոչվեց դարձյալ Հայրենական պատնրազմի տարիներին՝ Ա. Բուրջալյանի և Արա Սարգսյանի թեմադրությամբ:

Ուժիսորն այս Անրկայացման «Ճեկավորումը պատկերացնում էր շատ պարզ և իր պարզությամբ վեճ»¹: Բնամի վրա ամեն ինչ պիտի հստակորեն բացահայտեր գլխավոր հերոսի նպատակադրումը: Դա իրոք պարզ ու վեճ մի ճեկավորում էր, որտեղ զուսպ արտահայտչամիջոցներով կիրառված էր շեքսպիրյան թատրոնին բնորոշ պայմանական և «սիրազնական» դեմքորների համառոտ սկզբունքը:

Բնամի բոլոր մասշտաբներն օգտագործելու ուժիսորի ցանկությունը չէր աჩարենել Ակարչին, ընթիակառակն, ոգևորել էր: Օգտագործված էր ամբողջ թեմահարթակը, նաև նախարենը՝ սրան կից լրացուցիչ մուտքերով: Տարածության լուծման այս ազատ ոճը, որ կիրառել էր Արա Սարգսյանը «Համլետում», ուժիսորին ու դերակատարներին ազատ ու անկաշկանդ ծավալվելու հնարավորություն էր տալիս: Ազատություն գործելու և խորհելու համար,—ահա թե ինչ էր պետք Բուրջալյանին և Վսուղարշյանին, և այն տրվել էր նրանց: Գերեզմանատան տեսարանը, օրինակ, սոսկ մի հողաթումը էր ու մի մեծ խաչ, մյուս պատկերներում վարագույթներն էին օգնության գալիս, մասսամբ էլ ճարտարապեստական այուները: «Սարգսյանի հակումները մոնումենտալության, ընդ-

¹ «Արշակ Բուրջալյան», էջ 157:

Բանրացումների և լակոնիզմի նկատմամբ արտահայտվեցին նաև «Համլետի» ձևավորման մեջ»¹:

Թատրոնը, շնորհած սույ պայմաններին, սև թավուշ ձեռք թերեց ներքին վարագույրների համար: Եվ այդ թափիշը, որ իշխող էր թեմի վրա, յուրօրինակ սգի մըր-նորոր էր ստեղծում: Նման վարագույրներով շրջապատված Դամեմարքայի իշխանը, սակայն, ըմրուս ոգի ուներ այդ ներկայացման մեջ ու պայքարի մեծ կորով: Դրան զգալիորեն նպաստում էին նաև ձևավորման մյուս բաղադրամասերը՝ դիմամիկ վիճակում պատկերված զինչալ ասպետների քանդակները, ետնապատաժին ծառս եղող թեծջալը և այլն: «Բարձր մակարդակի վրա է գտնվում ներկայացման գեղարվեստական ձևավորումը,—գրել է ոռու քննադատ Մ. Բաբենշիկովը:—Հնարամտորեն կիրառելով պորտալը, սև թավիշը և միմյանց հաջորդող երփնազիր նկարագարդները, նկարիչն ստեղծել է իր հետևողական ոճի մեջ զուսպ և մոռումնետալ մի ձևավորում՝ լիովին համապատասխան շեքսափիրյան թատրոնի սկզբունքներին»²: Այս ամենին պետք է ավելացնել և այն, որ նկարիչը որքան տեղին էր օգտագործել շեքսափիրյան թատրոնի ձևավորման որոշ սկզբունքները, նույնքան էլ, գուցե և ավելի, հաշվի էր նատել ժամանակի պահանջների և գիտավոր հերոսի ակտիվ մեկնարանության հետ: Էքսպանսիվ Համլետը դրված էր նույնքան էքսպանսիվ դեկորացիոն միջավայրում: Ծեքսափիրյան ողբերգությունների նայկական թեմադրությունների մեջ «Համլետի» այս ձևավորումը միակն է, որի մասին կարելի է արտահայտվել առանց էական վերապահության:

¹ В. Тиханова. «Ара Саркисян», М., 1962, № 69.

² «Коммунист», 1942, 20 փետրվարի:

«Օթելլոյի» թեմանկարչական լուծումը, օրինակ, երբեք շնասավ այդ մակարդակին: Տարբեր թատրոններում, միմյանցից շատ տարբեր նկարիչների ձևավորմամբ շուրջ քառասուն տարի ապրեց այդ ողբերգությունը ժամանակակից հայ թեմի վրա: Եվ, այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում համարյա ոչ մի սկզբունքային փոփոխություն չմտավ նրա դեկորների ու գգեստների լուծման մեջ: Դա, թերևս, ուժինորական հանդուրժողականություն պիտի համարվի: Անշուշտ բացասարար է անդրադարձն նաև դերասանների անտարբերությունը սեփական խաղից բացի՝ ներկայացման մյուս բաղադրամասների նկատմամբ, կաշկանդել այն հանգամանքը, որ ամեն անգամ (չնչին բացառությամբ) թեմադրական աշխատանքներին դիմելիս՝ գոլիսավոր դերակատարն է նախորոք ներկայացրել պիեսը մեկնարանության պատրաստի սկզբունքը՝ իր, ուժինորի ու նկարչի համատեղ պրապտումների ստեղծագործական հնարավորությունները կանխելով: Պատահական չէ, որ «Օթելլոյի» լավագույն թեմադրության ձևավորումը ուսւանական շեքսպիրագետ Մ. Մորոզովը համարել է «փոքր ինչ տրաֆարետային», թեև նշել է նաև, որ Մ. Արուտչյանի դեկորները «որոշ դեպքերում գեղանկարչական են, ինչպես օրինակ, ողբերգությունն նախավերջին պատկերի լուսնի ճառագայթներով ներթափանցված պուրակը իր ծովափնյա տեսարանով, Կիպրոսում»¹:

1964-ին, ավելի քան հիսնամյա ընդմիջումից հետո, Գ. Սունդուկյանի անվան թատրոնը թեմադրեց «Ռոսեն և Զուլինտը»: Թվում էր, որ դա նոր խոսք պիտի լինի շեքսպիրյան ողբերգությունների ձևավորման պատմու-

¹ «Правда», 1941, 14 մունիսի:

թան մեջ, մանավանդ որ Ակարիշ Արմեն Գրիգորյանցը փորձված, բարձր ճաշակի տեր մի արվեստագնու էր, և ձևավորումը ստանձնել էր ոնժիսոր Վ. Սմելչյանի հետ համագործակցելու պայմանով:

Գրիգորյանցը ձգտել էր ստեղծել այնպիսի մի ձևավորում, որը նախ ընդհանուր պատկեր տար առնասարակ շեքսպիրյան ողբերգության մասին: Ոչ թե Վերոնա՝ իտալական կապույտ երկնքի տակ, գեղանկարչական մի քաղաք, այլ ողբերգական իրավիճակ բնորոշող մույթ ու մուայլ մի իրականություն, զուրկ կոնկրետ նկարագրից: Թանձը գույները, հաստաքեատ պարիսպ-դեկորները միջնադարյան ինկվիզիցիայի անլույս, խնդրող մթնոլորտ էին հիշեցնում, գույնիսկ ներփակ մի ամրոց: Պայծառ կյանքի ոչ մի հեռանկար: Այդ հողի վրա, այդ պարիսպների կողքին չեն աճում գույնիսկ ծառ ու ծաղիկ: Անգամ պատշգամքի հանրահայտ տեսարանն կիսախնավարի քողով էր պատած, ողբերգության երթևմն մուայլ պատումը և սիրո դժբախտ վախճանն էր նախ և առաջ հետաքրքրել Ակարչին: Կարելի է ենթադրել, որ Գրիգորյանցը բեմահարթակին նայել է Թիրապահի աշքերով: Մինչդեռ, մտաքերելով Մերկուրիոն-Սկրոտչյանի կենսահաստատ խաղը և առանձնապես Անրկայացման առաջին պատկերները, որոնք համեմված են ժողովրդական կյանքի հյութեղ մանրամասներով՝ կարելի է եզրակացնել, որ այս ձևավորումը որոշ դեպքերում հակասության մեջ էր ոնժիսորական լուծման սկզբունքների հետ:

Շեքսպիրի ապրած հարյուրամյա ուղին հայ թատրոնում դերասանական խոշոր անհատականությունների, նրանց ստեղծագործական հնարավորությունների հաստատման պատմությունն է: Սակայն կերպարվեստի առումով Շեքսպիրը մեզանում տակավին սահմա-

նախակ է դրսնորված: Միայն թեմադրական արտասովոր մեկնարանություններն են ծնել Ակարչի նույնքան արտասովոր, թետաքրրական, թարմ ու ցայտուն ձևավորումներ: Եվ միայն այն դեպքում, երբ ուժիուրն ու դերակատարները փորձել են հնոանալ ավանդներից՝ շեքսպիրյան երկները մի առ կողմով լուսաբանելու, զարգացնելու համար ցանկությամբ՝ ստեղծվել է գնդարվեստական թարմ մտահացումներով հարուստ թեմադրություն*:

* Այս նոդվածք գրվել և հրապարակվել է 1968-ին, «Ծերսպիրական» տարեգրի առաջին հատորում: Այնուինևս մեր օկարիչները բազմիցս առիր են ունեցել ամորադառնալու շեքսպիրյան երկների թեմադրություններին: Դրանցից համեմատարար ուշագրավ են Գ. Սումոյուկյանի անվան թատրոնում իրականացված Ս. Արուտչյանի «Օթելլո» (1969, գգեստները Մ. Լիննիցնալի), Ե. Սոֆրոնովի «Կորիոլան» (1978), զուգ Սֆորոնովի դեկավարությամբ, Զ. Մուրադյանի ձևավորած «Ձո՛ն արքան» (1981, գգեստները Ս. Փարթամյանի), Երևանի դրամատիկական թատրոնում ռեժիսոր Հր. Ղափլանյանի դեկորներով թեմադրված երկու ողբերգություն՝ «Ռիշարդ Յ-րը» (1972) և «Կարմիր և սպիտակ վարդերի պատերազմ» (1981, գգեստները Ա. Արուտչյանի), Կ. Ստամիլյանվակու անվան թատրոնում Ս. Արուտչյանի «Մակրեթը» (1977, գգեստները Ա. Արուտչյանի), Լեմինականի թատրոնում Է. Եղիզարյանի՝ «Տիտոս Անդրոմիկոս» (1981), Երևանի Պատամի թամդիստնեսի թատրոնում Գ. Վարդամյանի «Ոչ Զից մեծ աղումկը» (1981, գգեստները Ա. և Գ. Արուտչյանների): Ակատեմի պիտի առանձմացնել «Համեստ» ողբերգության համար Մինաս Ավետիսյանի Ակարչական մտահացումները, արտահայտված մի քանի տասներկ էարիգներով (1975—1976), որոնք Ակարչի մարման պատճառով Լեմինականի թատրոնում մնացին շիրագործված:

1981-ի աշնանը Երևանում կազմակերպված շեքսպիրյան փառատոնին ցուցադրված հայկական թեմադրությունների սենյոգրաֆիան առաջին ուսումնասիրության պուլք է:

ՍՈՒՐԵՆՑԱՆՑ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Դերի և գնահատության հարցի շուրջ

Հայ դասական կերպարվեստը իր զարգացման տարբեր փուլերում միշտ էլ առնչություն է ունեցել թատրոնի հետ: Դժվար է մատնանշել որևէ հայ ականավոր նկար-

չի, ճարտարապետի կամ քանդակագործի, որ այս կամ այն չափով ծառայած չկանոնավոր է: Վարդես Սուրենյանցը նրանցից առաջինն էր, որ իր մասնագիտական կարողությունները ըստ ամենայնի բերեց թատրոն: Տվեց նրան ինչ որ ուներ, թե որպես գեղանկարիչ, թե որպես ճարտարապետ և թե որպես թարգմանիչ ու մտածող: Խևկ նրա ունեցածը՝ տաղանդը, աշխատասիրությունը ալնքան էին, որ պատիվ էին բերում ոչ միայն իր ժողովրդի մշակութին...

Սուրենյանցը որպես թատերաման գործիչ անմիջականորեն համեմտ եկավ և զգալի գործունեություն ծավալեց ուս իրականության մեջ: Նրա ժամանակի հայ թատրոնը խոշոր դերասանների կողքին ոչ հուսալի ոնժիշտուա ուներ

և ոչ էլ դեկորացիոն արվեստ: Ռուսական և գերմանական թատերական տեխնիկային քաջածանոթ Սուրենյանցի համար հայ բեմին ծառավելը շատ էր դժվար: Նա լսում էր Աղամյանի շռնդալից հաջողությունների մասին, տեսնում և գնահատում էր նրա մեծությունը, հպարտանում նրանով, թայց միաժամանակ ցւվում էր, որ նրա Համլետի, Օթելլոյի համար զգեստներ ևն պատվիրում արտասահմանում, որ Աղամյանի հման հանճարը հանդես է գալիս պատահական, երբեմն ողորմելի դեկորներով ձևավորված բնմահարթակներում:

Թատրոնի հետ կապվելու, թատրոնը էլությամբ սիրելու հարցում Աղամյանի մեծ անհատականությունը անշուշտ որոշակի ազդեցություն է գործել Վարդգես Սուրենյանցի վրա:

Անցյալ դարի 80-ական թվականները հայ ազգային թատրոնի աղամյանական շրջանն են կազմում: Աղամյանը իր շեքսափիրյան խաղացանկով ոչ միայն բևարդվեստում էր իշխում, այլև ազդում էր հայ հասարակական մտքի վրա: Նրա Համլետը գրեթե ողջ հայ մրտավորականության հիմքում ու հետաքրքրությունը շարժեց: Այս շրջանից սկսվեց Ծիրվանգաղենի և Թումանյանի կապը թատրոնի հետ: Այս ժամանակներում էլ հանդես եկավ Սուրենյանցը և ձևավորվեց թե իրունկարիչ, թե իրուն թատերական դեմք: Մյունիենի Գեղարվեստների ակադեմիայի ուսանող Սուրենյանցի Ծեքսափիրով հրապուրվելը և «Միջարդ Յ-րդ» թարգմանելը բոլորովին էլ պատահական չէին, ել չենք խոսում «Հուլիոս Կեսարի» մասին: Դրանք վերջին հաշվով թարգմանված էին Աղամյանի համար, նրա շեքսափիրյան խաղացանկը լրացնելու նպատակով, ու դրա շնորհիվ էր, որ Աղամյանը Պոլսից Սուրենյանցին խնդրում

Էր Ռիշարդի թեմական մեկնաբանության համար իրեն նյութեր հայթալիք են:

1888 թվականին Մոսկվայում կայացած հյուրախաղերի ժամանակ Աղամյանի և Սուրենյանցի թեուակա ծանոթությունը փոխվում է իսկական բարեկամության: Նկարիչը մոտիկից շփվելով հոչակավոր արտիստի թետ, ստեղծում է մի քանի ճեպանկար և մի լուղաներկ կոմպոզիցիա, որոնց թեման Աղամյանն ու նրա թեմական ստեղծագործություններն էին: Դրանք թեև գեղանկարչական առումով այժմ թույլ գործեր կարող են թվալ, բայց պրոֆեսիոնալ թատերական դիմանկարի առաջին նմուշներն են մեզանում, և շատ հաճելի է, որ կապվում են մեր ազգային դասական արվեստի երկու տիտանների թետ:

Աղամյանը Սուրենյանցին մղեց դեպի Շեքսպիր, Շեքսպիրը Սուրենյանցի առաջ քացեց թեմարվեստի անձայրածիր աշխարհը:

Կյանքի հանգամանքները թետագայում այնպէս դասպորվեցին Սուրենյանցի համար, որ նա եթե ուզենար է, այլև թատրոնից թեռու մնալ չէր կարող:

1899 թվականը ուշագրավ տարեթիվ էր Սուրենյանցի ստեղծագործական կյանքում: Այդ տարի նա ստեղծեց «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» կոմպոզիցիոն կտավը, որն իր դրամատիկական հագեցվածությամբ թատերական փայլում մի տեսարան է հիշեցնում, և նոյն ժամանակ էլ «Պետերբուրգի Մարիինյան օպերային թատրոնից՝ բայրոնական մոտիվներով ըստեղծված Օ. Աղանի «Ծովամթեմ» («Կորսար») բալետի ձևավորմանը մասնակցելու հրավեր ստացավ:

Այս կապակցությամբ ականավոր արվեստարան և ուժիսոր Նիկոլայ Եվրեինովը 1913-ին գրել է. «Ես երեք չեմ մոռանա նկարիչ Վ. Սուրենյանցի հուզիչ մի

պատմությունը: «Ծովահեն» բալետի ձևավորման նրա դերյուտն է: Մոտեցել է դեկորմերը թեմում տեղադրելու օրը: Խնչպես երկշոտ սկսնակ, Սուրենյանցը թաքնվում է օթյակի խորքում, լույսերի հարցը թողմելով տնօրինելու ոնժիսորին: Եվ ամա նա սուկահար, թամի վրա կեղտոտ, անտերունչ փալասմեր է տեսնում և չի Բավատում, որ դրանք իր ձեռքի գործն են: Հետևում են մի քանի տանջակի րոպե տևող բանակցություններ ոնժիսորի և լուսավորող վարպետի միջև: Ինչ որ սարքեր իջնում են, ինչ-որ հարմարանքներ բարձրանում, լուսավորության նոր կետեր են ավելանում և Սուրենյանցը բոլորովին այլ բան է տեսնում թեմի վրա: Ի՞նչ է դա իր ուզածն է, իր գովմերը, իր մտահղացումը: Բայց ոնժիսորը տակավին գոր չէ: Վերստին բանակցություններ, տեղափոխություններ և Բանկարծ դեկորմերը վերակենդանանում են, այնպիսի հիասքանչ տոնայնություն ձեռք բերում, որ Սուրենյանցը դարձյալ չի Բավատում, որ այդ դեկորմերը իր ձեռքի գործն են: Ի վերջո ուշքի գալով իր դեկորմերի պատճառած անակնկալ գեղեցկության հմայքից, նա արդեն երազում է այլ հնարավորություններ, մի այլ վեհաշունչ գեղեցկություն, միայն թե կանխավ իմանար լուսալին սարքավորումների, ուամպայի այդ կախարդանքի մասին»:

Այսպես տակավին անփորձ թեմանկարչի առաջին աշխատանքը ստեղծվեց կախարդանքի մթնոլորտում և կապվեց երաժշտական թատրոնի հետ: Սա ուշագրավ և օրինաչափական երևոյթ է: Զոր չեն անել, թե «Երփառագիրը աչքի երաժշտություն է»: Սուրենյանցի ոռու կոլեգաներից շատերը՝ Վ. Պոլենովը, Կ. Սավիցկին, Կ. Կորովինը, Վ. Մակովսկին, Վ. Սերովը ևս իրենց թեմական գործունեությունն սկսել և երկար տարիներ աշխատել են օպերային թատրոնում: Նույնը տեղի է ունեցել և

Բայ Ակարիչների հետ: Ե. Թադևոսյանը Ռեքիկովի «Տուածառ» ու Սեն-Սանսի «Սամսոն և Դալիլան» է ձևավորել, Մարտիրոս Սարյանը «Շնկի աքլորիկով» և «Աղմաստով» է սկսել իր թատերական գործունեությունը: «Սասունցի Դավիթ» օպերայի համար Հակոբ Կոջոյանի ստեղծած էսքիզները թատերական ձևավորման նրա միակ փորձն են եղել: «Ծովամեն» բալետային ներկայացումը, որի երկրորդ գործողությունն է ձևավորել Սուրենյանցը «Դավադիրներ» պարմանական անվանումով, Մարիինյան թատրոնի խաղացանկում ապրեց շուրջ քառասուն տարի, և Հայրենական մեծ պատերազմի արհավիրքները միայն վերջ դրեցին նրա բնմական կյանքին:

Ի՞նչ աշխատանք պետք է կատարված լիներ, ստեղծագործական ինչպիսի վառ մտարիացումներ ներդրվելին գործի մեջ, որ Մարիոս Պետիպայի դեկավարությամբ և Սուրենյանցի, Գ. Լամբինի ու Գ. Ալեքրիի դեկորներով բնմական կյանքի կոչված ներկայացումը ժամանակի բննությանը դիմանար:

Մի բան ակնհայտ է: Մարիինյան թատրոնը շնորհակալ է եղել Սուրենյանցից, այլապես երկու տարի անց նրան չեղ հանձնարարի Ա. Ռուբինշտենի «Ռև» օպերայի ձևավորումը: Եթե Ակարիչը նախորդ ներկայացման միայն մի գործողությունն էր ձևավորել, ապա այժմ նրան վստահեցին ամրող օպերան: «Բախչիսարայի շատրվանը» պոեմի սքանչելի Ակարազարդումը, Արևելքի և ընդհանրապես արևելյան մշակույթի քաջատեղյակ լինելը Սուրենյանցի շուրջն այնպիսի հեղինակություն էին ստեղծել, որ նրա հետ թատրոնը սկսում է հաշվի աստել, այն էլ Մարիինյանը, որ ամրող ցարական Ռուսաստանի կայսերական հովանավորությու-

Եից օգտվող սակավաթիվ թատրոններից մեկն էր և համախ դեկորները պատվիրում էր գերմանական արթեստանոցներում: Ամա թե ինչու Մարդինյան թատրոնում ձևավորում ստանալը պատվի գործ էր, այն կարող էր յուրաքանչյուր մեծ նկարչի նախանձը շարժել: Բացի այդ, «Դև» օպերան այդ թատրոնում երկու տարի առաջ արդեն թեմադրվել էր, և կարճ ժամանակից հետո նոր թեմադրությամբ ներկայացնելը և Սուրենյանցին հրավիրելը ավելի քան պարտավորեցնող ու պատվարոր առաջարկ էր: Պետք էր ստուգված, ճանաչված մարդ՝ գործը ըստ ամենալինի վերհանելու համար: Դա կարելի էր ձեռք թերեկ միայն թատերական արվեստի լայն իմացության, գեղարվեստական ինքնատիպ մտքի և համառ աշխատասիրության շնորհիվ, որ ուներ Սուրենյանցը: Ի դեպ, այդ օրերին Մկրտիչ Բարխուդարյանին ուղան նամակում նկարիչը գոել է. «Բառի բուն հշանակությամբ գիշեր-ցերեկ աշխատում էի թատրոնում... Վերջապես այդ էլ եղավ, գործից շատ գոჩ մնացին»: Տեղին է Բիշատակել, որ Սուրենյանցը մի շրջան ալնքան է տարված եղել թատրոնով, որ նույնիսկ ազդագրեր ու ներկայացումների ծրագրեր է ձևավորել: Հայտնի են, օրինակ, Էրմիտաժ թատրոնի համար նրա նկարազարդած ծրագրերը՝ «Ամուրի վրեժը», «Հոփմանի ներկայացները» ու առանձնապես «Մեֆիստոֆել» ներկայացումների համար: Վերջինին ձևավորման հեղինակը ուսւ հոչսուլավոր թատերական նկարիչ Ա. Գոլովինն էր:

Այսպիսով, թեմանկարիչ Սուրենյանցը, Ադամյանից հետո, ձևավորվում էր Մարդինյան թատրոնում, Պետիպայի, Գոլովինի նման խոշոր արվեստագետ-քարեկամ-ներով շրջապատված: Ամա թե ինչու, գնալով ավելի ու ավելի լայն շրջանակներ է ընդգրկում Սուրենյանցի թատերական գործունեությունը: Նրան սկսում են ճանա-

չել ու գնահատել ոչ միայն Պետերբուրգում, այլև Մոսկվայում:

Պերեղվիժնիկներից շատերն են կապված եղել թատրոնի, առանձնապես մուսկովյան թատրոնների մեջ: Սուրենյանցը այս հարցում ևս նրանց զինակիցը հանդիսացավ, գերադասելով, սակայն, Գեղարվեստական Բանրամատչելի թատրոնը: «Այստեղ ամեն ինչ այնքան հրապուրիչ է իր պարզ գնդեցկությամբ,—գրել է Շկարիչը,—...Այստեղ խաղը այնքան բնական է, որ թվում է, թե վերջին վարագույրը իշմելուց հետո դերակատարները չեն վերջացնում պիեսը, այլ գնում են շարունակելու ապրել այն կյանքը, որ թիշ առաջ ներկայացնում էին քեմի վրա...»:

Բնական է, որ Կ. Ստանիսլավսկու և Վլ. Նեմիրովիչ-Դանչենկոյի հրավերը նա պիտի ընդուներ սրտարաց: Նրան առաջարկում էին ձևավորել մետերիլներան «Կույրերը», «Անկոչը» և «Այնտեղ Շերտում» փոքրածավալ պիեսները, որոնք պետք է ներկայացվեին մի երեկոյում: Պահպանված են և այժմ ՄԽՍՀ-ի թանգարանում են գտնվում դրանց նախնական մակետները: Այդ գործերի ակնառու արժանիքն այն է, որ Շկարիչը կարողացել է միասնական կուր ոճի մեջ դիտել տարբեր պիեսների բնմական արտաքին կերպարը: Մի դեպքում դա թափուտ անտառ է՝ դարավոր կադաներով, մյուս դեպքում՝ միջնադարյան ամրոցի հարուստ կամավորված մի սրահ, և ապա երկարկանի մի դաստակերտ՝ ծառազարդ պարտեզով, որը ցուց է տրվում տարբեր դիտակներից: Երեքում էլ տիրապետող շագանակագույնն է, արևավառ, խանճված երանգը, որ առանձին մի խորհրդավորություն է տալիս գործողության ընթացքին, միաժամանակ, կարծես, ընդգծելով դեպքերի իսկությունը, մերուների նողեղեն լինելը: Թատ-

րոնց ծգտնլ էր Մեստերլինկի սիմվոլիկ գաղափարները Բանդիսականին հաղորդել առավելապես ուսալիստական մասներայով։ Այդ էր Աերկայացման ուժը, բնմադրողներ և Ատանիսլավսկու, Գ. Բուրջալովի և Ն. Ալեքսանդրովի ուժիսորական մեկնարանության ելակետը, և այդ գործում Սուրենյանցը հավատարիմ մնաց նրանց գաղափարական հղացումներին։

Նոյն 1904 թվականի ձմռանը Վ. Նեմիրովիչ-Դանչևնկոյի պատվերով և նրա ուժիսորական դեկավարությամբ Սուրենյանցը ձևավորեց Պ. Յարցևի «Վանքի մոտ» դրաման, իսկ մեկ տարի անց, Ն. Կոլուպանի հետ պատրաստեց չեխովյան «Ծայի» նոր բնմադրության դեկորները։ Այս վերջին համանարարությունը պիտի ենթադրել, Զեխովի խորհրդով է եղել, որովհետև, ինչպես Ստանիսլավսկին է պատմում իր մենուարներում, որում մեծ գրողը իր կյանքի վերջին ամիսներին, երբ բնմադրության էին պատրաստում Մետերիլինկի պիեսները, հետևողականորեն հետաքրքրվել է դրանց նախապատրաստական աշխատանքներով, այդ թվում նաև «Ծայի» ապագա դեկորներով և ընդհանրապես արտաքին ձևավորմամբ։

Ինարկե, Սուրենյանցի դեկորատիվ գեղանկարչությունը այս աշխարհաբառչակ թատրոնում չէր կարող հավասարազոր հաջողություն գտնել։ Եթե մետերլինկյան պիեսների ներկայացումը բուռն վեճեր առաջ բերեց, ապա «Վանքի մոտ» և «Ծայ» ներկայացումները ջերմ ընդունելություն չգտան։ Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ Գեղարվեստական թատրոնը դեռևս որոնումների շրջան էր ապրում. որոնումների մեջ էին ոչ միայն նրա մեծանուն դեկավարները, այլև այն նկարիչները, որոնք ապրում էին թատրոնի առեղծագործական հոգուներով։

Նա շփում ուներ Ա. Զեխովի, Կ. Ստանիսլավսկու, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի, Վ. Կաչալովի, Ի. Մուկվիչի, Օ. Կըհպեր-Չեխովայի, Լ. Լեռնիդովի մետ, և նրանց մետ կիսում էր այդ մեծ թատրոնի բոգմերը: Հիշյալ ուժերը մասնակցում էին այն քեմադրություններին, որոնց ձևավորման մեջինակը Սուրենյանցն էր:

Հետագա տարիները ավելի տարածեցին նրա քեմական մեջինակությունը: Պետերուրուգում, երբ Վ. Կոմիտարժևսկայան ո Վ. Սեյերխուղիդը իրենց Դրամատիկական թատրոնը հիմնադրեցին (1906—1908), Սուրենյանցը այս գործի ակտով մասնակիցներից էր: Ժամանակի ճշանակոր թատրոնական Ակադեմիան Ա. Բենուայի, Ն. Սապունովի, Վ. Դորուժինակու, Ս. Սուդելկինի և ուրիշների մետ, որոնց ի մի էր հավաքել Մեյերխուղիդը, Սուրենյանցը ևս անձնատուր եղավ թատրոնի ստեղծագործական եռուն աշխատանքներին: Սուայժը մնաց հայտնի է միայն Հ. Ճերոբրդի «Սիրո ողբերգություն» դրամայի ձևավորումը (1907), որ Սուրենյանցը կատարել էր մեյերխուղիյան ռեժիսուրայի պահանջների ամաձայն: Այսքանը*: Մնացածը, ինչպես համախ Մեյերխուղի արվեստի շուրջն է տեղի ունեցել, վեճերի ու վիճարանության, ժխտման կամ թերագնահատման մշուշով է պատված: Նղած կցկտուր նյութերից դատելով, մի քանի ակներև է. Սուրենյանցը այստեղ ևս կանգնած է եղել ժամանակի քեմարվեստի նոր, առողջ միտումները պաշտպանողի դիրքերում, և եթե

* 1900-ին դրատարակված Վ. Ճարությունյանի «Վարդեն Սուրենյանց» աշխատության մեջ Ակարչին է վերագրված «Հեղինա Գարլերի» ձևավորումը, ինչպես և Մարիինան թատրոնում քեմադրված «Զիգֆրիդ» օպերան, որը իրականությանը չի համապատասխանում:

որոշ հարցերում էլ վրիպել է, ապա այդ ոչ միայն իր, այլև ժամանակի վրիպումն էր: Եթե Մեյերխոլդի և Առյանիսկ Ստանիսլավսկու համար շնորհմանը նղել են անխուսափելի, ապա Սուրենյանցի վրիպումները, անշուշտ, չպետք է դատապարտել: Դարասկզբի ոռուսական թատրոնի պատմության էջերը լեցուն են այդ էրապերիմնաների տարօրինակ գնահատությամբ: Եվ առողջ քննադատական ռեալիզմ կար, և նատուրալիզմ, և սիմվոլիզմ, և ձևապաշտության առանձին դրսնորումներ և ամենուր նկարիչը ակտիվ դեր էր խաղում:

Այսպես. Սուրենյանցը հանդես եկավ միմյանցից շատ տարրեր երեք՝ Մարիինյան, ՄԽՍ. Մելերխոլդի թատրոններում: Մեկը շքեղ ու փարթամ, վառ ու ճոխ հանդիսանքի, Բայուցների թագավորության և երգի սրան էր, մյուսը՝ հոգեբանական նրբերանգների ու սոցիալական մեծ ընդհանրացումների օջախ, իսկ երրորդը՝ սուր ձևերի, անվերջ նորին, ու միայն նորադարության ձգտող թատրոն: Ու, այնուամենայնիվ, Սուրենյանցը այս երեք թատրոններին էլ սիրահոժար ծառայեց, լիովին բավարարելով այդ թատրոնների զարգացման տվյալ էտապում առաջադրած ստեղծագործական պահանջները:

Որ թատրոնին ի՞նչ տվեց Սուրենյանցը:

Մարիինյան թատրոնը նրա արվեստում եղած արեւլեյան մոտիվների շքեղ ու ճշգրիտ դրսնորման տաղանդի կարիքն ուներ: Այդ հարցում Սուրենյանցին այն ժամանակ փոխարինելը շատ էր դժվար:

ՄԽՍ-ը իր գոյության առաջին տասնամյակում, պատմությունից հայտնի է, ինչ որ չափով գտնվելիս է նղեն Մեյերխոլդներյան թատրոնի ազդեցության տակ: Դեկորների վրա աշխատելու այն մանրակրկիտ ու բաղմակողմանի սերը, նոյնիսկ կահավորման լուրաքան-

շուր մանրամասնի մշակման բացահայտ այն միտումը, որ կա մետերլինկյան ներկայացումների մակետներում, շատ են միշտցնում Մելճինգենյան թատրոնի ձևավորման ոճը: Սուրենյանցը, որ վեց տարի սովորել էր Մյունիստում, շփվել գերմանական արվեստի մետ՝ ՄԽՍԱՏ-ի այդ էտապի համար շատ կարևոր դեմք էր: Ամենայն հավանականությամբ Սուրենյանց-Շկարչի մեջ Կ. Ստանիսլավսկին ու Վ. Նեմիրովիչ-Դամչենկոն մկանու էին այդ. մի առավելություն, որով Սուրենյանցը տարբերվում էր ժամանակի ուսու շատ բեմանկարիչներից:

Վերջապես, երրորդ դեպքում: Ուսանող եղած ժամանակ Սուրենյանցը մոտիկից շփվել էր Մյունիստումի Քյունտուներ թատրոնի մետ, այն թատրոնի, որի արվեստով Վ. Կոմիսարժենկայացի մետ իր թատրոնը հիմնադրելու ժամանակ տարված էր Մեյերխուլդը: Դա մի թատրոն էր, ուր արտիստները հանդես եին գալիս հարր, խորությունից զորկ դեկորների առջև, ավելի անմիջական կերպով շփվում հանդիականի մետ: Եթեն ծանոթանանք Սուրենյանցի «Սիրո ողբերգություն» դրամայի ձևավորման այժմ պահպանված միակ էսքիզին, որը կատարված է Մեյերխուլդի թատրոնի համար, ապա դրան բոլորովին էլ դժվար չէ համոզվելը: Մեյերխուլդը ըստ երևոյթին լավ է ճանաչել Սուրենյանցին:

Երեք թատրոններին ել Սուրենյանցը տվել է այն, ինչ իրեցն էր, ինչին ընդունակ էր, այն, ինչ խոսում էր ժամանակի բեմարվեստի մետ: Փաստերը ցուց են տալիս, որ Սուրենյանց-բեմանկարիչը հավատարիմ է մնացել ժամանակի թատերական ոգուն, նրա սկզբունքներին:

Պիտի ափսոսալ, սակայն, որ Սուրենյանց-բեմանկարչի գործունեության ոլորտները սահմանափակվեցին միայն մուկովյան և պետերրության թատրոնների մասին .

րով. Մինչդեռ Բայ թեմը ինչքա՞ն կարիք ուներ Սուրենցի Անման Շկարչի:

Չի կարելի ասել, թե Սուրենյանցը կտրված է եղել Բայ թատերական կյանքից, կամ թե նրա կապը Բայ թեմի գործիշների հետ մնացել է Սոյամյանի մտերմության շրջանակներում: Դա միայ կիմեր: Դեռևս 80-ական թվականներին Սուրենյանցը Գևորգ Պետրոսյանի հանձնարարությամբ մասնակցել է Մոսկվայում գործող Բայկական մի շարք օջախների մշակութային կյանքին, իսկ դրանից շուրջ երեսուն տարի անց, սերտ կապերի մեջ էր Ա. Սպենդիարյանի, Օ. Ալումյանի և Արամ Վրույրի հետ: Նրանց հանդիպումների ու նամակագրության ըլլութը Բայ ազգային օպերայի ստեղծման, շեքսափիրյան նոր նրկերով Բայ թեմի խաղացանկը հարստացնելու, թատերական գրականության թարգմանությանը զարկ տալու մտահոգությունն էր: Օվի Ալումյանին գրած մի նամակում, օրինակ, նա առաջարկուա է թեմադրել իր թարգմանած «Հուլիոս Կեսարը»:

Հատկապես պատմական թեմատիկա շոշափող նրա կտավները մեծ դեր են խաղացել սովետական շրջանի Բայ թատրոնի համար: Հ. Կոջոյանը հավաստում է, որ Վախթանգովը Վլադիկավկազում «տեսել և սիրել էր Սուրենյանցի գործերը»: Ազգային ճարտարապետական արժեքների ուսումնասիրության, նրանց դեկորատիվ վերարտադրության խնդրում, ո՞վ կարող է վիճել, որ Սուրենյանցը չի նպաստել ասենք Մ. Սվախչյանի «Երկիր Բայրենի» և «Արա Գեղեցիկ», Վ. Շերիչևի «Գուշ», Արա Սարգսյանի «Գևորգ Մարգարուսինի», Մարտիրոս Սարյանի «Ալմաստ» և շատ այլ ուրիշ ձևավորումներին: Նրանց բոլորին Սուրենյանցն է «պատրաստի նյութ»:

Բայթայթել «Անիի կանայք», «Զարել թագումու վերադարձը», «Խաչվերաց ճախատոնակ էջմիածնի վանքում», «Պղծված սրբություն», «Ծամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» և այլ կտավներով։ Ծարտարապետությունը թատրոն մերմուծելու հարցում Սուրենյանցի պատմական թեմատիկայով կտավներն, ամպաւկած, մեծ դեր են խաղացել Բայ թեմանկարչության զարգացման հետագա ճանապարհին։ Աղամյանի հետ շեքըսպիրյան մերուների թեմաներով էր խոսում, պատմում Ռիշարդ Նրբորդի և Հովհոս Կեսարի մասին, իսկ իրենցից հետո եկող Ակարիչներին ավանդում ազգային արժեքների միման վյա տոեղծել նորը։

Սուրենյանց թեմանկարիչը տակավին լուրջ ու մետաքննին ուսումնասիրության կարու է։ Ծատ փաստեր ու մանրամասնություններ կան, որ այսօր անհայտ նն, կճշտվեն շատ երևույթներ, որոնք այսօր թվում են մշուշապատ։

Ծամանակը կճշտի նրա տեղն ու դերը ոչ միայն Բայ ազգային, այլև ընդհանուր թեմանկարչության պատմության մեջ։

Վ. Սուրենյանցի ծննդյան 100-ամյակի մորելյանական համեստում կարդացած Բարակից զնկուցման տեքստ։

7.06.1980.

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԳԱՆԻ ՀԵՏ

1. ՄԵՐ ՆԱՀԱՊԵՏԸ

«Մոլեգին Սարյան»—այսպես է նրան անվանել սկանավոր Բրապարակախոս-արձակագիր Լրենքուրգը, ու թերևս դա ամենադիպուկ արտահայտությունն է Սարտիրոս Սարյանի շուրջ 70-ամյա ստեղծագործական ուղին բնորոշելու համար: Եվ ոչ մի հայ արվեստագետ չի ունեցել այդքան հարատևող, այդքան բազմաթերուն, այդքան հետևողական, համբերատար ու աննկուն, գեղարվեստին նվիրված կյանք, ինչպես մեր ծերունազարդ ճահապետը: Խստապահանջ կամք, կրքու խոյանքներ, համառ ու անսպառ ձգտում՝ հանուն իր ակզրունքների ու մեծ գաղափարի—այդպիսին է եղել Սարյանը իր գործունեության բովանդակ շրջանում, թե այն տարիներին, երբ դեռևս պատահի, Նոր-Նախիջևանից մեկնեց Սոսկվա ուսանելու, և թե այն ժամանակ, երբ մասնակցեց Վենետիկի ու Փարիզի համաշխարհային ցուցահանդեսներին, ամենուր ճանաչվելով որ-

պես ժամանակակից գեղանկարչության ամենակարևորությունը դեմքերից մեկը:

Սարյանն արդեն աշխարհի տեսած արվեստագետ էր, շրջել էր Մերձավոր Արևելքի երկրները, շփվել 20-րդ դարի ճշանավոր դեմքերի մետ, նրան մեծարում էին որպես Ռուսաստանի ամենաօժտված մարդկանցից մեկին, երբ ընդմիշտ փոխադրվեց Հայաստան՝ ազատագրված իր ժողովրդին ծառայելու:

Կյանքի ճամփերին դեգերող Սարյանի քարավանն այստեղ կանգ առավ՝ Բայրենական տան լուսավոր եզերքին: Նա, ով իր կտավներում հաճախ էր պատկերում տոթակեզ անապատներ, գազազած շներ, կատաղի բորենիներ, իր ստեղծագործության նյութը դարձրեց Սևանի կակաչները, ծաղկող դեղնամին, երկնասլաց բարդիներն ու կանաչին տվող Արարատյան հովիտը: Նա եկավ գեղանկարչի հոր լեզվով փառաբանելու նոր ժամանակների մարդուն: Սարյանի կախարդական վրձնազարկով կյանքն ընկալվեց, կյանքը դարձավ խաղողահավաք, լեռները՝ Հայաստան, Հայաստան՝ արևի երկիր: Աշտարակի հիմավորոց կամուրջն ընկրկեց Սևանի կասկադի առաջ, Լոռվա մթին ձորերը լաղվարում վառվեցին դեղնարոսոր կրակներով, Արարատը Դվինից երևաց նոր ու անկրկնելի գեղեցկությամբ, երկրների լուսն իջավ Բյուրականի լանջերին, իսկ Բյուրականը երկինք խոյացավ...

Սարյանը փաստորեն Բայտնագործնեց Հայաստան-երկիր գեղանկարչական կերպարը, երբեմն ընդվզելով նույնիսկ լեռներյան անհայտ սահմանների դեմ, հանգչող արևն էր փորձում եւս վերադարձնել, դարերով Բամբ լեռներին լեզու էր տալիս: Պատահական չէ, որ նրա ստեղծագործություններում լեռնային բնանկարը մեծ տեղ ունի: Լեռները Սարյանի երփնագրալին արվեստում

դրսմորվում են շնչավորված, մարդկալին հոգեքանությամբ: Նրանք կարծես խոսում են, ծառս լինում երկնքի դեմ: Ըմբուտ ոգի կա Սարյանի լեռնաշխարհում՝ Բաստատ ու Բամատ բրգածն ապառաժների մեջ, քարակոփ պահակախմբերի, որոնք թվում է հսկում են Բալրենիքի ապահովությունը ոսոխի ոտնձգություններից:

Ամիա թե ինչու օտարերը Հայաստանը ճանաչում են Սարյանի կտավներով և Շկարչին մեծարում երա արվեստի մեջ տեսնելով ամրող մի երկրի հարազատ Շկարագիրը: Կարծես անհնար է Հայաստանը ճանաշել առանց Սարյանի: Վիկտոր Համբարձումյանը, Սարյանին նվիրած գրքին մակագրել է. «Մեսրոպ Մաշտոցը գրեր ստեղծեց, որ Բայր կարդա ու Բասկանա Բային, Դուք էլ Զեր գրերն ստեղծեցիք, որ ամրող աշխարհը կարդա ու Բասկանա մեր բնությունն ու ոգին»:

Կերպարվեստի որ բնագավառում էլ լինի՝ գունանկարչություն, գրաֆիկա, թատերական դեկորանկար՝ Սարյանը մնում է միշտ իր Բալրենի լեռների մետ, մի դեպքում վերապատկերելով Մանթաշի զմրուխտ լանջերը, մյուս դեպքում փոխադրվելով Սյունյաց աշխարհ, ապա Թմկաբների անառիկ ամրոցը: Ամեն ինչ է մարդկայնացված Շկարչի մոտ, թե ամրոց ու ավերակ, թե լեռնաշուշան ու շինար: Երբ Սարյանի կտավներում մարդ չեք տեսնում, միևնույն է, նա առկա է խորագին մարդու աշքերով դիտված բնության մեջ: Սարյանի բնանկարներին մեծ հմայք են տալիս արվեստագետի մտորումները, մարդկային սրտի ջերմությունը: Նույնը և երա դիմանկարներում: Գլխավորը Շկարչի Բամար դիմագծերի ճշգրտությունը չէ, այլ մարդու և բնության, մարդու և Բասարակական շրջապատի փոխհարաբերության խնդիրը: Բնության զավակները՝ տարերապին կերպարանքով—այսպես են ընկալվում երա դիմանկարնե-

րից շատերը, այդ թվում Թորոս Թորամանյանը, Հովհաննիկ Օրբելին, Մանուկ Աքեղյանը, Հրաչյա Ներսիսյանը...

Սարյանը ստեղծագործում է բաց երկնքի տակ և նվիրական մարդկանց շրջապատում: Հայրենի բնաշխարհը մի կողմից է նրան ոգեշնչել ու ոգեշնչում, մեծ հայրենակիցները՝ մյուս: Նա դեմադիեմ նատել է Խանակյանի ու Տերյանի, Չարենցի ու Մյասնիկյանի, Սպենդիարյանի ու Խաչատրյանի, Բաղրամյանի ու Խսակովի, Թամանյանի ու Վիկտոր Համբարձումյանի կողքին, որոնք հարստացրել են Սարյանի հոգեկան աշխարհը, նրան ավելի կապել ժամանակաշրջանի հետ:

Սարյանն այսօր համաշխարհային ճանաչում ունի: Նրան գիտեն և գնահատում են ամենուր՝ ամերիկյան գրողն ու չին նկարիչը, ուկրաինացի ֆիզիկոսն ու վրաց գիտնականը, ոուս կոմպոզիտորն ու ֆրանսիացի բանաստեղը, ադրբեջանցի նավթագործն ու օսկե դերասանը: Անցյալ տարի Մոսկվայում բացված՝ Սարյանի անհատական ցուցահանդեսի տպավորությունների գրքում շատ ուշագրավ մի էջ կա: «Հրճվում եմ, ուզում եմ փառաքանչել իմ ժողովրդին, ինչպես դուք», —ստորագրված է՝ Մոնղոլիա: «Միանում եմ» — հետևում է նոր ստորագրություն՝ Ղազախստան, «Ես եմ եմ միանում»՝ Կիրգիզիա, «Ես նույնպես»՝ Տաջիկստան, «Ես եմ» — թերություն: «Միանում ենք և մենք» — Բիելա ուսանողների մի խումբ՝ Բիրորիշան:

Վերջերս Լայպցիգից գունավոր մի նկար-բացիկ ստացվեց. վրան գրված էր՝ «Սարյան—Լալվար»: Սարյանի ազդեցության ու հրապույրների շրջանակները գնալով մեծանում են: Այդպես է խոշոր արվեստագետի համբավը՝ կտրում է աշխարհագրական սահմանները,

անցնում երկրեւ-երկիր, դառնում համամարդկային մնածություն:

Անվանի վարպնտը բոլորնց ութսունթինգ տարին։
Բայց ինչ նշանակություն ունի այդ, երբ նա անձեռակերտ մի կոթողի հասակակիցն է՝ Բին-անեցի։ «Հազար տարի է անցել մեր մայրաքաղաքի Բիննադրման օրից, — ասում է Սարլամը, — և ինձ թվում է, թե նև այդ քաղաքի բնակիչնեմ։ Անցնում եմ Երա փողոցներով, զրուցում երա բնակիչների նետ, լսում եմ եկեղեցիների, տաճարների դողանջները»։

Ի՞նչ բան է ութսունթինգ տարին մի արվեստագետի համար, որն անցավոր ժամանակի հպատակը չէ, այլ՝ հազարամյա Անիի քաղաքացին...»

1965

...Երկիրը լայն բացեց իր դռները, և շատերը եկան
Տում՝ վերածնունդը հավերժացմելու: Դրանց մեջ էլ՝
արվեստի մարդիկ: Յուրաքանչյուրը ոգեշնչված էր ապ-
րելու նոր կյանքով, իսկ հայրենի եր-
կիրը դեռ ավեր էր: Եկան վերաշինելու:
Եկան, որ ստեղծագործեն: Մեկն իր
ժողովրդին պարզեց «Ալմաստ» օպե-
րան, մյուսը՝ հոյակապ շինության մի
նախագիծ, որ այդ նույն ժողովրդի ե-
րաժշտության տունն էր լինելու: Սար-
յանն էլ, իր տարերքի մեջ՝ փլատակնե-
րի հետ հաշտվել չկարողացավ, շտա-
պեց կտավին հանձնելու իր նոր մտա-
հղացումը՝ ոսկեմանդերք մի երկիր, ա-
վելի վաղ, քան կյանքի պիտի կոչեր
գալիք օրը:

Կտավ, անունն էլ՝ «Հայաստան»:
Ժամանակամիջոց հայ գեղանկարչության
մեջ այդ կտավին հաստուկ տեղ պիտի
վերապահել, իսկ մեղինակի բազմա-
կշիռ ստեղծագործական կյանքում ևան
շրջադարձապիտին:

Մինչ այդ, Հայաստանը, Սարյանի երփմագրային լեզվի մեջ, ըստ էության դեռ չարտացոլված, Բոգևոր պատկերացում էր: Թուրքիա, Եգիպտոս և Իրան կատարած ճամփորդությունների ժամանակ նա որպես Շկարիշ յուրացրել էր Արևելքը, իսկ այժմ կանգնած էր Արևելքի և Արևմուտքի կամքրին՝ ազատագրված Հայրենիքում: Իրականության ճշմարիտ գգացողությունը նպաստեց գեղարվեստական մտքի բարձրության հասցնելու վաղեմի երազանքը:

«Հայաստանը» ծնվեց Վարագույրից: Բեմն է այդ պատմական կտավի ակունքը: Եվ ոչ պատահարար: Քսանական թվականների թատրոնը, սովետական իրականության մեջ ընդհանրապես, ամենաժողովրդական ու թերևս ամենազորեղ արվեստն էր: Սարյանն իր առաջին խոշոր գործը նախ կախեց Սոտաշին պետթատրոնում, այն ժամանակվա միակ գեղարվեստական հաստատության բնմի ճակատից, որ բոլորը տեսնեն, շարունակ աշքի առաջ լինի: Իր լուծման բնույթով դա այնպիսի հայտնագործություն էր, որ ոնժիստրոնների խոստովանությամբ՝ բեմարվեստին տալիս էր լեռնային նկը և առնական գեղեցկություն: Հանդիսականը, տեղում նատած, ասես, երկնային թոփշքի էր նախապատրաստվում:

Իրոք որ թոփշք, Վիթիսարի ուստումն: Լեռները ծառու եղած երկնքի, արևի առջև և մարդիկ՝ լեռնագագաթներին մոտիկ: Ցից ապառաժների, հրակեզ լեռների գըրկում, ծերպերից հորդացող վտակի հարևանությամբ, գյուղական խճիթի տանիքին շուրջապար են բռնել մի խումբ կանայք: Նրանց անզուսպ հրճվանքից, ասես, զբնօրում է Հայաստան աշխարհը: Դարերով կաշկանդված ու հիմա ազատ մարդն է միայն ընդունակ այդպես հրճվելու, զգալու բարձրության բերկրանքը:

Վարագույրը դարաշրջանի խուցած արտահայտու-

թունն էր, ժողովրդական հույզերի գումանկարչական-ընդհանրացնող պատկերը՝ դրամատիկական ոիլթի, դինամիկայի մեջ առնված: Այստեղ և ազնիվ ներշնչանք կար, և ներուսականության ոգի, և արտատվոր թատերայնություն: Կրքերը՝ Բախուտն, կամքի դրամորումները տարրալուծվում էին բնապատկերի մեջ, կամ, արտացոլված բնության հետ, ներգործում դիտողի վրա: Երկու պլան՝ մեկը գործուն, մյուսը՝ պալմանական անշարժության մեջ: Պարող գեղջուկները զգում են, ավելի շուտ՝ զգալ են տալիս Բանդիսականի ներկայությունը: Նրանք շուրջպար են բռնել ոչ միայն իրար հետ, այլև բնության:

Այս անխոս շփման մեջ անգամ դրամորվում էր Բաղրամակած ժողովրդի ցնծալի տրամադրությունը: Կենցաղի կամ կենցաղայնության շեշտ անհնար է գտնել: Այն բարձունքից, որ նայում է Սարյանը, լոկ անամազ երկինք ու լեռների շողարձակ կատարներ են երևում: Ոչ մի մանրութ, ոչ մի մանրամասն: Այդ պարն էլ բռննշափ շարժման մեջ զրկվում էր կենցաղայնության նեղ ըմբռնումից: Այս ամենի շնորհիվ բնմական գործողությունները ստանում էին մոնումենտալ բնույթ: Խենթացած առու, կանգուն մնացած վանքի ուրվագիծ ու կենտրոնում անառիկ մի ամրոց՝ ձայնակցում էին բեմում կատարվող անցուղարձին: Թվում էր, թե մեծացավ, ընդարձակվեց երկիրն Հայոց՝ լեռնանկարի ուժով ծավալված փոքր դամբինի մեջ: Միշտ մեծ է Բայրենի տունը, Բայրենիքը՝ հզոր ու անպարփակ. սա էր նկարչի Բայրենասիրական դասը:

Սարյանը բերում էր բնության գեղեցկության նոր ընկալումներ, յուրովի անդրադառնում մարդու և բնության փոխմարքերությանը, նրանց ներդաշնակության Բարցին: Հայրենի լեռնաշխարհը, թերևս, առաջին անգամ Բայրապարվեստում ստացավ վիլիսոփիայական Բա-

տուկ շնչտ և խորապես ազգային նկարագիր: Վահրամ Փափազյանը, Վարագովը տպավորության տակ, «Ավագակներ» ներկայացման առիթով գրել է: «...Եղան ոռպեններ, որ այդ ոչ Բայ Բեղինակը, որին լսում էի, ինձ թվաց, որ ոչ միայն խոսում, այլև մտածում է Բայերնն»:

Այսպես, շուրջ մեկ տասնամյակ այդ նրաշք Վարագովը կախված էր Բանդիսականի և բնմի միջև: Ակսում և առվարտուան եղանակությունները՝ «Զրատուզգ գանգն» ու «Բնեկումը», «Օթևալոն» ու «Խաթարաբան», «Յատումն» ու «Քաջ Նազարը», «Եկամտավոր պաշտոնը» և, վերջապես, լուսցիների ապստամբությունն ազդարարող «Օղակում» դրաննան: Եվ բոլորի մետ ընդհանուր լեզու էր գտնում, բացատրվում էր:

Սակայն այդ բազմարարաց Վարագովը պիտի դառնար պանոն, պիտի դառնար «Հայաստան», որ աշխարհ շրջեր: Դա տեղի ունեցավ արագ, նույն՝ 1923 թվականին: Հորիզոնական ծավալն ընդունեց ուղղահայաց դիրք, չափերը անհամեմատ փոքրացան: Լեռներն իրար փաթաթվեցին ու թեև Վարագովից եկող թատերական մեծ տպավորությունը չկար, այնուամենայնիվ, հաստոցային գեղանկարչության երկը պահպանեց մոնումենտալ ոգին: Չէ որ նկարիչը առաջին պահ անընդգրկելի թվացող ամրող մի երկիր էր ընդգրկելով պաստառի վրա՝ Հայաստան երկրի համայնապատկերը:

Դարձյալ նույն տպավորությունը՝ Բակայական լեռնաշյան երկինք խոյանալիս: Ոչ մի մութ անկյուն, ոչ մի ստվեր: Ամեն ինչ համատարած ու հավասար լուսավորված: Թվում է, թե լույսի աղբյուրը մենց այդ լեռներն են: Սարյանն այստեղ ազատվեց «կոմպրոմիսային կիսատոներից»: Ընդհանրապես մնշեղ դեկորատիվ գե-

դանկարչությունը իր տեղը գիշեց կոնկրետ, խոտուն կոմպոզիցիային և ձեռք բերեց մտքի առնական գեղեցկություն և առավել մատչելի ոճ:

Սարյանի բազմաժանր ստեղծագործության և ոչ մի ոլորտում կյանքի ուժը այնքան մեծ խափով իրեն զգալ չի տալիս, որքան նրա լեռնանկարների մեջ:

Հայրենի եզերը, հայրենի լեռներ, որ մարմնավորում են ազատության գաղափար, կոռում մարդու կամքըն ու ամպարտելիության գիտակցությունը: Լեռների գեղանկարչական կազմակերպումը խորհրդանշում էր Բոգեկան ուժերի կազմակերպում: «Հայաստանը» լեռների անխախտ ճարտարագիտություն է, հավատամք: Սարյանն այդ կտավի վրա աշխատելիս մի անգամ ընդմիջու գտավ հայոց լեռների համակարգը, նրա գեղանկարչական լեզուն: Ամա թե ինչու նրա ստվարաթիվ բնանկարների մեջ լեռներն ամենից գերակշռողն են և խորիմաստղ:

Այսպես, սովետական շրջանում ստեղծված Սարյանի մեծ գործը (որ երկու էական տարրերակ ունի) ամենաբռորդը եղավ նրա արվեստի գաղափարական բովանդակությունը բացահայտելու տեսակետից: Վարագույրը նետագալում վերականգնվեց և կենսունակ կախված է Երևանի պատկերասրամում, իսկ «Հայաստանը» շրջեց համամիութենական և միջազգային ցուցահանդեսներով մեկ. Բիմա էլ Բամախ երթի է դուրս գալիս:

Ժամանակի ընթացքում բազմիցս փոխվեց նրա արտաքին նկարագիծը, չափերը, տեխնիկան, գործը նորանոր տարրերակներ ունեցավ: «Հայկական լեռնապար» անունով դրոշմվեց կոմպոզիտորների տան դամբանում, զարդարեց Կոմիտասի ակադեմիական հրատարակության հատորները, որպես նորանկար բարձրացավ սունդուկյանցիների նորակառուց շնչափի ճեմարան,

գնաց Ս. Կապուտիկյանի «Բալլող քարավանների» առջևից: Անցավ Բանդեսից Բանդես, զետնղվեց արվեստաբանական անթիվ գրքերի և դասագրքերի մեջ, դարձավ քրեստոմատիհական երևոյթ:

Պատմական կտավ, անհանգիստ ուղի: Եվ բազում «Հայաստաններից» ոչ մեկը «կոնկրետ» իրականությունից չի առնված, այլ ընդհանրացնում է բոլոր Բայկական բնամկարների վեհապամճ կերպարը, որին անդրադառնում է մեր Նահապետը ժամանակ առ ժամանակ, միշտ գույն գերագույն Բավատով:

Դա սրբազն թեմա է, Բամակող գաղափար: Նրանցից անհնար է Բնուանալը: Սփյուռքում ապրող մարդն էլ դրա մեջ գտնում է Բոգնոր մի Բայրեննիք: 1924 թվականին, երբ Բայ Ռկարիչները առաջին անգամ Բանդես եկան Վենետիկի միջազգային ցուցահանդեսում, սովորական տաղավարի այցելուն աչքը չէր կտրում այդ կտավից: Այցելուների մեջ էլ՝ Բայրենակարուտ Բայեր:

— Սա Արմենիան է, մեր Հայաստանը, մե՞նք,—բացականչում էին նրանք:

Այո, դա Հայաստանն է, իր մեջ ամփոփած լեռների կանչող ձալնը, լեռների վսեմ խորհուրդը:

8. ԹԱՏՐՈՆԻ ՏԵՂԸՆՐԱ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Նրբ Բարցմում էիր Մարտիրոս Սարյանին, թե թատրոնն ի՞նչ տեղ է գրավում իր ստեղծագործության մեջ, մի պահ ժպիտն անհետանում էր դեմքից, դառնում էր յուրովի անհաղորդ: Ի՞նչն էր պատճառը. թերևս այն, որ Սարյանը, լինելով ստեղծագործական վար անհատականություն, գեղագիտական աներեք սկզբունքների մարդ, չեր կարողանում Բաշտվել մի ուրիշ արվեստագետի գործուն միջամտության հետ: Նրան պետք էր Բամկանալ և ընդունել այնպես անվերապահ, ինչպես ժամանակին Բամկացալ և ընդունեց Ստամիսլավսկին, երբ նրանք Բամատեղ աշխատում էին «Ռուսի աքրորիկ» օպերայի բեմադրության վիա: Դա նրա առաջին գործն էր թատրոնում, որ պսակվեց լիարժեք Բայյթանակով: Նա Բնարավորություն ունեցավ ըստ ամենայնի և մասնագիտական բարձր մակարդակով Բայրոդակցւել բեմարվեստի գաղտնիքներին:

Նյութն ավելի քան հրապուրիշ էր՝ ներիաթային Արևներ, Բիմն արևին, լուսի փառարանություն։ Մարդկային երջանկության և ազատության երազանքը բախվում էր խավարի թագավորության հետ։ «Լուստանուին Սերգենիչը, —գրվել է ժամանակի մամուլում, —որը երբեք չէր վախնենում ամենաարտասովոր դեկորներից անգամ, միայն թե դրանք երկի ոգին բացահայտեին, Բիացած էր և հայտարարեց՝ թատրոնի բոլոր աշխատանքները պետք է ներարկել սարյանական մտահղացմանը»։

Այսպես Բաղրական, այսպես արտասովոր սկսվեց Սարյանի թատերական գործը 30-ական թվականներին և այդպես էլ շարունակվեց։ Այդ տարիներին նա այնքան էր տարված թատրոնով, որ մեկ-մեկ բեմական ձևավորման առանձին էսքիզներ ու գծանկարներ գրեթե նույնությամբ օգտագործում էր գրքարվեստում։ «Ռոստամ և Զոհրա» գրքի ֆորգացի վրա երևաց Շամախինյան թագուհու վրանի էսքիզը, իսկ Բայկական ներիաթների մեջ «Քաջ Նազարից» կտորներ օգտագործվեցին։ Նույնիսկ չարենցյան «Երկիր Նահրի» վեպի նկարազարդումների մեջ «Սարյանի թատրոնն» իրեն զգալ էր տալիս։

Երևանի օպերային թատրոնում «Քաջ Նազարից» անդրադառնալիս Սարյանի արվեստում երևացին գծեր, որ մինչ այդ դժվար էր որսալ Ծրա հաստոցային կտավների վրա՝ սոցիալական ծաղրի ու մերկացման գիծը։ Դա երևաց նախ դեկորանկարներում և ապա՝ զգեստների լուծման մեջ։ Նազարի պալատը արքունի զինսահշաններով էր ողողված. բախտախնդիր են բոլոր միապետները։ Գործող անձանց ևս պատկերել էր զավեշտալի իրավիճակում։ Տիրացու և տերտեր, իշխան և թամադա, ավանակին նեծած զինվորներ և շուրջպար բըռ-

նած պարզաշենցի կանայք: Սա միակ դեպքն էր, որ Սարյանը թեմական մի հարկի տակ պատկերեց գեղշկական Շիստուկաց և հայ գյուղի կենցաղային մանրամասներ, բայց բոլորը՝ գունանկարի այն ինքնատիպ դրոշմով, որ հատուկ է միայն Սարյանին: Իսկ հայրենի բնությունը, որ առկա է գրեթե նրա բոլոր յատնրական աշխատանքներում, ասես հզոր թներով իշխում էր թեմի վրա: Սա արդեն Սարյանի տարերքն է:

Բնությունը, հատկապես հայկական լեռնաշխարհը, խոսում են նրա բոլոր ձևավորումներում, համայն հասնելով փիլիսոփայական ընդհանրացման: Դրա լավագույն ապացուցմներից մեկը Ռոստովի դրամատիկական թատրոնում Ֆ. Գոյջանի «Տիգրան» պիեսի թեմադրության համար նրա կատարած մեծ աշխատանքն էր: «Չատ մաքուր և ազնիվ պիես» էր «Տիգրանը», արդի իրականությունից առնված մի գործ, որը հայրենասիրության և սոցիալիստական աշխատանքի մկանում հերոսի ունեցած վերաբերմունքը հասնում էր պաթետիկ բուռն դրանորման: Այս ձևավորման տպավորության տակ ամա թե ինչ է ասել Տիգրանի դերակատար, մածանուն արտիստ Ն. Մորդվինովը. «Ես Սարյանին շատ եմ սիրում և բարձր գնահատում այն բանի համար, որ նրա բոլոր կտավներում, նույնիսկ մի շնչով ստեղծած դիմանկարների մեջ ահոնելի տեսմերամենու կա, այն տեսմպերամենու, որ պետք է Ծեքսպիր խաղացող դերասանին: Սարյանին ես սիրում եմ՝ ինչպես Ծեքսպիրին»:

Հիշենք Սարյանի թեմական ձևավորումների լեռնային մտահղացումները: Դրանք ամբողջ մի աշխարհ են ներկայացնում, առևէ մի ժողովուրդ, այդ ժողովուրդի ապրումները, կամքը, հզորությունն ու ազատարադ ոգին: «Ալմատի» առաջին գործողության դեկորանկարն ան-

գամ բավական է Բամոզվելու, թե Սարյանը ի՞նչ վիթխարի ուժ է նաև թատրոնում, ի՞նչ մեծ Բայրենասեր և ի՞նչ իմաստուն դաստիարակ:

«Աղմաստը» կարծես սարյանական արվեստի ամփոփ Բանքագիտարանը լինի: Այստեղ կա և Բազմագյուտ նրբմագրողը, և կոմպոզիցիայի փայլուն վարպետը, և Բայ ճարտարապետության էության մեջ թափանցած նուրբ արվեստագետը, և Բայ կենցաղագրական երևույթների լավագիտակ մասնագետը, և այդ ամենը ընդհանուր Բայտարարի բերող բնմանկարիչը:

Հապա «Աղմաստի» տարագմե՞րը, որոնք այսօր ցուցահանդեսային բացարձակ արժնք ունեն: Զևավորման ամրող Բամալիրի մեջ, Անրկայացման ընթացքում, այդ տարագմերը ի մի բնրված, այն դերն էին կատարում, ինչ Ավագախմբի գործիքավորումը Սպենդիարյանի անմահ երաժշտության մեջ: Ժողովրդական տեսարաններում սերտ «Բամագործակցում էին» միմյանց հետ, պարային Բատվածներում՝ անսահմանորեն պլաստիկ՝ ձոլվում խորեոգրաֆիային, իսկ գլխավոր Թերոսներին, առհասարակ, դժվար է պատկերացնել առանց այդ տարագմերի: Նույնքան սիմֆոնիկ երնույթ և դրամատորգիական մտածողությամբ կյանքի կոչված, որքան և ամրող օպերան:

Մինչ այդ տեղ-տեղ ոճավորված դեկորներին «Ակմաստում» փոխարինելու նկավ դրամատիկ-Բներոսական դեկորացիան, որ անքան Բամահնչուն էր օպերայի 1939 թվականի բնմադրության գլխավոր սկզբունքներին: Եթե «Տիգրանը» բնության շոնդալից երգ էր, «Քաջ Նազարը» զվարթուն Բերիայի, ապա «Աղմաստը», Սարյանի պատկերմամբ, դարձավ հզոր Բայրենիքի գովր: Այն, ինչ դարասկզբին Կ. Մարգարովի և Ա. Թահրովի նման ոնժիտրների բաղձանքն էր՝ գոնե մեկ բնմադրու-

թյուն ունենալ Սարյանի համագործակցությամբ, սովորական տարիներին դարձավ իրականություն, ընդ որում՝ ոչ միայն Բայ ոնժիստրների համար: Նա համագործակցեց Վ. Պլուշեկի հետ՝ «Պաղտասար աղքարի» առաջին ոռուական թեմայության կապակցությամբ, ապա ձևավորեց Ե. Վախթանգովի անվան թատրոնի նշանավոր «Ֆելումենա Մարտուրանոն», իսկ մինչ այդ, Վ. Աճեմյանի խնդրանքով, հատվածաբար ձևավորել էր «Արմաշեն» և «Դավիթ-Բեկ» ներկայացումները:

Սևծ մկարշին Լենինյան մրցանակ շնորհելու կապակցությամբ որու նշանավոր ոնժիստր Յու. Զավադսկին ասել է: «Գեղանկարչության մեջ Սարյանն իհձ համար նույնն է, ինչ Ստանիսլավսկին՝ թատրոնում: Ինչպես Ստանիսլավսկին, այնպես էլ Սարյանը ոչ թե առերևությ, այլ խորին էությամբ են ըմրունել արվեստի կուսակցականության և արդիականության գաղափարը»: Սա, թերևս, ամենամիշտ և ամենաբարձր գնահատականն է, որ երրևիցն կարելի է տալ Սարյան-թեմանկարչին:

1980

4. ՀԻԱՆԱԼԻ ԵՂԱՆԱԿ ԷՐ, ՕՐԸ ԿԻՐԱԿԻ...

Մի զրոյց Մարտիրոս Սարյանի Բետ

Ծեմքից մտնելուն պես նկատեցի, որ ինձ Բետ Սարյաննց տուն է այցելում նաև մի անծանոթ ուսւ երիտասարդ: Վարապետը, որ բազկաթոռին էր ճատած, ինձ տեսմերով կատակեց.

— Աջխոյժ, կայտառ տղա էիր, դու ել ես փոխվել:

Նոյն ապահին Շերկայանալով՝ երիտասարդին առաց.

— Ծպիկալով, լուսանկարիչ եմ, Մոսկվայից...

Վարապետը կատամելու տրամադրության մեջ, մոռացել էր իր առողջական վիճակը: Մինչդեռ մարտ ամսին ձախ կողմից թերեւ կաթված է ստացել: Ինսուլտ է, առում են բժիշկները: Բայց ինքը շիմանարու է տաղիս, թեև դժվարանում է ազատ շարժվել. բայց ում է յուրայիններին Բենված: Ծանր էր այդ փաստի Բետ Բաշտվել:

Ծպիկալովը իր ով լինելը պարզելու համար Սարյանին մեկնեց «Սովետակայա ժենշինա» Բանդեսի նոր լուս

տեսած 8-րդ համարը, ուր Հայաստանի և գլխավորապես հայրենադարձ Զշանավոր կանանց լուսանկարներ կային զետեղված: Սարյանը տարվեց հանդեսով, իսկ լուսանկարիչը շրիմկացնում էր, իսա շրիմկացնում:

— Վաղուց է ձեռքս չեմ առել,—ասես ինքն իրենից գանգատվելով՝ ավելացրեց Սարյանը:—Լուսանկարչությունը շատ է օարգացել, ժամանակ չեմ գտնում մետելու: Լավ բան է: Ծաշակ կա: Ամեն տեղ, ամեն ինչում նախ պետք է ճաշակ փնտրել: Գեղարվեատական ստեղծագործությունը ճաշակից է սկսվում:

Ծապիկը զննելուց հետո, հանդեսը դանդաղ թնրթեց ու կանգ առավ միջին էջերի վրա:

— Սև ու սպիտակով լուծված մկարների համադրությունը շատ լավ է: Լուսանկարներ են, բայց միտք կա դասավորության և մատուցման մեջ, գրաֆիկական կիրք աշխատանքների տպավորություն են թողնում: Արթեստավորի գործ չէ: Է, այս մեկը չեղավ, նայիր շապիկի մյուս էջին, ինչքան անճաշակ է: Գեղեցիկ աղջիկներ են, առողջ, կենաուրախ, բայց ծանրաբեռնված են պըսպըսուն, զիզի-պիզի Բուլումքներով, իրենք ել, հագուստներն ել: Մարդու աշքը հոգնում է:

— Ազգային տարագներ են, էստրադայից առնված կադրեր, լուսանկարիչն ի՞նչ մեղք ունի, —ասացի ես:

— Չէ, չէ, բանի պետք չէ, զուր տեղը մի բացատրիր: Դեղինը, փայլը, ուժեղ լուսավորությունը մոնտոն և խղճալի տպավորություն են թողնում: Եթե կամենայի՛՛ նույն կադրերը ուրիշ կերպ կարող էին լուծնալ, այսինքն ոչ թե գեղանկարչական, այլ գրաֆիկական միջոցներով, որ լուսանկարի լեզուն է:

— Մենք գնում ենք, մի ժամից կվերադառնամք, —ասաց տուն-թանգարանի դիրեկտոր Շ. Խաչատրյա-

ող,—չմոռանաք, վարպետ, շուտով Գոհար Գասպարյանն է գալու ձեզ այցելության:

Մնացինք Սարյանի մետ մենակ:

— Ասում են տասերորդ տասնամյակն եմ ապրում, շատ մեծ թիվ է, չե՞ն, մի ասա, է՛, տասերո՞րդ, — Բանդեսը մի կողմ թողմենով, Սարյանն ընկավ խորհրդածությունների մեջ: — Դուրսը հիանալի եղանակ է: Նայիր ծառերին, լույսին, դիմացի վարդագույն պատին, ափսոս բարձր է: Ծիշտ է, պատի վարդագույնը հաճելի է, բայց շատ է տափակ, հարթ, հոգմեցնում է:

Սնողանին դրված է 1969-ին ստեղծած «Երկիր» աշխատանքի գունավոր վերատպությունը:

— Հիանալի գործ է, — ասացի, — ցուցաբանդեսում էլ ինձ շատ դուր եկավ: Սովորական բնանկար չէ, այլ գունային ընդհանրացումներ, երևակայական հրաշք, ասես ծիածանից հյուսված լինի:

— Հա, ամեն ինչ ձուլել եմ իրար՝ երկինք ու ծով, ամառ ու երկիր: Ներքևն էլ, տեսնում ես, պատուիան կա: Այո, այո, պատուիան: Իրը թե այնտեղից է երևում ամեն ինչ: Երազի նման է, ֆանտաստիկա: Բայց՝ իրական: Կյանքում մեկ-մեկ այսպես ամեն ինչ խառնվում է իրառ, ձուլվում տիեզերքին: Դե, ես էլ դրանք իրար մեջ, իրադ մետ եմ նկարել: Ի՞նչ է, չե՞ս հավանում...

— Հավանում եմ, ինչու չէ: Ֆանտաստիկական ռեալիզմ, Վախթանգովի նախասիրած տերմինն է, նրա թատերական ուղղությունը:

— Դու գիտես, ինչ ուզում ես անվանիր: Ինձ համար այս նկարում կարևոր ֆանտաստիկան է, իսկ ռեալիզմն էլ կա ու կա: Հա, դու այդ ռեալիզմի տակ ի՞նչ ես հասկանում, որ կացրիր ֆանտաստիկային: Դու գիտես, չէ, որ ես էլ Ռուսաստանից եմ, Նոր-Նախիջևանից: Վախթանգովը կարծեմ նախիջևանից չեր: Ես ա-

վելի լավ Վախթանգովի թատրոնը գիտեմ, Ռուբեն Սիմոնովին, որին Ակարել եմ: Հետո էլի բաներ եմ արել Օրանց Բամար, «Ֆիլումենա», դա քո գծով, է, լավ պիտի իմանաս: Լսեցի, որ Սիմոնովը մեռել է... ափսոս: Ինչո՞վ ես զբաղված Բիմա, չլինի՝ էլի թատրոնով:

— Պատրաստվում եմ մի հոդված գրել «Հայաստան» պանեոյի մասին, որպես առվետական տարիների ձեր ստեղծագործության անկյունաքար: «Հայաստանը»՝ թատերական վարագույր, «Հայաստանը»՝ տարեցտարի բազում ու բազմապիսի դրսեռորում է գտել ձեր կտավ-Շերում: Երբեք չեք մոռացել, Բաճախ եք անդրադարձել այդ թեմային և միշտ տարբեր Ակատառումներով: Դրա մասին եմ ուզում գրել, թե որ Բաջողովի:

— Ուզում ես ասել, որ կրկնել եմ ինձ, շահագործել միևնույն թեման,—ու երկիմաստ ժայռաց:—Բայց դու աշխատիր դրա վրա, վատ միտք չե: Գուցե մի բան դուրս գա, քանի որ ինձ Աման չես ծնրացել: Գիտե՞ս, ծերությունը կապկառում է մարդուն: Այ, Բիմա, ուզում եմ դուրս գալ, նայել երկնքին, շոշափել ծառերը, թեկուզ և դրանք լավ չեն ջրվում: Բայց...

Հետո թեման շուր տվեց.

— Ինչ Բրաշք բան է բնությունը, իսկ և իսկ աստված: Դու ինչ կարծիք ունես աստծո մասին, արարիչ, ստեղծագործ ուժի, որ Աստած է մեր մեջ: Դա ամբողջ բնությունն է, արևը, ջուրը, երկինքը, բոլորը՝ մեկը-մյուսով պայմանավորված: Այդ պայմանավորվածության մեջ է բնության գեղեցկությունը: Հրաշք է թեկուզ բնության կառուցվածքը: Օվկիանոսներ, անսահման ջրեր, գետեր, թաղված հողի ընդերքում: Լեռներ տեսակ-տեսակ, քամի, շոգ ու ձմեռ, ձյուն ու անձրև, բոլորը գեղեցիկ, բոլորն ել անկրկնելի: Ինձ զարմացնում է տարա-

ծության բնույթը: Միթե՞ տարածությունը սահման չունի, իսկ եթե ունի, որտեղ է: Ամեն ինչ ունի սկզբ, նշանակում է՝ ունի նաև վերջ: Այդ վերջը ևս չեմ տեսնում: Լավ է, որ չեմ տեսնում, ուրեմն չկա: Ինչո՞ւ լինի: Մարդիկ գրկվե՞ն այդ անծայր գնդեցկությունից: Արևն էլ մի ուրիշ հրաշք: Պտտվում է, շարժվում օր ու գիշեր և լուս է տալիս, և ջերմություն, և թվում է ամսապատճեն: Ամեն մեկիս համար, որ գալիս ենք ու գնում արևը մնում է նոյնը, անփոփոխ, անվերջ: Չատ բան է փոխվում կյանքում, բայց ասես ոչինչ չի փոխվում, քանի որ չի փոխվում արևը: Արևի շնորհիվ է, որ մենք ապրում ենք, իուս ու հավատ կուտակում: Արևը ամենքիս մնայում հույսն է, անդավաճան, նվիրական՝ թե կենդանի մարդու, և թե անկենդան բնության համար:

Զրույցի բռնված, չիմացանք, թե ինչպես ժամանակն անցավ: Եկան Գոհար Գասպարյանը և նրա ամուսինը՝ երգիչ S. Լեռնամը, Ը. Խաչատրյանը, արվեստաբան է: Մանուկյանը:

— Բարեն, վարպետ,—նախ մոտենալով Սարյանին, ողջունեց Գասպարյանը:

Վարպետը փորձեց աթոռից կտրվել, Բոտմկայս դիմավորել արտիստություն...

Ներս մտավ Սարյանի քույրը, միշտ գլխահակ ու նեղահամրույր Եկատերինա Սերգեևնան և սուրճ ու շոկոլադ մատուցեց: Շպիկալովը նոր թափով գործի անցավ, այս անգամ ոգևորված՝ արվեստագետների հանդիպումից: Հետո, Գոհար Գասպարյանի սուաջարկով բոլորս միասին լուսանկարվեցինք:

Սարյանի տրամադրությունը բացվեց: Փիլիստիկապատճեն խորհրդածություններից անցավ սրտառուչ կատակերի: Գանգատվեց թատերական գործիներից, մասամբ «Ալմաստի» անհաջող բնմադրության համար, կշտամ-

թեց Գոհարին, որ ուշ-ուշ է իրեն այցի գալիս, իսկ Գոհարը արդարանադու խոսքեր էր փնտրում. «Շնչու, վարպետ, Էլի եկած եմ»: Բայց Սարյանն արդեն Բոգմել էր:

Ուժի ելամբ: Առաջինը հրաժեշտ տվեց անհանգիստ Շպիկալովը:

— Լսիր, երիտասարդ,—ասաց Օրան Սարյանը,— երբ լուսանկարները պատրաստ լինեն և հանձնեն տպագրության, չմոռանաս տակը գրել, որ 1970 թվականի սեպտեմբերի վեցը հիանալի օր էր, կիրակի: Տաքուկ ու սքանչելի եղանակ, արևն ասես իր տեղում կանգնած էր մնացել և ծառ ու ծաղիկ խոնարհվում էին Օրա առջև:

1978

5. ՆԱ ՍԵՐՈՒՄ ԷՐ ԱՆԻՒՑ

Անեցի էր նա իրեն համարում և գիտեր լսել մեր Բինավորց մայրաքաղաքից հնչող հազարամյա դո-
դանշները: Դա պետք էր նրան Երևանը Ամի և Ամին
Երևան դարձնելու առասպելական գոր-
ծի մնջ, որպես նրա ճարտարագետը,
նրա լուսատուն, նրա նոր ու մեծ բախ-
տի գուշակը... Նրա վաղեմի բարե-
կամներն ել անեցի էին՝ Մլասնիկյանը,
Սպենդիարյանը, Թամանյանը և ծա-
ռայում էին նայ կյանքի վերակառուց-
ման, հոգևոր վերածննդի գործին: Սար-
յանը այդ շառավիղի վերջին մոթիկացն
էր՝ նույնքան հավատարիմ ու հարա-
գատ նրանց դավանանքին, հրաշքներ
արարող ոգուն: Սարյանը հոգեպես ու
ամրող էությամբ էր կապված նրանց
և սիրում էր նին երկրացիներին՝ այն-
պես, ինչպես կարող է ժողովուրդը սի-
րել: Այդ վեճ սիրով ու անձնվիրությամբ
է նա կերպավորել Երկիր Բայրենին,
Հայաստան աշխարհը, մեր կյանքը
հարստացրել մշակույթի մեծ ու անքա-

սիր արժեքներով, դարձրել գեղարվեստների տաճար:

Սարյանը թերում էր Անհից գեղարվեստի վեմ ճշշմարտության ձայնը, անխորտակ լեռների ձայնը, հպարտ ժողովրդի, ապագայի ձայնը... Օլիմպիական իմաստությամբ նա զրուցի էր բռնվում հայոց լեռների մետ, երփնագրի իմաստուն պարզությամբ նրա լեզուն հաղորդակից դարձնում աշխարհին:

Նա մեսրոպյան գիր էր, կոմիտասյան երգ...

Սարյանը կապում էր մեզ անսասան յեկերով մեծ երկրի, նրա բազմազգ ժողովուրդների մետ, Բոգևոր կամուրջ Շետում նաև մեր ու աշխարհի մարդկանց միջև։ Սարյանը հավաստ էր ու գեղարվեստ, համոզմունք էր ու անդադար ստեղծագործություն։ Նա օգնում էր մեզ, Շերշնչում՝ համբերությամբ տոկալու, սրտով այրվելու, լեռնագագաթները չափելու, միշտ բարձունքներին մնալու։ Մենք վարժվել ենք նրա անխախտ գոյությանը, ինչպես վարժված ենք մեր լեռների, գեղարվեստի, ժողովրդի անխախտ գոյության մետ։

Անզոր է մահը մի մարդու առաջ, որ հազարամյա Անհի քաղաքացին է։

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՈՒՏՅՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Տաղանդավոր այդ մարդուն ճանաչող ու հարգող քոլորի համար թամկ էր նրա գոյությունն այս աշխարհում, նրա կատարածը մեր արվեստում։ Հավատալ չես ուզում, որ Սիբայել Արուտչյանն էլ չի երևալու մեր մեջ, չի խառնվելու, ինչպես սովորաբար, անգամ իրեն շվերաբերող գործերին, բարձրաձայն չի վիճելու բոլորին նետ, չի ժպտալու «սատիրացող» իր ժայիտով։ Նա գնաց մեզանից։ Բայց արվեստագետի կյանքը, ստեղծագործական մեծ վաստակի նետ միասին, թողեց մեզ նաև մարդկային ալնայիսի մի կերպար, որ ոյս երկար ժամանակ չի կորցնելու իր հմաքը, ապրելու է։

Մեր խորհրդային թատրոնի մամկության և պատանեկության ընկերներից էր Սիբայել Արուտչյանը։ Եվ որպես այդայիսին սիրեալի էր, թանկագին, անփոխարինելի, հարազատ, սկսած այն օրվանից, երբ ենկավ Հայաստան, մոտք

գործեց հայկական թատրոնի ու գեղանկարչության ասպարեզ: Որու հեղափոխական արվեստով ոգեշնչված շուշեցի պատամին Սարատովի ՎԽՈՒՏԵՄԱՍ-ն էր ավարտել, ձևադրել այնտեղ «Փաստաքան Պատրիա» տառիրական կոմետիան: Վեգեներար Գևիշ հետ, բաղաքացիական կողմնակի ամեն օրերին հասել էր Վարշավա, մետք ուսանել Բեռլինի համալարուանի իրավարանական ֆակուլտետում, ապա մեկ տարի՝ Փարիզի Գեղարվեստների ակադեմիայում: Արուտչյանն ասում էր, թե ինքը, Գուտենբերգի հայրենիքում իրավագրանությունն աշքաթող արած հետևել է պոլիգրաֆիական տեխնիկայի և գիտության առաջընթացին, իսկ Փարիզում նրա անհագ մետաքրքրություններին հագուրդ տըվողը թատերա-գեղարվեստական օջախներն են եղել:

Արուտչյանը Սովետական Հայաստան ոտք դրեց, հազիվ 30-ամյա մի երիտասարդ, արդեն իրքն խոստընացից գրաֆիկ-նկարիչ, գրքի ձևավորման լավ մասնագետ և թատրոնի շատ ժամանակակից ու նորաճաշակ նկարիչ: Իսկ այն ժամանակ, 20-ական թվականներին մեզանում լոկ մի երկու մասնագետ կար գրաֆիկայի և գրքի ձևավորման ասպարեզում. մեկն արքա էր՝ Հակոբ Կոջոյանը (երկրորդը Տաճատ Խաչվանքյանն էր): Մյուսները, սակայն, դեռ «խարիսափում էին», նվազ էր սուպեր-շապիկը տիտղոսաթերթից և նոնպարելը ցիցերոյից զանազանող նկարիչների թիվը: Կոջոյանի նման վարպետից Արուտչյանը շատ բան ուներ սովորելու, հատկապես ազգային մանրանկարչության ասպարեզում: Եվ սովորեց, իմարկեն: Ավելի դժվար էր գործը թատերական գեղանկարչության բնագավառում: Փաստորեն այնտեղ ոչ ավանդներ կային, ոչ ուղղություն, ոչ էլ հենակետեր: Դերասանական վարպետության դադրնոց էր հայ թատրոնն այն ժամանակ, խոշոր ան-

Բատականությունների թևմ: Սակայն ռեժիսորական արվեստը հաստատման ընթացքի մեջ էր, իսկ թեմանկարչությունը Առը-Առը էր խմորվում: Այստեղ ավելի սովորելու, քան ստեղծելու առիթ կար: Յակովովը այդ ժամանակ գրել է, թե հայկական թատրոնն առաջին անգամ եվրոպական իմաստով՝ պրոֆեսիոնալ ներկայացումներ տեսավ շնորհիվ իր ձևավորած «Վեճետիկի վաճառականի» և «Մորգանի խնամու»: Եվ դա 1927—1928 թվականներին, Արուտչյանի առաջին թատերաշրջանում:

Յակովովին աշակերտելու գաղափարն Արուտչյանի մոտ այդ տարի էլ ծնվեց երկի, կարծես անվատ, բայց ներքին բուռն մղումով: Ու՞մ պատիվ չեր թերի Յակովովից սովորելը: Դա ժամանակակից իրականության նետ, նորարարությանը կապվելու հարց էր, թեմարվեստում նեղափոխության դավանանքը ընդերելու հարց:

Եվ Արուտչյանը տրվեց թատրոնին: Այստեղ էր, որ նա կարող էր իր խոսքն ասել՝ հազար ու մի դժվարության ընդդեմ գնալով: Ընդամենը երկու տարվա մեջ Արուտչյանը միայն Առաջին պետթատրոնում տասնմեկ ձևավորում ունեցավ, բոլորն էլ, առանց բացառության, ժամանակակից թեմատիկա շոշափող թեմադրությունների, որոնց մեջ՝ «Էլյուտով Յարովայա», «Մոնչա, Չինաստան», «Բնեկում», «Խոռվություն», «Զրահագնացք 14—69» և «Ռելիսերը զրնգում են»: Դրանց համար կյանքի կոչված հիանալի մակետները այսօր էլ կարող են գարդարել ուզած թեմաթարթակը: Հեղափոխական արվեստի սկզբունքներին նետամուտ նկարիչը շուտով ձևավորեց նաև «Առաջին հեծելազորը», «Հրե կամուրջ», «Օղակում», «Կացնի պոեմ» և այլ ներկայացումներ, որոնք հշանավորեցին սովետահայ թատրոնի զարգացման մի նոր փուլ:

Մակետը Բայտնագործություն է, ալնպիսի կոնկրետ մի արժեք, որով կարելի է հետո Է գաղափար կազմել Շերկայացման թե բնույթի, թե մակարդակի մասին։ Արուտչյանի մակետներն այսօր՝ մեր թատերական անցյալի պերճախոս վավերագրերն են։ Նրանք թատրոնի հետ ապրում են, պատմում, ծավալներով բացարում։

Վաղ շրջանի Արուտչյանի մակետներն, ինարկե, անթերի չեին։ Գրաֆիկական խոսուն գծերին և ճարտարապետական ցայտուն ֆորմաներին զիջում էր երփնագիրը («Սերը ծփիների տակ», «Արյունու անապատ», «Տրան Ատլանտիկ»)։ Զոռուանք Եշել, որ Արուտչյանն ապրում և ստեղծագործում էր Թամանյանի կողքին, Հալարյանի ընկերակցությամբ և չէր կարող զերծ մնալ այդ արվեստագետների ազդեցությունից։ Նա երբեմն Շուկանի ճարտարապետական ամրող ծավալներ էր փորձում թեմահարթակ տեղափոխել, ծանրանիստ թեմական կառուցումներով լցնել թեմը։

Արուտչյանը որպես թատերական գործիչ մի որոշ շրջան Բակված էր դեպի կոնստրուկտիվիստական նորամուծությունները։ Նա կարող էր, նա գրեթե միակն էր այդ տարիներին և գործում էր ինչպես ծանր Բրետանի, ասես ոմքակոծում էր, ավերում հինը, նորը հիմնադրելու տեսնով բռնկված։ Երբեմն էլ ձևավորման մեջ խաղում էր միայն ուկու կամ արծաթի հետ, ուկեզօծում պատ ու ապարանք, արծաթապատում վարագույր ու դեկոր («Ակմաստ», «Մակրեթ»), պատահել է նաև, որ գրաֆիկական պարզորոշ գծանկարը ձգտել է սցենոգրաֆիական լեզվի վերածել։

Արուտչյանի ուժը մեծ էր։ Թատրոնում Բրամանատարական դիրք էր գրավել։

Ինչո՞ւ։

Նրա լավագույն թեմադրությունները աշքի էին ընկ-

Առաջ թատերական պլաստիկ ձևերի հարստությամբ ու բազմազանությամբ, յուրատեսակ լուծված նկարչագեղ քննահարթակներով։ Եթե Սարյանի ձևավորումներում երփնագիրն էր խաղում, ստեղծում համապատասխան տրամադրություն և մասշտաբներ, ապա Արուտչյանի մոտ խոսում էին ուակորսները, թեմի բոլոր անկյունները, իրերը, ողջ կոմպոզիցիան։ Նա հաճախ հրամայարար թենադրում էր ուսմիտրին և դերասանին, ակտիվորեն միարժվում պիեսի մեկնարանության մեջ։ Բոլորովին պատահական չէ, որ Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում (1937) տեղ գտավ «Շահնամեի» նրա ձևավորումը, իսկ Նյու-Յորքում ցուցադրվեց մեկ ուրիշ աշխատանքը՝ «Լուսաբացին» օպերայի մակենտը։ Իմարկն, այդ բոլորին նպաստում էր նաև այն, որ Արուտչյանը բազմակողմանիորեն զարգացած արվեստագետն էր, ազատ կարդում էր գերմաներեն, հասկանում ֆրանսերեն, բաշտիրապեսում ուսւերենին։ Եվ հայոց լեզվին էլ վարժվեց՝ Զարենցի նման գործընկեր և խորհրդատու ունենալով։

Եթե իր գործունեության արշալուսին նա ավելի քանում էր, քան հիմնադրում, ապա շուտով սկսեց միայն հիմնադրողի դերով հանդես գալ։ Լենինականի Օպերատեղծ թատրոնի առաջին ներկայացման ձևավորումը Արուտչյանին էր, Պատամի հանդիսատեսի թատրոնինը՝ Առյանպես, օպերայինը՝ Առյանպես, Մ. Գորկու անվան բանվորական թատրոնի առաջին ներկայացման ձևավորումն էլ նրանն էր։ Կարծես դա քիչ էր. Հայկինոյի առաջին շրջանի ֆիլմերի («Խաս-փուշ», «Զամալու», «16-րդը») նկարիչն էլ նա էր։

Ցանկության աշակերտած քննանկարիչը չէր կարող իր ձևավորումներում նվազ կարևորություն տալ երփնագրին։ Եվ ստեղծվեց «Ֆիգարոյի ամուսնությունը»:

Դա Արուտչյանի այն աշխատանքն էր, որով նա ռեժիսորից, դերակատարներից անև զատվեց: Փորձեց ճնշել նրանց: Փորձեց իր «տիրապետությունը» հաստատել թատրոնում: «Ճիգարոյի» ձևավորման մեջ որոշ դետալներ բեմից կարծես ցատկում էին դաჩիլն: Օդա Գուլազյանը մինչև օրս էլ, թեև անցել է մոտ երեսուն տարի, իր ասելով, չի կարողանում «Բանդուրժել» Արուտչյանին, որ այնքան ծափեր խեց Բանդիսականից... իր հաշվին: Ժամանակին նրանից գանգատվել է Արուս Ռուկանյանը: Ծափեր է խել: Նրան ծափահարել են, բեմ հրավիրել...

Հետագայում, երբ նա գործ ունեցավ ուրիշ դասական պիեսների հետ («Ամպրոպ», «Շնիգոր», «Դաստիգակը և ուրիշներ», «Նամուս» և այլն) ավելի կատարելագործեց իր երփնագրային արվեստը, դարձավ Յակովովի գործի խելական հետևորդը Բայ թատերական իրականության մեջ: «Մորգանի խնամու» լուծման յակովովյան հնարամությունը մեծ դաս եղավ Արուտչյանի համար: Նա այն նկարիչներից էր, որոնք ոչ միայն հեշտությամբ էին ընկալում նոր ու հետաքրքրականը, այլև ստեղծում էին իրենց «շարլոնը»: Նրանից փոխարինարար վերցնում էին ոչ միայն մեր դերասանները, այլև այնպիսի բանիմաց ուժիսորմեր, ինչպես և. Քալանթարը, Ա. Բուրջալյանը, Ա. Գուլակյանը, Վ. Ամենյանը:

«Կարմեն», «Ֆաուստ», «Տուկա», «Լուսաբացին», «Թափառմիկոս», «Պիկովյա դամա»—կարելի է և սրանք համարել Արուտչյանի լավագույն աշխատանքները մեր օպերային թատրոնում: Նա օպերային արվեստը, Թավրիզյանի նման, ընկալում էր իր ամբողջ օղակներով՝ զգում էր դիրիժորական փայտիկը, հաշվի հատում երգչախմբի պահանջների հետ, բեմաթարթակի

մասշտաբներով ոգևորվում և ոգևորում էր ոնժիսորին: Դժվար էր նրան չլսել, նրա խոսքի ու խորհուրդների կողքով անցնել անտարքեր, թեև նրա խոսքում հաճախ իշխում էր սարկազմի հասնող երգիծական տոնը: Անգուսապ կատակի մեջ էլ արվեստագետ էր: Սիրում էր շափազանցումները: «Քաջ նազար» էր պատկերազարդնել, «Դոն Քիշոտը», Ծննդինի «Մի քաղաքի պատմությունը», Չարենցի «Երկիր նահրին»: Գրքի նկարագարդման վրա աշխատում էր նյութը խորապես սիրելով ու յուրացնելով: Այստեղից էլ նրա ծաղրանկարների սրությունն ու հիութեղությունը:

— Իմ «Եզրվառը» Սունդուկյանի անվան թատրոնին վեր բարձրացրեց, — կատակում էր նա:

— «Քառոր» իմը չէ, Սարգիս Սրուտչյանին էլ չէ: Արուտչյան ազգանունով մարդը կարո՞ղ էր այդքան ծանրացնել թեմը, — կատակում էր նա Մոսկվայում, գինովցած մարդու նման մտքինը միշտ լնզվի վրա:

Հին իտալացիներն ասել են. եթե անունը ու պատիվը թանկ է թեզ համար, Հոռոմից չհեռանաս: Արուտչյանը թեև իր կյանքի վերջին քառորդն անցկացրեց Մոսկվայում, բայց նրա անունն ու նեղինակությունը հայ գեղարվեստասեր հասարակայնության աշքում մազաշափ իսկ չպակասնց: Ընդհակառակն, աճեց, մեծացավ, դարձավ կարոտ, կարիք ու անհրաժեշտություն: Բայց նա իր «Հոռոմին» կարոտով չթողեց: Հասնում էր ամեն առիթով: Հայպետիրատի պատվերով Վոլտեր էր նկարազարդում, Մոսկվայում՝ հայ նեղինակների գրքերը, Մոսաւետի անվան թատրոնի համար՝ ձևավորում «Վերջին մեխակները»...

Սա էլ վերջինը նոյավ նրա վաստակած ու ազնիվ կյանքում:

ՍՏԵՓԱՆ ԹԱՐՅԱՆԸ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ...

Թարյանի թեմական գործը սկիզբ առավ այն տարին, որը մեր մայր թատրոնի կյանքում նշանավորվեց ստեղծագործական բուռն իրադարձություններով, արտասովոր ոգևոշվածությամբ լի Անդրկայացումներով և նոր, համարձակ գործիչների ներգրավումով:

Դա 1927 թվականն էր: Ընդամենք Բինգ տարվա պատմություն ուներ սովետական հայ թատրոնը, երբ Լ. Քաջանթարը, խմբի լավագույն ուժերով թեմադրեց «Պատտասար աղբարը», որն իր «ձախ» չափազանցություններով հանդերձ՝ շատ ուշագրավ աշխատանք էր: Սրան հետևեց Ծիրվանգաղեի ժամանակակից կյանքից առնված միակ կատակերգության՝ «Մորգանի խմամու» առաջին թեմադրությունը, մեծանուն Ակարիչ, Թարյանի հեռակառուցիչ Գ. Ցակովովի ձևավորմամբ: Ռիանից անմիջապես հետո թատրոնը դիմեց սովետական՝ այսօր արդեն դատական համարվող դրամատուրգիային:

Ակսվեց «Ժյուրով Յարովայա» պիեսով, որ առաջին անգամ Բանենս եկավ մեր լավագույն բեմանկարիչներից մեկը՝ Միքայել Արուտշյանը: Հենց այդ խաղաղըրշանումն էլ թատրոն եկավ Արմեն Գուլակյանը, իր հետ բերելով Ստեփան Թարյանին:

Ակզրից ևելու Թարյանը կանգնեց դժվարին ճանապարհի առջև: Գուլակյանը «Ըստարալայի» բեմադրությամբ քննություն էր տալիս թատրոնին և հասարակությանը: Հարկավոր էր ամրապնդել սեփական դիրքերը, իր ստեղծագործական սկզբունքների հայտը ներկայացնել: Նշանակում է Թարյանն էլ, որ հրավիրված էր այդ ներկայացումը ձևավորելու, նույնական պիտի կանգներ, այսպես ասած, քննական սեղանի առջև: Այլ պարագաներում նկարչի դերյուտը կարող էր և աննկատ անցնել, այս դեպքում արժանանալու էր կրկնակի ուշադրության:

... Թարյանը մեծացնել էր Թիֆլիսում, աշխատել ու սովորել Բայ ու Վրացի խոշոր արվեստագետների շրջապատում Եղիշէ Թադևոսյանի նման գեղանկարչի, Յա. Նիկոլաձեի նման քանդակագործի, Ալ. Թամանյանի և Վ. Խոջաբենկյանի նման արվեստագետների հետ: Բացի այդ, Թարյանը Հայաստան էր փոխադրվել Լենինգրադից, Գեղարվեստների ակադեմիայի քանդակագործական ֆակուլտետը հաջողությամբ ավարտած:

Սա նշանակում է, որ Թիֆլիսում ձեռք բերած պրոֆեսիոնալ գիտելիքներն ու փորձը նա անց էր կացրել կերպարվեստի մի մեծ քուրայով: Զիսունելով արդեն այն մասին, որ Թարյանը թե Վրաստանում (Թելավի ուսուական թատրոնում) և թե Լենինգրադում կատարել էր ձևավորման փորձեր ու արժանացել խրախուսանքի:

Քանական թվականներին թատերական բուռն կյանքով էին ապրում նաև Թիֆլիսն ու Լենինգրադը:

Ժամանակակից կյանքը՝ գեղարվեստին ներկայացրած իր պահանջներով, անակնկալ հայտնագործությունների էր մոդեմ թատրոնին: Եվ քանի որ արդիականությանը նվիրված լուրջ պիեսներ տակավին չկային, ուժիսոր-ներն իրենց խոսքն ասում էին դասական դրամատուր-գիայի նոր մեկնարանության միջոցով: Օստրովսկին և Գոգոլը հարուստ նյութ էին տալիս Մեյերխոլդին և մյուսներին՝ ուսուական իրականության մեջ, Պարոնյանն ու Սունդուկյանը՝ Քալանթարին ու Գուլակյանին՝ սովորական հայ բեմում:

Թարյանին հարազատ էր Սունդուկյանի միջավայրը: Նկարիչը, ինչպես Բետոն պարզ դարձավ, ուներ ժամա-նակի սուր զգացողություն: Հասկանալի է, որ Գուլակ-յանը, թեև երիտասարդ, ամենին էլ միամիտ չէր, որ-պեսզի անդրամիկ բնմադրության բախտը կապեր պա-տահական մկարչի Բետոն: Այդպես էլ Թարյանը դարձակ Սունդուկյանի անվան թատրոնի ամենաթեսաքրքրա-կան ներկայացումներից մեկի՝ «Ըստաբալայի» օրինա-կան փայտերը:

Այսպիսով, Սունդուկյանի դրամատուրգիայի նոր մեկնարանության սկիզբ դրվեց, և որքան էլ Բաջորդ բն-մադրությունը՝ «Պեպոն» (1929) կրբու վեճեր հրա-նիեց, այնուամենայնիվ, Թարյանի վաստակը այս բնա-գավառում մնաց չգերազանցված. Առա անունը կապվեց Սունդուկյանի նոր մեկնարանության Բետոն, ինչպես Զ. Գուլազյանի, Հասմիկի, Ա. Ավետիսյանի և, ի վերջո, Ա. Գուլակյանի անունները:

Ինչպիսի՞ն էր Թարյանի պատկերած Սունդուկյանը: Նախ ասենք, որ այն տարիներին, ընդհանուր առմամբ, վատ էր բնմանկարչության վիճակը մեզանում: Դերա-սանական «Հզոր խմբակի» համեմատությամբ ի՞նչ էին այն ներկայացումները, որ մատուցվում էին Գ. Նրիցյա-

Գի և Ս. Սգաջալովի ձևավորումներով: «Նկարիչների թերածն այնքան նվազ էր, որ հաճախ բնադրատության ուշադրությանը իսկ չեր արժանանում: Կ. Հալաբյանի և Մ. Մազմանյանի դեպքից-դեպք արվող աշխատանքները, որքան էլ արժեքավոր, այնուամենայնիվ վճռական դեր խաղալ չէին կարող թատրոնի կյանքում: Փաստորեն գեղանկարչությունը լայնորեն մուտք գործեց մեր թատրոն 1927 թվականին, երբ հանդես եկան Մ. Արուտչյանն ու Ս. Թարյանը, և, այնուինուն, երկար ժամանակ նվիրածությամբ ծառայեցին բնմարվեստին:

Հետաքրքրական է, որ ոնժիսորներից ոմանք այն ժամանակ նույնիսկ «ահարենկվեցին» նկարիչներից՝ հրանց ակտիվ մասնակցությունը ներկայացման աշխատանքներին համարելով «վտանգավոր»: Դեպքեր եղան, երբ ձևի որոնումների մեջ նկարիչները բացահայտ առաջնություն շահեցին: Նկարչի հրամցրած արտաքին ցայտուն ձևը, բնականարար, պարտավորեցնում էր ոնժիսորին, և պատահել է, որ ոնժիսորը պարզապես խուսափել է նկարչից, ակամա «ձևագործկ» դարձնելով ներկայացումը...

Սակայն Թարյանն այնքան էր պնտք «Խաթարալա» ներկայացմանը, որքան գլխավոր մի դերակատար:

Պիեսի սոցիալական ցայտուն բովանդակությունը օգնել էր նկարչին՝ տալով թատերային լուծման լայն հնարավորություններ: Ընդառաջելով ոնժիսորին՝ Թարյանը ժիստման պաթոսն էր դարձրել ներկայացման արտաքին նկարագրի հիմքը. դատապարտել բուրժուական ալլանդակ քարքերը, ծաղրել անխնա և ամեն ինչ: Դրա համար ամեն կերպ պետք էր խուսափել կենցաղագրական մանրամասներից: Օ. Գուլազյանի, Հասմիկի, ինչպես և մյուսների դերակատարումներն այդ կենցաղագրության յուրատեսակ ինքնախարազանումներ էին:

Ավելին Օրանց Շերշնչել չեր կարող ոչ մի նկարիչ։ «Նկարել» Նատալյաին ավելի լավ, քան Գուլազյանը, կամ Խամփերուն ավելի դիպուկ, քան Հասմիկն էր պատկերել՝ գրեթե անհնար բան էր։ Երիտասարդ նկարիչը այդ տիպականացված մեկնարանությունների մեջ տեսավ հայ քեմի բարձրագույն պահանջը առհասարակ, ժամանակակից սովորական թատրոնի բուն եռթյունը և ձգտումը։ Թարյանի համար ավելի բախտավոր ճամապարհ չեր կարող լինել։

Ժամանակի մամուլը գրել է. «Խաթարալայի» դեկորացիան հասնում է պարզի վսեմության... ոչ մի ավելյորդ գիծ, ոչ մի ավելորդ իր, ոչ մի ավելորդ գույն...»։ Ամեն ինչ քեմական մթնոլորտում արված էր այնպես, որ գործող անձինք ազատ զգան, ցայտուն դրսևորվի նըրանց բնավորությունը։ Զամբախովի բնակարանն է—լուծված է խիստ լակոնիկ, թեթև ոճավորված կորամիստ լուսամուտների փեղկերով, բարձրացված հաստոցների վրա։ Իսկ եթե Մասհյանցի զարդասենյալն է՝ ինտերյերն ունի հան Պետերբուրգում ուսանած թեթևամիտ երիտասարդի (այդպիսին էր այդ ներկայացման մեջ Մասհյանցը) ինքնօրինակ ճաշակի արտահայտությունը՝ պայմանական շիրմա-դեմկորներ նրեցտակների ճեպանկարներով։ Անշուշտ այդ ընկալման մեջ ժամանակի թենադրանքը կար. ժողովուրդը ձգտում էր որքան կարելի է շուտ մաքրել հաշիվը հնի հետ։ Իսկ արվեստագետը չեր կասկածում, որ դա այդպես էլ պիտի լինի (այստեղից էլ մեկնարանության որոշ միակողմանիությունը)։

Զննավորման մեջ Թարյանը յուրահասում տեղ էր հատկացրել լույսին ու ստվերին։ Մարդիկ շարժվում էին, խոսում, իսկ նրանց ստվերը խաղում էր մասնատված պայմանական դեկորների վրա։ Կամենում էր հան-

դիսականը թե ոչ՝ ստվերների այդ խաղը գրավում էր նրա ուշադրությունը։ Մարդ նրբեմն մոռանում էր, թե որն է խսկականը, որը՝ ստվերը։ Եվ այդ տարակուսանքի մեջ նրկուսն էլ ձուլվում էին, գավեշտորնն ծիծաղելի դառնում։ Այդ կյանքը թվում էր անցած, առմիշտ մոռացված մի եղելություն։ Այսպիսով, մարդը նրբեմն ընկալվում էր իր գցած ստվերի միջոցով։ Դրանք ասես անհետացող նին աշխարհի ստվերներն էին։

Կերպարները զավեշտական էին իրենց սին փրունությամբ, թիպներովիկ արտաքին մատուցմամբ։ Զամրախովն իր մենախոսությունը արտասանելիս բարձրանում էր հաստուկ հաստոցի վրա և առաջին լուսով «բռնված», ասես ելույթ էր ունենում—չլի՛ն թե նրա խոսքերից մի բառ կորչի։ Մասիսյանցի բնակարանում նույն այդ հաստոցի վրա տեղ էր գրավել մի բարձրադիր կախարաց՝ տանտիրոջ զգեստներով ծանրաբեռնված։ Այն տպավորությունն էր ստացվում, թե ինչ-որ խրտվիլակ է դեմք կանգնած, և նրա շուրջ գործող անձինք էլ նրանց առանձնապես չեն տարրերվում։ Այսպիսով, բացասական կերպարները կորցնում էին ոեալ, ահարկու լինելու իրավունքը, դառնում ավելի քան պայմանական, իսկ նրանց հակադրվող ուժը թատրոնն էր և նոր հանդիսարամին։

Թարյանը գիտեր թատրոնի լնգուն։ Նա թեև կենցաղի լայն, նրբեմն համապարփակ իմացություն ուներ, սակայն Թիֆլիսի կոլորիտը (որը շատ ավելի հեշտ էր պատկերել) արտաքնապես ընդգծված չէր, այլ ֆրագմենտար ձևով էր տրված, պսպուն ապակենակարի, միշոցով և կամ էլ տարազների կոնկրետ նրբերանգներով։ Ժանրային մի շարք տեսարաններ կոմիկական ցայտուն զգացողությամբ էին մատուցված։ Այսոր նետված նային բեմում ծավալվող իրադարձություններին նե-

տևում էր ավանակատիպ դիմակի անցքից, իսկ Զամբախովը, աղոթելիս անգամ, ձեռքից բաց չէր թողնում Բաշվիչը:

Այն ինչ նույն ոճով: Լիակատար Բամերաշխություն կար Ենրկալացման ոնժիսորական կերպարի և նրա ծավալների դեկորատիվ լուծման մեջ: Միմյանց լրացնելով՝ դրանք Բաստատում էին իրար: Ստեղծված էր բեմական տարածության այնպիսի մթնոլորտ, որը կրկնակի պատկերայնությամբ առանձնանում էին կատակերգության սոցիալական խորությամբ բացված մերումները: Որքան էլ առաջին հայացքից պասսիվ թվար «Ըստաբարակայի» ձևավորումը՝ նա իր պարզ կերպարով ասում էր այնքան շատ, որքան կամեցնել էր ոնժիսորն ասել: Ոնժիսորական Ենրկալացում, միաժամանակ դերասանական փայլուն անսամբլ, իսկ բեմանկարիչը անմասն չէր այդ ամենից:

Ոգևորված առաջին հաջողությունից, դարձյալ Թարյանի մետ, Գուլակյանը բեմադրեց «Պեպոն» (1929): Սակայն ոգևորությունը թատրոնում էլ չափ ու սահման ունի: Բազում պատկերների տրոհված, անհարկի լրացումներով խճողված այս բեմադրության մեջ Գուլակյանն այնքան իրեն նման չէր, որքան Թարյանը :

Տարածության խստիվ կազմակերպումը բեմում՝ Թարյանի արվեստի ամենաբնորոշ գիծն է, նրա պրոֆեսիոնալ կարողությունների ուժը: Եվ այդ հատկությունը բացահայտորեն զգացվում էր «Պեպոնի» բեմադրության մեջ: Այստեղ Ակարիչն ավելի հակված էր դեպի դերակատարները, նրանց ուսականական ոճը, քան` ոնժիսորի ինքնանպատակ զեղումները: Թարյանի ընկալումները գալիս էին իրականությունից (ինչպես և դերակատարներինը), դրա համար էլ նա տարածության կազմակերպմամբ, չափավոր պայմանականությամբ, տա-

բազմերի լուծմամբ մշտապես հավատարիմ մնաց Սունդուկյանին: Մինչդեռ Գուլակյանը դրան մոտենավ որոնումների դժվարին և հակասական ճանապարհ անցնելով: Թարյանին հետաքրքրում էր Սունդուկյանի կերպարների և գրանց միջավայրի համոզիչ գեղարվեստական արտացոլումը, իսկ ուժիսոր Գուլակյանը ձգտում էր ավելի «արդիական» լինել, քան դրամատուրգ Սունդուկյանն ինքնին:

Սակայն բարդ ու անորոշ որոնումներն ազդեցին նաև Թարյանի վրա: Հետագա տարիներին շատ բան փոխվեց նրա գեղարվեստական մկրունքների մեջ: «Նապուն Կորկուտյանը» ձևավորելիս (1934), որոշ տեսարաններում նա պարզապես տուրք տվեց Էկլեկտիկ, երթևն Շուշիսկ ֆորմալ մոտեցմանը:

Ստեղծագործական ներշնչանքով էին ստեղծված երա «Վասսա Ժնևանովա», «Արշալուսին» (1937) և երկայացումները: «Հրացանավոր մարդը» իր գրավիշ՝ ամրողականությամբ հանդերձ, որոշ տեսարաններում պատմական իրականության բարձրարվեստ պատճենավորման տպավորություն էր թողնում: Սակայն Սունդուկյանը Ստեփան Թարյանի ստեղծագործական մըշտական հետաքրքրությունը մնաց: Ամեն անգամ Սունդուկյանին անդրադառնալիս, «Քանդաճ օջախը» լիներ (1938), թե դարձյալ ու կրկին «Ըստաբալան» (1940, 1945) կամ նորից «Պեպոն» (1943), Թարյանը միշտ մի բան ուներ ավելացնելու, սրբագրելու: Սունդուկյանի մեկնարանությունը գնալով «Ըստոգվում» էր, դրա հետ հոկվում էր ու մշակվում Թարյանի արվեստը. ամեն անգամ կարծես նոր աշքով, մի նոր տեսանկյունից էր բացվում Սունդուկյանը նրա և մեր առջև:

Թարյանը մահացավ հիսունինգ տարեկան հասակում, երբ դեռ անելիք շատ ուներ, խոսք ուներ ասելու:

Ստեղծագործական ուժերը տակավին չեն սպառվել, թեև կյանքի վերջին տարիներին կարծես կտրված էր թատրոնից: Սակայն նա կտրեց-անցավ բավական դժվարին ուղի: Ինքը համեստ՝ շկարողացավ լիովին արծերավորել արածը: Մինչդեռ իր բնագավառում թարյանի արվեստն անշուշտ պատմական արժեք ունի: Տարիների հոլովման մեջ դժվար թե նսեմանա թարյանը իր Սունդուկյանի մեւ:

1964

ՆՐԱ ՀԵՏՄԱՀՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Քանդակի և գրաֆիկայի կողքին՝ թատրոն: Երփնագորդի կողքին՝ կինո և կրկես: Դժվար է ասել, թե որը էր նրա ստեղծագործության մեջ ավելի ծանրակշիռ: Թերևս միշտ կինոի խոսել դրանց հավասարակշության մասին: Գեղարվեստի մարդ իր խառնվածքով, մտածողությամբ. շրջահայաց ու բազմազնությամբ. Այդ էր վկայում նաև նրա աշխատանքների ապրիլյան ցուցահանդեսը:

Առաջին հայացքից, և այն էլ անծանոյթ այցելուի համար, արտասովոր ու փոքր էլ զարմանալի էր այն, որ Ակարչի տան ընդարձակ սրամում, մտերմիկ հարևանությամբ ապրում էին կերպարվեստի գրեթե բոլոր բնագավառներն ու ժանրերը: Վասո Խոջաբեկյանի մարմարյա կիսանդրու կողքին տեղ էր գտնլ Հրաչյա Ներսիսյանի գրաֆիկական դիմանկարը, իսկ մի հատյուրմորտ նայում էր ուղղակի «Խացարալայի» դեկորանկարին: Եղան մարդիկ, որ տարակուսանքով հարցնում

Էհն— մի՞թև այս բողը միննույն նկարչի ստեղծագործություններն են:

Այո. Ստեփան Թարյանը կարողանում էր գեղարվեստի տարրեր բնագավառներին ծառայել Բավասարաշատի նվիրությով և միշտ գտնվել իր բարձրության վրա: Այն ժամանակաշրջանում, երբ նա կերպարվեստի ասպարեզ մտավ, այսինքն 20-ական թվականների երկրորդ կեսին, այլ կերպ աշխատել չէր ել կարող: Նրա բազմավաստակ ժամանակակիցներից շատերն էին այդպես՝ Կ. Հալարյանը, Ս. Սարգսյանը, Մ. Արուտչյանը: Արժեքավորն այն էր, որ ինչպես սկսեց Թարյանը, այնպես էլ ավարտեց, միննույն եռանդով ու նվիրվածությամբ, միննույն ազնվությամբ ու Բավատարմությամբ իր գործի համեստ:

Մասնագիտական կրթությամբ Թարյանը քանդակագործ էր: Նրա բոլոր աշքի ընկնող գործերը չեն, որ զետեղվել են այս ցուցահանդեսում: Ինչպես Բանահու է լինում, որոշ աշխատանքներ դուրս էին մնացել, սակայն եղածն էլ բավական էին պատկերացում կազմելու Թարյան-քանդակագործի ստեղծագործության մասին:

Քսանականների կեսերին, երբ սովետահայ քանդակագործության հիմքերն էին դրվում, Արա Սարգսյանի, Սուրեն Ստեփանյանի հետ էր նաև Ստեփան Թարյանը: Նրա «Քարտաշը» (1925), «Չուլողը», «Լոռեցի պարտիզանը» (1938) կոմպոզիցիոն լուրօրինակ լուծում ստացած աշխատանքներ էին: Թարյան-քանդակագործը աշքի ընկավ Բառկասպես դիմանելու ժամանակարի ժամանում: 1930-ին ստեղծած նրա Վանո Խոջարենյանի դիմաքանդակը առանձնանում էր խարակտերի սուր բնութագրությամբ, ծավալների պլաստիկ Բագնցվածությամբ, մակերեսների մշակման զանազանությամբ: Մնացածաղանդ նկարչի կերպարը խորուն է, ինքնամ-

փոփի: Խոջաբեկյանին նա գիտեր մոտիկից, անձամբ...

Հետագայում ևս Թարյանը ստեղծում է թեմատիկ-կոմպոզիցիոն դիմաքանդակներ: «Ներասամումի Մ. Պարոնիկյանի դիմաքանդակը» (1945), օրինակ, բազմաշնորհ Թարյանի քանդակագործական անուրանալի տաղանոի արգասիքն է: Մեղմ, ասես անձական մի երազ-տրամադրություն կա այս կերպարի մեջ, որ ձևերի և ֆակտորաների մեջ, ասես երփառագրալին մշակումներով է ստեղծվում: Քնարական տրամադրությամբ հագեցած այս մարմարյա աշխատանքը, Բիրավի, մեր պատուերասարամի ակներն ցուցանմուշներից է:

Ափսոս, որ Բաքվի Ալի Բայրամովի անվան ակումբի քանդակագործական համալիրը գոնե լուսանկարչական վերարտադրությամբ չեղ ցուցադրված:

Ստեփան Թարյանը գեղանկարչական, գրաֆիկական ամենատարբեր եղանակներով արված աշխատանքներ ունի՝ դիմանկարներ, նատյուրմորտներ, բնանկարներ, որոնց թվում կան և նախապատրաստական և ավարտուն, ինքնատիպ գործեր:

Թարյանը ոչ միայն բազմակեզդու, այլև բազմակողմանիորեն օժտված նկարիչ էր: Որ ասպարեզում է Բանդեն գար, մնում էր Օրա առանձնահատկությանը հարազատ և այդ ասպարեզում ժամանակակից: Այնուամենայնիվ Թարյանի աշխարհը թատրոնն էր, դեկորների, գեեստների բազմառն ձևավորման արվեստը:

Նրա թեմանկարչական աշխատանքներում կան և կոնստրուկտիվ խաղահրապարակների նոր որոշումներ, և նատուրալ վերարտադրության դրոշմ, նայած թե ինչ ներկայացում էր և ում նետ էր ձևավորում: Դրամատուրգն ու ռեժիսորը ուղեցուց էին Օրա համար: Բայց նա, հավատարիմ մնալով այդ ուղեցուցին, բնավ չեր շեղվում իր ուղուց: Զարմանալի հատկություն: Նրբեմն

Օրա ձեւավորած Շերկայացումները այնքան ինքնատիպ էին, դեկորային կերպարով այնքան մոռոլիտ, որ դժվար էր կուաթել, թե բևմանկարիչը նաև արձանագործ է, նաև գրաֆիկ: Նա չէր չարաշամում իր գիտելիքներն ու ընդունակությունները, չէր հարմարեցնում նյութը իրեն, այլ ինքը էր հարմարվում, ելնելով նախ և առաջ թատրոնի և թատերայնության պահանջներից: Այդ առումով նա զտարյուն բեմանկարիչ էր, ասպետական ինքնազուարենությամբ: Չէր սիրում նաև ընդգծվել, ցուց տալ իրեն, բայց թեմի վրա ինչ երևում էր՝ նրա ձեռքը կար, ձուլված ամեն ինչին, դեկոր լիներ, թե տարագ կամ լուս ու դիմաներկ: Նրան օգնում էր ժամանակի գգացողությունը: «Զարդը», օրինակ, այժմ էլ արդիական է, ինչպես 30-ական թվականներին: «Չիո-Չիո Սան» օպերայի ձեւավորումը համჩնչուց է: Սպենդիարյանի անվան թատրոնում այսօր ցուցադրվող դասական երկերի ձեւավորման ընդհանուր տիպարին՝ թե գունանկարչական և թե տարածական խնդիրների լուծման պարզորոշ ըսկրզբունքով:

Իրերի տխուր բերումով, նա հաճախ կանգնում էր նաև կորուստների առջև: Պետք էր լինում ինչ որ ձևով, ասենք, հրաժարվել ֆորմալիզմի պիտակ ստացած «Ըստաբալայի» կամ «Պեպոյի» առաջին ձեւավորումներից (ինչպես գրում էին 30-ական թվականների մամուլում): Բայց Թարյանը դրա հետ չէր հաշտվում, զուր տեղը իրեն չէր վերանայում, այլ փորձում էր նույն գործերին անդրադառնալ նոր տեսանկյունից, նոր, սակայն ոչ նախորդի հակադրությամբ: Այսինքն, նա իրեն երբեք չէր ժիստում, չէր հակասում, այլ հենվում էր անցյալի վրա, առանց նրանից կառչելու, առանց «մեջքերումների»: Ցուցահանդեսում զետեղված «Պեպոյի» մեջ նախորդից հետք անգամ չկա, թեև մի այլ դեպքում կա-

բելի էր և արժենք Բիշել ու Բիշեցնել անցյալը: «Ըստարարական» ոչ միայն ոչնչով նման չէ նրա սունդուկյանական անդրանիկ Բիհանալի աշխատանքին, այլ ասես մի ուրիշ նկարչի և բոլորովին ուրիշ սկզբունքով կյանքի կոչված ձևավորում լին: Հետևաբար Թարյանի «Ըստարարական» և «Պեպոն», որոնցից յուրաքանչյուրին նա անդրադարձել է մի քանի անգամ, պետք է դիտել որպես միանգամայն նոր ձևավորումներ: Անունները նույնն են, նույն է նկարիչը, բայց այնուամենայնիվ, դրանք Սունդուկյանի անվան թատրոնի պատմության մեջ նրամն նույնիսկ դիտվում են իրու ծայրամեղորեն տարբեր գեղագիտական ըմբռնումների արտահայտություն:

...Իսկ ցուցադրված էին լոկ առանձին նմուշներ, ոչ լավագույնները, ոչ նրանք, որ թատրոնում ավելի ուժեղ են հնչել, «ստեղծել եղանակ»: Մինչդեռ թեմանկարիչին պիտի գնահատել ոչ միայն և ոչ այնքան թողած էսքիզներով, այլ ձևավորած ներկայացման պատմության ոլորտում, այսինքն թեմական կոնկրետ ծառայությամբ: Այսօր, ասենք, կարող են և չափազանց հավաստի թվական առա «Հրացանավոր մարդը» ներկայացման որոշ էսքիզներ, հատկապես պատմական վայրերի, Սմոլնիի դեկորացիոն վերարտադրության մեջ: Սակայն թեմի վրա դրանց հնչեղությունը այլ էր. պատահական չէ, որ դրանք մասսամբ ճշանաձող դարձան հայ թեմում լեզինյան մյուս ներկայացումների համար:

«Նապոլեոն Կորկուտյանի» էսքիզները Սունդուկյանի անվան թատրոնում կատակերգականի այն ժամանակվա ըմբռնումները ըստ ուժիսուրայի մեկնաբանող վավերագրեր են, միաժամանակ Դեմիրճյանի երգիծանքը կերպարվեստի ժամանակակից լեզվով բացահայտող նմուշներ: Բայց ո՞ր են դրանք, ինչո՞ւ չկային ցուցահանդեսում: Իսկ ինչո՞ւ չկային Սոսկվայի Բախրուշինի


անվան թատրոնում խնամքով պահպանվող «Բանվոր քերին Արևելքում», «Բանդած օջախ» պիեսների տարագնների և սունդուկյանական մյուս ձևավորումների լավագույն էաքիզները, դժվար է բացատրել, թեև նրատարակված Ակարացանկից դուրս չեն մնացնել:

Այսօր, ստեղծման օրից երկար տարիներ անց, շատ հաճնի է դիտել Թարյանի գրաֆիկական դիմանկարների շարքը, հատկապես Ս. Շահումյանը, Սայաթ-Նովան, Ս. Աղաջանյանը, Ս. Քոչարյանը, Ֆ. Դովլաթյանը, Մ. Գևորգյանը, թեև դրանք միևնույն գեղարվեստական ուժն ու ընդհանրացումը չունեն: Ուրախային այն է, որ պահպանվել ու մեզ են փոխանցվում մարդկային այն հուզվերն ու նրբագեղությունը, որոնցով չերմացած են ալդ դիմանկարները:

Ստեփան Թարյանը յուրաքանչյուր քնագավառում նրբագեղ էր ու մարդկային, իր կոլորիտն ուներ, պատկերված նյութի վերարտադրության ուրույն մաներան: Որպես արվեստագետ ու քաղաքացի համեստ էր ու գիտեր համեստության բարձր գինը: Նա այնքան լավ էր գգում իր տեղը և այնքան նիմնավոր էր գրավել, որ նրան տեղահան չարեց անգամ ժամանակը: Եվ չի էլ կարող:



Արմենակ Տիգրանի լուսապատճեն



Կարո
Մինասյան



Զ. Վերդի, «Շնուն և Զովինտ», ղեկորմների էսթի Կ. Մինասյանի





«Բաք Նազար», զգեստների էսքիզ՝ Ալեքսեյ Շամոյուրյանի

«Ձև սրտի կրակը», դեկորների էսքիզ՝ Մ. Ասլամազյանի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱՎԱՐԱԿԱՆ ԱՐՏԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Արմեն
Գրիգորյանց


«Պիես», I գործողություն, դեկորմերի էսքիզ՝ Ա. Գրիգորյանցի







Արշակ
Աղայան

Արշակ Աղայանը իր արվեստամոցում, 1978






Մ. Մարտիանի եռամկար աշխատանքը գ. Սունդուկյանի աճան
թատրոնի ճամասրանում. Վարագովի նատվածով



«Շոյմենն, Զովինտը և խավարը», միասմական դեկորմերի մակետ՝ Սարգիս Արուտչյանի

Ս. Արուտչյան, Լ. Խաղաքյան, Մ. Արուտչյան, 1959





Գևորգ
Վարդամյան



Սուլիկ
Ստեփանյան

ՅԵՒՆ ՏԱՐԵՎԴԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

Մելիքսեն Սվախչյանի ծննդյան 50-ամյակի առթիվ

Տարիքը միշտ չէ, որ արվեստագետի հասունության գրավականն է դատնում: Սվախչյանը կյանքից մնուածավ, երբ ընդամենը երեսուն տարեկան էր: Սակայն ամեղ պատերազմը, որին զուգադիպեց նրա բուռն գործունեությունը, Ակարչին օր առաջ հասունություն թնգիր, շատ ավելի վաղ դարձնելով նրան հմուտ և օրինակելի մի արվեստագետ, քան այդ կարող էր տալ «սովորական» պայմաններում ձեռք թնրած կարճատև տարինեղի փորձը:

Սվախչյանն իր ժամանակի և միջավայրի հարազար ծնունդն էր: Նախապատերազմյան էնմինգրադը, որը մինգ տարի ապրել և ուսանել էր Ակարիչը, նրա արվեստի ու անհատական խառնվածքի վրա անջնջելի մնուք էր թողել: Դասական գեղեցկության դպավանքով նա զտարյուն լենինգրադի էր, և դա արտացոլվում էր նրա ոչ միայն հմայքառատ անձնավորության, կիրած բնավորության, այլև գեղարվես-

տական ողջ պրակտիկայում: Արտացոլվում երա յուրաքանչյուր ձևավորման մեջ:

Այժմ, երբ քսանամյա հեռավորությունից անդրադառնում ես Սվախչյանի ստեղծագործական նկարագրին, պարզվում է, որ քաժանման տարիները անզոր են հմայրի առջև: Սա է, երևի, արվեստագետ մարդու հարստությունը, երա արտիստական կերպարի լուսավոր կողմը:

Նրա անձնավորության և գործի միջև հազվագյուտ ներդաշնակում կար: Չուր չէ, որ ճանաչողները երան հիմա էլ սիրում են խանդաղատանքով, քացառիկ ջերմությամբ, այն սիրով, ինչպես կսիրեն ապրող մարդուն:

Հերոսական ժամանակներում Սվախչյանը սիրում էր խոսել սիրո, մարդկայնության և գեղեցկության մասին և դրանց մեջ նշում էր նախ և առաջ հերոսականը: «Նրա առաջին նշանակալից աշխատանքը «Երկիր հայրենին» էր, որ Անի քաղաքը մին ավանդությունից, ազգայիշ պատրանքից դարձավ հերոսության խորհրդանիշ, կենդանի կերպար: Նկարիչը Անիի ճարտարապետական անսամբլի մեջ տեսավ նախ կառուցող ժողովրդի կամքն ու ոգին, գեղարվեստի հանճարը, որ խաքնված է ամեն մի խոյակի, կամարի, յուրաքանչյուր պարսպի, «գոռող բուրգերի» ետևում: Բագրատունյաց պերճ մայրաքաղաքը ձևավորման մեջ պատկերված էր որպես հայրենիքի պաշտպանության հզոր պատվար, քանի որ ամրոց-քաղաքի գաղափարը բնավ չէր անտեսված, նույնիսկ կտորների «Բնակ թերության», վեհատեսիլ մայր տաճարի ոռմանտիկ գեղեցկության առկայությամբ: Մեծ հայրենականի տարիներին նման մոտեցումը ավելի քան արդիական էր. ձևավորումը կապում էր անցյալը ներկային, հեռավոր ու անհրագործելի երազանքը վերածում շոշափելի իրականության: Ասես վերակառուցվել

Էր Բայ թեմի Անհն... Պատաժական չէ, որ «Երկիր Բալոնեցին» Սվախչանի ձևավորմամբ Լենինականի, ապա Գ. Սունդուկյանի անվան թատրոններում ապրեց մոտ քսան տարի:

Նույն թերոսական շնչով ու գեղարվեստական պարոսով էլ կյանքի կոչվեց «Արա Գեղեցիկը»: Նվ արդյոք բիրտ Բորդաները կհանդանէին բնաջինջ անել Մարդուն ու նրա նոգուր գանձերը, եթե զրանց ընդդիմանար արարչագործ մի ժողովուրդ: Դա ժամանակակից ողբերգության լիարժեք փոխադրությունն էր թատերադեկորացիոն գեղանկարչության և մոնումենտալ քանդակի լեզվով: Հեթանու աստվածների թեմական-քանդակագործական մարմնացումը, Սատրեստան և Ուրարտու աշխարհների սուր հակադրությունը փաստորեն տարրեր մշակույթների՝ մարդասիրության ու մարդատյացության պայքար էր նշանակում: Բնմի վրա, Թերոսթերի կողքին, Շկարչի Չնորմիվ, խոսում էին նաև նրանց ստեղծած աստվածները՝ միշտ հին և միշտ նոր պաշտամունքների համբերժական բախտումն էր այդ, ուր, Թեթանոսական հրեեն լեզվով, վաղնջական հինը ձայնակցում էր այսօրվա պահանջներին:

Գեղարվեստական իր բացարձակ արժանիքներով, «Արա Գեղեցիկի» նետ կարող էր մրցել սոսկ նրա «Կրեսինսկու Բարսանիքը», ուր Շկարիչը կարծես նպատակ էր դրել իր վերջին աշխատանքով դրսնորելու շոայլ տաղանդի երփնագրային պարգևները, որոնց հնչողությունը դուրս էր գալիս թեմի շրջանակներից:

«Տասներկուներորդ գիշերի» ձևավորումն էլ բոլորովին այլ աշխարհ էր բացում Բանդիսականի առջև: Եղիգաբեթյան թատրոնի թեմադրական «միամիտ» սկզբունքները, պինսի ժամրային թատկությունները այստեղ յուրովի էին թեկվել Շկարչի երևակայության մեջ:

Գեղարվեստի պատմական մի դարաշրջան էր վերապատկերված թնմում, դրա մեռ և շերսպիրյան մոլեգին հանդիսականը, որպես այդ թատրոնից անքաժան միավոր: Պայմանականության թարմ ըմբռում, թատերայնությունը շերսպիրյան հասկացողությամբ: Այդպես էլ Ըկարիչը մտնրմացնում էր Ռուբենսի Սիլենին Թորիի և իր այսօրվա դերակատարի հետ, կամորք գցում վերածնողի դարաշրջանի և մեր օրերի միջև: Սվախչյանի նրբնմն հանդուգն ու միշտ բարեքեր երևակայության թոփշքներից կարողանում էր օգտվել միայն երևակայությամբ ու գեղարդեմատական մտածողությամբ աղճաբան մարտուտ Վարդան Աթեմյանը...

Գ. Սունդուկյանի անվան թատրոնի «Ժայռ» և մանավանդ «Վանքաձոր» ներկայացումների մեջ ևս Սվախչյանի տաղանդը խոսում էր մեծափորձ ու ինքնատիպ արվեստագետի մասին, որն իր ստեղծագործական մեծ կարողություններով, սահման չճանաչող երևակայությամբ, բնմարվեստի առանձնահատկությունների մեջ խորամուխ լինելու իր բացառիկ տվյալներով չեր զիշում ավագ կոլեգաններից ոչ մնկին, եթե չասենք, որ շատերից արդեն բարձր էր: Նա նկարիչ էր կոչումով, անպարփակ հնարավորությունների տեր, երիտասարդական ավլունով լի, անհատականությամբ բարձր ու վեճի: Այսօր հիմնամյա Մելիքսեթը նույն համոզմունքով կնայեր անցյալի իր վաստակին:

Պոլ Էլուարը ասել է՝ «Մարդկության գեղեցկությունը ավելին է, քան ինքը՝ մարդը»: Սվախչյանը համակ գեղեցկություն էր, գեղարվեստի գաղափարական ծառայության մարմնավորում:

ՄԻՆԱԾ ԱՎԵՏԻԱՑԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՅԽԱՐՃԵ

1. ՄԱԿԵՏՆԵՐԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆ, ԷՍՔԻԶՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ...

Տասնամյակներ առաջ թատերական Բեղափոխության հայ պարտիզաններից մեկը իրեն իրավունք է վերապահել կատակեղու՝ «Միայն յեն լինեն Յակովովի մակետները, պիես միշտ եւ կճարվի»: Այսօր, անշուշտ, նման հարցադրումը կարող է զարմանք շարժել: Եվ այդ ոչ թե նրա համար, որ յուրօրինակ չափազանցություն է, այլ, ավելի շուտ, այն պարզ պատճառով, որ մեզանում մակետ կամ էսքիզ Բասկացությունները գրեթե դուրս են մոլոր գնդագիտական ըմբռնումների ոլորտից. Միայն մեզանում, նայ իրականության մեջ:

Եթե փորձենք «Լրաստամից սկսած, Ռեկրաֆնայի, Բելոռուսիայի վրայով մուտք գործել մինչև մերձբարյան թատրոններ, ապա իսկույն պարզ կդառնա, որ մակետի, ընդհանրության ձևավորման կուլտուրան, ոչ մի տեղ այն-

բան տիմուր վիճակում չէ, որքան մեր թատրոնում: Բոլորին հայտնի, ցավացի իրողություն: Բայց շատնքին հայտնի չէ, որ այսօր այդ նույն մարզում նորից մենք ունենք այնպիսի ուժեր, որոնք մեր բնմարդկեստի համար հույս ու ապավես կարող են լինել: Օրինակ, ահա, երբ Լենինգրադի Գնդարդեստների ակադեմիան նոր ավարտած մեքարիչ Մինաս Ավետիսյանի ցուցահանդեսին ծանոթացավ քայլությանը Յակոբոսնը, Օրան Խոկույն պատվիրեց «Սիստերիա Բլոֆ» ձևավորել Ս. Կիրովի անվան օպերային թատրոնի համար, մինչդեռ Երևանում միատամանակ ոչ ոք չէր կուահում թատրոն Անդրդրավել այդ «անձանոյ» մեկարշին: Միայն Ե. Չանգան ճանաչեց Օրան և առանց հապաղելու հաճանարկնեց բարդ ու դժվարին մի աշխատանք՝ մեկական գործողությամբ նրեք տարբեր բալետների ձևավորումը, որոնք պիտի ցուցադրվեն մի երեկոյի ընթացքում:

Այսպես. երեք տարբեր բալետ՝ դասական երաժշտության պյութերով, երեքն էլ նորություն հայ թատերական կյանքի համար՝ Մորիս Ռավել, Զիակին Ռոսսինի, Զորշ Գերշվին, «Բոլերո», «Կախարդական տիկնիկներ», «Ըլքալների թաղամասը»: Առաջինը իսպանական իրականությունն է պատկերում, երկրորդը մեզ փոխադրում է Խոալիա, երրորդը պատմում է ամերիկյան Շեքսբերի անուրախ կյանքի մասին:

Երբ դիտում ես պատրաստի մակենաները, թվում է նրանք մի շնչով, կամ ավելի շուտ, միևնույն մերշնչումով են ստեղծված. բայց որպիսի՝ քրտնաշան աշխատանք է նախորդել դրան, որոնումների ինչպիսի բարդ պրոցես, մինչև որ բազմաթիվ էսքիզների հիման վրա գտնվել են այդ ճշգրիտ ու գունեղ կերպարները: Եվ

* Զիրականացված աշխատանք:

միայն երիտասարդ, տակավին անփորձ նկարչի համարումն է կաշկանդում, որ ասենք թե արվեստն այստեղ այնքան է բարձր, որ պրա վրա թափած բրտինքը չի նկատվում: Իսկ մերշնչումը, անշուշտ, բխում է բալետների երաժշտության խորն ու հոգումնառաւ բնույթից, և այն բովանդակությունից, որի խորեոգրաֆիկ մարմնավորման համար նրենակայությունն իր առաջ լայն դռներ է բացում:

Մինչև վերջ սուր հակադրությունների վրա կառուցված գունեղ երաժշտությունը պեսք է պարփակել արտաքնապես հստակ ու պացիկ կոմպոզիցիոն ձևերի մեջ: Ինչպես՞ն կարելի է «Բոյերոն», որ իսպանական ժողովրդական մելոսի չարաշուգակ ու դանդաղ համազարկերին հետզհետեւ փոխարինելու է գայլս շեփորի աղերսանքը, որպես մարդկային դառը ճակատագրի գումարկան, այդ «Բոյերոն», վերարտադրել միօրինակ գուներանգմերի և քեմական տարածության անձուկ քառանկյունու մեջ: Ավետիսյանի պատկերմամբ դա ոճրի ու ոճրագործության մոռյլ մի տեսարան է, տագնապալից, թանձր մթնոլորտ՝ սիրով ազատ, սիրուց բորբոք իսպանացու համար: Սլացիկ ոլիթոմի մեջ է դիտված արտաքին ողջ շրջապատը: Գնտնից կարծես դեպի երկինք է խոյանում օձագալար մի սանդուղք (ժամանակակից իսպանական ճարտարապետության ոճով), քննամիարթակը, թվում է, կապված է մթամած երկնքի հետ, իսկ պարի լայն հրապարակի լուրօրինակ նախադուռ է ծառայում կորանիստ կամուրջը, որի տակից լուսնի և լուսի կախարդիչ խաղով քեմ պիտի եղնի պարախումը: Լուսինն էլ, պաղ բոց մաղենով, աննկատ շրջանցում է քեմը: Մութ ու մթնշաղ, կյանքի և մահու սահմանագիծ. դատապարտված են այն հերոսները, որոնք խանդի մոլուցքով բռնված սուր նն ճոճում միմ-

յանց դեմ: Բայց կապույտին տվող մեռուն նրանց կանչում է դեպի կյանք. լուսի և ստվերի խաղն էլ այստեղ լիովին համակերպվում է նրածշտության և խորեոգրաֆիկ հղացումների մետ: Փակված են թեմի կուլիսները, ոչ մի եզրավարագույր, թեմը հնարավորին չափ զորկ կլինի իր ամենօրյա գորշ բնագուստից: Գունամկար-գրաֆիկական նախշերով զարդարված հատուկ վահանիկները ձախ ու աջ կողմերից միամարտվ թեմի հայելուն, մակետին տալիս են գեղարվեստորն ընդհանրացված, ամբողջական տեսք:

Երեք տարրեր մակետ, երեքն էլ թեմի զանազան շրջանակների մեջ առնված, երեքն էլ յուրովի փակված կուլիսներով: Կուլիսային այս «փականք» առանձնապես հարստացնում է «Կախարդական տիկնիկների» մակետը: Եզրավարագույրներից նայում են լացող տիկնիկների դիմակներ և դիմակավոր տիկնիկներ ժպտառատ ու հեգնող հայացքներով. քայլեսի լիբրետոն լըրացնող մոտիվներ են: Տիկնիկները մարդու պես սիրում են իրար, անկարելի է նրանց նվիրական կապը խաել: Գլխավոր ներոս-տիկնիկների թեմական վարքագծին ուղղություն տվող նշանաձողներ են սրանք: Հըռչակավոր «տիկնիկների խանութը» պայմանական լուծում ունի, ոչ մի կենցաղային մանրամասն, խանութը չէ կարևորը, շրջվող դռնով կլոր հարթակ, իսկ մնացլալը հանդիսականի երևակայությանն է թողնված: Հետնապարագույրի վրա «իրիկնային հրով վառված» ծովն է, փայլվիլուն, խոշորացված կոჩակներով: Գուցե Վենետիկն է, գուցե Նեապոլ... Հեռվում ցամաքն է նստած՝ ծովափին թեք ընկած տնակներով: Կապուտակ շրերի զովաշունչ բուրմունքը պիտի ներխուժի թեմ, լիարյուն կյանքի կոչելով թատերային այն տիպարներին, որոնք նոր ոգի և շունչ կառնեն ապագա ներկայացման մեջ:

Երրորդ մակետը ամերիկյան ականավոր կոմպոզիտոր Գերշվինի «Բլուզ տոներով ռապսոդիալի» երաժշտական թեմայով ստեղծված «Լքյալների թաղամասը» բալետային ներկայացումն է, որ սովորական իրականության մեջ բնմ է բարձրանալու առաջին անգամ։ Այստեղ էլ իշխում է լակոնիկ պայմանական ձևերով բնմահարթակը լուծելու բացահայտ միտումը։ Ուժեղ հակադրություն կա՝ առայժմ գեղանկարչական և ծավալների լուծման՝ իսկ հետագայում կլինի օակ բնմադրության մեջ։ Նկարիչը հնարավորություն է տալիս բալետմեյստերին տեխնիկայի ժատ միջոցներով հասնել այդ նպատակին։ Երկու Ամերիկա՝ գետնախորշների կիսամուգ խրճիթներ և լուսաճանանչ, երկնահաս կառուցների հեռապատկեր։ Ննգրերի կյանքը տառապանք է, երջանկությունը՝ անհաս մի երազ՝ թափառումների մութ ճանապարհին— ահա մակետից ստացված առաջին տպավորությունը։

Ընդունված է ասել— դրամատորգը պիեսը բերեց թատրոն, կամ ուժիսորը ստանձնեց բնմադրությունը, բայց հազվադեպ և՛ն դարձնել— նկարիչը մակետները հանձնեց թատրոնին կամ էսքիզներն արտադրության մեջ և՛ն— արտահայտությունները։ Մինչդեռ որքան շատ բան է կախված այդ մակետներից։ Ժամանակակից թատրոնի պայմաններում կարող նկարչի ներդրումը բախտորոշ ջշանակություն ունի ապագա ներկայացումն ստեղծելու հարցում։ Մակետը բնմադրական աշխատանքի նախագիծն է, ապագա ներկայացման կոմպոզիցիայի հիմքը, ուժիսորի ստեղծագործական հղացումների անբաժան ուղեկիցը։ Սունդուկյանցիները մոտ մեկ տարի չարչարվում էին «Քառոսի» մակետը գտնելու համար... Այդպես է, մակետը ստեղծագործական տևական որոնումների հետևանք է միայն։ Ավետիսյանի
10—Թատերական նկարիչների մասից

Թիշյալ մակենտներում ամբողջ ներկայացման նախագիծը լիովին գտնված է, կոմպոզիցիան միասնական ոճի մեջ դրված՝ հստակ ու սլացիկ կերպարանք ունի, երփառագիրը թատերային է, շրեն: Այն էլ ասենք, որ մի քանչի դեպքերում գունանկարի ծանրաբեռնվածություն է նկատվում և քեմական ծավալների դեռևս ոչ հստակ պատկերացում:

Ուրախային այն է, որ թատրոն է՝ ոտք դրել խոստընալից մի Շարիչ, ջամփել, հետևաբար անփորձ, բայց գեղարվեստական իր մտածողությամբ, երփառագրի դեկորատիվ մաներայով թատրոնի մարդ, որ մեծ հավատ է ներշնչում:

1962

2. ՆԿԱՐԻՉՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԸ

Հեշտ չէ Մինաս Ավետիսյանի մասին գիրք գրել, թեկուզ փոքրածավալ: Նկարչի ստեղծագործական առաջին տասնամյակը, որքան բուռն ու հարուստ իր պատճառած անսովոր ուրախություններով, այնքան էլ ամակնեղակալ էր որպես արվեստի երևույթ: Ակարում՝ անակնեղակալ, իսկ Բիհմա՝ արդեն սովորական, նոր ընտեղացամբ:

Անսովորի հետ հաջողացնջնդու, ամսովորը սովորական դարձնելու մեջ է հավանաբար Ակարիչ Մինասի ակներքն ուժը: Նման դեպքերում արվեստաբանությունը լուրջ ամենիք ունի. այսինքն ժամանակին տեսնել Ակարչին, հաւկանալ նրա արվեստը, ապա հասկանալի դարձնել ուրիշներին:

Հենրիկ Դոգիթյանի ադրբեյտաքանական աշքը իրականում բացվեց Մինասի պատուաների վրա. երփնագրի

* Հենրիկ Դոգիթյան. «Մինաս Ավետիսյան», Մոսկվա, 1970. Բրառ. «Սովետսկի խորոժնիկ», 120 էջ, 57 Ակարով, որոնցից 10-ը գուավոր:

պարզ ու ըմբռնելի գգացողությունը նախ և առաջ եկավ Մինասի ստեղծագործություններից: Ծատերը տեսան ու գնաճատեցին Մինասին, թերևս նրանից էլ վաղ, բայց շատերը չէ, որ այդ մասին արտահայտվեցին բարձրաձայն:

Հեղինակն ասես ստեղծագործել է Շկարչի հետ գուգամինուարար, նրա կողքին, բայց և նրանից անկախ: Բազմաթիվ ու բազմապիսի հոդվածներից է ծնվել սույն ուսումնասիրությունը, փորձությունների բովից է անցել, եփվել ինքն իր մեջ, սրբագրվել հետզհետև, ի վերջո, հասել ընդհանրացման:

Ոգևորությամբ ու մեծ սիրով շարադրված այս գիրքը աշքի է ընկնում քուն թեմայի համակողմանի իմացությամբ, նաև նյութի ազգային հիմքերը պրատելու արվեստաբանական ջանքերով: Մինասի գունախիտ երանգապանակի, գունային մտածողության և լուծումների, վերջապես, նրա ստեղծած գունային կերպարների մասին հեղինակը երբեմն այնպես տարված, ինքնամոռաց է խոսում, որ ասես ինքն էլ մտածում է նըկարչի պես, գունանկարչական նույն խնդիրներով է մտահոգված, ասես նրա առջև ոչ թե Զաջոտն է, այլ մի նոր Բարբիզոն:

Մինասը հետևողականորեն ու յուրովի է բացահայտում գույնի անելիքը կտավի վրա, չեզոք տարածության մեջ, իսկ Խօֆիթյանը հասկանալով այդ բարդ պրոցեսը, ձգտում է բավական բարեխղճորեն բացատրել և բացատրում է մասնագիտորեն, Մինասից ամենին շներանալով. սա է արժեքավորը և համելի որակ մեր արվեստաբանության համար: Լավն այն է, որ այստեղ չկա գույնների դասավորության ինքնարակ վերաշարադրանք կամ պաստառների թվարկում զիլ ածա-

կանաների օգնությամբ, այլ կա նկարչի արվեստին անհրաժեշտ պարզ մեկնարանություն:

Բացի այդ, Մինասի ստեղծագործությունը դիտված է ժողովրդի պատմական ճակատագրի և Բայ Կերպարվեստի զարգացման խաչուղիներում, ընդ որում տեղտեղ Բամարձակ և շատ Բամախ Բամոզիչ:

Բնանկար, աշխատանքի թեմա, նատյուրմորտ, դիմանկար, պատմական անցյալի ոլորտներ և սցենոգրաֆիա՝ արվեստարանն ասես կրնակակոյն թետևում է իր ներուսին: Հարցերը մեծ մասամբ դրվում և վերլուծվում են մասնագիտական ռեալ նորի վրա, աստիճանաբար դրսնորելով նաև գեղանկարչի ընդգծված անհատականությունը, Բաստատելով նրա ստեղծագործական անշեղ ուժին:

Մենագրության մեղինակին մետաքրքրում է նախ և առաջ գույների և գծերի լեզուն, դրանց միջոցով արտահայտված միտքը: Որքան ցայտուն է «Հաց և՛ն թըխում» կտավի մեջ աշխատանքի մարդկանց բանաստեղծական կերպարը, այնքան վառ դրսնորում է գըտել նրա արվեստարանական բնութագիրը, որ ավարտվում է այսպես: «Ժանրային-կենցաղային տեսարանքները է բնորում գրեթե սրբազն արարողության Բնշողություն»: Այնութեև, երբ այդ «նոյն» կանաքը «Խնոցի և՛ն Բարում», ասես գործ ունեն գեղջկական օրորոցի մետ, աշխատանքը դառնում է սեր, կարոտ, անհանգըստություն, բարձր պոեզիա: «Պլաստիկական և գունային կերպարները այստեղ մրցում են միմյանց մետ, կենցաղային իրերն անգամ՝ խոսում: Ու թեև այսպես չի ասում Բնդինակը, բայց նրան մենց այսպես պիտի Բասկանալ:

«Գայանեի դիմանկարում կա ինչ-որ վեհացնող, կարապալին բան», — շարունակում է մեղինակը Մի-

նասի դիմանկարներին անդրադառնալիս և ապա բացատրում, թե ինչու նկարիչը բնորդի գնրին չի դառնում, թե ինչու մոդելը, ի վերջո, նրա համար մնում է եղակետ: Պարզվում է, Մինասի նման արվեստագետները մի շնչով ու թափով չեն կարող ավարտել գործը, նրանք շատ հաճախ ներքին պահանջ են գտում ավարտած նկարի գունային դեմքը Բիմնիվեր վերափոխելու: Տեսարանը հուշում է մեզ, որ նկարիչը գործում է համարձակ, ձերքագատված չոր ակադեմիական կաշկանդումներից, բայց և մեծ է ինքնահսկումը, պատասխանատվությունը, անքավարարվածության գգացումը: Ներշնչանք և իմպրովիզացիա, դրա կողքին ամիսներ տեսվող շարքաշ աշխատանք՝ արդեն «ավարտած» կտավի, գուած կերպարի վրա: Հետզինեւն նկարիչն ավելին է տեսնում: Այդում է ինքն իրեն իր աշքերով, առաջին տպավորության վրա ավելանում են երկրորդը, երրորդը: Կտավը, լինի դիմանկար, կոմպոզիցիա, թե նատյուրմորտ, ենթարկվում է նկարչի խատաշունչ կամքին:

Մինասը փաստորեն մեծացնում է գույնի ազդեցության սահմանները, վեր հանում նրա ներքին թաքնվածուժը, դիմամիկան: Դրա շնորհիվ զարգանում է նաև մեր գունային մտածողությունը: Բարստանում է մտքի ճաշակը գունային նոր ըմբռնումներով ու փոխհարաբերությամբ:

Այս գիրքը միաժամանակ նպաստում է բաց աշքերով և քննադատաբար նայելու նաև մեր մյուս գեղանկարիչների աշխատանքներին:

Զե, որքան դժվար, ալեքան էլ հաճելի է Մինասի մասին գիրք գրելը:

Մենք դժվարությամբ մոտեցանք նրա արվեստին. բայց մոտենալուց հետո ընդմիշտ ընտելացանք: Այժմ

արդեն դժվար է պատկերացնել ժամանակակից հայ կերպարվեստը առանց Մինասի:

Այս գիրքը ոչ միայն մեծ սիրո, ոնայ հասկացողությունների, այլև ազնիվ ոգևորության արդյունք է: Զլինեին այդ ամենը, չեր լինի նաև այս հետաքրքրական ու օգտակար գիրքը: Միայն ափսոս, որ այս ոգևորությունը գրքի վերջում արդեն բարի ծառայություններ չի մատուցել հեղինակին: Այդ թերությունը մեզ մտահոգում է առանձնապես, ուստի և դրան կամենում ենք մի փոքր հանգամանալից անդրադառնալ:

Գեղամկարիչ Մինաս Ավետիսյանի ստեղծագործական կյանքում խատրոնը միանգամայն օրինաչափ երեւույթ է, հետևաբար օրինաչափ է և այդ նյութի գրադարած տեղը (90—109 էջ): Բայց սա հարցի մասնակի կողմն է. կարևոր այն է, թե ինչպես է լուսաբաված նյութը ըստ Էության, ինչ փոխմարարերությունների մեջ և ինչպես է գնահատված քեմանկարիչն առնասարակ: Հենց այստեղ է, որ տեղ են գտել ցավալի սայթաբումներ և չափի զգացողությունը դավաճանել է հեղինակին: Եվ ահա հետևանքը:

Մինասի անդրանիկ թատերական աշխատանքի՝ «Երեք բայետ-նովելի» վերլուծության մեջ անզրից հզգիթյանը շտապում է ծանրակշիռ ընդհանրացում անել. «Բոլերոյի» ձևավորումը դարձավ յուրատեսակ էտալոն, չափանիշ ոչ միայն Մինասի հետագա թատերական գործունեության գնահատության համար, այլև առնասարակ հայ քեմանկարիչների» (էջ 92): Այսպես ինքնավստահ հայտարարում է հեղինակը և մոռանում ասածը հիմնավորել: Ասենք չի ել կարող, որովհետև հետագա վերլուծական մկարագրությունն ու տպագրուված էսքիզը դա չեն ապացուցում: Հիանալի գտնված

թատերային կոլորիտն ու տրամադրությունը տակավիճ քիչ են էտալոն դառնալու համար:

Նույն քեմադրության նրբորդ մանրապատումի՝ «Նեգրական թաղամասի» ձևավորման կապակցությամբ Խգիթյանն այնպես է խոսում, կարծես գործ ունի քաղաքական պլակատի Բնտ: Մինչդեռ այդ ձևավորման ակնառու արժանիքներից մեկն էլ այն է, որ Ըկարիչը ամեն կերպ ձգտել է պլակատից խուսափել: Լուսային ցուցանակները, Նյու-Նորրի նուանկյունաձև բացվող Բնուանկարը Մինասը լուծել է գեղանկարչորեն, գույնի ու գծա-պլաստիկական նորք միջոցներով: Իսկ եթե ներկայացումն այնուամենայնիվ ուրիշ բան է ասում, դա արդեն գալիս է ունժսորական մտահղացումից: Մենքի թերությունը չի կարելի վերագրել մյուսին, այն էլ առավելություն դարձնելով: Չի փրկում նաև Բեղինակի վերապահումը, թե՝ «Փինալային տեսարանը լուծված է մի փոքր ուղղագիծ, պլակատային»: Սա «Մի փոքր» չէ, այլ մեծ, և ոչ թե Ըկարչի, այլ բաելտմելստրի վրիպումը:

Ի վերջո, ամփոփելով «Երեք բալետ-նովելի» վերլուծությունը Բեղինակը Բիացմունքը բազմապատկելով բացականչում է. «Պրեմիերայի օրը Ավետիսյանի Բաջողությունը բոլոր սպասելիքները գերազանցեց: Ամբողջ դահլիճը ոտքի ելած վանկարկում էր՝ «Մինա՞ն... Մի՞-նա՞ն... Նման Բաջողություն Հայաստանում չէր տեսել և ոչ մի թատերական Ըկարիշ» (էջ 95): Ուստի ընթերցողը մի պահ կարող է կարծել, թե թատրոնը Հայաստանում տարիների պատմություն ունի, իսկ քեմանկարիչներ չեն եղել առհասարակ: Այն, որ Մինասի առաջին աշխատանքը պսակվեց լիակատար Բաջողությամբ, դա իրոք այդպես է, բայց որ դրանից շատ առաջ Մ. Արուտչյանի «Ֆիգարոն», Մ. Սկախչյանի

«Տասներկունրորդ գիշերը» և մանավանդ Մ. Սարյանի «Ալմաստը» հանդիսականի կողմից ընդունվել են առավել բուռն ոգևորությամբ և այն էլ մի քանի տասնյակ Շերկալացումներ անընդհատ, սա պետք է, որ հայտնի լիներ հեղինակին: Ինչու հակառել մեկը բոլորին, երբ այդ մեկը բոլորի ծնունդն է, բոլորի օրգանական շարունակությունը:

Հեղինակը երբեմն էլ ընկնում է յասնագիտական լարիրինթոսի մեջ, շփոթելով մակետը՝ էպիզմերի, լուսատու ներկի տեխնիկական ազդեցությունը՝ լուսաօդային մթնոլորտի գեղանկարչական լուծման հետ, հարթապատկերի ինքնատիպ ոճով արված տեսարաններն էլ դնում ծավալային սովորական դեկորմերի տեղ: Մինչեռ շատ ավելի պարզ ու ճիշտ կլիմեր ասել, որ ծավալային դեկորմերը Մինասի սրտովը չեն, դրա համար էլ նա հաճախ է ծավալի պատրաճը ստեղծում հարթության մեջ, երա երփնագիրն է որոշում թեմական ծավալը և մտնում գործողության ոլորտմերը: Սա է արժեքավորը թեմանկարչի արվեստում: Սակայն Դգիթյանը արվեստաբանական հարցերն այստեղ թեանցելով՝ շտապում է եզրակացնել. «Հերոսական բալլադի» սիմվոլիկ բովանդակության մարմնացումն ամրութեանավարագույրի չափով ֆիգորմերի զուգակցությամբ միանգամայն նոր խոսք է թատերական ձևավորման մեջ» (էջ 101): Ո՞վ ասաց: Այդ հնարանքին դիմով են շատերը. թավական է թեկուզ հշել Ա. Սարգսյանի «Համլետը», Կ. Մինասյանի «1905 թիվը», Մ. Սվախյանի «Արա Գեղեցիկը»: Արդար կլիմեր ասել, որ այստեղ ևս ուժի մեջ է մտել հաստոցային գեղանկարչությունը՝ զուգակցված մոնումենտալ ձևերին: Իրեն լուծում դա հիանալի է, հնարամիտ, խորնոգրաֆիկ թատրոնի համար արտաստվոր, բայց ոչ եղթեք՝ նոր խոսք:

Սակայն ամենաբնորոշը գլխի վերջում հայտնած անսպասելի դժգոհությունն է. «Գեղանկարչի դեկորների մասին,— ասված է այնուղ, որն արդեն տասներկու հիասքանչ քննադրություն է ձևավորել,— բացի ընդհանուր գրախոսականների հերթապահ արտահայտություններից, մամուլում բացարձակապնս ոչինչ չի գրվել» (108): Բա եղա՞վ... Ձեւ որ դեռևս 1962-ին, այն ժամանակ, երբ Մինասը ոչ մի իրականացված ձևավորում չուներ, «Սովետական արվեստ» հանդեսի մարտ ամսվա համարում առանձին հոդված է տպագրվել «Մակետները խոստանում են, էսքիզները պատմում» խորագրով, նետոն էլ գունավոր վերատպությունները: Խակ Բետոն, 1966—1969 թթ. պարբերաբար, այլևայլ հոդվածներում՝ հայերեն թե ուսւնեն, հանգամանալից լուսաբանվել են նրա բոլոր ձևավորումները: Ամեն ինչ սոսկ իրեն վերագրելով, նեղինակը փաստորեն զրկում է իր խոսքը հավաստիությունից: Էթիկան պահանջում էր Զեն այն նյութերը, որոնցից առ, անկասկած, օգտվել է:

Եվ Բետոն. որտեղից է գոյացել 12 գումարը, երբ Մինասը ընդամենը հինգուկես ձևավորման հեղինակ է (շնաշված «Անտոնին»): Խակ կես, որովհետև «Արա Գեղեցիկը» ստեղծվել է Հ. Մինասյանի հետ համագործակցելով: Խ' այ անհրաժեշտություն կար քանակն ավելացնելու ի հաշիվ անունների, երբ այդ անուններից յուրաքանչյուր երեքը ամփոփված «Նովելներ», «Պունցներ», «Լեգենդներ» խորագրերի տակ ցուցադրվել են մեկական երեկոների ընթացքում, որպես գեղարվեստական մեկ ամբողջություն: Դրանք դիտվում են իրար նետ, ունեն դեկորացիոն ներքին փոխհամաձայնեցում, միասին էլ մտահղացված են: Եվ երբ թատրոնը, այլևայլ նկատառությունով, դրանք երեկն անշատում է միմյանցից, ասենք «Տիկնիկները» դնում «Երեք արմա-

վենու» կողքին, ապա ստացվում է հակասական պատկեր: Այս ամենից հետո, Մինասի առաջմն ամենաարժեքավոր աշխատանքի՝ «Կրակե օղակ» օպերայի ձեռվագորման մասին գրքում ոչ մի խոսք չկա: Եվ շատ ափսոս, որովհետև այն խնդիրները, որ շոշափել է արվեստաբանը, այսուղի դրսնորվում են լիառատ, բացահայտում օժտված թեմանկարչին մի նոր տեսանկյունից: «Տիկնիկները», որ 1962-ին աշքի էր ընկնույ որպես մեծ շնորհիքի խոստում, 1967-ին ստեղծած «Կրակե օղակի» համեմատությամբ արդեն թույլ ձևավորում էր: Սա է, որ պիտի ընդգծեր հեղինակը, ցույց տալու թեմանկարչի արագ հասունացումն ու զարգացման ուղին: Խսկ երբ նյութը սահմանափակվում է «Արա Գեղեցիկով», թեմանկարչական խոստումնալից թեման փաստորնեն մնում է անավարտ:

Գրքի սույն հատվածում կան այլ կարգի վրիպումներ ևս, օրինակ՝ «Ասում են ուղին» երգի տեքստը վերագրված է Ավ. Խասիակյանին և այլն: Ցավալին, սակայն, անտեղի հակադրությունն է և մենաշնորհի իրավունքը, որ հեղինակը ամեն կերպ վերապահում է նաև Մինասին և հետո... իրեն:

Երփնագրող և թեմանկարիչ Մինասը ստեղծագործական ոճի ու մտածողության կուր ամբողջություն է, նրան նվիրված գիրքն էլ ցանկալի է, որ լիներ մինչև վերջ կուր ու ամբողջական, վերջն ու սկիզբը գրված լինեն նույն մակարդակով:

Յ. ՀՐԱԿԱՐՄԻՐ ԿՅԱՆՔ, ՀՐԿԵԶ ՀՈԳԻ

Դժվար է սովոր բառերով արժեքավորել այն կը-
տավմերը, որոնց համար Մինաս Ավետիսյանին շնորհ-
վեց Պատական մրցանակ: Առավել դժվար է անդրա-
դառնալ այն մեծ ճանապարհին, որ
նա կտրնց ու անցավ տասնմինգ տար-
վա մեջ: Դրա համար երևի պիտի ու-
նենալ գունամկարչի անքիծ տաղանդ,
այն տաղանդը, որ մենակ նա ուներ,
որով ապրում էր անդադար ու երկ-
առում անվերջ:

Մինասը ոտից-գլուխ, մինչև ուղանու-
ծուծը գունամկարչական անհատակա-
նություն էր, գուներանգմերի տրամա-
րանությամբ և հուզվերով ապրող ան-
կրկնելի վարպետ: Նա խոտամ էր և
հուզում գովմերի լնզվով, իր առջև
դրված գաղափարական խնդիրները
հաստատում գույնի օգնությամբ:

Գույնը երկնային պարգևն էր նրան
տրված և երկրային համոզմունք: Նաև
աղբյուր ոգեշնչման:

Գույնն այն կարմիր թելն է, որ անց-

Յում է Մինասի բովանդակ ստեղծագործության միջով:

Եվ իրոք, կարմիր էր այդ թելը: Բայց ոչ սովորական թել, այլ պրեկված մի ճռպանուղի, որ սկիզբ է առնում հայ կերպարվեստի վաղնջական անցյալից ու ճգվում դեպի ապագա: Քերականական տերմիններով եթե արտահայտվելու լինենք, Մինասը անցյալ անկատար չէ: Կամ անցյալ կատարյալ, այլ ապառնի մերկա:

Ուրեմն, նրա բովանդակ արվեստի միջով, կարմիր թելի պես անցնում է... շատ բան է անցնում: Նախ՝ կարմիրը— հայրենական տուն՝ մթնում կորած հնամյա մի խրճիթ, ժայռաբեկորների դիզված կույտ, կոսցած չինար, կորագիծ լեռներ, ամպամած երկինք, աշնան ակնթարթ, հանգիստ, լուսություն և աղբյուրի տեսանք, ողբ՝ զոհվածներին, ռեքվիեմ, երկրագործություն, տրտմալի խորհեր, խաչքարի համրույր, ծննդաշոր կանայք, սպասումների անամոք թափիծ ու դրանց կողքին ալ-կարմիր հագած մի նոր առավոտ:

Թվում է, ամենից շատ այս կարմիրն է, որ արթացնում է մեր մեջ հուզական թրթիռ, թեժ պահում Մինասի այն կրակը, որ միշտ ջերմացնում է մեզ: Կարմիր՝ արնավառ, կարմիր՝ ալվան ծաղկի, գույնը մեռնող արեգակի և հրաբորքոք օջախի, շինացած երկաթի ու երկրի ընդերքից ժայռքող լավայի, որդան կարմիր, բոցակեզ հորիզոնի գույնը ու, վերջապես՝ գույնը բոստրածուի մեր դրոշի:

Մինասի գույները ոչ միայն խոսող և հուզող հասկություն ունեն, այլև գործելու ավյուն: Նրա գրեթեն բոլոր կտավներում արարողություն կա, թաքնված դրամա, դրամատիկական բախում: Բայց ոչ կենցաղային իմաստով, ոչ ժանրային: Իսկ թե կենցաղ է՝ լոկ բամաստեղծական ոլորտներում:

Ոչսար ևն կթում, Խնոցի ևն հարում, Բուրդ ևն գըզում, Գորգ ևն գործում, Լավաշ ևն թխում, Տերև ևն հավաքում, թե Ծախմատ ևն խաղում, Միննույն է, նրա բոլոր-բոլոր կոմպոզիցիոն կտավներում առկա է մարդն իր հոգեկան մտորումներով: Գործող մարդիկ, գործող բնություն, գործի դրված գունաշար: Գունանկարը հասցըված է: գծային պարզության, իսկ գիծը ձեռք է բերում նաև գունային հնչողություն: Պատճիկական ձեռքը թխում ևն ինտնեսիվ գույնի առկալությունից, շեշտում կտավի բովանդակությունը: Անա թե ինչու Մինասի ստեղծագործության մեջ դժվար է գտնել այն եզրերը, սահմանը, որ կամ պիտի լինի հաստոցային աշխատանքների և բնմանկարչության, դիմանկարի և որմնանկարչության, գրքի ձևավորման և կիմոֆիլմերի ստեղծման ասպարեզներում: Գունային գգացողությունն ու մտածողությունը, գույների տրամարանությունն այնքան զորել են, որ իրնոց զգալ ևն տալիս նույնիսկ այն աշխատանքներում, ուր չկա, ասենք, հետմահու ցուցադրված գրաֆիկական թերթերի վրա... Անգամ այստեղ, լուրաքանչյուր գծի աներևույթ ստվերում, ասես, Բրուկ արթնանում է գույնը և շշնչում մեր ականջին խոսքներ, որ Մինասը չասաց ու անցավ: Թողեց, որ լսենք, հասկանանք հետո...

Մինասն իր գունանկարչական խաղերն ուներ, մըտահղացման միմքում՝ գործողություն և ծավալների վերարտադրման մեջ՝ գունային էքսպրեսիա: Այստեղից էլ նրա արտասովոր ոիթմն ու դիմամիկան, մանավանդ թատրոնում: Նա պսպղուն չեր կամ խայտարդետ, այլ գունեխիտ, խայտացող, թանձր, վառ-խլուտում: Նրեւանգներով չեր բավարարվում, գերադասում եր ընդգծված գունաշերտերը:

Տէ, Մինասը առաջնակարգ գունագետ է, անփոխա-

ոինելի ու շոայլ կոլորիստ, գունամտածողության տիպար: Կարմիրը՝ կարմիր, բայց դրա կողքին խոսում են կապուտն ու կանաչը, մոխրավունը, ծիրանին: Մեկը-մյուսով պայմանավորված, մեկը-մյուսի տնօրենը, մեկը-մյուսից թիսած անխուսափելի ենտևանը: Խոսում են նաև ստվերները՝ գույնի լեզվով և լույսը՝ գույնի: Մի երանգը մյուսին ձայնակցում է ու արձագանքում ներդաշնակության բոլոր կանոններով, որպես երաժշտական ստեղծագործություն, սիմֆոնիկ երկ, որպես ձռն կյանքի:

Որքան էլ գունային լայն ընդհանրացումների հակված, որքան էլ հակված դեպի արատրակցիա, այսուամենայնիվ, Մինասի աշխարհը պարզ է ու կոնկրետ: Կոնկրետ է պատկերված մարդը, շնչավոր՝ անջունչ առարկան, հզոր՝ մայր-քննությունը: Նա բնիկ շիրակցի է: Նա գայիս է ազգային արվեստի հիմնավորց ավանդներից, բայց փոխառնություն չէ, այլ զոր ու գունքան ազգային, որքան նրա մեծ անխորդները: Միաժամանակ, խաչաձևում է իր մեջ ուսուն և ֆրանսիական լավագույն վարպետների ստեղծագործությունը, մնալով դարձյալ ու կրկին հայկական, ալյսինքն, ազգային դրույշի հկարիչ: Ակզրում էր միայն քարդ քվում, և ամբողջությամբ չէինք ըմբռնում նրան, ավելի ճիշտ՝ չէինք հասնում ետևից: Իսկ երբ ըմբռնեցինք, տիրացանք, դարձավ այնքան պարզ ու հմայիչ, որ միայն դասական արվեստին է բնորոշ: Դարձավ Բաց պատուհան, ինչպես կոչվում է նրա հիասքանչ կտավներից մեկը: Զկառչել անցյալից, գերի շդառնալ ավանդույթներին—սա էր նրա հավաստ հանգանակը: Անցյալը դիտել երեւակալյությամբ մարդուստ ժամանակակից մարդու աշքերով, ավանդույթները զարգացնել ստեղծագործաքար: Նայելով առաջ: Անցնելով առաջ:

Մինաս—արվեստագետն այժմ գեղագիտական ուրույն և աներեն հասկացողություն է, զարմանալիորեն ամրողական: Նրա արվեստից որևէ բնագավառ անջատել չի կարելի: Չի կարելի, ասենք, նրա թատրոնը լուսաբանել գեղանկարչությունից անկախ կամ գրաֆիկան կտրել որմնանկարից: Նույնը և նատյուրմորտի ու դիմանկարի ժանրում: Նա ինքն է այդ մասին վայօրոր մտածել և իր ստեղծագործությունը բերել ընդհանուր հայտարարի, առանց կարմիր գիծ քաշելու դրանց միջև:

Կարմիրը՝ կարմիր, բայց դրա կողքին Մինասն իր պայծառ երևակայությամբ կյանքի կոչեց նաև հերիաթերի մի զմրուխտ աշխարհ ու պահ տվեց Ծիրակի ոստացին: Լենինականում ստեղծած նրա որմնանկարները տաղարանի նման են, ուզում ես անգիր անել, ուզում ես երգել, ուզում ես անցյալին նայել տիսոր ժայռվ, ուզում ես մանկությունն ետ բերել: Դրանց մեջ էլ Վահրամարերդ գլուխի ակումբում նրա ստեղծած «Հայատուան» որմնանկարը, որ նակառակ երփնագրի նրբանիուս մանվածքին, պերճաջուր դեկորանկարի տըպավորություն է թողնում: Ավելին, կոմպոզիցիայի լուծման բնույթով, ասես, ինչ-որ մի ներկայացման ընդհատված պահը: Եվ այդ պահը շատ է թատերային, դրամատիկ ու երաժշտական, ինչպես «Գայանեի» դեկորային պատկերը: Այս ներկայացման մեջ էլ Մինասի գունային արվեստը նեչեց որպես մեղեդի, իսկ բակնու ազգային մեղեդիները՝ իրենց բոլոր գուներանգներով: Ստեղծագործական փոխազդեցությունների և փոխհարցուացման սքանչելի մի օրինակ բեմի վրա, սիմֆոնիզմի ցայտուն զգացողության դրսնորում դեկորների և տարագների մեջ:

Իր «Խորեն» կոմպոզիցիոն նկարի մեջ, որ Պետա-

կան մրցանակի արժանացած լավագույն գործերից է, Մինասը պատկերել է իրեն ու կնոջը սեղանի ետև նստած, իսկ առջևում, մի փոքր հեռու, մայրն է: Ինքը կարմիր վաշորով, մայրը կարմրազգեստ: Արթուր էր պահում մոր անունը, Բիշատակը: Սրբություն էր սրբոց:

«Թորոս Ռուսինի ծնունդը» թեմատիկ որմնանկարի մեջ Մինասը հանճարեղ մանրանկարչի մորը պատկերել է իր հարազատ մոր զարմանալի նմանությամբ. ասել է թե Օրանց Օուն մայրն է Երկնել, Օուն բազմաշարչար ժողովորդը, ասել է թե Մինասը գալիս է դարերից, դարերի ծնունդ է:

Մայրն ու մայրությունը ևս Մինասի գումաննկարչական աշխարհի Աերթուն-Աերդաշնակ թեման է: Դա մայրըն է մայր երկրի, հայրենիք, մոռ, կապույտ ու կանաչ, մոխրագույն ու դեղին, կարմիր, հրակարմիր մի աշխարհ:

Այսպիսին է Մինասը՝ հրակարմիր կյանք, հրկեց հոգի:

24 փետրվարի, 1976

ԳՈՎՔ ՍԻՐԱ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ

Ա. Բաժրենուկ-Մելիքյանի ցուցահանդեսը

Նկարչի տանը Աշխարսանոր Բաժրենուկի աշխատանքներն են ցուցադրություն: Առաջին անգամ ի մի է բնուված նրա հիմնամյա վաստակը, որ այսօր կարելի է

հայ կերպարվեստը հարստացնող ժառանգություն համարել: Հարյուր տասներեք կտավ, բոլորն ել, շնչին բացառությամբ, ընտիր գործեր, թևմատիկ ընդգրկման և ծավալների տևակետից իրար մոտիկ, գեղարվեստական մեծ ուժի և ինքնատիպ վարպետության առումով՝ բարձր մակարդակի արտահայտություն:

Կերպարվեստի առեղծագործությունների ցուցադրություն թերևս քիչ դեպքերում է արդարացնում իր համարհանքային բը-մույթն այնպես, ինչպես Բաժրենուկի մոտ: Սա հանդես է անաղարտ սիրո, հնազանդության դաշն գեղեցիկի նետ: Սի անգամ սրան մտնողը այլև դրժկարանում է դորս գալ, կտրվել մըթ-օտքորտից:

Բաժրենուկն էլ այդպես է ապրել՝ ան-

բաժան իր կտավներից, միշտ իր մթնողորսով։ Ասում են, օրնից մի օր, նա իր մոտ բարեկամին՝ վրաց Զշանավոր երփնագրող լ. Գուրիաջյիլուն, մի նկար է ընծայել, ընծայել է, ու մի օր էլ չանցած, կեսպիշերով, անջատման ցավից խոռված, բախել է բարեկամի դուռը, թե՝ չեմ կարողանում քննել, ետ տուր իմ նկարը։ Այս փաստը առիթ է տվել Չարենցին ասելու, թե՝ «Անփական գործին նվիրվելու այդ աստիճանը հազարից մեկ է պատահում։ Այդպիսի նկարիչներ հիմա չկան»։ Իրոք, իր տեսակի մեջ հազվագյուտ նկարիչ էր Բաժքեուկը։ Դրան համոզվելու համար, բավական է հաղորդակից լինել Բաժքեուկի արվեստին, զգալ ու վերապրել նրա աշխարհը։

Ոմանց կարող է թվալ, թե ցուցահանդեսի գլխավոր ներուը միևնույն գրավիչ անհատն է՝ փառաբանված, մի դեպքում խարտյաշ մանկան, հոլանդի մի կնոջ, ապա ուկեմանդերձ մի պարմանուիու, կամ բազում մարմնամարզութիների կերպարանքով։ Մինչդեռ դա լոկ արտաքին տպավորությունն է։ Բաժքեուկը բարձր է կանգնած թեմայից։ Երփնագրի, առաջին հայացքից, աննշմար միջոցներով նա ընդհանրացնում է մարդկային հիացմունքը, խինոր, սերը, պատկերում կանացի հրապույր, հովազի թոթիո, սլացիկ գեղեցկություն, խնճացնող պար, անկախ նրանից, թե «կատարող» հայ է, վրացի, բրուրդ թե թաթար։

Եղակետ ունենալով ազգայինը, նկարչի գեղապաշտությունը միաժամանակ համամարդկային հնչեղության է հասնում։ Նույնիսկ իր հարազատ դուստրերի այնքան հարազատ դիմանկարները ստեղծելիս, Բաժքեուկն ասես, մի պահ օտարանում է նրանց՝ անդավաճան մնալու իրեն, իր ստեղծագործական հավատամքին։ Նկարչի անքնն ու ծարավի նոգին մերկա է

ցուցամիանդնսի բոլոր կտավներում հավասարապես: Զարմանում ես, թե ինչպես այդ արվեստագետը երկար տարիներ կարողացել է անեղծ մնալ, պահպանել ստեղծագործական կորովը, կենսազգացողության թարմությունը և ապագային նայել աներեղ հավատով: «Զեռնածու կին» (1924) կոմպոզիցիայի կողքին, Բիշնոք թեկուզ Կ. Գոգաշվիլու դիմանկարը (1963) և Ն. Տերյանի դիմանկարից (1929) գանձ «Քրդութիների պարին» (1966), որն ստեղծվել է Ակարչի մամից ընդամենը մի քանի ամիս առաջ: Նույն նեղինակն է՝ անշեղ ճանապարհին, ջինջ, խորումկ, Բուզական և պահանջկոտ՝ մոլեռանդության չափերի:

Բաժրենուկը շուտ մտնեմացող Ակարիչ է, Բոգիներ կաշկանդող, Բուզեր ազնվացնող և գիտն տառապած սրտեր ամոքնել: Սրահից դուրս գալիս... բայց, ինչու դուրս գալ, երբ այստեղ մարդու սիրտը լցվում է կյանքի և սիրո անձայր կարոտով: Պատրանք է դա, իրականություն, թե՞ խնդության ու վայելքի տոնահանդես: Ըստ երևույթին՝ և մեկը, և մյուսը: Պատրանքի և ուսալ իրականության սահմանագծի վրա էլ մնա կասեցնում է Ակարիչը: Այդ կտավների մոտով չես կարող անցնել անտարբեր:

«Հոր ես հագել Բրոդենդ»: Այսպես կարելի է անվանել նրա կտավների այն շարքը, որի իմաստը գեղեցիկ սեռի գովքն է: Մեկ համեստ ու ներամփոփ, մեկ ազնվազարմ ու տիրական, մեկ խոհում ու զվարք, բայց մեծ մասամբ գերող, Բրաշադեմ կանայք, լինեն խումբ-խումբ, թե զատ-զատ պատկերված: Նման գեղանկարչական կերպարներ ու կոմպոզիցիաներ շատերն են ստեղծել, սակայն Բաժրենուկի աշխարհն ուրիշ է... Այստեղ կա և Բրածիգ կին, և լվացարարութի, կան պիզակ ճոճող ու ձեռնածու տիկնայք, բաղնիքում լողացող

մերկիրան էակներ կամ լճափի գովին հանգստացող-
ների մի խումբ և կես-քուն, կես-արթուն դշխութիներ՝
որքան կամենաք. գրեթե բոլորն ել թափանցիկ, գեղա-
տիպար, ամենքն ել, իրոք «Բոյր հագած»: Պեսկիի
ծիատանը, կիսամութ ախոռում կամքնած սպասութին
անզամ դիտողի մեջ նվիրական հույզեր է արթնացնում:

Բաժրենուկը ոչ միայն քնքուշ էակների, այլև թամա-
շալի սիրահար է՝ կրկես ու լարախառ, օթյակներ և
ծաղրածու, արջ խաղացնող մարդիկ, փղերի դիտում և
ամենուրեք, նրանց կողքին իրոն հանդիսական՝ Գյուր-
ջըստանի գեղութիներ կամ նահրյան թախծոտ կանաք,
բայց ոչ երբեք ժամրային, ոչ կենցաղագրական վերա-
պատկերմամբ: Անթերի ճաշակը, գումարին գուսաց հա-
րաբերությունները անզուսպ զգացմունքների առկայու-
թյամբ, առինքնող արտիստալնությունը նկարչին այս-
տեղ էլ բարձրացնում են թեմայից:

Լուսատվերի օգտագործման սկզբունքն էլ իր ու-
րուցն նպատակն ունի Բաժրենուկի գեղանկարչության
մեջ: Զկա ոչ մի սահման դնող լուսի ցոլք: Ցերեկվա
«մուլթ» և գիշերվա «լույսը» գալիս են միննույն ինք-
նաստեղծ աղբյուրից: Բաշխումը կատարվում է ըստ
հայեցողության: Անա թե ինչու հատկապես կոմպոզի-
ցիոն մի շարք աշխատանքներ դիտելիս, կամենում են
նախ թափանցել կտավի խորքը, սուզվել հեռանիստ
մթության մեջ, քանի որ լույսը առջևում պատկերված
դեմքերի հայտնաբերման, նրանց միջև ներդաշնակ
կապ ստեղծելու համար է: «Մի խումբ կանայք» (1927)
կտավի մեջ ուկենանդերձ պարմանութին իր խրոխտ
կերպարանքով, ամրողականությամբ, իշխում է կոմ-
պոզիցիայի վրա, մինչեւ նրա «շրաբումքը», կարծես
մասնատված լույսի միջոցով է շփման մեջ մտնում
գլուխավոր «դերակատարի» մետ: Լույսն այստեղ գույն

է, ինչպես թատրոնում, նույնիսկ ավելի զորեղ, քան գույնը: Նույն նշանակով է կառուցված նաև «Աշբուս տևած պատրանք» (1928) նկարը, որ կարելի է համարել պոեմ առանց խոսքի: Եվ այս ամենին նկարիչը համարում է առանց պայմանական կամ արստրակու դետալի, առանց հարթապատկերային որևէ էֆեկտի օգնության: Կամերային բնույթի փոքր ծավալներն այնպիսի տարածական հագեցում ունեն, կտավի լուրաքանչյոր անկյուն ու կետ այնպես է շնչում, որ երբեմն թվում է դիմացդ առնվազն մի պանոն է կախված:

Ոիթեմի և պլաստիկայի դրսնորման հարցում ևս Բաժրենուկը իր նմանը չունի: Նա այդ ասպարեզում հաճախ է համարում խորենոգրաֆիկ, շոշափնլի հնչնդության: Տիպարների ժեստերն ու կեցվածքը, նրանց փոխադարձ կապը ընկալվում է շարժման մեջ: Այստեղից էլ «Թաթարութիների պարը», «Աղջիկն ու թութակը» և կոմպոզիցիոն այլ կտավներում իշխող դիմամիկան: Աշջուշտ, սրանց մեջ բացառիկ տպավորություն է թողեցում «Կրկեսում» (1935) պատկերը, ուր կենտրոնական հերոսը, ակրոբատ մի կին, բոցի պես երկինք է խոյանում: Նկարիչը համդիսանքային արարողություններին էլ մոտենում է որպես բանաստեղծ, դրսնորում նախ մարդու բուզաշխարհը:

Սուանձին ուշադրություն է գրավում «Ծապանական պարտիզաններ» (1937) կտավը՝ հատկապես իր ոիթմով և գաղափարական նպատակադրությամբ: Այստեղ ևս հերոսները մեծ մասամբ կանայք են, բայց նրանց գրավչությունը ոչ թե արտաքին էռության մեջ է, այլ այն գաղափարի, որի համար ալ դրոշ ծածանելով կըռվում են նրանք:

Մեծ գաղափար ու տարերային ուժ կա Բաժրենուկի քարոզած գեղեցկության մեջ: Եթե գրչի մարդ լիներ,

պիտի ասեինք նա սերում է Քոչակից ու Հայնեից, Սալյաթ-Նովայից ու Տագորից՝ բորբոքելու համար կյանքի հավերժող կարոտ, ապագայի հետ ապրելու լիարուն սեր:

... Ցուցահանդեսը լիքն է այցելուներով: Այնտեղ շրջում է նրա գլխավոր ներոստութիւներից մեկը, նկարչի դուստրը, շնորհառատ արվեստագետութիւն և ավինիան: Թողած «դեղին» ու «վարդագույն զգևստ», դուրս գալով գնչուական տարերքից, ասես կտավներից իշել, զրուցում է մեզ հետ, զրուցում նոր մասին: Իսկ մենք նրան մտուի տեղադրում ենք կտավների վրա: Դրանք ըստ մարդիկ են, ամեն ինչ իրականությունից է առ ճշգրիտ: Իսկ պատրամքը ո՞ւր մնաց: Ի վերջո, փորձում ես սրանից դուրս գալ, նայում ես մի պահ ետ, իսկ Բաժրենուկը վերատին քեզ կանչում է իր խաղաղ, պարտադրող հայացքով:

Այնտեղ, ի տես աշխարհի, գնուեցկությունն է քար-ճշված:

1968

ՄԱՆԿԱ-ՊԱՅԱՆԵԿԱՆ ԹԱՅՐՈՒԽԻ ՆԿԱՐԻՉԸ

Գևորգ Վարդանյանի
ծննդյան 60-ամյակի առթիվ

Պատաճի հանդիսատեսի թատրոնի ստեղծագործական կյանքը, հատկապես այս թատրոնի վերջին երեսուն տարին, դժվար կլիներ առանց Ակարիչ Գևորգ Վարդանյանի: Քիչ է պատահում, որ Շուշն Ակարիչը միևնույն թատրոնին այդքան երկար կապված մնա: Եվ հավատարիմ, Շվիրված լինի:

Խոսքը գեղարվեստական այն կապերի մասին է, որ վերաբում է գեղարվեստական ծառապության:

Միայն ոնժիսորը և դերասանը չե, որ պիտի կազմնն տվյալ թատրոնի խաղացանկը և հաշվի հատնն հանդիսականի հետ: Նկարիչը ևս պարտավոր է Ակատի առնել այդ կարևոր հանգամանքը, ընդ որում ոնժիսորի, դերասանի և այդ Շուշն հանդիսականի սերտ համագործակցությամբ: Պատաճի հանդիսականը տվյալ դեպքում վճռական Աշանակություն ունի: Մատադ սերնդի գեղարվեստական դաս-

տիարակության հարց, որ լուծվում է քեմական պատվանդանի վրա, ընդհանուր ուժերով, պարբերաբար:

Վարդանյանը արդեն վաստակած Ակարիչ է, շուրջ հարյուր ձևավորման հեղինակ: Դրա համար էլ ինքն իրենից հաճախ տարբերվում է: Զի կրկնվում: Նոր սկզբած՝ 50-ական թվականներին շատերի նման էր: Հետո աստիճանաբար ինքն իրեն գտավ, ինքն իրեն նըմանվեց, ապա ինքն իր մետ, ինքն իրենից բարձրացավ: Իսկ վերջերս էլ հակված է ինքնանորոգման, այնպես է աշխատում, ինչպես նրբմիցն չի աշխատել, ինքն իրենից կարծես թե խուսափում է:

Ամենամետաքրքրականը և օրինակելին, անշուշտ, ինքն իրեն նման և ինքն իրենից բարձրացած շրջան-Ժերն են:

Ինքն իրեն նման, երբ թանկ էր նրա համար գունա-Ակարչական յուրաքանչյուր լուծում, լինի դա լոկ դե-կորների, զգեստների թե դրանց օրգանական համա-դրության միջոցով: Լավագույն նմուշները՝ «Երաժշտա-խումբ», «Սամա Միեր», «Չար ոգի», «Փոքր բակի մեծ հոգսերը», «Ծմ ընտանիքը», «Մանչուկն ու Կարլսոն»... Թատերային երևակայության նվազ թռիչքներ, բայց գունային մեծ ճաշակ, որ գալիս է հաստցային գեղա-Ակարչության պահանջներից: Մանրութերն ունկորներ, պայմանական միջավայր, որի լուծման շեշտը գույնի վրա է: Բեմի վրա ամեն ինչ տեղադրված, կառուցա-պատված է այն Ակարչի ձևոքերով, որն հաշվի է նըս-տում թե ուժիսորական, թե գրական առաջադրանքների մետ, դրանից ելնելով էլ ստեղծում է իրենը, որն ինչքան թեմական է, այնքան էլ Ակարչական, թերևս նաև դերասանական: Ներկայացման մեջ պատ ու ա-ռաստաղ, դուռ ու լուսամուտ, ծառ ու ծաղիկ, ամեն մի կամկարափ շնչում են Ակարչությամբ, պլաստիկական

գրավիչ մթնոլորտ և՛ կազմում, խոսում են երփմագրի լնգվով։ Նույնիսկ այն դեպքում, եթե տեխնիկական առումով թնրավարտ է դեկորացիոն իրականացումը, կատարողական մակարդակը անբավարար, միննույն է, ձևավորումը դարձյալ որոշակի տպավորության է հասնում, որովհետև Վարդանյանը բնահարդարանքի բոլոր օդակները կապում է թեմում անընդհատ գործողության մեջ գտնվող դերասանի հետ։ Սենյակների մեջ ամփոփված միջավայրն անգամ գեղանկարչական ցայտուն Բնշեղության է հասնում, քանի որ նկարիչը բնմական տարածությանը հաղորդում է մինչև վերջ համոգիչ կերպարանք։

Սակայն, թվում է, առավել ուշագրավը Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ուսումնական թեմում Վարդան Սմելյանի առաջարկով ձևավորված «Հյուրանցի տիրութիւն» էր։ Անհամեմատ փոքր թեմը Վարդանյանին մղել էր արտասովոր հնարամիտ լուծման, ընդ որում վերստին օգտվելով գեղանկարչության ընձեռած հարուստ հնարավորություններից։

Բազմավարագույր այդ ներկայացումը հիմնական վարագույր չուներ։ Դրան փոխարինում էին երկու շարքով դեսուժեն կախված գույնագույն հագուստներ, սըփողներ, սպիտակեղեն, անկախ տեղադրված հայելիդուներ, աստիճաններ։ Դեսուժեն, անկախ, բայց գույնով համաձայնեցված, բայց մեկը մյուսին լրացնող, կապող, և այնպես, որ դրանք զգնաւոնների միջոցով առնչվում էին նաև փոքրիկ հանդիսասրամի անցույներում ծավալվող զվարճալի գործողություններին։ Թատերային նույն մթնոլորտի մեջ էին առնված թեմն ու հանդիսասրամի, որպես միասնական տարածություն։ Ոնժիշտրական այս համարձակ մտահղացումը հիանալի էր արդարացված ձևավորման մեջ։ Ներկայացումն

իր գաղափարով և ոճարանությամբ Բիշեցնում էր իտալական ժողովրդական թատրոնի 18-րդ դարը, այսինքն ստեղծարանական արվեստից հեռու, բայց և դրան շատ մոտիկ: Միաժամանակ շատ մոտիկ մեր կյանքի կենսահաստատ ոիթմին և սրտաբաց տրամադրությամբ:

Ինքն իրենից բարձրացած շրջանը գլխավորապես առնչվում է ներկաթ-պիեսների և ներկաթարմությա գրական նրկերի թեմադրությունների թևու, այն խաղացանկի, որ մանկա-պատանեկան թատրոնների գործունեության հիմքն են կազմում, ունեն նաև մանկավարժական որոշիչ նշանակություն: Ինչ ուժիությունը: Ինչ ուժիությունը կամ դերասան էլ լինի, այս բնագավառում առանձնապես հաճելի և շահեկան է Վարդանյանի կողքին աշխատել:

Թևավոր խաղացանկ, թևավոր դերասաններ, թևավոր ուժիություն և նկարիչ: Լավագույն թեմադրություններից պիտի հշեն «Ս. Ա. քյուրենիկները», «Ծերունի Խոտտարիչը», «Իմ մոխրուտը», «Մարիուշ Առաջին թագավորը», «Անագե մատանիները», «Ռոմանտիկները»... Թե ցածր, թե բարձր դասարանցի հանդիսականների առաջ այս ներկայացումները բացում են երևակայության նոր դռներ, դաստիարակում նրա գեղարվեստական ճաշակը, լիցք տալիս նրա գաղափարական մղումներին: Պայմանական թատրոնի խենթացնող խաղերը դառնում են կյանքի խաղեր: Ֆանտաստիկ գունավորումը թն է տալիս թեմում ակտիվ գործողությունների մեջ գտնվող պատանի ներուսներին:

Հետեւում ես ձևավորումներին և մտածում նկարիչ Վարդանյանի ստեղծագործական երևակայության ազնվացնող թոփշքների մասին, երևակայություն, որ կոչված է մեր մատադ սերնդի գեղարվեստական դաստիարակությունը մի նոր մակարդակի բարձրացնելու: Բնակ չես գարմանում, որ դամիլիճի ոգևորությունը իր

ափերից դուրս է գալիս, աշխույժ եռուգեղոք վերածվում Բրնձվագին խանդավառությամ, հանդիսականը դառնում ներկայացման մասնակից, համարձակ մուտք գործում ներիաթային արարողությունների Բրաչապատում ոլորտները, իրեն հերոս է զգում, ամենակարող, խիզախ պատաճի և մոլեռանդ հայրենասնը:

Վարդանյանը երբեմն ինքն էլ չէր զգում, թե ինչպես ներիաթներով արրած, նաև առօրյա կյանքից առնված պիեսին մոտենում էր ներիաթի չափանիշներով և ընկալումներով: Ասենք, թեմում պատկերում էր Երևան քաղաքի մի անկյուն— մի փողոց, դրանք ընդգրկելով մկում պտտահարթակի վրա: Կողքին տեղադրում փողոցային տարրեր լուսարձակ-ուղեցուցներ: Եվ երբ բնմըն սկսում էր պտտվել և լուսը մտնում էր իր իրավունքների մեջ, ապա մի փողոցը դառնում էր երկու, երկուսը՝ երեք և խոսում էր, ասես շնչում բովանդակ քաղաքը, պտույտ-պտույտ գալիս քո աշքի առաջ: Հանդիսականի հայացքը շրջում էր փողոցից-փողոց, թեմը ձեռք բերում անսահման տարածություն, ուր գործում են պիեսի մտածելու ու անհանգիստ ներռաները, այն մարդիկ, որ քաղաքի վաղվա տերերն են լինելու: Այսպես էր պատկերվում բեմի վրա կյանքի ներիաթը, աղմըկանույզ ներկան կամրջներով լուսավոր ապագայի նետ:

Ինչպես ասացինք, վերջին տարիներս Վարդանյանն իր ստեղծագործական ոճի շրջանակները փորձեց մի փոքր ընդլայնել, փորձեց աշխատել շատերի պես, բայց ոչ նրանց, որոնք ստեղծագործում էին 50-ական թվականներին, այլ այն շատերի, որոնք Բրապարակ նկան 60—70-ական թվականներին, նախընտրելով դեկորացիոն սարքուկարգի չափազանցորեն ընդհանրացված, համեմատաբար «անգույն» կամ միագույն ձևավորում-

Անր: Կոմկրետի փոխարեն անորոշ միջավայր, երփնագորի փոխարեն ճարտարապետական մնակ կառույց: Նըմանօրինակ աշխատանքների շարքում մասսամբ կարելի է դասել «Պատվի Բամար»-ը, «Խաթաբալան», «Երիտասարդ գվարդիան»: Նկարչի գեղարվեստական միտքը Բեքիաթների մետ էր, մինչդեռ դրանք կոնստրուկտիվ Բրապարակներ էին Բիշեցնում, գրեթե զուրկ սոցիալական բնուքագրից: Բայց դա դավաճանություն չէր Բեքիաթներին, ոչ Էլ Փանտաստիկ մտահղացումների ամտեսում, այլ լոկ իմիջիայլոց Բրապորանք, գուցեն կոնստրուկտիվ ոճի դիմամիկան պարզեցու փորձ:

Մինչդեռ... եթե Պատանի Բանդիսատեսի թատրոնի խաղացանկն ու ուժիուրան թույլ տան, նա Բակված է վերստին ստեղծագործելու քշերի պես, միտճմվելու Բեքիաթների կախարդական աշխարհը, գնալու երազային կապույտ թոշունի մետքերով, մնալով ինքն իր և իր խանդակառ Բանդիսականի մետ:

1983:

ՆԱ ԻՆՔՆ ԵՐ, ՈՐ ԿԱՐ...

Սուրեն Ստեփանյան արվեստագետի, նրա վառ անհատականության մասին պարզ պատկերացում կազմելու համար նախ գեր մի անգամ պետք էր լինել նրա արվեստանոցում: Միայն սովորական նկարակալը, վրձինն ու ներկը չէին, որ շրջապատում էին նրան, այլև տեխնիկային ու տեխնոլոգիային վերաբերող բացառիկ հարմարանքները:

Ինքն էր իր գործի տերն ու տնօրենը: Ակսած գործը ինքն էլ պիտի ավարտեր. տեխնիկական բարդ միջոցներից անգամ չէր վարանում, ընդհակառակը, կատարելության էր հասցընում նաև տեխնիկան, արվեստի արժեստը, որի գերին նա երբեք չդարձավ: Գյուտարարի իրավունքը զուր չէ, որ շատերը նրան կատակով անվանում էին էղիստն:

Հայ ժառանակակից կերպարվեստի որ բնագավառն ասես, որ չի թափանցել Ստեփանյանի ուսիի ձեռքը: Նա առաջ էր շարժվում փնտրելով և միշտ

գտնում էր այն, ինչ պետք էր: Անընդհատ որոնումների մեջ, միև ու արյունով արվեստի մարդ:

Առանց ընդհիշման, առանց կանգառի մի բնագավառից մյուսն էր Շետվում՝ գծանկար և Բաստոցային գեղանկարչություն, թատրոն և կիրառական արվեստ, քանդակ ու, վերջապես, գիրք: Մասնագիտական առումով դրանցից ոչ մեկը մյուսին չէր զիշում: Նյութը հաղթաբարելու ուղիները տարբեր էին, բայց գեղարվեստական ուղղությունն ու համոզմունքը՝ աներեր: Կյանքից էր գալիս, հարազատ միջավայրից, պատկերավոր մտածելակերպն ու աճիանգիստ երևակայությունը միշտ հրան դուրս էին քերում գեղարվեստի լույս հանգրվան: Նա, կարելի է ասել, ստեղծագործական այն դավանանքի կրողն էր ու պաշտպանը, որ Ն. Վահաբանգովի մասնագիտական բառապաշտում կոչվում է ֆանտաստիկական ռեալիզմ:

Դեռ վաղ է ու դժվար ասելը, բայց, թվում է, ամենից շատ նա իր տաղանդը ներդրեց գրքի ձևավորման և պատկերազարդման ազմիվ գործի մեջ: Պարզապես գրքի ճարտարապես էր, գիրք հնարող-նկարիչ: Եթե այսօր կողք-կողքի դմենք Սուրենի ձևավորած բոլոր գրքերն ու ալբոները՝ ամբողջ մի գրադարան կկազմնեն: Ինչ խոսք, դրանք հավասար արժեք չեն ներկայացնում. բայց չնն էլ կրկնում միմյանց: Ընդամենը մի անվանաբենրթ կամ թեկուզ վերջնազարդ, և արդեն նորում է նկարչի ստեղծագործական մտածելակերպը, մտքի թոփշքը, սրությունը, ճոխ երևակայությունը:

Որոշ պատկերազարդումների մեջ, թվում է, նա Բեռնանում է գրական երկից, գաղափարից, ձգտում է «անկախություն» ձեռք բերել, ասել ավելին և բոլորովին այլ կերպ: Բայց այդպես թվում է: Սուրենը պարզապես շարունակում էր ու զարգացնում հեղինակին յուրովի,

մնալով նրկի քուն ոգուն Բարազատ: Գիրքը գրքային չէ այլևս, միաժամանակ և զուգահեռաբար՝ նաև կերպարվեստի ստեղծագործություն: Ծշմարիտ, Բավաստի գծանկարից մինչև արդարացված ձևախախտումներ: Նայած գրի ժանրային առանձնահատկություններին և գաղափարական նպատակադրությանը: Աղավնի Մեսրոպյանի «Հուշերը», Ա. Սարյանի և Գ. Սարյանի «Մարտիկի երգը» ընդամենը մեկական շապիկ ունեն ձևավորված, և գրքովկները խոսում էին իրենց մասին, ցուցափեղկում դրված՝ ասես Բանգիստ չէին մնում, կը ուամել տալիս նաև, թե ինչ կա այնտեղ, ինչ ցավ ու նուս, ինչ կամք ու կենսասիրություն: Կամ, աჩա, Վահան Տերյանի «Երկնրի» կազմը՝ վրան շաղ տված դնողին, կարմիր, սև տերևներ... Այսպես Զա բանաստեղծի ուղին վերարտադրում էր ծայրահեղորեն պարզ, լակոնիկ միջոցներով, ինչը գրքի ձևավորման առաջնահերթ պայմանն է: Սուրենը կարողանում էր գրքի նկատմամբ ուշադրություն հրավիրել առաջին իսկ Բայացքից, իսկ երկրորդ Բայացքն արդեն ընթերցողներին գցում էր մտորումների մեջ: Բավական է նայել «Եղիցի լուս» գրքում զետեղված շմուց-անվանաթերթին, ուր Բանկարծ մի տառ դուրս է թռչում բափց, մեկ դառնում կանչեղ ու մեկ էլ դաշում: Գծանկարն ու տառը, գրական պատկեր-դատողությունն ու Բանցիկ ճեպանկարը ձուլվում են միմյանց, ասես միասին էլ ծննվել են:

Սուրենը առանց դուռ ծեծելու մտնում էր Ա. Զեխովի Բալենու այգին, սրտարաց զրուցում Շիրվանզադեի թատերական թերոսների մետ...

Նա իր արվեստով գիտեր մեծահասակ ընթերցողներին խորհելու առատ հյութ տալ և բորբոքել մանուկների երևակայությունը:

... Ո՞վ կարող էր նրանից ավելի լավ ու դիպուկ ը-

կարներով պատմել, ասենք, «Փիսիկի գանգատը», թէ ինչպես Փիսիկը մի մոլո անկյունում նստել, ունքերը կիտել ու լաց է լինում: Աղի արցունքով, ասում է Սուրենը, մարդու նման աշքերը չուած ու գանգատավոր: Ո՞վ կարող էր ավելի նույր ու գունառատ, մանուկների լեզվով վերապատմել հանրահայտ Պոլ-պոյ մուկիկի վիճակը, կամ Խնկո-ապոր «Մկների ժողովը»: Մկներից լուրաբանչուրը մի-մի կերպար, ավելին՝ ինչո՞ւ չասել, նոգերաբանական անհատականություն: Մեկը ժպտերես ու կեղծավոր, մյուսը հնարամիտ ու զրախոս, մյուսն է հուսահատության գիրկն ընկած: Թվում է, մկարիչը նրանց լեզուն գիտե: Շատ են խելոք ու հնարամիտ այդ մկները, մարդու հատկանիշներ ունեն, ուզում եմ ասել՝ շնչում են ու ծիծաղում մարդկային թոքերով:

Հերիաթն ու Ռերիաթայինը վառ արտացոլումն էր գտնում ոչ միայն կոնկրետ պատկերների մեջ, այլև հաճախ գրքի անվանաթերթի վրա, նրա վերմագրում: Մեսրոպյան տառերը ասես խոսում էին բոլորովին ուրիշ լեզվով, նրանց փոխարարերությունը ձեռք էր քերում կրկնակի իմաստ, լեզվականը ստանում նաև պլաստիկ-գծային մարմանավորում: Այդպես էին «Պապն ու շաղգամը», «Քաջ Նազարն» ու «Գառնիկ ախաղերը», «Կիկոսը»... Ո՞ր մեկը թվես: Հիսնական և վաթսունական թվականների «Պիոներ», «Հոկտեմբերիկ», «Ուզի», «Միծեռնակ» և այլ հանդեսների էջերն ու միջուկը գեղարվեստական նոր կյանքով էին շնչում նաև Ստեփանյանի հնարամիտ ու մշտապես պատկեր-երևակայությամբ առևեցուն մկարների շնորհիվ: Խոկ ծաղրակարները... Սուրենը ծնվել էր Ծիրակի ոստանում և չեր կարողանում սրամտությունը զապել, երբ դրա պահնջը կար, և չեր կարողանում մանկության հիշողությունները գործի չդնել, երբ հանձն էր առնում, ասենք, 21—Քատերական մկարիչների մասին

«Հեղմար աղբյուրի» նման կննցադարույր, բայց գունագեղ և հոգիչ վեպի Ակարազարդումը: Այդ գրքի ձեւվավորումը Բին Գյումրվա մասունքներով այնքան դիպուկ է, սրտաշարժ, որ համանուն ժապավենի Ակարանինմանը նույնական որոշակի ծառայություն մատուցեց:

Վերջին տարիներս նա հրապուրվեց, այսպես ասած, ատաղձագործական քանդակով: Փայտի վրա ալյարանական, երբեմն ընդհանուրացնող պլաստիկական կերպարներ եր ստեղծում, մեծ մասամբ ելնելով դարձյալ գրական աղբյուրներից: Լավագույնները՝ «Կույր վանական», «Սեղա», որոնք գալիս էին «Հին աստվածներից», «Երգ», որ նետո Կոմիտասի քանաստեղծությունների սուպեր-շապիկը դարձավ, իսկ «Քաջ Նազարի» շարքը (փայտ-մետաղ-պարան) իր լուծման իմքնաւորիա բնույթով և գեղարվեստական ընդհանուրացման արդիականությամբ Հունգարիայում քացված միջազգային ցուցահանդեսի ժամանակ հատուի ուշադրություն գրավեց, արժանացավ քարձր գնահատականի:

Սուրենը քազմաշնորհ, քազմավաստակ, օրվա հարցերով ապրող, հոգող և մտածող արվեստագետ էր: Միշտ իր նման, ամենուրեք նույն մակարդակի վրա: Ավ. Խաբիալյանի և Մ. Սարյանի հորելլյաններին նըրան պատվիրեցին հատուկ մեղալ ստեղծել՝ մեծ վարպետներին ընծայելու: Բայց շուտով այդ մեղալները քազմացան, քանի որ քոլորն էին կամենում ունենալ: Նրանց որակն ու բնույթը գերազանցեցին սպասումները: Նա մի խորհրդանշան նկարեց Հայկական թատերական ընկերության համար: Ընդհամենը երեք հատտառ, և ՀԹ-ն դարձան աշքեր ու քիթ, իսկ Ը-ն ամիսնեց ողբերգական դիմակը: Շուտով դարձավ հիանալի կրծքանշան: Հեշտ չէր ներդաշնակել կատակն ու ողը մի կրծքանշանի մեջ: Սուրենը ներդաշնակության ար-

վեստի վարպետ էր, գեղարվեստական նորր ճաշակի տեր: Թատրոնում արածն էլ թեև սակավաթիվ, բայց սուրենյանական էր, մանավանդ «Պաղտասար աղքոր» ձևավորումը և «Կապկազի» այն տեսարանը, որի հիմքում ընկած էին Ստեփանյանի՝ քաղաքական ծաղրանկարի ոճով պատկերված կոմպոզիցիոն էսքիզները: Մինչև կյանքի վերջին օրերը Վարդան Աճեմյանը գանգատվում էր Սուրենից, թե չեկավ օգնության «Քաջ Նազարի» ռեժիսորական մտահղացումները իրագործելու համար: «Փնտրում եմ, փնտրում,— ասում էր նա,— բայց ավելի նպատակահարմար ու սրատես նըկարիչ չեմ կարողանում գտնել»:

Այս, դժվար էր գտնել Սուրենի նման սրատես ու նպատակահարմար, նաև նպատակատաց նկարիչ: Նըմանները քիչ են:

... Նրա ներխաթը, բարերախտարար, կիսատ չմընաց: Ավելի ապրում էր զվարյօ, քան թե տխուր ներխաթներով: Իսկ այդ ներխաթների հիմնը նրա Կակաշառջիկներն էին, որոնց երգը ասես հիմա էլ թնդում է սարն ի վեր: Պարային սյուիտ, թատրոն, երաժշտություն՝ բոլորն օրգանապես միահիյուսված: Զոր չէ, որ այդ կոմպոզիցիոն կտավը մտավ մեր Պարի անսամբլի ծրագրի մեջ, իսկ այնուհետև օգտագործվեց չեխական կամերային բալետում: Մեր ու երազ, կյանք ու խիմ՝ անգիր բանաստեղծություն: Նա ինքն է, որ կար և կա, մեր անմոռաց արվեստակից ընկերն ու լավ բարեկամը՝ Սուրեն Շավարշի Ստեփանյանը:

«ԵՅ ԷԼ ՕՆԱՆ ԵՄ...»

Արքանամյան եղբայրների հիշատակից

Ասում են թատրոնը սկսվում է հանդերձարանից: Լեզինականը, մանավանդ Աճեմյանի աշխատած տարիներին, ազգային ցայտուն ավանդույթներով, ինքնատիպ

կենցաղով տակավին հարուստ մի քաղաք, իր դրոշմն էր դրել նաև թատրոն հասկացության վրա: Այստեղ կարող էին ասել՝ թատրոնը սկսվում է դռնապանից: Իսկ դռնապաններից մեկն էլ՝ նշանավոր Օնոն: Նրան կարելի էր տեսնել մեծ մասամբ թատրոնի շրամուտքի մոտ, յուրաքանչյուր ներկայացման ժամանակ: Հսկիչ էր, պահակ, որ տոմսեր է ստուգում, բայց ասես նաև պահապան, որ ներկայացումն է հսկում: Պատահում էր, որ մեկը, մի քիչ գինովցած, փորձում էր ներխուժել դահլիճ: Իսկովն փակում էր ճանապարհը.

— Ցավաջ, դու մես շպտի էրթաս:

— Խնդիկ տոմս ունի, ընջի՛ չես յոդին, օօօ:

— Եղի՞ ինչ օր ունի, խնձը գլուխ չէ:

Ու չեր թողմում:

Նա ոչ միայն տոմսերն էր ստուգում, պահպանում մուտքը, այլև խատորեն նետում էր կարգապահությանը, փորձում յուրովի տեսակավորել հանդիսականին:

— Էսօրվա ժողովուրդը ուրիշ ժողովուրդ է, վայրեն Փափազը կխաղա էնդի... լավ է...

Աներեր բնավորությամբ, խստարարո անձնավորություն էր ՕՇոն, մեծ արժանապատվության տեր: Եթե որևէ մեկին ասենք Երևանից ժամանած պատվավոր հյուր՝ դերասանները փորձում էին ներս տանել, ընդգծելով անունն ու պաշտոնները, նա զարմանքով ու զայրութով պատասխանում էր.

— Եղև՛ ինչ, ես ել ՕՇոն եմ:

Կամ մի այլ առիթով.

— Պատվով մարդն էլ իրա՛ տոմսը կունենա՞ Բրավիրատոմս:

Թատրոնի շքամուտքից նվիրական վայր չկար նրա համար: Յերեկները շրջում էր քաղաքում թիապարտի պես՝ հայացքը խոժող, փայտն նրբաներով կոշիկներ հագին, իսկ երեկոները, թատրոնի շեմին, պայծառանում էր: Անժախտ այդ մարդը շփվել էր հայ բնի գրեթե բոլոր ականավոր վարպետների նետ, և, ինարկն, առիթ բաց չեր թողմում դրանով պարծենալու, մանավանդ, երբ խառնիխուտն ուստերենով վեճի էր բռնվում այդ թատրոնին նույնքան հավատարիմ, գանձապահ Աննա Աղեքսանորովնայի նետ: Թե ինչն էր կապում օրորվող քայլվածքով, խալույաշ, գանգրամեր մազերով այդ օդեսացի Բրեռումուն Լենինականի թատրոնի նետ՝ թերևս իրեն էր հայտնի: Երբ տոմս էիր գնում, խնդրում լավ տեղ տալ, ակնոցների տակից նախ զընանում էր քեզ, ապա նոր որոշում քո տոմսի տեսակը: Նրանք երկուսով, կողք-կողքի տասնյակ տարիներ աշ-

խատեցին և ոչ մի ադմինիստրատոր, Առվանիսկ Վարդան Թերզիքիրաշլանը, Արանցից դժգոհ չմնաց: Մահն էր միայն, որ Արանց բաժանեց թատրոնից:

Լենինականը, վաղուց ի վեր արթևստավորներով փառարանված մի քաղաք, իո վարպետներն էր առանձնացրել նաև թատրոնի համար, և այնպիսի վարպետներ, որոնց ձեռքերը լոկ մուրճ ու արցան բռնելու համար չէին ստեղծված:

Մեկը դրանցից՝ Աղասի Ղազազյանը, Բաստիքով բուտաֆորիստ-քանդակագործ: Ինքը բնիկ գյումրեցի, քայլ ոչ պակաս, քան ՄԽՍ.Տ-ի փորձարարական արթևստանոցում էր կատարելագործվել: Հարկ եղած դեպքում առանձին հաճույքով տալիս էր նվան Մոսկվինի և Վասիլի Կաչալովի անունները, և համոզված պընդում, որ՝

— «Հատակում» Շերկայացման մեջ մեր Լևոնն ու Ցոլակը ինոնցնեն գեշ չեն խաղա: Քեզի քան կսեմ, ընձի հավատա:

Ներկայացման ժամանակ օգտագործվող թատերային ամեն մի իր, լուսամփոփ ու սաղավարտ, զենք ու զարդ, Արա ձեռքի գործն էր: Ինչ Բանձնարարեին՝ մերծում չկար: Չուներ նաև վիճելու սովորություն: Սակավախոս, գլխահակ՝ աշխատում էր ու աշխատում: Բարեխղճության և անձնազորության տիպար: Նեղն ընկած օրին է՝ փրկություն և գյուտարար: Որոշ դեպքերում Ակարիչը կարող էր և էսքիզ շտալ, բավական էր սովորական բառերով բացատրելը: Զուգամիեռարար աշխատում էր և տեղի տիկնիկային թատրոնում: Հորինում էր պուպրիկ-կերպարներ՝ երբեմն իր մտահղացումներով:

— Մազայու տղա է իոյի Շերիշև, գնացել է Մոսկ-

վա ու ձենը չի գա: Եթք մեր Սուրեննը՝ ինչ եղավ... լավ, լավ, ես իդոնց ուզած գիտեմ:

Եվ առանց սպասելու շարունակում էր գործը, կան-
խավ հարմարվելով Ակարիչների ճաշակին ու ծրագրե-
րին:

Այդպիսի վարպետ էր նաև Տիգրան Ալբերտյանը:
Կեղծամներ էր պատրաստում, վերափոխում դերակա-
տարների բնական մազերը իր և կերպարի ճաշակից
ելնելով, և դերասանի գլուխը լրիվ հարմարեցնում բե-
մի վրա պատկերվող դարաշրջանի պահանջներին:

— Թատրոնում ամեն բան կոկիկ պիտի լինի, — ա-
սում էր նա, — ամեն մարդ մաքուր հարդարված ու գե-
ղեցիկ: Ես շատ եմ զարմանում, որ մարդիկ երբեմն
չսափրված թատրոն են գալիս: ՕՇՈՅԻՆ պիտի ասել, որ
դրանց մերս շլողնի:

Իր շուրջը հարգանքի ջերմ մթնոլորտ էր ստեղծել
նաև Ակարիչ-կատարող Վարդան Երանոսյանը: Արթես-
տը արթեստ, բայց մարդիկ քաջ գիտեին, որ ծառա-
յում են ստեղծագործական օջախում, աշխատում Բար-
կեն Գարրիելյանի, Սուրեն Սուրենյանի, Արշակ Բոր-
ջալյանի, Վարդան Աճեմյանի ժետ և ոչ միայն օրանց
ժամար:

— Ինչքան էլ լավ էմեն իրանց գործը Կարոն ու
Մելիքսեթը, մեկ է, ես օր իմ գործս տեսմոր վերջ լավ
չերի, ժողովուրդը խո բեմի վրա ինոնց էսքիզներուն
չպտի աշե:

Ներկի դույլերով ծանրաբեռնված, մեծ վրձինը ձեռ-
քին, մատիտը խրած ականջի նուն, Երանոսյանը կա-
տարում էր իր գործը մինչև վերջ լավ, Ակարիչների
լրացուցիչ խորհուրդների կարիքը չզգալով: Իր գործի
և թատրոնի պատվի տերն էր:

Թատրոնը ժամանակավոր հրապուրանք չի եղել

Երանց կյանքում կամ ապրուստի Բայթայթման միջոց, այլ Բնետևանք դեպի բնմարվեստն ունեցած անհուն սիրո: Նրանցից ամեն մեկը հյութեղ մի բնավորություն, ցայտուն մի կերպար, ստեղծագործական մի ուժ:

Սրանչելի վարպետներ են գործել այս թատրոնում: Բնեմադրական մասի մեծափորձ վարիչ Պարգև Փաշյանի Բնետ՝ բազմաշնորհ Սեթո Վարդիկյանը, դերձակներ Վահան Բայրուրյանը, Ռիմա Մալխասյանը, Բնետո Էլ Սարգիս Աճեմյանը ու Վարդուշ Ղոլյուուշյանը... Բնեմական զգեստն ու տարազը կարելու, Բագցելու Բամար Էլ արվեստի մեծ զգացողություն է պետք ունենալ, Ակարչի Էսքիզը կարդալու, դերասանի ստեղծագործական խառնվածքը լուրացնելու՝ առավել ևս: Իսկ Երանք ոչ միայն ճանաչել են դերասաններին, այլև ապրել Երանց ճակատագրով:

Այս թատրոնով շուրջ կես դար ապրել են, բեմի կամարների տակ գործել ու ստեղծագործել, փաստորնեն կյանք են դրել Արրաթամյան եղբայրները: Սկզբում երկուսն էլ հյուսն բանվորներ, իսկ երբ լույսը ոգի առավ բնեմաթարթակում, Մկրտիչը արթեստը փոխեց, էլեկտրոմոնտյոր դարձավ, բեմի լուսավորիչ: Գևորգը խորացավ իր մասնագիտության մեջ, նետզիւնել դարձավ դեկորացիոն սարքավորումների լուրատեսակ ճարտարապետ-շինարար:

Վարպետ բառը քիչ է Գևորգին գնահատելու համար: Այնքան հմուտ ու վարժ էր իր գործի մեջ, որ նըրան Աճեմյանը երեսն էլ ինքնուրույն ձևավորման աշխատանքներ էր Բանձնարարում: Նա իմաստուն եցրագիտակցությամբ խորապես զգում էր կերպարվեստի Բարթապատկերային ստույգ ծավալներն ու գեղանկարչության քամիարու լեզուն: Հիանալի գիտեր բեմի տեխնիկան, խորաթափանց մասնագետ, թեև ինքնուս:

բոլոր դեպքերում քննադատաբար էր վերաբերում թե իր և թե մյուսների արածին: Երբ մրան հանձնում էին վերջնականապես ավարտված և ընդունված էարիզներ դեկորների վերածելու համար և աղմ էլ Մ. Արուտչյանի, Մ. Սվախչյանի նման տաղանդավոր, հեռամկատ արվեստագետները, նա առանց երկար ու բարակ զընաելու, իսկույն մատու դնում էր էարիզի որևէ կետի կամ գծի վրա և ասում.

— Ըշտը իսիկ չեղավ, իսպես չի էղի, կապուտի տակ նարդվանները չեն էրևա, ծոլակը ի՞նչող պտի վեր ելնի...

Կամ.

— Բեմն օր պտտի ծառն ու ծովը կիսառնվին իրար. դերասանները կշշկին, վարը նատած մարդիկ էլ չեն հասկնա, թե ինչ կուգննք ըսել...

Եվ անմիջապես նկարիչները կուամում էին, որ ինչոր մի տեղ, ինչ-որ մի քան կարգին չէ:

Գևորգն էր, որ այս թատրոնում սարքի գենց պըտըտվող բնմահարթակը: Փորձեց օգնության հասնել նորայրը: Բայց իզուր: Էլեկտրական սարքավորում պետք չէ, ասաց, մենք մեր ձեռքով, որ համ անհսկա լինի, համ էլ ինքններս որոշենք պտույտների տեմպո-ոիթմը: Եվ այդպես անդավաճան, վստահելի և իր տեմպո-ոիթմով երկար ժամանակ գործում էր Գևորգ Արդարամյանի մկուն պտտահարթակը:

Նա միայն դեկորներ չէր պատրաստում կամ պտըտում թեմը, մտածում էր և իր հաջորդների մասին, աշակերտներ էր պատրաստում: Գևորգի շնորհառատ սաներից մեկը՝ Խաչիկ Ղազարյանը՝ հետագայում փոխադրվեց Երևան, ուր երկար տարիներ Գ. Սունդուկյանի և ապա Ա. Սպենդիարյանի անվան թատրոններում գլխավոր մեքնավար էր, հնարատիտ դեկորա-

տոր, իսկ մյուսը՝ Խաչիկ Մարտիրոսյանը՝ մոտ քառասուն տարի հյուսնոցի գլխավոր վարպետը. շուրջ 250 Անդրկայացման դեկտեմբեր նրա ձեռքի տակով են անցել:

Աքրահամլան Գևորգը մեր ականավոր թեմանկարիչների հոգատար քաղենակամն էր ու նրանց գործի պահպանն ու ջատագովը: Քաջ գիտեր, թե թեմանկարչության տեղը որքան մեծ է ժամանակակից թատրոնում և ինքն էլ, քրոջները ճակատին, մեծապես ճպաստում էր, որ այդ նկարչությունը կորուստներ չունենա թեմի վրա: Ամրող կյանքը, գիշեր ու ցերեկ, երրեմն էլ տուն-տնել աշքաթող արած, անցկացնում էր թատրոնում: Նրա բազմազբաղ ձեռքերը ժամանակ չէին գտնում ծխախոտի գլանակը թերանից հանելու: Բեմին նվիրված կյանք, առանց երկմտնելու պիտի ասել նրա մասին: Կյանքի թելադրանք էր թատրոնը և այդ ասպարեզը թողեց միայն այն ժամանակ, երբ ապրելու և ստեղծագործելու ուժ այլևս չուներ:

... Իսկ կրտսեր նղրայրը, իր գործի մույնքան հըմուտ ուստա Մկրտիչը ամենաերկարակյացը եղավ մեծ վարպետներից: Աշխատեց մինչև խոր ծերություն: Թեև հին շենքը այլևս հինը չէր, հներից շատերն ել չկային, քայց չէ՝ որ թատրոնը կար, չէ՝ որ ամեն երեկո հանդիսականութ էր լցում սրամը, դարձյալ լուսերը վառվում էին, դարձյալ բացվում վարագույրը:

— Լուս է պետք թատրոնին, շատ լուս...

Երբ որևէ հարցով դիմում էիր վարպետ Մուկուչին, ծոցագրապանից խանդաղատանքով հանում էր մաշված մի գրքույկ և ասում.

— Այ, կաշե՞ս, իսոնք բիթթո՞ւն լուսեր են: Իսիկ «Մարտկույինն» է, իստեղ էլ «Մեծապատիվի» լուսերն են գրած: Էս կողքը Բուրջալյանի վախտվա լուսերն է՝ «Ռախորը», «Ֆինանսների մինիստրը»: Հըմը «Արա


Գնդեցիկը» ուրիշ բան էր: Ըստ «Կրեչինսկի՛ն», ըստ «Տամներկուերորդ գիշե՛րը»... Ամենի ու Մելիքսերի հետ կաշխատենք: Գիշեր էր, Բըմը լուս կուտար: Լավ կպահեմ, ծոցիս մեջ: Լուս է, չէ՛, օրը էլի պետք կուգա: Օրը էլի լուս կեղճի, կջամելնամք...

Եվ մետզմետե սկսում էր ճառագել ուստա Մկրտիշի թորշումած դեմքը:

Ինչքա՞ն լույս կա թաքնված օրա կմջումների տակ: Պայծառ մարդիկ՝ բանվոր-քաղաքացիներ, որ թատրոնը կրել են սրտում, ներկայացումները տարել ուսերի վրա, ստեղծագործական համույքով ու խամ-դավառությամբ:

1985

1982



ԼԵՎՈՆ ԱՐՏԱԿԱԾԴԻ ԽԱԼԱՓԱՆ
ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԿԱՐԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խմբագիր՝ Ա. Ա. Գևորգյան
Նկարիչ՝ Հ. Ա. Մամյան
Գեղ. խմբագիր՝ Զ. Ի. Սարգսյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ա. Սարգսյան
Արքագրիչ՝ Մ. Ն. Բարսյան

Համապատ է շարվածքի 8.08.1983
Ստորագրված է տպագրության 24.10.1983
ՎՃ 06973, բուլը տպագրական Ն 1,
շափը 64×108^{1/22}, տառատեսակը՝ Նորը,
տպագրությունը՝ բարձր, պատվեր 871
11,0 բրատ. մամ., 17,43 պալմ. տպ. մամ.
տպարանակը 1000, գինը՝ 95 կ.:

Հայկական թատերական ընկերություն, Երևան,
Կարմիր բանակի 8

Պետհամալսարանի տպարան, Երևան,
Արևիյան փողոց Խ 52

Армянское театральное общество
Ереван, ул. Кармир банаки 8.

Типография Госуниверситета, Ереван, ул. Абовяна 52.

ԳԱԱ Հեմիարար Գիտ. Գրադ.



95 կոսդ.

A $\frac{\pi}{69679}$